

5521

84

f-93



02 NOV 2009

387



84
F-93

387



ՀԱՆՐԱԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ Ա. ԻԹԻՒՃԵԱՆ

Արտոնաւեր «ՄԱՍԻՍ» Ի

1947




ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԿԵԱՆ

Տեղ եւ Տնօրէն «Սուրհանդակ» եւ «Ճերիտի Եարգիկ» լրագրաց


Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՃԻՎԷԼԿԵԱՆ



1899

ՀԱՆՐԱԿԱՌՔԻՆ



ՀԱՆՐԱԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ

1

Պատահած է ձեզի երբէք, իրիկունը, կէս գիշերին մօտ, չհասնիլ վերջին հանրակառքին ձեր տունն երթալու համար: Եթէ հարկադրեալ չէք ձեր ծախքը ճշդիւ ձեր ելմացոյցին վրայ չափելու, հասարակ կառքով մը կրնաք ձեր գործը տեսնել: Բայց եթէ՝ ընդհակառակն՝ ձեր համեստ կարողութիւնը չներեր ձեզ այս թեթեւ արտասովորը, հարկ կ'ըլլայ քաշելով երթալ, անձրեին տակ, ցեխերուն մէջէն, անիծելով հանրակառքի ընկերութիւնը, որ սակայն հարկադրեալ է ասանկ վեց ժամու աշխատութենէ ետք քիչ մը հանգիստ տալ իւր ձիերուն ու պաշտօնեայներուն:

Այդ գերերջանիկ կառքը, որ ուշ մնացողներուն վերջին յոյսն է, փախցնելու առիթները մէկ տեսակ չեն:

Երբ անցներուն կ'սպասէ մարդ, պարտապ տեղը նշան կ'ընէ կառավարին որ լեցնէ. կառքին ձերմակ գիրերով «միջ» բառը տեսնելուն պէս, յոյսը պարտապ կ'ելնէ, կը գայրանայ: Վերջապէս կը համակերպի և կը շարունակէ ձամբան՝ յուսալով որ ուրիշ մ'ալ կ'անցնի և չմնայ թերեւս անոր մէջ զ գանել: Այս յուսով մինչև տուն կը անի առանց յոգնութիւնը նշմարե-

Ամենէն գէշն է գծին գլխու կայարանը ներկայանալ ճիշդ այն վայրկենին՝ ուր վերջին կառքը ամբողջովին լցուած ձամբայ կ'ելնէ, և ուրիշ ձար չմնար ձեզ բայց միայն ձեր սրունքներուն վրայ դնել յոյսերնիդ:

Այսպէս ահա այս ձմրան մէջ իրիկուն մը, կէս գիշերին քառորդ մնացած, Սէն-ժէնովէնի պուլվառին և Քարտինալ-Լըմօանի փողոցին անկիւնը, ճիշդ այն վայրկենին ուր գինիի վաճառանոցէն Բիկալ հրապարակը զնացող կանանց հանրակառքը մեկնելու վրայ էր, վայելուչ հագուած դեռատի կին մը շնչասպառ հոն հասաւ, և հազիւ կըրցաւ հարցում մ'ուղղել կառավարին:

—Լեցուն է, տիկին, տեղ չիկայ, պատասխանն ստացաւ: Խեղճ կինը Բուսաբանական պարտէզին կողմէն կուգար, Սէն-Պէռնարի գետեզրէն և բաւական երկար ձամբայ քաշելով՝ տաստիկ յոգնած էր:

—Ա՛հ, Աստուած իմ, մրմնջեց, ի՞նչ պէս պիտի երթամ քաշելով մինչև Մօնմարիթ. անհնար է որ հասնիմ:

Եւ արդարեւ այն ժամուն և այն եղանակին չորս կինդ հազարամէթր ձամբայ քաշել ստատափելի էր փափկակազմ կնոջ մը համար:

Չոր ցուրտ մը կար, և հիւսիսային հովն ալ ուժգին փչելով աւելի կը



6034-70-
5123-70

դառնացնէր ցուրտը: Փողոցներն ալ ամայի էին, ոչ անցորդ կը տեսնուէր ոչ կառք:

Հանրակառքին մէջ տեղ չի կար, և մէկը չէր համարձակած կառքին բարձրաւանդն ելնել, ուր երեք սուի փոխարէն սաստիկ հարբուխ մը վաստկելն աներկբայելի էր:

Տիկինն աչերը դէպի կառքին բարձրաւանդն ուղղեց, բայց ինչպէս պիտի կրնար ելնել հոն՝ բուռն հովին և սառոյցին գիմագրաւելով, մանաւանդ որ ներելի ալ չէր կանանց: Ճարահատեալ գլուխը կառքին մէջ երկնցուց, ուր բնաւ տեղ չկար իրեն համար: Կը յուսար անշուշտ թէ ազնուասիրտ ուղևոր մը՝ կրնար իւր տեղը տալ իրեն:

Տկար յոյս մըն էր վասնզի մեծագոյն մասը կին էին և կիներն ալ դիւրաւ չեն հրաժարիր իրենց արտօնութենէն:

Եւ սակայն իւր վրայ կարեկցող մը գտնելու անակնկալ բաղդն ունեցաւ: Կառքին ներսի ծայրը նստած կըր գլխարկով պարոն մը ելաւ և մինչև դուռն յառաջանալով:

— Եկէք տիկին, ըսաւ և ինքը վար ցատկեց:

— Օհ, պարոն, չափազանց բարեսիրտ էք, շնորհակալ եմ գոչեց տիկինը, չեմ ուզեր ձեր հանգիստը վրդովել:

— Ամենեկին, ամենեկին, մի՛ վախնաք, վերը պիտի նստիմ, թէ եւ տաք չէ հոն, բայց իմ մորթս կարծր է:

— Ճշմարտիւ, պարոն, չեմ գիտար ինչպէս շնորհակալ ըլլամ ձեզ:

— Բան մը չէ, չարժեր:

— Օն, տիկին, օն, ներս մտէք, եթէ կը հաճիք, ըսաւ կառապանը, երկար կենալու ժամանակ չունինք:

Տիկինն արգէն մէկ ստքը վեր դրած ըլլալով, կրկնել չտուաւ կոտորանին հրաւերը, բայց փոխանակ ձեռքն ա-

նոր տալու, զինքը մեծարող բարեկիրթ պարոնին օգնութիւնն ընդունեց շնորհալի ժպիտով: Ձեռքն անոր ձեռքին մէջ դրաւ և թերեւս պէտք եղածէն քանի մ'երկվայրիեան աւելի թողուց հոն:

Արդարեւ մեծ բան մը չէր այդ ըրածըն այնչափ քաղաքավար պարոնի մը համար, և այդ մերձեցումը վտանգաւոր կամ դաջթակղական բան մը չունէր, որովհետեւ երկուքն ալ հասաւ ձեռնոցներ դրած էին:

Իւր տեղը նուիրող պարոնը սակայն ոչ շատ գեղեցիկ էր, ոչ ալ դեռատի: Քառասուն և թերեւս աւելի տարեկան կ'երևէր, մօրուքին մազերը ձերմակով խառն էին: Նշանաւոր ճարպիկութեամբ մը բարձրաւանդն ելաւ և մինչ հոն առաջին նստարանին ծայրը կը գետեղուէր բալթոյին օձիքը վեր առնելով, տիկինն ալ կառքէն ներս սողակելով գնաց անոր տեղը նստաւ բուրդէ կնգուղով պառաւի մ'եւ պարզ հագուստով երիտասարդուհի մը մէջտեղը: Ծայրը, հայելիին քով թանձրամարմին կին մը նստած էր որ երկու մարդու տեղ կը բռնէր:

Իրմացի կողմը մարդ մը նստած էր. միակ այլը կառքին մէջ, յաղթահասակ և նրբիրան երիտասարդ մը, թըխորակ դէմքով, վառվռուն աչերով, ժպտուն բերնով, ճշմարիտ պատկէհանի գլուխ մը:

Միւս ուղևորներն հանրակառքի յաճախորդ այլ և այլ դասակարգերէ կ'իներ էին, Փարիզի միւս ծայրը բնակեալ ազգականներու տուներէն վերադարձող քաղքենուհիներ, խանձարութով պատած մանկիկ գրկող մայրեր, և գործարանի մէջ ժամանակ անցուցած և քունէ ընկճուած գործաւորուհիներ: Կառքը ճամբայ ելաւ, կառապանը ուռնակը հնչեցուց, և ուղեչեօյներ

ձեռքէ ձեռք անցնելով հաւաքուեցան:

Յաղթահասակ երիտասարդը սկսաւ գննել իւր ուղեկցուհիները, զորս դիւրաւ տուեր էր իրեն: Մէջերին երկուք միայն կային, որոց դէմքն ու շարժումնքն ուշադրութեան արժանի կրնային համարուիլ, և երկուքն ալ ճշդիւ իւր դէմը նստած էին:

Կառքին ճամբայ ելնելէն առաջ անցած փողքիկ տեսարանը չէր մոռցած: Արդարը խօսելով, ինքն ալ կը պատրաստուէր իւր տեղը նուիրելու՝ երբ կըր գլխարկով մարդն ոտքի վրայ ելնելով՝ իւր տեղն առաջարկեր էր: Տեսեր էր նաև տիկինին և այն պարոնին միջև փոխանակուած ձեռնասեղմումը: Կ'ըսէր մտքովը թէ տարփային յարուբերութեան մ'սկիզբն էր թերեւս:

Արդէն կը թուէր իրեն թէ այս շքուան կատակերգութեան երկու դերասաններն անյարմար դոյզ մը կը կազմէին: Կիներ, որ քիչ մը չափազանց շուտով շնորհապարտ եղեր էր անձանօթ մարդու մը, իւր պատահական ասպետին դասակարգէն չէր, իւր արդուդարդն աւելի բարձր դասակարգի էր: Գեղեցիկ հասակ մ'ունէր և աչերը կը փայլէին թուի դեղին քօղին տակ, գոր վեր չէր առնուր:

Աւելի բան պէտք չէր որպէսզի խուզարկու մ'անով զբաղէր, և դիմացը նստող երիտասարդ նկարիչն ալ խուզարկու մ'էր: Իւր ուշադրութիւնը բաժնեց քօղաւոր տիկնոջ և անոր քով նստած երիտասարդուհիին միջև:

Այս վերջինն ալ վար իջուցած էր իւր շագանակագոյն թաւիչէ կարճ գըլխարկին շուրջը կապուած քօղը, այնպէս որ դէմքին վարի ծայրը միայն կը տեսնուէր, այսին վրայ փոսիկով ծնօտ մը, քիչ մը մեծ բերան մը բայց յոյժ բարեձև, և ամբոյն այտեր:

— Սպանուհի մը գոյն, կ'ըսէր թը-

խաղէմ՝ երիտասարդը: Աներկբայ եմ որ շատ գեղեցիկ է: Ափսոս որ ցուրտը չի թողուր որ քթին ծայրը ցուցնէ: Ատոնց ամենուն ալ մենամուրթիւնն է, ջերմաշափը քիչ մը վար իջնելուն պէս, դուրս ելած ժամանակ երեսնին կը ծածկեն. և երբ մարդ մը սիրուն դէմքեր տեսնելու փափաք ունենայ, ամառուան պէտք է սպասէ:

«Գոնէ լոյս ըլլար այս անպիտան հանրակառքին մէջը, կանթեղներուն մէկը մարած է, միւսն ալ հազիւ կը պլպլայ՝ իւղը հատած լամպարի մը պէս. թաւալուն քարայրի մը մէջ ենք: Եթէ ոճիրներ ալ գործուին, ոչ ոք կրնայ նշմարել:»

Չննութիւնը շարունակելով մեծ թըխաթոյրը տեսաւ որ այդ աղջիկը հարուստ չէր: Յունվարի պէս ցուրտ ամուս մը մէջ սեւ պատառէ կարճ և անթեւ թիկնոց մ'առած էր վրան, այնչափ բարակ և մաշած, որ վրան նայողն իսկ կը սարսուէր ցուրտէն. այբակէ շրջագգեստ մը հագեր էր կորընթեան չամիչի գոյնով, որ երկար գործածութեամբ իւզոտ փայլ մ'ստացեր էր. ձեռները ծածկած էր հին մուշտակէ փողքիկ թեւնոցի մը մէջ, որ ժամանակով տասներկու տարու աղջկան մը համար գնուած կ'երևէր:

— Ո՞վ է այս խեղճ աղջիկը, ուսկից կուգայ, ո՞ւր կ'երթայ, կը հարցնէր թխաթոյր երիտասարդը ինքնիրեն: Ինչո՞ւ համար քովը նստող կինն աչքին պոչովը կը նայի անոր, արդեօք կը ճանչէ՞ դայն: Բայց ո՞չ, որովհետեւ չի խօսիր հետը:»

Սակայն հանրակառքը բաւական ճամբայ առած էր, այժմ՝ Բոն-Նէօֆի կամուրջին վրայէն կ'անցնէր, և կառավարն իւր օրը ժամ մ'առաջ աւարտելու փութով՝ կառքը սրարշաւ քրչել սկսաւ Լուվրի գետեզրն իջնող դասիվայրին վրայ:

Հանրակառքերն առ հասարակ ութ-
 դասանակով կառքերու պէս լաւ կա-
 խուած չըլլալով, այս յանկարծական
 շարժումէն ուժգնապէս ցնցուեցան ու-
 ղեորները: Երիտասարդուհին քովի նո-
 րեկ տիկնոջ վրայ ինկաւ և անոր թե-
 ւին փաթթուեցաւ թեթև ճիչ մ'ար-
 ձակելով և ետեէն ալ խոր հառաչ մը:
 — Իմ վրաս կրթնեցէք, օրիորդ, թէ
 որ հիւանդ կամ տկար էք ըսաւ սքո-
 ղեալ տիկինը:

Աղջիկը չպատասխանեց, բայց գլու-
 խը կարեկից տիկնոջ ուսին վրայ ձը-
 գեց:

— Այս դեռատի տիկինը հիւանդ է,
 գոչեց երիտասարդը. պէտք է կեցնել
 կառքը, և ես երթամ...

— Բայց ոչ, պարոն, կը քնանայ ը-
 սաւ քողաւոր կինը հանդարտ կերպով
 մը:

— Ներեցէք, տիկին, ես կարծեր էի
 թէ...

— Արդէն կը քնանար երբ կառքին
 ցնցիւնն ընդոսա արթնցուց զինքը,
 բայց ահա նորէն քնացաւ, թողունք որ
 հանգչի...

— Ձեր վրայ, տիկին, չէ՞ք վախ-
 նար որ...

— Ձիս յոգնեցնէ՞: Օ՛հ, ամենեին, և
 վար չիյնար, մի վախնաք, չեմ թո-
 դուր ըսաւ տիկինն՝ իւր աջ թեւին մէջ
 ստնկով դայն:

Երիտասարդը գլուխը խոնարհեցուց՝
 ստանց պնդելու: Բարեկիրթ մարդ,
 մտածեց որ արդէն բրածն ալ չափա-
 դանց էր, իրեն վերարեբուժիւն չու-
 նեցող բանի խառնուիլը:

Եւ նորէն զննութիւնը շարունակել
 սկսաւ, և սիրար շարժեցաւ տեսնելով
 որ քողաւոր տիկինը կամացուկ մը քը-
 նացած աղջկան մերկ ձեւները բռնե-
 լով՝ ճիտէն կախուած խեղճ թւնոցին
 մէջ գրաւ:

— Մայր մ'աւելի լաւ չի խնամեր զա-
 ւակը, կ'ըսէր ինքնիրեն. իսկ ես այդ
 պատուական կինը տարփային յարա-
 բերութիւններ փնտռող բազմախնդիր
 մը կը կարծէի. ինչո՞ւ համար, վասնզի
 պարոնի մը տեղն ընդունեց եւ իր
 մատներուն ծայրն անոր սեղմել տա-
 լով շնորհակալութիւն յայտնեց: Այժմ
 կը հասկընամ որ այն քրծնի պարոնին
 հաճոյակատար քաղաքավարութիւնը
 պարապ երթալէ դաս, թերեւս լանջա-
 տապ մ'ալ վաստիկ վերի սաստիկ ցուր-
 տէն:

«Սախայն ես սա քնացող աղջկան
 դէմքն ամբողջ տեսնել կ'ուզէի. երե-
 սին վարի գիծերը կատարեալ են: Իւր
 արդուզարդին նայելով՝ խեղճ աղջիկն
 աղքատ կ'երեւի, և գրաւ կը դնեմ որ
 իւր պատկերը քաշել տալէ չի քաշուիր:
 Թէ որ ճամբուն վրայ կառքէն իջնէ,
 ետեւէն չեմ երթար. իսկ եթէ մինչեւ
 Բիկալի հրապարակը գայ, կառքէն ի-
 ջած ժամանակնիս կ'առաջարկեմ իրեն
 որ քանի մ'անգամ աշխատանոցս գայ՝
 պատկերը քաշել տալու: Յուսանք որ
 ճանբուն վերջը չհասած աչքը բանայ»

Հանրակառքը կը թաւալէր միշտ
 այնպիսի արագութեամբ մը, որ մանր
 կառքերուն նախանձը կը շարժէր:

Պորտային հրապարակն հասած ժա-
 մանակ՝ երեք կին վար իջան և քաղ-
 քնի ընտանիք մը մտաւ. հայր, մայր
 և փոքրիկ մանչ մը:

Աղջիկը կը քնանար միշտ՝ քովի գը-
 թասիրտ տիկնոջ յեցած. միւս կիներն
 ալ վերջապէս թմրելով՝ անոնց ալ քու-
 նը տարեր էր. այնպէս որ Շաթօտեօնի
 կայարանն անցնելով Մարթիր փողո-
 ցէն վեր ելած ժամանակնին հանրա-
 կառքը պարզ ննջարան մ'եղած էր:
 Մեծ թխաթոյրը միայն արթուն կե-
 ցած՝ իւր գէմը նստող երկու կիներուն
 վրայ կը մտածէր: Յանկարծ կառքին

բարձրաւանդէն կոշիկ կրուկի երեք
 դոփում լսուեցաւ ետեւէ ետեւ: Հոն
 նստող պարոնը վար կ'իջնէր: Արագ
 նայուածք մը կառքին մէջ նետելէ
 ետեւ՝ վար ցատկեց, և Թուռ Թժվէրն
 փողոցը մտնելով աներեւոյթ եղաւ:

— Կարծածիս պէս չէլաւ, ըսաւ ինք-
 նիրեն: Ես կը կարծէի որ իւր տեղն
 ընդունող տիկինին պիտի սպասէր և
 իւր թեւը նուիրէր անոր:

Մինչ երիտասարդն այս մտածու-
 թեամբ դբաղած էր, հանրակառքն
 այն կէտը հասաւ, ուր Մարթիր փո-
 ղոցը երկու բազմամարդ փողոցներու
 կը հանդիպի, ձախէն լազալ և աջէն
 Գոնտորսէ փողոցներուն:

Հանրակառքը միշտ հոն կանգ կ'առ-
 նէ օգնական ձիերն արձակելու, միան-
 գամայն ուղեւորներէն մեծ մաս մը և
 երբեմն ամէննալ հոն հանելու համար:

Նոյն իրիկունն ալ այնպէս եղաւ.
 միայն մեծ թխաթոյրն և դէմը նստող
 երկու կիները մնացին, որոց մէկն ալ,
 քնացած աղջիկը բռնող քողաւոր տի-
 կինն ալ մեկնելու պատրաստուեցաւ:

— Պարոն, ըսաւ երիտասարդին,
 այս խեղճ աղջիկը որ իմ վրայ յեցած
 կը ննջէ, չեմ ուզեր անհանգիստ ընել,
 և սախայն հարկադրուած եմ մեկնելու...
 տունս հոս մօտն է եւ ժամանակն ալ
 ուշ է...: Կրնամ համարձակիլ խնդ-
 րել ձեզնէ որ իմ հանգստարանի պաշ-
 տօնս դուք ստանձնէք:

— Ամենայն սիրով, պատասխանեց
 երիտասարդը աղջկան միւս կողմը
 նստելով:

— Քիչ մ'ալ սպասեցէք, կ'աղաչեմ,
 գոչեց բարեսիրտ տիկինը կառապանին
 որ չուերու նշանը տալով վրայ էր:
 Միանգամայն մեծ նախազգուշութիւն-
 ներով աղջկան գլուխը վերցուց իւր
 ուսին վրայէն եւ մեղմով մը երիտա-
 սարդին ուսին վրայ դրաւ:

Աղջիկն առանց կենդանութեան նշան
 մը տալու ինքզինք այնպէս մը թողուց
 որ երիտասարդը պարտաւորեցաւ մէջ-
 քէն բռնել զայն:

— Շնորհակալ եմ, պարոն, ըսաւ
 քողաւոր տիկինը, սրտիս կը դպչէր
 մինակ թողուլ այս խեղճ աղջիկը. բայց
 որովհետեւ դուք մինչև գծին ծայրը
 պիտի երթաք, կրնամ թողուլ: Եթէ
 կարենայիք մինչեւ երթալիք տանը
 դուռը ընկերանալ իրեն, մեծ բարիք
 մը ըրած պիտի լինիք, վասն զի այս
 ժամուս այս թաղը վտանգաւոր է դե-
 ոատի աղջկան մը համար:

Եւ առանց սպասելու երիտասարդին
 պատասխանին, արագապէս դուրս ա-
 հեցաւ հանրակառքէն որ լազալ փո-
 ղոցը կը մտնէր:

Կառապանը՝ կառքին դրանը մէջը
 կեցած՝ փողոցի կաղերուն փախուսիկ
 լուսովն իւր հաշուեթուղթին վերջին
 կէտադրութիւնները կ'ստուգէր:

Երիտասարդ նկարիչը բոլորովին մի-
 նակ մնալով քնացող գեղուհիին հետ,
 կրնար քաղցրաբանել անոր հետ կամ
 իւր աշխատանոցը հրաիրել պատկերը
 քաշելու համար. բայց նախ պէտք
 կ'ըլլար արթնցնել զայն, եւ շատ մեղ-
 մով կ'ուզէր վարուիլ:

Սկսաւ կամացուկ մը սեղմել զայն
 իր կուրծքին վրայ, եւ կը յուսար որ
 այդ ճնշումն հետզհետէ աւելցնելով
 պիտի յաջողէր արթնցնել:

Բայց կը սխալէր. ի գուր կը սեղմել
 զայն, սրտին բաղխումը չէր գգար:
 Մտածեց թէ արդեօք կէ՞ղծ էր քունը.
 ինքզինք այնպէ՞ս ցուցնել կ'ուզէր,
 որպէս զի իւր շնորհապարտն ըլլայ:

Բարիցցի ըլլալով, փորձառութիւն
 եւ հոտառութիւն ունէր, շատ չէր
 հաւատար առաքինութեանն այսպիսի
 աղջիկներու, որք միայնիկ հանրակառք
 կը նստին կէս գիշերին քառորդ մնա-

լով, եւ այն ժամուն դուրսի պուլվան- ները կ'երթան:

Ուզեց հասկնալ դայս. ուստի ծու- ցաւ քիչ մը, որպէս զի մօտէն տեսնէր այդ յամառ ննջողին երեսը. բայց վեր- ջին կանթեղը, որ արդէն հոգեվարք էր, մարեցաւ եւ կառքը կատարեալ մթութեան մը մէջ սուղեցաւ:

Ծռեցաւ աղջկան երեսին գպչելու աստիճան, եւ զգաց որ մարմարի պէս պաղ էր եւ բնաւ չունչ չէր ելներ կի- սարաց բերնէն:

Թեւնոցին մէջ մնացած ձեռքերէն մին բռնեց, և տեսաւ որ սառած էր:

— Մարած է, ըսաւ ինքնիրեն, օգ- նութեան պէտք ունի:

Եւ կառապանը կանչեց, որ առանց յուզուելու պատասխանեց.

— Կայարանը հասանք, հարկ չկայ հի- մա կառքը կեցընելու:

Արդարեւ կառքը ձորօչէ փողոցն անց- նելով Բիկայի հրապարակը կը մտնէր:

Երիտասարդը զարհուրելով, դժբաղդ աղջիկը վեր առնել փորձեց իւր թեւե- րուն մէջէն ուր կքած էր, բայց նորէն վար ինկաւ անկենդան, և այն ժամա- նակ հասկցաւ որ կեանքը թռած էր այդ խեղճ մարմինէն:

— Եկանք, պարո՛ն, ըսաւ կառապա- նը, որ երկու սիրահար կը կարծէր զանոնք: Կը ցաւիմ որ ձեր տիկինը կ'ար- թնցնեմ. բայց կառքն ասկէ անդին չէրթար. ուստի պէտք է իջնել, եթէ չուզեր կառքին մէջ պառկիլ:

— Գերեզմանի փոսին մէջ պիտի պառ- կի, գօջեց մեծ թխաթոյրը, չէ՞ք տես- ներ որ մեռած է:

— Ա՛, կատակ կ'ընէք զբօսներու հա- մար, բայց աղէկ բան չեն այդպիսի կատակները, մեռեալներուն հետ նե- րելի չէ երբէք ծաղրաբանել:

— Ես ծիծաղելու փափաք չունիմ. կ'ըսեմ ձեզ թէ այս կնոջ մարմինը մար-

մարի պէս պաղ է, և շնչառութիւնը դադրած: Եկէ՛ք, օգնեցէ՛ք ինձի որ դուրս հանենք կառքէն, ես մինակս չեմ կրնար:

— Եւ սակայն, ըսաւ կառապանը, ծա- նըր պէտք չէ ըլլայ... եթէ պարզապէս հիւանդ է, գամ օգնեմ ձեզի. հարկաւ հոս թողու չըլլար:

Այս եղբակացութեան վրայ, կառա- պանը՝ քիթը բերանը ծռարկելով՝ կառ- քին մէջ մտաւ, ուր մեծ թխաթոյրը կրցածին չափ բռնած էր դժբաղդ աղ- ջիկը, և վերցուցին կառքէն դուրս հա- նեցին, և տարին կայարանին սպաս- ման սրահը նստարանի մը վրայ պառ- կեցուցին: Երիտասարդը դողդոջուն ձեռքով խեղճ մեռեալին երեսին վերի կէսը ծաղկող քողը վերցուց:

Սքանչելապէս գեղեցիկ էր: Ռա- փայլելեան կոյսի ճշմարիտ դէմք մը՝ իւր խոշոր սև աչերը ոչ ևս բոց ու- նէին, բայց բաց մնացած էին, և կծկ- եալ երեսներն անպատում ցաւ կ'ար- տայայտէին. սոսկալի կերպով չար- չարուած էր:

— Իրաւ մեռած է, մրմռած կառա- պանը:

— Ճամբան չնչմարեցի՞ք, գոջեց կա- յարանին պաշտօնեան:

— Ո՛չ, և պարոնը որ քովը նստած էր, ան ալ չէր նշմարած: Զինքը բըռ- նած ըլլալուն պատճառաւ չինկաւ... մինչև իսկ շնչելը չիմացուեցաւ: Զար- մանալի է, բայց այսպէս է:

— Կաթուածահար եղեր է ուրեմն... կամ սրտին երակը պայթեր է:

— Ես կ'ըսեմ թէ սպաննուած է, ը- սաւ երիտասարդը:

— Սպաննուած, կրկնեց կառապանը, չեմ կարծեր. կաթիլ մը արիւն չի կայ վրան:

— Ատկէ գատ, աւելցուց պաշտօն- եան, եթէ կառքին մէջ մէկը գէջ հար-

ուած մը տուած ըլլար, միւս ուղեւոր- ները կը տեսնէին անշուշտ:

— Հագիւ տասնութ տարու կայ, այդ տարիքին մէջ յանկարծամահ չըլլար մարդ, ըսաւ երիտասարդը:

— Դուք բժիշկ էք:

— Ոչ, բայց...

— Ուրեմն դուք ալ մեզնէ աւելի չէք գիտեր: Եւ փոխանակ պարապխօսքեր ընելու, պէտք էր երթայիք ոստիկան- ներուն իմաց տայիք: Մենք չենք կրնար մեռեալ մը պահել հոս:

— Ահաւասիկ երկու ոստիկան կուգան:

Արդարեւ երկու հսկող ոստիկան կու- գային հաշուուած քայլերով: Կայարա- նին պաշտօնեան կանչեց զանոնք և եկան առանց անապաբելու, վասն զի չէին կարծեր որ կարեւոր կամ ստիպողական բանի մը համար կը կանչուէին: Եւ երբ տեսան եղածը, շատ չյուզուեցան, և եղածը կառապանին պատմել տալով, աւելի տարւօքը լըջարար ըսաւ թէ այսպիսի արկածներն հազուադէպ չէին:

— Բայց պարոնը կ'ըսէ թէ սպան- նուած է հանրակառքին մէջ, ըսաւ կառապանը:

— Ես չեմ պնդեր, պատասխանեց ե- րիտասարդը, կ'ըսեմ միայն թէ այս մահը վերջին աստիճան արտակարգ բան մ'է: Ես այդ խեղճ աղջկան դէմը նստած էի, և...

— Ուրեմն վաղը թաղիս ոստիկանու- թեան սենեակը պիտի դաք և գիտ- ցածնիդ ըսէք: Ի՞նչ է ձեր անունը:

— Բօլ ձորնէօզ. նկարիչ եմ և սա զիմացի մեծ տունը կը բնակիմ:

— Նկարիչներուն նստած տունը: Լաւ:

— Եթէ կ'ուզէք, այցեսոմսս ալ տամ:

— Այդչափը կը բաւէ, պարոն: Տե- սուչը վաղ առտու կը տեսնէ ձեզ: Բայց դուք չէք կրնար հոս մնալ: Գրա- սենեակը պիտի գոցուի, և ընկերս ալ

ալ պիտի երթայ իմաց տայ պահակա- նոցին որ պատգարակ մը դրկեն: Բա- րեբաղդաբար օդը ցուրտ ըլլալով, սրճարաններուն առջև նստողներ չի կան: Եթէ արեւ ըլլար, բազմու- թիւնը կը լցուէր այս դրան առջև:

Ծերուկ ոստիկանն այնչափ վստահ կերպով կը խօսէր, և ա՛յնչափ փորձա- առ կ'երեւար եղբական դէպքերու, որ Բօլ ձորնէօզ սկսաւ երկբայիլ իւր դատողութեան ճշդութեանը վրայ:

Ոճիրի մը գաղափարն եկեր էր միտ- քը՝ առանց գիտնալու թէ ինչպէս, և հարկ կ'ըլլար եզրակացընել թէ իրո- ղութիւնները բացարձակապէս կը հեր- քէին իւր կարծիքը:

Դիակին վրայ վէրք մը չկար, և ու- ղեւորութեան միջոցին չպատահեցաւ այնպիսի բան մը, որմէ կարելի ըլլար ենթադրել թէ դժբաղդ տղեկը զար- նուած էր:

— Ստուգիւ չափազանց երեւակայու- թիւն ունիմ, ըսաւ ինքնիրեն կայարա- նէն դուրս ելած միջոցին: Գաղտնիք կը տեսնեմ այնպիսի իրողութեան մը մէջ, որ ամէն օր կը պատահի: Այդ խեղճ աղջիկն անշուշտ սրտի հիւանդու- թիւն ունէր... երակ մը խզուեցաւ և շանթահար մեռաւ: Յաւալի, շատ ցա- ւալի բան. դժբա՛ղդ աղջիկ, սքանչե- լապէս գեղեցիկ. բայց ի՞նչ կուգայ ձեռքէս, և անխելքութիւն է պարապ տեղը ժամանակս կորսնցնել հոս: Նը- կարս ունիմ լմնցնելիք: Սալօսին համար: Արդէն փոքր բան չէ ինքզինքս այն վիճակին մէջ դնել որ ոստիկանութեան տեսուչ մը զիս հարցաքննէ այնպիսի իրողութեան մը համար, որուն վրայ լուրջ բան մը չունիմ բսելիք, և ան- շուշտ պիտի ծիծաղի իմ արտասոց գա- ղափարներուս վրայ եթէ սպանութեան մը հնարաւորութեան խօսք ընեմ... որ գործուած ըլլայ որմէ՞... այն գր-

Թասիրա տիկինէն, որուն ես յաջորդեցի Լավալ վաղոցին անկիւնը... և Խ՞նչ պէս... անշուշտ փշերով խւր քով նըստող դեռատի աղջկան վրայ... անտեղի, բացարձակապէս անտեղի... կեանքը մոխի պէս չմարելը:

Կայարանին պաշտօնեան արդէն կը դնէր փեղկերը, և ոստիկաններէն մին կը վազէր մարդիկ գտնելու որպէս զի վերջնէն աղջկան դիակը Միւս ոստիկանը կեցեր էր կայարանին դրան առջև, որպէս զի հեռացնէր հետաքրքրիչներն՝ Եթէ կեցեր կայանային: Կատապանը, որ շատախօս էր, կը հասկցընէր անոր թէ ինք նըշմարեր էր որ աղջկին արդէն հիւանդոտ դէմք ունէր: Կառավարն իւր նըստարանէն վար չէր իջած, և մեծ դրժուարութեամբ կը զոպէս ձեռքն, որք ընկերութեան ախոռն երթալ կ'ուզէին անհամբեր:

— Ինծի պէտք չունիք այլ ես այնպէս չէ՞, հարցուց Ֆրընէօզ ոստիկանին:

— Ո՛չ, պէտք չունիմ, պատասխանեց նշանացի:

Երիտասարդ նկարիչն իւր տունն երթալ սկսաւ, որ հեռու չէր: Բայց հազիւ երեք քայլ առած էր, միտքն եկաւ որ իւր ցուպը կառքին մէջ մնացեր էր, գեղեցիկ ուսինացուպ մը, զոր իւր մէկ բարեկամը, ծովային սպայ, Չինաստանէն բերած էր, և չէր ուզեր ձեռքէ հանել: Հանրակառքը ստակաին հոն կեցած էր, վաղեց մէջը մտաւ, լուցկի մը վառեց, և երբ ցուպը գնտնէն կը վերցնէր ուր ինկած էր, թուղթ մը տեսաւ որ նայնպէս ինկած էր, և ոսկեգօծ ստեղ մը, զոր կիները կը գարծածեն իրենց փեղջյրը բռնել տալու համար:

— Ա՛, խեղճ աղջկա՛նն է, բոս ինքնիբերն, յիշատակ մը կը մնայ ինձ անկէ:

Բօլ Ֆրընէօզ առաւ թուղթն ու ա-

սեղն ալ, վերարկուին դրոպանը դրաւ: Հանրակառքէն վար իջաւ և առանց ետեւը նայելու հեռացաւ, վախնալով որ ոստիկանը կ'երէնէր զինքը կը կանչէր:

Այ հիմա միտք չունէր տխուր արկածին դրողելու. որոշեց հանդարտ կենալ և խօսքն անդամ չընել՝ եթէ թաղին տեսուչ ոստիկանն իւր վկայութիւնը չպահանջէր:

Բօլ Ֆրընէօզ աղաւթ և շատ մ'ալ սիրուն բարեմասնութիւններ ունէր, միայն հանտատամբութիւնը պակաս էր քիչ մը: Գլուխը դիւրաւ կը տաքնար և շուտ կը պաղէր: Ամէն առթիւ կեղակարծ արկածներու մէջ կը նետուէր, գրեթէ այն տղայոց նման, որք իրենց առջև թուշող թիթեռնիկներուն ետեւէն կը վազեն, բայց շուտ կը ձանձրանար և ետ կը քաշուէր, և այն ժամանակ իւր բուն էութեան վերադառնալով՝ իւր արուեստովը, աշխատութիւններովն և քիչ մ'ալ իւր գուարճութիւններովը կ'ըբաղէր, թէև բաւական կանոնաւոր կեանք կը վարէր:

Այսպէս, այն իրիկունը, բուն սըրտայտուրումներ կրելէ ետեւ՝ հանդարտ էր: Գեռատի աղջկան մը մահուան վերայ ամբողջ վէպ մը ծրագրած էր, և այն վէպը քիչ քիչ կ'աւրուէր մտքին մէջ:

Հետեւապէս կը փութար իւր աշխատանոցը մտնել: Ճամբուն վրայ՝ սրբճարանի մը մէջ՝ բարեկամ մը տեսաւ, նկարիչ իրեն պէս, որ պարսպ դաւաթի մը և խամած դարեջուրին թիւր նշանակող ափսէներու դէզի մ'առջև միայնիկ նստած էր սրճարանին ստալին խորշին մէջ, տեսակ մը սպակեպատ վանդակ, ուր նստողը դուրսէն կը տեսնուի, և ինքն ալ անցորդները կը տեսնէ: Ֆրընէօզը տեսնելով, նշանացի կան-

չեց. ան ալ պարտաւոեցաւ ներս մտնել, գիտնալով որ եթէ ճանրան շարունակէր, իւր այդ բարեկամն իւր ետեւէն պիտի վազէր:

Անունը Պինոս էր այդ դարեջուրի սիրահարին: Միջակ նկարիչ, բայց աննման ճառատող, գործնական փիլիսոփոս, առնէտի մը չափ ծոյլ, ամէն բանի գրադող, նկարելէ դատ, թէև ձեռքը երեք չորս նկար ունէր: Ասով հանդերձ ամենաբաւ աշխարհիկ երիտասարդ, անչահասէր, ուրիշի ծառայութիւն ընող և այս ամենուն հետ ալ վերջին ծայր դուրսծալի:

Ֆրընէօզ, որ բնաւ մէկ կէտի վրայ համամիտ չէր անոր, չէր կրնար անցնիլ անկէ, և յօժարալիամ խորհուրդ կամ կարծիք կը հարցնէր անոր, որպէս զի հակառակ խօսեցնելու և այլանդակ դադափարներ յայտնել տալու հաճոյքը վայելէր:

— Վերջապէս ձեռքս անցուցի քեզ, գոչեց Պինոս, բոլոր իրիկունը քեզ փնտռեցի, ո՛ւր էիր, ուսկի՞ց կուգաս:

— Արտառոց թաղէ մը: Ազգականներէս մին, որ Բիթիէ հիւանդանոցին մէջ ներքին բժիշկ է, և Լասէրէս փողոցը կը բնակի, ճաշի հրաւիրեց զես, պատասխանեց Ֆրընէօզ:

— Եւ գինիներու վաճառանոցին հանրակառքէն իջար, մինչ պէտք էր քալելով դայիր փառաւոր սառոյցին վրայէն: Դուն միշտ քաղքենի պիտի մընաս:

— Քաղքենի, որչափ ուզես, բայց տարօրինակ պատմութեան մը հանդիպեցայ:

— Հանրակառքին մէջ: Կը հասկնամ ի՞նչ է. նամակներդ կորուսած ես:

— Կատակը մէկդի. շատ լուրջ բան է: Տես ի՞նչ կ'անցնի կայարանին դըրան առջև:

— Այո՛, կը տեսնեմ, կառավարն հոն

խմբուած հինգ-վեց հետաքրքիր ապուշներու մէջը կեցած կը ճառասէ:

— Մեռած աղջիկ մը կայ կայարանին մէջ. գեղեցիկ աղջիկ մը, որ կառքին մէջ նստած էր... նախ դիմացս, ետքըն ալ քովս...:

— Հոգին թեւերուդ մէջ աւանդեց, հարցուց Պինոս ծաղրածութեամբ:

— Գրեթէ, և մարդ չնշարեց մեռնիլը:

— Ի՞նչ կ'ընես Ֆրընէօզ, կատակ կ'ընես:

— Ճշմարիտ կ'ըսեմ: Տարօրինակ, այն աստիճան տարօրինակ մահ մը, զոր պահ մը կարծեցի թէ բնական չէր:

— Լուծելու կարօտ գաղտնիք մը: Իմ գործս է: Ես ոստիկան ըլլալու համար ծնած էի. ամենէն խորամանկ ոստիկանը ձեռքս ջուր թող լեցնէր: Պատմէ կեղևութիւնը, և ես ամբ քեզ իմ եզրակացութիւնս երբոր իմանամ մանրամասնութիւնը:

— Մանրամասնութիւն չիկայ: Ամենապարզ դէպք մ'է: Երբ Սէն-Ժէոմէն պուլվարին կայարանը հասայ. աղջիկն արդէն հանրակառքին մէջն էր. նշարեցի գեղեցիկ ըլլալը, և դէմը նստայ: Խոչոր կին մը նստած էր աջ կողմը, պարոն մ'ալ ձախ կողմը... պարոն մը, եթէ կ'ուզէք... որ ազգային պահապան գինուորներու հին թմբկահարի մը դէմքն ունէր:

— Լաւ, աւատիկ արդէն կասկածելի մարդ մը:

— Կասկածելի կամ ոչ, հանրակառքին չուէլէն ստալ իւր տեղը տիկինի մը տուաւ որ ուշ հասած էր... ճշմարիտ տիկին մը, վայելչապէս հագուած և բաւական գեղանի, որչափ որ կրցի դատել քողին ետեւէն:

— Երեսն սըղած էր, ըսել է թէ զինքը ծածկելու պատճառ մ'ունէր: Եւ առանց վարանելու ընդունեց նկարա-

գրած պարոնիդ քաղաքավարութիւնը: Գիտե՞ս ի՞նչ կապացուցանէ այդ: Զիրար կը ճանչէին, և մէջերնին որոշուած էր իրենց ընելիքը: Մարդը պահած էր այն տեղը, և կինը գնաց նըստաւ: Ահա այդ կինը կատարած է գործը:

— Բայց բան մը չըրաւ, դոչեց Ծըրընէօզ:

— Այնպէս կը կարծես, որովհետեւ բան մը չտեսար, ըսաւ Պինոս: Ես նորէն կ'ըսեմ և կը պնդեմ թէ՛ տեղերու այդ փոխանակութիւնը բնական չէ: Հիմա ես հիմ մ'ունիմ և կը բաւէ ինձ: Շարունակէ, վերջին կառքն էր, այնպէս չէ՞:

— Այս՛, Լասէբէտ փողոցէն վազեցի, որպէս զի չփախցնեմ:

— Մարդն իւր տեղն այդ կնոջ տակէն ետքն ի՞նչ ըրաւ:

— Կառքին մէջ չկեցաւ, վասն զի նստելու տեղ չկար, այլ վրայի բարձրաւանդն ելաւ նստաւ այն սաստիկ ցուրտին որ զրոյէն քանի մ'աստիճան վար էր, և այնպիսի կծու հով մը կար որ մարդուն երեսը կը ծակէր:

— Այո՛, վերը նստաւ, որովհետեւ կ'ուզէր ստուգել թէ իւր մեղսակցուհին պիտի կատարէ՞ր պայմանեալ գործողութիւնը:

— Ամենեւին, մարդը թուռ-ա՛ժվէրն փողոցին բերանը իջաւ կառքէն, խկ կինն աւելի հեռուն, Լավալ փողոցին անկիւնը:

— Այսինքն երեք վայրկեան ետքը: Դժուարութիւն չունէին գիրար գտնելու: Աներկբայ եմ որ մարդը վերէն իջած ժամանակ կառքին պատուանդանին վրայ վայրկեան մը կեցաւ, որպէս զի կինը տեսնէր իւր երթալը:

— Ո՛չ, բայց ես նշմարեցի:
— Ի՞նչ:
— Բարձրաւանդէն վար իջնելէն ա-

ռաջ երեք չորս անգամ կոշիկին կրունկը գետնին զարկաւ ուժով մը, այնպէս որ կառքին մէջլիններն ամէնն ալ լսեցին:

— Տարակոյս չկայ որ մեկնելուն նշանն էր:

— Իմ ալ մաքէս անցաւ:

— Ա՛, կը տեսնես որ դուն ալ կը կատարէիր, միայն թէ կարծիքներդ հաստատելու քաջութիւնը չունիս:

— Դուն ալ երբ գաղափար մը կազմես, անդիի ծայրը կ'անցնիս: Կ'ընդունիմ, եթէ կ'ուզես, որ այդ կինն ու մարդն իրարու ծանօթ էին, բայց ո՛չ խեղճ աղջիկ մը սպաննելու համար, զոր չէին ճանչեր:

— Ինչէ՞ն գիտես:

— Ես աներկբայ եմ որ աղջիկը դանոնք չէր ճանչեր, վասնզի երեսնին անգամ չնայեցաւ: Ես աւելի տրամադիր եմ հաւատալու թէ մարդը կը յուսար որ կառքէն իջած ժամանակ տիկինն ալ իւր շնորհակալութիւնն յայտնելու համար կ'ելնէր կառքէն և կ'ընկերակցէր իրեն: Կառքը մտած ժամանակ թոյլ առուեր էր իրեն որ ձեռքը սեղմէր:

— Հետզհետէ կ'ստուգուի: Այլ եւս բնաւ տարակոյս չունիմ. այդ ձեռնասեղմումը «մեռցու» ըսել էր:

— Բայց դուն խենդ ես: Ըսի քեզ թէ ճամբան ամենափոքր դէպք մը չպատահեցաւ:

— Վերջապէս աղջիկը ողջ էր կառքը մտած միջոցին, այնպէս չէ՞:

— Օ՛, կատարելապէս ողջ: Ան ալ քող մ'ունէր, բայց աչերը կը փայլէին քողին ետեւէն երկու սեւ ազամանդներու պէս:

— Լաւ, բայց կայարանը հասած ժամանակնիդ մարեր էին: Ե՞րբ նշմարուեցաւ մեռած ըլլալը:

— Ես նշմարեցի, երբ Բիկալ հրատար-

րակին կայարանը հասանք: Բանի մը վայրկեանէ ի վեր գլուխը ուսիս վրայ յեցած էր: Ես կը կարծէի թէ կը քրնանար, ուղեցի արթնընել, և...

— Ի՛նչպէս, թու ուսիդ վրայ, ըսելէ թէ քովը նստած էիր, ես կը կարծէի թէ դիմացն էիր:

— Աքողեալ տիկինը, որ ձախ կողմը նստած էր, նոր կամուրջէն ասդին յենարան եղած էր անոր, կարծելով ինձ պէս թէ կը քնանար: Երբ այն տիկինը Լավալ փողոցն իջաւ, աղաչեց ինձ որ իւր ըրածն ես ընեմ: Իմ ալ ուզած բանս էր իբր բարձ ծառայել գեռատի գեղեցիկ աղջկան մը: Աջ կողմը պարապ ըլլալով, անցայ հոն նստայ, և տիկինն իմ ուսիս վրայ դբաւ այն քաղցըր բեռը:

— Եւ դուն տարօրինակ չգտար այդ քունը որ բնաւ չէր ընդմիջուեր: Ճըլմարիան ըսելով, Բ՛՛, պարզամտութիւնդ չափ սահման չունի:

— Կը հաւատամ, և սակայն...

— Տիկինն աղէկ գիտէր որ դիակ մը կը յանձնէր քեզ. և այն նպատակաւ բռնած էր որպէս զի չիյնար: Դէմքէդ դատեր էր որ բան մը չէիր նըլմարեր և գործը թու գլուխդ փաթթելով՝ չո՛ւց: Շատ ծանր բան, կրնար աւելի գէշ խաղ մը խաղալ քեզ: Ի՞նչպէս ելսար գործին մէջէն:

— Ա՛, ըսել կ'ուզես թէ քովինս ես մեռցուցած ըլլալու ամբաստանութիւն կրնային ընել իմ վրայ:

— Ինչո՞ւ չէ, աւելի արտակարգ բաներ տեսնուած են:

— Ինչէ՞ր կ'ըսես. ես խօսեցայ ոստիկան զինուորներուն հետ, որք աղջկան մեռած ըլլալն ստուգեցին: Մարմինին վրայ վէրք, մինչեւ խկ խայթուած մը չի կայ:

«Տես պահականոցին մարդիկը որ պատգարակ մը կը բերեն զայն վեր-

ցընել տանելու համար: Ի՞նչակ անունս հարցուցին ոստիկանները:

— Անունդ հարցուցին և դուն ալ տուի՞ր:

— Անշուշտ, ինչո՞ւ ծածկէի: Եւ չէի կրնար ուրիշ կերպ ընել:

— Այդ մասին իրաւունք ունիս, եթէ ծածկելու ուզէիր, կատարած կը հրաւիրէր վրադ:

— Ի՞նչ բանի կատարած, երբ կ'ըսեմ քեզի թէ այդ աղջիկը շնչերակի խըզումէ մը մեռած էր: Զայն տեսնողներուն ամէնն ալ այդ մասին տարակոյս չունին, ոստիկանները, կայարանին պաշտօնեան, կառապանը...

— Ամէնն ալ մէկ մէկէ աւելի ձեռնահաս այդ մասին: Խենդ խօսքեր մի՛ ըներ: Դուն ալ ինձի չափ գիտես որ բժշկական քննութենէ մը պիտի անցնի այդ մեռեալը, և այն ժամանակ միայն կրնայ լուծուիլ խեղիքը:

«Եւ ինչ որ ալ վճռէ բժիշկը, տարակոյս չիկայ որ դուն պիտի կանչուիս ոստիկանութեան տեսուչէն:

— Կ'երթամ... և պիտի ջանամ որ քեզ հետս չտանիմ, վասն զի թու այդ երեւակայական խորհրդածութիւններովը կրնաս ամենէն ողջամիտ մարդուն ուղեղը շփոթել: Ա՛հ, դուն սարսափելի հարցաքննիչ դատաւոր մը կրնաս ըլլալ: Ամէն տեղ ոճիր կը տեսնես:

— Ուր որ կայ, հոն կը տեսնեմ, սիրելի՛ս: Դուն չէնք շնորհք սպանութեան մը ներկայ գտնուեր ես, վարպետութեամբ մտածուած և իշխանաբար գործադրուած սպանութեան մը, որ երեք ամիս կրնայ դառնանել Բարիզի լըրագիրները:

— Դուն խենդ ես: Լրագիրները պիտի պատմեն վաղը թէ աղջիկ մը յանկարծամահ եղաւ հոնրակառքի մը մէջ, և վաղուքնէ ետեւ ոչ եւս խօսքը պիւրայ:

—Եթէ հասարակութիւնը չզբաղի այդ բանին, ես պիտի զբաղիմ:

—Ըսել է թէ ոստիկանութեան պաշտօն պիտի կատարես քու հաճոյքիդ համար: Այդ միայն կը պահէր քեզ:

—Մարդ մ'իւր պարագծամերը բանի մը պէտք է գործածէ: Ես ալ ժամանակ ունիմ:

—Եւ նկա՞րդ, ողորմելի՛ մարդ, նըկա՞րդ, զոր ցուցահանդէսին համար պիտի պատրաստէիր, և հազիւ սկսած ես:

—Պարունին կը պատրաստեմ: Ես ձեռքը չեմ կրնար աշխատիլ: Ըսել է թէ երկու ամիս ունիմ առջևս, հետեւաբար մինչեւ գարուն կրնամ գտնել այդ ոճիւրը գործող կինը:

—Այսինքն այն տարաբաղդ աղջկան քովը նստող կինը:

—Քնականաբար:

—Ներեցէք, երկու կին կային, մէկը աջ կողմը, միւսն ալ ձախ կողմը:

—Այն որ մինչեւ Լավալ փողոցը նստաւ և այնչափ ձարտարութեամբ քեզի բռնցուց դիակը:

—Ուրեմն հաճէ հասկցնել ինձ թէ ի՞նչպէս կրցաւ սպաննել քովինը առանց մէկէ մը նշմարուելու:

—Ամենայն սիրով... եթէ հիմա քեզի հարցնելիքն րուս պատասխանես: Ըսիր ինձ թէ աղջիկն սքողեալ տիկինին վրայ յեցած էր...:

—Այո... կը կարծեմ իսկ թէ տիկինը գայն մէջքէն բռնած էր:

—Ե՞րբ իւր թեւին մէջ առաւ գայն:

—Կը թուի ինձ թէ նոր-կամուրջն տնցնելէն ետեւ: Հանրակառքը խիստ արագ կ'երթար և կ'երեւի որ անխնեքէն մէկը մեծ քարի մը վրայէն անցաւ, վասն զի ուժգնապէս ցնցուեցաւ, աղջիկը ճիշ մը արձակեց... տկար ճիշ մը, և ձեռքը սրտին տանելով ետևուն վրայ ինկաւ...: Հաւանաբար

ցնցման ոստակութենէն սրտին երակներէն մէկը խզուեք էր...: Առանց ցաւ քաշելու և գրեթէ առանց շարժում մ'ընելու մեզաւ:

—Արդարեւ շատ ճշմարտանման է այդ, ըսաւ Պինոս հեղինակեամբ: Եւ այդ թեթեւ միջնակծկումէն ետեւ գրլուխը ծռեց... քովը նստող բարեխիր տիկինն ալ իւր ուսը ներկայացուց... և թեւն ալ գօտի մ'ըրաւ խեղճ աղջկանը որ չչարժեցաւ այլեւս:

—Տեսածի պէս կը պատմես եղելութիւնը:

—Եւ դուն որ տեսար, պարզապէս հետեւցողեր թէ աղջիկն յանկարծ քրնացաւ և այլեւս չարթնցաւ:

—Առաջ ուշադրութիւն չըրի, որովհետեւ կառքին մէջը մուտ էր, կանթեղները գրեթէ մարտծ էին:

—Հարիւր, ես աներկբայ էի այդ մասին, անզգամուհին այդ մուտին վտահած էր:

—Բայց, նորէն կ'ըսեմ. ի՞նչ հնարք գործածեց քանի մը վայրկեանի մէջ անդիի աշխարհը զրկելու համար դեռ քան տարու չեղած աղջիկ մը, որ ապրելէ դատ ուրիշ բան չէր ուզեր: Չես կրնար անուշտ ըսել թէ դաշոյնով զարկաւ:

—Պաշտօնով զարկա՛ւ, օ՛, ոչ: Աւելի ապահով և աւելի լռին միջոցներ կան, ի՞նչ են.

—Բայց... թոյնը... օրինակի համար... կաթիլ մը բրուսիական թթու (ասիտ բրիւսիք) կը շանթահարէ ամենէն կորովի մարդը:

—Երբ աչքին մէջ կամ լեզուին վրայ թափեն, այո...:

—Կամ մարթին վրայ սկրզուածքի մը վրայ...: Դուն ցնցեց ուսերդ... Շատ աղէկ: Ես յաւակնութիւն չունիմ այս իրկուն քեզ համոզելու: Վազը պիտի հասկընաս թերեւ թէ ես իրաւունք

ունէի: Կէս օրէն ետեւ աշխատանոցը կուգամ: Առ այժմ կը բաժնուիմ քեզնէ: Աւասիկ դիակը պատգարակը դրեր կը տանին: Ես ալ կ'երթամ պահականոցին շուրջը կը պտտիմ, որպէս զի խմանամ թէ ի՞նչ կը խօսուի այդ դէպքին վրայ: Տասնապետը ծանօթս է, տեղեկութիւն կուտայ ինձ:

Եւ սրճարանէն դուրս վազեց՝ պրոպալով իւր բարրկամին:

—Խմածիս հաշիւը վճարէ: Տասնուչորս գաւաթ է:

2

Օրերն իրարու կը յաջորդեն և չեն նմանիր մէկմէկու, կ'ըսէ առածը: Արդետով մը վերջացող չարաշուք ուղեւորութեան հետեւեալ առտուն դեղեցիկ ձմրային արեւ մը կը լուսադրէր Քիկալ հրապարակը. օդը յանկարծ մեղմացեր էր, աղբիւրը ստունահալ իւր գուարթ ջուրը կապոյտ երկինքն ի վեր կը ցայտեցնէր:

Բօլ ձորնէօզ ալ օդին պէս փոխուած էր. գիշերուան մը հանգիստը՝ առջի իրիկուան սրտայուզումը հանդարտեցնեցեր և տխուր տեսիլները վաներ էր: Ոչ ևս կը մտածէր այն արկածին վրայ, բայց միայն ցաւելու համար խեղճ մեռելուհւոյն վրայ, գոհ ըլլալով միանգամայն որ կարեւորութիւն չէր ընծայած իւր Պինոս բարեկամին ցնորական ծաղրելի գաղափարներուն:

Առաւօտուն թաղին ոստիկանապետին կողմէ զրկուած տեսչի մ'այցելութիւնն ընդունեց էր, որ առաւել իրեն հետ խօսակցելու եկած էր քան թէ հարցաքննելու, վասն զի հանրակառքին մէջի մահուան դիպուածական ըլլալն ըստ արժանւոյն հաստատուեր էր մարմինը քննող պաշտօնական բժշկին կողմէ, և բռնութեան ո և իցէ նշան մը չէր տեսնուած վրան:

Աղջիկը ներքին արիւնհոսութենէ մ'մեռած էր, և սպասելով որ դիակատութիւնը հաստատէ բժշկին եզրակացութիւնը, մարմինը Մօրիկը (տնձանօթ մեռեալներու դիարան) զրկուեր էր որովհետեւ վրան որ և է նշան մը չէր գտնուեր ո՛վ ըլլալը ծանուցանող: Մահուան պարագաներն ալ չէին ներքեւ ոճրագործութիւն մը ենթադրել, այս կէտին վրայ կառապանին վկայութիւնը շատ բացորոշ էր: Թաղին ոստիկանապետին առջև տուած վկայութեան միջոցին մինչեւ իսկ ծիծաղեր էր այն ուղեւորին վրայ, որ կայարան հասած միջոցին կը պրոպալ թէ աղջիկն սպաննուած էր, և դիւրաւ հաստատեր էր թէ այն պարոնին գաղափարը գուրկ էր ողջմտութենէ:

Ուղեւորը Բօլ ձորնէօզն էր, զոր ոստիկանապետը լաւ կը ճանչէր համբաւէն, վասն զի անունն արդէն հրոշակուած էր, և զինքը դժուար չէր գտնել, որովհետեւ հասցէն սրահապան ոստիկանին քով թողած էր:

Բայց Բօլ ձորնէօզ բոլորովին փոխած էր կարծիքը. այնպէս որ բացարձակապէս անօգուտ դատեց տեսուչին հետ տեսակցած միջոցին իւր Պինոս բարեկամին խենթութեամբ խորհրածութիւններուն խօսքը ընել: Բաւական սեպեց պարզապէս իւր տեսածը պատմել առանց մեկնութիւններու:

Եւ ամէն մարդ համամիտ ըլլալով, ձորնէօզ անհաճոյ մտահոգութենէ մը ազատ, ախորժով նախաձաշ ըրեր եւ եռանդով իւր գործին աշխատիլ սկսեց էր:

Նկար մը կար ձեռքը, զոր լմնցնելու վրայ էր, և որուն վրայ մեծ յոյս ունէր որ յառաջիկայ Սաղոնին մէջ իւր յաջողութիւնը բարձրացնելու առիթ պիտի ըլլար: Կնոջ պատկեր մ'էր, դեռահասակ հոռմայեցի աղջկան մը, որ

այժմ որ կը պահէր Սէսիլիա Մետիլլայի շիրմին ստորոտը:

Եւ բարեբաղդութիւն ունեցեր էր օրինակ մը գտնելու, զոր կարծես թէ Աստուած յատկապէս ստեղծեր էր իւր երազած տիպն իրեն հայթայթելու համար:

Օր մը՝ Լ'օնմարթրի զառիվայրին վերայ դեռատի, գրեթէ մանկահասակ աղջիկ մը տեսեր էր, որ բուստրանական պարտէզին ճամբան հարցուցեր էր իրեն:

Փրբնէօզ՝ չորս տարի Հոռոմ կեցած ըլլալով՝ բաւական խտալերէն գիտէր, աղջկան խնդրած տեղեկութիւնն անոր հասկցած միակ լեզուովը տալու համար:

Հարցուցեր էր անոր թէ ինչ կ'ընէր Փարիզի մէջ. ան ալ առանց վարանելու պատասխաններ էր թէ իւր հայրենակիցներէն մէկը, որուն արհեստն էր իտալիոյ մէջ երկու սեռէ պատկերացու տիպարներ գտնել, զինքը Փարիզ բերեր էր. և զինի լվաճառանոցին մօտ Սէն-Պէտրար փողոցը կը բնակէր մեծ տան մը մէջ, որ լեցուն էր շրջուն նուագածուներով: Ինքը Սապինայի լեռներուն մէջ Սապիաքօ գիւղը ծնած էր, և իւր մանկութիւնն անցուցեր էր այժմ արածելով այն վայրենի երկրին ապառաժներուն մէջ: Մայրը, որ տարիէ մ'ի վեր մեռած էր, Հոռոմի նկարչական աշխատանոցներուն մէջ տիպարի պաշտօն կը կատարէր: Իւր հայրը տեսած չէր, բայց կ'ըսէին իւր գեղին մէջ թէ Փրանսացի պատկերչան մ'էր, որ քանի մը տարի իտալիա կենալէ ետեւ, մեկներ էր, առանց զինքը հոգալու: Իրմէ մեծ քոյր մ'ալ ունի եղեր, զայն ալ փոքրիկ հասակին մէջ երգի գասատու մ'առեր տարեր էր, որպէս զի երգել սովբեցնելով՝ իտալիոյ թատրոններէն մէկուն մէջ զնէր:

Բօլ Փրբնէօզ, սքանչանալով աղջկան գեղեցկութեանը վրայ, իսկոյն մտածեր էր իւր օգտին համար գրաւել այդ անտիպ պատկերացուն, — աղջիկը դեռ իբր տիպար ծառայած չէր բնամէկ նկարչի, — ուստի անմիջապէս բանակցութեան մտեր էր զայն Փարիզ բերող իտալացիին հետ, որ բաւական կլորիկ գումարի մը փոխարէն գըրաւոր խոստում տուեր էր պատշաճաբար և առանձին բնակեցնել Բիան, (այս էր աղջկան անունը), ամէն օր Բօլ Փրբնէօզի բնակարանը զրկել իբրեւ տիպար ծառայելու համար առանց բնաւ ականջ կախելու ուրիշ նկարչներու կողմէ ըլլալիք առաջարկութեանց:

Եւ հինգ ամիսէ ի վեր Բիան և ոչ իսկ անգամ մը չէր թերացած կէս օրին Բօլ Փրբնէօզի աշխատանոցն երթալէ: Երիտասարդ նկարչն առաւել իբրեւ բարեկամուհի կ'ընդունէր զայն քան իբր վարձկան:

Բիայի գեղեցկութիւնն աննշան չէր: Բնաւ չէր նմաներ այն իտալացի լամուկներուն, որոց ամէնն ալ միեւնոյն խոշոր սեւ աչերը, նոյն կարմիր և քիչ մ'ալ հաստ շրթունքն, և նոյն բաց կապոյտ գոյնն ունին, այնպէս որ միեւնոյն կաղապարի մէջ թափուած կը կարծուին:

Ճշգրտ այն սերունդէն էր, որք ամէն ժամանակ տիպար ընծայած են պատկերչաններուն, բայց այնպիսի դիմագիծ մ'ունէր որ գրեթէ միշտ կը պակսէր իւր երկրին աղջիկներուն, շարժուն և ուշիմ դիմագիծ մը, անձնայատուկ և կենդանի բան մը:

Եւ այդ դիմագիծը խաբուսիկ չէր: Բիան բաց միտք մը և ամէն բան հասկընալու և իւրացնելու զարմանալի դիւրութիւն մ'ունէր: Քանի մ'ամսուան մէջ լաւ Փրանսերէն խօսիլ սովբեր էր,

որուն մէկ բառն իսկ չէր գիտեր Փարիզ հասած ժամանակ: Իւր միամիտ դիտողութիւններոյն և անակնկալ պատասխաններովը կ'ըբօսցընէր նկարիչը: Կը զարմացնէր զայն իւր գաղափարներուն ուղղութեամբը, զոր ունէր կենաց ամէն պարագաներուն, մինչեւ իսկ գեղարուեստներու վրայ, որոնց յոյժ կենդանի զգացումն ունէր:

Աւելի կը զարմացնէր զայն իր գգօնութեամբը: Պջրտութեան ստուերն անգամ չունէր, և իր փութիկոտ համակիրներուն ինքզինք յարգել տալ զիտէր: Իւր հայրենական կերպարանքը պահած էր՝ առանց աղբարտելու փարիզեան նորածեւութիւններով, ինչպէս կ'ընէին իրեն պէսները: Երբէք չալ ձգած չէր իւր քիչ մը նիհար բայց գեղաձեւ ուսերուն վրայ. ոչ ալ պոթիներուն մէջ բանտարկած էր իւր արձանի ոտքերն, որք ապառաժուտ լեռներուն վրայ մերկ քայլելու վարժուած էին:

Սուրբ կեանք մը կը վարէր. միայն Փրբնէօզի աշխատանոցը գալու համար դուրս կ'ելնէր իւր բնակարանէն:

Այն օրէն ի վեր որ Փրբնէօզի աշխատանոցին մէջ իբրեւ տիպար ծառայելու պաշտօնն յանձն առած էր, իտալիայէն բերուած ուրիշ խեղճ աղջիկներուն ի միասին վարած կեանքէն հրատարելով, Սէն-Պէրնար փողոցի տունը կը բնակէր, առանց հաղորդակցութիւն ունենալու այն տան մէջ բնակող դատարկաչրջիկ գաղթականներուն հետ: Վերնայարկին մէջ փոքրիկ սենեակ կամ մանաւանդ մանսարտ մ'էր իւր բնակարանը, որուն մէջ իւր բովանդակ կարասիները կը բազկանային, մէկ երկաթէ փոքրիկ մահճակալէ, երեք խոտէ աթոռակներէ և մէկ ալ կտորած հայելիէ: Աշխատանոցն աւելցած բոլոր ժամանակն այն սենեակին

մէջ կ'անցունէր ընթերցումով, իւր հայրենեաց լեռներուն երգերն երգելով, երազելով...: Փրբնէօզ երբեմն կատակի համար կը հարցնէր անոր թէ ի՞նչ կը նշանակէին այն երգերը. կը պատասխանէր թէ չէր գիտեր: Թերեւս իւր տարիքին վրայ կ'երազէր, որ տասն և հինգը մտած էր:

Իւր բարեբարին քով տիպարի պաշտօն կատարելով շահածն իրեն բաւելէ ետեւ՝ կ'աւելնար ալ, վասն զի թռչունի մը չափ հազիւ կուտէր, արդու գարգին համար ալ շատ քիչ ծախք կ'ընէր, թէև մեծ խնամ կը տանէր իւր անձին և հագուստներուն:

Եւ զուարթ էր, այն անկեղծ գըրուարթութեամբ զոր գոհ վիճակը կուտայ մարդուս: Երբ Բօլի աշխատանոցը կը հասնէր, ուրախութիւնն ալ հետը կը մտնէր:

Ամիսէ մը ի վեր սակայն Փրբնէօզ նշմարէր էր որ նուազ ծիծաղկոտ, աւելի զգոյշ, աւելի խոկուն, վերջապէս նուազ տղայ էր: Ոչ ևս կը խաղար աշխատանոցին կատուին հետ, որ գեղեցիկ «անկօրա» (Պաղատիոյ կատու) մ'էր և շատ սէր տուած էր իրեն. իբրեւ տիպար նստելուն պէս՝ ծունդերուն վրայ կը ցատկէր:

Աղջկան այս վիճակը ծանր երեւցաւ նկարչին: Կը ճանչէր այդ բնութիւնները, իտալիայէն Փրանսա փոխադրուած այդ աղջկուկները, որք կը ծիւրին ու կը ծնգին առաջին քանի մը ամիսներուն մէջ մեր պաղ կլիմային տակ, և յանկարծ կը հասունանան արեւին առաջին ճառագայթներէն: Փրբնէօզ կը կասկածէր որ թեթեւ տարփանքի մ'ակցնաւորութիւն էր: Հասկընալու համար՝ քաղցրութեամբ հարցափորձեց զայն: Աղջիկը փոխանակ պատասխանելու՝ լալ սկսաւ: Նկարիչը չպնդեց, բայց իւր կասկածը արտմեցուց

գայն: Յըրնէօզ կապուած էր այդ մատաղ աղջկան, և ցաւ կ'զգար խորհելով որ թերեւս անմտարար պիտի սիրահարէր Ապրուծծայէն փարիզ եկած կոչա դուարածի մը, որ փողոցներուն մէջ ջուրթակ դարներով քանի մը սղլինձ դրամ պիտի շահէր: Մինչեւ իսկ կը հարցնէր երբեմն ինքնիրեն թէ արդեօք նախանձութիւն մտեր էր իւր սիրտը, և կը մեղադրէր ինքզինք թէ մոռցեր էր իւր քսան և ինը տարու ըլլալը, որ աղջկան տարիքին գրեթէ կրկինն էր: Այս խորհրդածութեամբ լուրջ և գրեթէ պաղ դէմք մը կ'առնէր, և ընդօրինակութեան նիտը կ'անցնէր առանց խօսք մ'ընելու խեղճ աղջկին, որ յուզուած սրտով կը մեկնէր:

Սակայն հանրակառքի արկածին յաջորդ օրը Բօլ Յըրնէօզի գուարթ օրերէն մէկն էր: Գատակար: քննութեան գործին անուղղապէս իսկ խառնուած չըլլալուն մտածութիւնը կ'ուրախացնէր զինքը. հետեւապէս դուարթութեամբ կը խօսակցէր այժարածուհիին հետ, որ Սէսիլիա Մէթէլլայի շէրիմէն քակուած մարմարէ հատոր մը ձեւացնող բարձր պատուանդանի մը վրայ պառկած էր:

— Ազուորիկ Բիաս, ըսաւ Յըրնէօզ ծիծաղելով, չես գիտեր թէ երէկ իրիկուն քու թաղիդ մէջ ճաշելով՝ քիչ մնաց որ պիտի գայի, վեց յարկէ վեր խցիկդ կոխէի:

— Եւ չեկա՞ք գոչեց աղջիկը: Ո՛րչափ ուրախ պիտի ըլլայի սենեակս ցուցնելով ձեզի. հիմա շատ գեղեցիկ է...: Երեք թաղար ունիմ ծաղիկի, և թրոչնիկ մը որ անուշ անուշ կը դալլալլէ: Ամէնն ալ ձեզ կը պարտիմ...:

— Վախցայ որ կը նեղեմ քեզ... խցիկդ անշուշտ թռչնիկիդ վանդակէն շատ մեծ չէ: Ասկից գատ... առանց կառնուիս իմաց տալու յանկարծ կոխել

ընակարանդ... շխտակն բռնելու համար չհամարձակեցայ, վախնալով որ սիրահարիդ կրնայի հանդիպիլ:

Բիա տփուգունեցաւ եւ աչերը լցուեցան:

— Ինչո՞ւ կ'ընէք ինծի այդ խօսքը: Դուք գիտէք որ ես տարփաւոր չունիմ:

— Օ՛ն, աղջիկ, մի՛ լար, ըսաւ Յըրնէօզ ժպտադէմ, դիրքդ կ'աւրուի: Միթէ այժերդ լեռն արածելու տարած ժամանակդ կուլայի՞ր:

— Երբէք հոս ալ սչ... միայն՝ երբ դուք կ'ուզէք վշտացնել զիս... դուք միայն կը լացնէք զիս...:

— Կը խնդացնեմ ալ... օ՛ն խնդաքիչ մը: ասպ թէ ոչ՝ պիտի կարծեմ որ սրդողած ես ինձ: Իմ խօսքս կատակ էր:

— Շատ աղէկ... այլ ես չեմ անցնէր միտքէս: Բայց, կ'աղաչեմ, անգամ մ'ալ մի՛ ըսէք թէ տարփաւոր մ'ունիմ ես... ո՛ւր պիտի գտնեմ: Աստուած իմ: Բնակած տանս մէջ հայր Լօրէնծօյի համար աշխատող մանչերուն ամենըն ալ տգեղ են և կապիկներու պէս չարածձի...: Ուրեմն Բիկալ հրապարակի՞ն մէջ, աղբիւրին սաքերո՞ւն վրայ...: Եթէ իմ եկած ժամանակս պատուհանէն դուրս նայիք, պիտի տեսնէք որ երբէք կանգ չեմ առնէր: Գրեթէ վազելով կուգամ որպէս զի ձեր աշխատանքը մտնելով տաքնամ և Միրզաս համբուրեմ... ան է իմ տարփաւորս:

Անկորս, որ վառարանին մօտ կըրկած կը խորզար, իւր անունը լսածին պէս մէկ տատումով ցաակեց Բիայի ծունկին վրայ, որ խնդալ սկսաւ:

— Իրաւ շատ կը սիրէ զիս... առանց իմ կանչելուս քովս կուգայ... և ընաւ չի նեղացնէր զիս:

— Իրաւունք ունիս, աղջիկ, Միրսա

բարի անատուն մ'է, ինձմէ լաւ է մանաւանդ Պինոսէն, որ ամէն անգամ հոս գալուն կը նեղէ քեզ:

— Օ՛, ան հոգս չէ... բայց դուք, պարո՛ն Բօլ, երբ կը խնդաք իմ վրաս, դէ՛ ի՞նչ լամ, ... և կեցուածքս...: Տեսէք, նիտին սկիզբէն ի վեր չէի ընաւ շարժած. բայց հիմա, որ զիս յուզեցիք, չեմ գիտեր ինչպէս կենամ...:

— Քիչ մ'առաջուան պէս... գլուխդ քեզ մը ետ: Ինձի նայէ... վունտէ Միրսան և անշարժ կեցիք:

Բիա՛ Յըրնէօզի ըսածին պէս ըրաւ, և կատուն ալ գնաց իւր սիրելի տեղը պառկեցաւ:

— Շատ աղէկ է այդպէս, ըսաւ նըրկարիչը, և որովհետեւ դուն այդպէս սիրուն ես, գիտցիր որ երէկ իրիկուն քեզի չի գալուս պատճառը սա էր որ քու փողոցէք անցած ժամանակս շատ ուշ էր... կէս գիշերին քառօրդ կար... հարկաւ ամէն մարդ քնացած էր էօրէնծօյի ձմերոցին մէջ:

— Ես քնացած չէի, ըսաւ Բիա կամաց մը:

— Այն ժամուն արթուն նստիլ, շատ գէշ է: Քու տարիքդ ունեցող աղջկուկները պէտք է պառկին Ավէ Մարիայի ժամուն, ինչպէս որ կ'ըսեն քու երկրիդ մէջ:

— Եւ ալ այնպէս կ'ընեմ ամէն գիշեր, բայց երէկ...

— Բացատրութիւն չեմ ուզեր, օրիորդ: Նորէն կեցուածքդ կ'աւրուի եթէ շողակրատի սկսիս, և ես ալ կորսնցրնելու ժամանակ չունիմ: Օրն արդէն անցնելու վրայ է. և սրպէս զի գուն ալ խօսելու չհարկադրես, չի պիտի պատմեմ քեզ դէպք մը որ պատահեցաւ ինձ... ձեր նոյնված թագէն վերադարձած միջոցիս:

— Ո՛հ, պարոն Բօլ... կ'երգես մի քիչ թէ րերանս չեմ բանար:

6034-70 (5/123-70)

— Ո՛չ, ո՛չ, դուն լուս կենաս թերեւս բայց ընելիք պատմութիւնս քեզ նորէն կը լացնէ... և ճշդիւ ինձ ալ քու աչերդ պէտք են:

— Կը յուսամ որ ձեզի գէշութիւն մը չպատահեցաւ:

— Ո՛չ, ո՛չ, կը տեսնես ահա որ ես այսչափ եռանդով չէի աշխատած երբէք: Եթէ այսպէս շարունակեմ, նկարս տան-հինգ օրէն կը լմնայ:

— Եւ անկէ ետք... ես չպիտի՞ գամ այլևս, հարցուց Բիա այլայլած:

— Օ՛ն, ահա նորէն դէմքդ կը փոխուի, շուկէ կեցուածքդ, չարածձի աղջկուկ, շուկէ: Այս պատկերէն ետև ուրիշ մը պիտի նկարեմ, և այն ատեն ոտքի վրայ պիտի կենաս երեք ժամ: Այնչափ պիտի յագնիս, որ խօսիլ չի պիտի ուզես:

Նոյն վայրկենին՝ աշխատանքին դուռն ուժգնապէս դարնուեցաւ և Պինոս ներս նետուեցաւ ուռմբի մը պէս:

— Տեսայ զայն, սիրելիս: Աքանչելի՛ է:

— Ո՛վ, հարցուց Յըրնէօզ:

— Չե՞ս հասկընար, սեռած աղջիկը: Մօրկէն կուգամ, ժամէ մ'իվեր հոն գրուած է... և մեծ բազմութիւն խրոնուած է...:

Պինոս «Մօրկէն կուգամ» խօսքն հագիւ արտասաներ էր, Յըրնէօզ սկսաւ աչք ընել, որուն իմաստը շատ պարզ էր. բայց Պինոս անգամ մը ճանրայ ելնելէ ետև՝ իննալ չէր գիտեր, և առանց կանգ պահելու շարունակեց խօսքը:

— Իրաւունք ունէիր, սքանչելի է, թէ որ կենդանութեանը միջոցին տիպարի պաշտօն կատարել ուզէր, ժամը քսան փրանդ կը վճարէր իրեն: Բիա ալ հարցուաղիւս տիպար մ'է, աչկայ չէ. յայց չի կրնար անոր հասնիլ: Փորձեցի՞ որ սրտազիրն հանել ապակիին ետև թէ րերանս չեմ բանար:



Թողուցին, և հոն կեցող քաղքենի մ'ալ ամեղցփեղ խօսքեր ըրաւ ինձի: Զիս անսիրտ կոչեց աւանակը: Ես իրմէ շատ աւելի սիրտ ունիմ, ըրածս արուեստին շահուն համար էր: Բարեբաղդաբար աղջկան լուսանկարը պիտի հանեն: Մնաց որ, երբ տեսայ որ զիս դուրս կ'ընէին, ըսի մտքովս թէ միակ միջոց մը կար, և դացի...

— Պիտի լռե՞ս, նզոված շաղակրատ, գոչեց անոր Ծրընէօղ, եթէ բառ մ'ալ արտասանես, դուրս պիտի ընեմ քեզ:

— Ինչո՞ւ համար. ի՞նչ ունիս այսօր, հարցուց Պինոս ապշելով:

— Ի՞նչ պիտի ունենամ, գործիս արգելք կ'ըլլաս. և միանգամայն ատուր պատմութիւններովը կը խրտեցնես սա խեղճ աղջիկը:

— Ինչպէ՞ս, Մօրկին խօսքն ընելու պատճառով: Ա՛, գէշ չէ. ընդհակառակն կ'ըբօսցընէ զայն: Գրաւ կը դնեմ որ Մօրկին առջեւն չանցնիր առանց ներս մտնելու. և որովհետեւ հոս դալու համար ամէն օր անկէ կ'անցնի...

— Պինոս, բարեկամ, երկրորդ անգամ կ'ըսեմ քեզ որ լռես. եթէ դարձեալ մտիկ չընես...

— Սպանալի՞ք, բռնութիւն: Ի՞նչ տեսակ խոտի վրայ քաշեցիր այս առտու: Երէկ իրիկուն՝ ծանօթ արկածիդ վրայ միայն կը խօսէիր:

— Իարձեա՛լ:

— Լա՛ւ... Լա՛ւ, չէի գիտեր Բիայիդ այդչափ դիւրազգածութիւնը... բայց քանի որ օրիորդն այդչափ ջղային է, ձկան պէս լուռ կը կենամ մինչև որ մեկնի ասկէց. վասն զի շատ բաներ ունիմ քեզ իմացնելիք:

— Հիմա հանդարտ թող զիս: Կորսնցնելու ժամանակ չունիմ: Ետիկ կեցուածքդ, սիրելի Բիաս, և եթէ այս խենթը նորէն բերանը բանայ, ականջ մի կախեր:

— Մօրկը այն տունն է, ուր մեռեալներ ի տես կը դնեն, այնպէս չէ՞, հարցուց աղջկուկը յուզուած:

— Ա՛, դուն ալ խօսքի կը խառնուիս, գոչեց Ծրընէօղ: Երկուքդ ալ երդում ըրեր էք որ ես այսօր չկրնամ աչխատիլ...

— Գիտեմ ո՛ւր ըլլալը, շարունակեց Բիա, բայց ներս մտնելու համարձակած չեմ... և չպիտի համարձակիմ, երբէք... ո՛հ, ոչ, երբէ՛ք... երբէ՛ք...:

— Ե՜տա աղէկ, իմ ուզածս ալ այդ է: Եթէ այդպիսի բան մ'ընէիր, քեզ այլ ևս չէի ընդունիր հոս: Բայց կը տեսնեմ որ պատուանդանիդ վրայ հանդարտ կենալու տրամադրութիւն չունիս, ուստի պիտի դադարեցնեմ աչխատութիւնս: Միայն երեք վայրկեան հանդարտ կեցիր աղջկուկս: Վերջին ձեւը տալ սկսած էի, այս անպիտանն եկաւ մեր գործն տարեց: Հիմա նորէն կը շտկեմ... մի շարժիր ամենեւին:

Բիա մտախոհ դէմք մ'առած էր. սև խոշոր աչերն առջի կենդանութիւնը չունէին: Տարտամ նայուածքով մը Միբզայի վրայ ուղղուած էին, որ արթննալով՝ կունակը կ'ուռեցընէր:

Պինոս իւր ակամայ լռութենէն մխիթարուելու համար, աչխատանոցին ամէն խորշերը կը պտտէր. երեսնին պատին դարձած նկարները կը դարձունէր, երանդներուն տուփերը կը բանար...:

Այնչափ ըրաւ որ Ծրընէօղի համբերութիւնը հասնելով գոչեց.

— Ինչո՞ւ կը խառնչտրի՛ս, ի՞նչ կը փնտռես:

— Ծխախոտ. մտոցայ գնելու, պատասխանեց Պինոս, իր երկայն ծխափողը տատանելով:

— Պատուհանին տակի մօմէ մարդուն ոտքին առջևն է տուփը:

— Ե՜տա լաւ, ուրեմն ծխելս արգելելու շափ առաջ չես քշեր խօտութիւնդ: Ենորհակալ եմ՝ ձեր վսեմութեան ներողամտութենէն: Ա՛. բայց դէշ կատակ է ըրածդ: Տուփդ դատարկ է, մէջը այնչափ ծխախոտ կայ, որչափ ուղեղ կար Մօրկին մէջ տեսած քաղքենիս դանկին մէջ:

— Անտանելի՛ ես. ծխախոտի քսակս նա պատէն կախուած վերարկուիս գորպանին մէջն է:

— Կը հնազանդիմ, տէր իմ, պատասխանեց Պինոս, երկու ձեռքը ձակաին տանելով արեւելքցուց ողջոյնին նմանելու ձեւով:

Եւ սկսաւ վերարկուին դրպանները խուցարկել, մինչ Ծրընէօղ իւր վրձինները սրբելով կ'ըսէր Բիայի.

— Կը բաւէ այս օրուան համար, աղջկուկ, ալ չեմ կրնար տեսնել:

— Ծխախոտի քսակդ հէ՛, քսակդ, կը մրմուռ Պինոս, ուղածիդ չափ փռտուէ այս չքեղաչուք վերարկուին մէջը դատարկ վերարկու մը, որուն մէջ բան չկայ, և ոչ իսկ ծխափողս պարպելու նիւթ մը, երբոր ծխեմ: Բայց սա ի՞նչ է... կնոջ գնատսեղ մը:

Պինոս ուրախ ըլլալով այս գիւտին վրայ, յաղթաբար կը ձօձէր ոսկեզօծ դնդասեղը, զոր բարեկամին վերարկուին գրպանէն գտած էր:

— Ա՛յ, կը գոչէր. գեղեցիկ սեռին վերաբերեալ նիւթեր կը պահես ըզդեստներուդ մէջ: Ո՞ր իշխանուհին տուաւ քեզ իւր սիրոյն այս գրաւականը:

Ծրընէօղ բոլորովին մոռցեր էր այս գնդասեղը, զոր առջի իրիկունը հանրակառքին մէջ գտեր էր, և անպատեհ կը գտնէր իւր Պինոս բարեկամին ծաղրաբանութիւնները այնպիսի նիւթի մը վրայ, որ՝ ըստ ամենայն հուանականութեան՝ մեռած աղջկանն էր:

— Հաճէ, կը խնդրեմ, առած տեղդ դնել զայդ, գոչեց:

— Կը վախնաս որ կը պղծեմ հասարակ բանի մը գործածելով, ըսաւ հեղեուկեամբ անուղղայ խեղիատակը: Մի՛ վախնար, չեմ գործածեր: Կրնաս տակաւին օրտիդ վրայ կրել: Ըսել է թէ դու սիրահա՛ր ես: Երբէ՛ն ի վեր:

— Պինո՛ս, ստուգիւ զիս կը գրգռես, Բիա յանկարծ ոտքի վրայ ելնելով վազեր էր գնդասեղը մօտէն տեսնելու:

— Ի՞նչ կ'ընես ասոր, լեռան զա՛ւակ, հարցուց անոր ծաղրածուն. հարկաւ գործածած չես ասոր նմանը Սապիաքօ եղած ատենդ. և Փարիզի մէջ ալ կրելու յուր ճաշկը չունիս: Այս անպիտան խաղալիին իւր գլխուն վրայ կըրող քաղքենուհին արժանի չէ նկարիչ մը սիրելու...: Եւ Բօլ պէտք էր ամչնար այս խեղճ մասունքը խնամով պահելէ. ծաղրելի արտադրութիւն փարիզեան ճարտարութեան, որ շուկայէն գնուած է տասնեակինդ սուր...:

«Բայց ինչո՞ւ կուլաս: Աչքիդ աղո՞ր երեւցաւ այս սուր ոսկեզօծ շամփրիկը, և կ'ուզես քու գեղեցիկ մազերդ ասո՞վ պճնել:

— Զեմ լար, մրմնջեց աղջիկը իւր արտասուքը գսպելով:

— Պինո՛ս, ստուգիւ անտանելի ես, գոչեց Ծրընէօղ. մի՛ չարչարեր խեղճ աղջկուկը. թող տուր որ երթայ:

— Աս թիկնոցդ, Բիա՛ և ճանբայ ել, իրիկուն է, և փողոցները քեզ համար ապահով չեն արեւամուտէն ետեւ: Զանա՛ վաղը, ճիշդ կէս օրին գալ: Ես դուստ ամուր մը կը գոցեմ, որպէս զի իմ և քու ծանօթներէդ... ձանձրայի մէկը չգայ և արդէք ըլլայ մեր գործին:

Բիա պատրաստ էր. և երբ Ծրընէօղ ձեռքը կ'երկնցնէր անոր, աղջիկը ծանցաւ որ համբուէր ըստ իտալական

սովորութեան: Յորընչօգ մէկէն վեր առաւ զայն և ճակատը համբուրեց: Աղջիկը դժգոհնեցաւ. բայց խօսք մը չարտասանեց և դուրս ելաւ՝ առանց նայելու Պինոսի, որ կը խնդար մօրութիւն տակէն:

—Սիրելիս, ըսաւ աղջկան մեկնելէն ետեւ, ես մէկ օրուան մէջ ա՛յնչափ գիւտեր ըրի, զոր ամենէն նշանաւոր նաւավարները չեն կրցած ընել հարիւր տարուան մէջ... և վերջին ըրածս ամենէն հետաքրքրաշարժն է: Տեսայ որ այդ դեռահաս խաղաղահին խենթի պէս սիրահարած է քեզ: Լացաւ երբ տեսաւ զբազանիդ մէջ մոռցուած դնդաւսեղը՝ կարծելով որ սիրուհիինդ էր: Այդ լացը նախանձութեան լաց էր: Ըսել է թէ կը պաշտէ քեզ: Հերքէ այս խորհրդածութիւնս եթէ կը համաձայնիս... եթէ կրնաս:

—Չեմ հերքեր բնաւ. բայց կը յայտարարեմ քեզ, որ եթէ շարունակես, պիտի աւրուինք իրարու հետ:

—Վերջապէս ո՞ւրիկէ կուգայ այս շամփրիկը. տարփուհիի մը յիշատակ չէ: Լսեցի թէ վերջին օրերս փայլուն դահլիճներուն մէջ տեսեր են քեզ, ուր շնորհքով աղջիկներ կը գտնուէին, որք յօժար սրտով կ'ամուսնանան տարին քառասուն հազար Փրանք շահող պատկերահանի մը հետ, և դուն ալ այդ գումարէն շատ պակաս շես շահիր: Գու ներկայ կեանքդ չիրնար շարունակել այսպէս: Եթէ ընկերներէդ հեռանալու փափաք ունիս, ըսէ՛:

—Պինոս, բարեկամս, անանկ ամեղացիկն խօսքեր կ'ընես, որոնց չի վայրիւր պատասխանել. բայց պէտք է գրեթայ խենթերուն վրայ: Ես այն ասեղն երէկ իրիկուն հանրակառքին մէջ գտայ և իրրե յիշատակ պահեցի: Որովհետեւ տարակոյտ չիար թէ ճակատն մեռնող խեղճ աղջկան գլխարկինն էր:

—Սխալ է կարծիքդ, այդ ասեղը կիրականագրեալ խոհարարուհիները կը գործածեն, և ես վստահութեամբ կ'ըսեմ քեզ թէ այն հրաշագեղ արարածն, որ Մօրկին ստղաքարերուն վրայ կը հանգչի այս միջոցիս, խոհարարութիւն ըրած չէ երբէք: Ես աւելի կը հաւատամ որ ուրիշ կին մը կորուսած էր զայն:

—Ուրեմն ընծայ կուտամ քեզ, ըսաւ Յորընչօգ:

—Կ'ընդունիմ, գոչեց Պինոս, ապացուցական մաս մ'է: Շատ անգամ չընչին բան մը... Թուղթի կտոր մը... ոճրին վայրը մոռցուած թեւի կոճակ մը, անուրանալի փաստ մ'է մարդասպանի մը համար...:

«Մեղադատուեալ մէջ», «Աստուծոյ մատը» կը կոչեն զայս:»

—Նորէն կը վերագոտնայ խենթութիւնդ:

—Խենթութիւն թող ըլլայ քեզ համար. բայց իմ մտքիս մէջ գաղափար մը կը ծագի, և կ'ուզեմ փորձ մ'ընել աչքիդ առջեւ: Ո՞ւր է Միրսան. եկու Միրսա՛, մի՛, մի՛, մի՛:

—Ի՞նչ կ'ուզես նորէն կատուէս, մի նեղեր զայն կ'աղաչեմ:

Միրսա՛ հրապուրուելով Պինոսի փայփայիչ հրակերէն, ծանր ծանր անոր մօտեցաւ, ինչպէս որ կը վայելէր իւր յարգը ճանչող կատուի մը:

—Մի՛ երթար, Միրսա՛, ըսաւ Յորընչօգ, կը տեսնես որ այդ պարոնը կը խնդայ վրադ, բան մը չունի քեզ տալիք:

—Ոչխարի թող չբերի իրեն, ճշմարիտ է, պատասխանեց Պինոս: Ես չեմ ներեր ինձ, բարեկամներուս կատուներուն ուտելիք տալ, բայց կրնամ փայփայել զանոնք: Միրսա անշահասկը կենդանի մ'է... գիտ ինձ համար կը սիրէ. թող տուր որ հեա շփուելով իւր սէրը յայտնէ ինձ:

Այսպէս իր բարեկամին ուշադրութիւնն զբաղեցնելու համար շաղակրատելով Պինոս՝ աթոռակի մը վրայ նստած՝ նեղաւոր ձեռք մը կ'երկնցըներ միամիտ անկորային, որ յամբաքայլ կը յառաջանար:

Յորընչօգ, որչափ և կը դիտէր Պինոսի շարժումները, չէր կրցեր տեսնել որ ոսկեգօծ դնդաւսեղը մատներուն մէջ բռնած էր, այնչափ լաւ ծածկելով, որ միայն սուր ծայրը բութին ու ցուցամատին մէջտեղէն դուրս ցցուած էր:

Միրսա ալ կը տեսնէր, բայց հետաքրքիր և որկրամոլ ըլլալով, որ տան կատուններուն միակ պակասութիւնն է, Պինոսի մօտեցաւ մատներուն մէջ բռնածը հոտուրտալու:

Յուրեղ ասեղին ծայրին հազիւ կը դուլչէր. Պինոս թեթեւ մը խայթեց անոր կարմիր բլթը:

Խեղճ կենդանին մէկէն ետ քաշուեցաւ. գլուխը վզին վրայ դարձաւ, մազերը քստմնեցան, թաթերը ձկտեցան, երկու կզակները բաժնուեցան, աչերը նուաղեցան, բայց չմլաւեց, չցատկարտեց, անշարժ և անձայն մնաց: Յետոյ մարմինը ցնցուիլ սկսաւ և քսաներսուն երկվայկենի մէջ ինկաւ անկենդան:

Ի՞նչ ըրիր Միրսայիս, գոչեց Յորընչօգ, իր սիրելի անկորային վրայ վազելով:

Եւ տեսաւ որ լմնցած էր:

—Բայց մեռեր է, գոչեց յուզեալ ձայնով:

—Այո՛, հանրակառքին մէջի աղջկան պէս, պատասխանեց Պինոս՝ հանդարտութեամբ:

—Ապանեցի՛ր, գոչեց նկարիչը բարկութեամբ: Այս ըրածդ անհանդուրժելի է. դուրս ել սենեակէս, և մէկ մ'ալ ոտք մի՛ դնէր հոս:

—Կը վռնտե՞ս գիս:

—Այո՛, կը վռնտեմ: Իմ սիրածներուս թշնամի ես: Կէս ժամ հազիւ կայ որ հոս եկար, և չարութենէ զատ ուրիշ բան չըրիր: Բիա լալով գնաց, և դուն ես պատճառք: Ուրիշ բան չմնաց ընելիք, խեղճ կատուս սպանեցիր, որ աշխատանոցիս բերկրանքն էր: Ստուգիւ, եթէ երեք քառօրդ խենթ ըլլալդ չգիտնայի, մինակ վռնտելով չէի շատանար...:

—Արդարեւ նորանշան բան կ'ըլլայ, ըսաւ Պինոս քեքեւելով, օճիկէս բրունելով դուրս վռնտել և սուրի մ'ալ հարուած տալ, կեանքդ ազատելուս համար...:

—Կեանքս ազատեցի՛ր, դո՞ւն:

—Անշուշտ, սիրելիս.

—Հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչպէս: Կատուս կատաղած էր պիտի ըսես:

—Ոչ. Միրսա պարկեշտ անկորա մ'էր... և եթէ յանցանք գործած ալ էր... ինչպէս՝ օրինակի համար՝ իւր ճանկերը սրելու նպատակով բանթալոնս պատուելը, հիմա կը քաւէ իր այդ մեղքերը. վասն զի իւր տիրոջը համար մեռաւ... և որպէս զի մեծ ոճիր մ'անպատիժ չմնայ...:

—Նորէն խենթ ու խելառ խօսքեր:

—Կ'ուզե՞ս մտիկ ընել զի՛ս՝ դուրս վռնտելէ առաջ, տասն վայրկեան միայն կը խնդրեմ քեզնէ, ապացուցանելու համար քեզ, որ եթէ այս հանճարեղ գաղափարը չյղանայի, մեծ փորձանք պիտի գար գլխուդ:

—Տասն վայրկեան, լաւ, բայց ետքը...:

—Ետքը ի՞նչ կ'ուզես ըրէ... ես ալ ինչ ուզեմ՝ կ'ընեմ: Կը տեսնե՞ս այս ասեղը:

—Այո՛, և եթէ գիտնայի որ ասով Միրսայիս սիրտը պիտի ծակէիք...:

—Ես անոր սիրտը չծակեցի... տես...:

կաթիլ մ'արիւն չկայ իր ճերմակ մուշտակին վրայ... հաղիւ քթին ծայրին խոթեցի... և խսկոյն մեռաւ: կը հասկընա՞ս հիմա հանրակառքին երէկ իրիկուան դէպքը:

— Ինչպէ՞ս... բացատրէ ինչ ըսել կ'ուզես...:

— Մօրկին մէջ պաւակած խեղճ աղջիկն ալ ճշդիւ Միրսայիդ պէս սպաննուեցաւ:

— Այդ ասեղով:

— Այո՛, այս ասեղով. աւելի բան պէտք չէր: Անոր ալ հոգեվարքը ոչ աւելի երկար, ոչ ալ աւելի ձայնաւոր եղաւ:

— Ուրեմն այդ ասեղը . . .

— Թունաւոր է, սիրելի՛ս, և դուն դայն կրկնոցիդ գրպանը դրեր էիր: Թէ որ ձեռքդ այն գրպանդ խոթէիր թաշկինակդ կամ ծուխի քսակդ առնելու համար, և մատներդ այս սիրուն գործիքին ծայրին դպչէին... յառաջիկայ նկարչական ցուցահանդէսին մէջ պատկեր մը և շքադրամաւոր նկարիչ մը պակաս պիտի գտնուէր:

«Իմ ողջ մնալս ալ հրաշք մ'է, յարեց Պինոս: Եթէ ոսկեղոծ գնտակաւոր ծայրէն բռնելու տեղ՝ սուր ծայրէն բռնէի, այս ժամուս ես ալ տարածուած պիտի ըլլայի աշխատանոցիդ տախտակամածին վրայ, և զիս թաղել տալէ զատ ուրիշ բան չպիտի կըրնայիր ընել: Իմ մեռնիլս աղէտ մը չէր ըլլար, պատկերհանութիւնը մեծ բան մը չէր կորսնցըներ, բայց վերջապէս լաւագոյն կը համարիմ որ վտանգը կատուիդ պատահեցաւ:

— Ես ալ, մրմնջեց Յորճեօզ, վերջին աստիճան շփոթած:

— Ծնորհակալ եմ այդ բարի խօսքէդ, բնա Պինոս հեգնոտ ծամածուծեամբ: Գոհ եմ տեսնելով որ այլ ևս ինծի չես սրբողիլ քեզ ազատած ըլլալուս հա-

մար. և անկեղծաբար կը դովեմ քեզ այս փոքրիկ գործիքը կառքին մէջէն վերցընելուդ համար: Հնարողները գտնելու պիտի ծառայէ ինձ:

— Գնդասեղ մը որ կը սպաննէ՞ . . . անհաւատալի բան . . . :

— Իրողութիւնները կեցած են:

— Բայց այդ շանթահարող թոյները վէպերու կամ եղբերգութիւններու մէջ միայն կը տեսնուին . . . :

— Վայրենիներուն քով ալ, սիրելի՛ս, իրենց նետերուն ծայրն անոնց մէջ կը թաթխեն երբ որսի կամ պատերազմի կ'երթան. և այն նետերուն տուած վէրքը միշտ մահացու է . . . :

— Այո՛, ես ալ կարդացած եմ տեղ մը, բայց . . .

— Գործածած թոյներնին ալ ծանօթ է, Կեռայը կը կոչուի: Կ'ըսուի թէ բոժոժաւոր օձի թոյնով կը շինուի, և գիտցողները գիտեն որ այդ թոյնը չորնալով յաւիտեան անեղձ կը մնայ: «Ահա տես սա գնդասեղին ծայրի կարմրուկ ծեփը որ ջրդեղի (վէրնիճ) կը նմանի... քիմիական բաղադրութիւն մը որ հինգ վայրկեանի մէջ բրուսիական զօրագունդ մը կընայ ջնջել...: Ես շատ ցաւեցայ որ Փարիզի պաշարման ժամանակ մեր սուրիներն ասով չօժեցին...:

— ԼըՎաբար խօսէ... կատակի նիւթ մի՛ ըներ եթէ ճշմարիտ է այդ երեւակայածդ...:

— Տակաւին կ'երկբայի՞ս. համոզուելու համար բաւական է քննել Միրսայի քաջառողջ վիճակի մէջ էր, թեթեւ խայթուած մը բաւական եղաւ զայն անմիջապէս մեռցնելու: Եւ տեսար որ առանց չարչարուելու, առանց իսկ ձայն հանելու, ճրագի պէս մարեցու, հազիւ աննշմարելի սարսուռ մ'ունեցաւ...: Ընչը հանրակառքին տեսաւ կը:

— Ծճմարիտ է, խիստ տկար ձայն մ'արձակեց... և ձկտեցաւ...:

— Եւ գլուխը քովի կնկան ուսին վրայ իյնալով, այլեւս չչարժեցաւ. գործը լմնցած էր:

— Ուրեմն, աջ կողմը նստող գարշելի արարածը զայն...:

— Կեցի պատմեմ քեզ գործը, և երբ լմնցընեմ, վունտէ զիս՝ եթէ կ'ուզես: Յորճեօզ ձեռքի շարժումով մը յայտնեց թէ իւր բարեկամը վունտելու միտք չունէր այլեւս, և Միրսային սպանութիւնն ալ կը ներէր:

— Գործիքը, ըսաւ Պինոս, շինող, պատրաստող և բերողն եղած է այն մարդն՝ որ հանրակառքին բարձրաւանդին վրայ ելաւ նստաւ: Կին մը չէր կընար յօրինել այս թոյնը, և հաւանաբար չէր ալ համարձակեր: Քննէ, կ'աղաչեմ այս փոքրիկ սլաքը. բոլորովին նոր է. և դժուար է երեւակայել աւելի ճարտարարուեստ բան մը. գլխարկի պարզ ասեղի մը ձեւն ունի, անմեղ երեւոյթ մը, այնպէս որ եթէ զայն գործածող անգգամուհիին ձեռքը տեսնուէր, ոչ ոք կընար հասկնալ ինչ նպատակի ծառայելու սահմանուած ըլլայ: Մէկ ծայրը կըր գունտ մ'է, որպէս զի գործածողն ուժով մը քէ զայն առանց վիրաւորուելու: Բաւական ալ կարճ է, որպէս զի կարենայ պահուիլ թեւեւոցի մը մէջ: Բաւական ալ երկայն և սուր է, որպէս զի ամենէն հաստ հագուստը ծակէ անցնի... և աղջիկն ալ խեղճ շրջագրեստ մը հագած էր, որուն հին ու մաշած կերպսը սարդի ոստայնէ մ'աւելի չէր կընար պաշտպանել զայն:

— Մէկ խօսքով, ամէն բան նախատեսած էր այն մարդը, որ նշանաւոր սըրբիկայ մը պէտք էր ըլլար: Եւ կ'ինն ստանձնած էր գործադրութիւնը:

— Ինչո՞ւ համար կ'ինը: Ուրեմն թըլ-

ուառականը չափազանց վատ էր ինքնին այդ գործողութիւնը կատարելու համար:

— Այդ չէ պատճառը: Հաշիւ ըրեր էր որ կ'ինն աւելի քիչ կընար հրաւիրել ուրիշ ուղեւորներուն ուշադրութիւնը: Բնական չէին գտներ որ աղջիկն իր գլուխն այր մարդու մ'ուսին վրայ դնէր... իսկ քովիկը նստող կնկան մ'ուսին վրայ դնելն աւելի պարզ էր և բնական:

— Ուրեմն գիտէր որ պիտի կքէր այնպէս...:

— Կատարելապէս, սիրելի՛ս: Քնարին արդիւնքն այնչափ ծանօթ է որչափ մկնդեղինը: Հարիւր անգամ փորձուած է այդ գեղեցիկ թոյնը՝ Բօլէժ տը Յրանսի բնաւուծարանին մէջ: Խայթուած կենդանին մէկէն կը կենայ, ալ կամ ձախ կը ծռի և կ'իյնայ... Թէ որ զինքը բռնող մը չգտնուի հոն: Պատրաստուած ծրագիրն էր ուրեմն բռնել մեռեալը մինչեւ այն վայրկեանն, ուր առիթ մը ներկայանար զայն գլխէն նետելու առանց վտանգի: Անհնար էր թողուլ զայն հոն. վասն զի պիտի իյնար գետնատարած, և այնպիսի տեսարան մը պիտի բացուէր, որուն մէջ գտնուիլ չէր ուզեր սպաննող կ'ինը:

— Կը կարծես ուրեմն որ մարդը կառքին մէջ նստեր էր իւր դաւակցին տե՞ղ պահելու համար:

— Ոչ միայն կը կարծեմ, այլ աներկբայ եմ: Գուն կառքին մէջն էր անկէ առաջ. տեսա՞ր անոր մտնելը:

— Ամենէն առաջ մտնողներէն մէկն էս էի. աղջիկն ալ իմ ետեւէս մտաւ. և հաղիւ եկած դէմս նստած էր, մարդը ներս մտաւ, և եկաւ ուղղապէս անոր քովը նստաւ, թէև ուրիշ պարագայ տեղեր կային: Մինչեւ իսկ այնպէս թուեցաւ ինձ թէ կը ճանչէր զայն: Բայց տեսայ որ չէին խօսեր իրարու հետ:

— Աւասիկ ի՛նչպէս ըրեր էր սրիկան: Աղջկան գարուն կ'սպասէր կայարանին շուրջը: Դաւակից կիներ, ստացած հրահանգին համեմատ, քիչ մը հեռուն կեցած էր:

— Գիտէին ուրեմն թէ աղջիկը նոյն հանրակառքով պիտի երթար:

— Հաւանաբար: Ինչէ՛ն գիտէին: Զայդ ալ կը հասկընամ, երբ գտնեմ այդ վատշուէրները:

— Գտնելու յո՛յս ունիս ուրեմն:

— Անշո՛ւշտ: Արդ, կ'ըսէի քեզ թէ սրիկան կ'սպասէր որ աղջկուկը կառքը մտնէր, որպէս զի ինքն ալ երթար անոր քովը նստէր: Դաւակից կիներ սպասեց որ կառքը ամբողջապէս լցուի, և այն ժամանակ խողացին մէջերնին նիւթուած կատակերգութիւնը... կիներ սաստիկ տրամելով որ չպիտի կրնար նոյն կառքով երթալ, և մտրդն ալ քաղաքավարութեամբ իր տեղն անոր նստիւրելով: Գրաւ կը դնեմ որ կիներ ջընդունելու ձեւեր չըրաւ:

— Ըրաւ՝ ցոյցի համար: Քանի մը պատուատիրական խօսքեր փոխանակեց անոր հետ և կառքին մէջ մտաւ, մինչև իսկ հանդուրժեց որ օգնէր իրեն... Ձեռքն անոր ձեռքին մէջ դըրաւ, փոքրիկ ձեռք մը արդարև նուրբ ձեռնոցով... մինչև իսկ պէտք եղածէն քիչ մը աւելի ժամանակ ալ մտրդուն ձեռքին մէջ թողուց:

— Այս, համոզումս կատարեալ է:

— Ըսել կ'ուզես թէ այդ ընտանութիւնը կը հաստատէ թէ խօսքերնին մէկ էր: Շատ հաւանական է:

— Ստոյգ է, այնչափ ստոյգ որ գրեթէ միեւնոյն ժամանակ մեկնեցան կառքէն...

— Գալով ասեցին գործածութեան, անըզգամուհին առիթի մը սպասեց, և այն ալ ներկայացաւ կառքին նոր-կամուրջէն վար իջած միջոցին: Ընդհա-

լում մը, սաստիկ ցունց մը աղջիկն անոր վրայ ձգեց, և ան ալ առիթէն օգուտ քաղելով՝ զնտապեղին ծայրն անոր թեւը խոթեց: Այս կէտին վրայ տարակոյսի ստուերն անգամ չունիմ, և անիչ ետև անցածները քեզի յիշեցընելու պէտք չի կայ:

— Այո՛, մըմնջեց Ֆրընէօզ, այս ումէն իրողութիւններն իրարու հետ բնական կապակցութիւն մը ունեցած կիներէին... Եւ ճշմարիտ է որ դուն ալ գանտնք իրարու հետ կապելու մէթոս մը ունիս...:

— Մէթոս չէ, խորհրդածութիւն է:

— Բացատրէ ուրեմն ինձ թէ՛ այդ սոսկալի կիներն ինչո՞ւ համար հանրակառքին մէջ մտացաւ այդ թուեաւոր ասեղը, որ պիտի մատնէր զինքը:

— Կրնաս հաւատալ որ դիտմամբ չըրաւ. տարաբարդ աղջկան ցնցուելէն ասեղը ինկաւ ձեռքէն... և անզգամուհին չուզեց ծոխի և գետնէն վերցընել զայն: Նախ կը վախնար որ ձեռքը կը խայթէր. երկրորդ շարժելու ազատութիւն չուներ, որովհետև մեռեալը բռնելու հարկադրուած էր: Երբ կառքէն իջնելու վայրկեանը հասաւ, ստիպուած էր շուտով մեկնելու, և չուեց առանց ետին նայելու:

— Կրնար սակայն մտածել թէ իր ոճրին այդ շոշափելի ապացոյցը կրնար ձեռք անցնիլ:

— Բե՛հ, կը յուսար որ կառքն աւելորդ զայն չնշմարելով դուրս կը քշէր: Հեռեւանքին վրայ հոգ չունէր. ի՛նչ փոյթ իրեն, եթէ ուրիշներ ասեղը գործածելու ձախող դադափարով թուեաւորուէին ու մէռնէին:

— Տարակոյս չմնար որ այն կիներ ճիւղալ մ'էր, չճանչած խեղճ տղայ մ'այսպէս սպաննել, պազարին խժոճութիւն... անօգուտ անգթութիւն մ'է:

— Ա՛, գոչեց Պիտոս, գուն կը կար-

ծես թէ մեռցընելու պարզ հաճոյքով... կամ իւր սիրուն գործիքը փորձելու համար սպաննեց, ինչպէս ժամանակաւ Պրէնպիլիէ մարքիդուհին իրմէ ողորմութիւն խնդրող աղքատներուն թունաւոր կարկանդակներ կը բաշխէր... իւր գործածած թոյներուն արդիւնքը սեանելու համար:

— Բարեկամ, դուն շատ հեռու կ'երթաս: Այդ փորձերուն մօտան անցած է, որովհետև շատ վտանգաւոր են:

— Ֆրընէօզ, այդ գարշելի արարածն ասեղն իւր քովինին դէմ գործածած ժամանակ գիտէր ինչ ընելու: Նպատակը զայն մէջ տեղէն վերցընել էր և ոչ ուրիշ բան:

— Բայց ինչո՞ւ համար. ի՛նչ ըրեր էր իրեն այն խեղճը:

— Այդ հարցումիդ տակաւին պատահանելու կարող չեմ: Ժամանակ պէտք է ինձի տեղեկանալու, և պիտի տեղեկանամ, այն ժամանակ կը գիտնանք պատճառը:

«Առ այժմ բառական կը համարիմ հաստատել թէ ոճիրը պատճառ մը ունի: Կիս մը սպաննելու համար մէկէն աւելի սրտածառներ կան... վրէժխնդրութիւն... նախանձութիւն... ընչաքաղցո թիւն...»

— Բայց այդ ոճիրն ի՛նչ հարկ կար հանրակառքի մը մէջ... տանուհինդ հոգիի առջև գործելու... փոխանակ...

— Փոխանակ փողոցի մ'անկիւնը կամ ուրիշ տուն մը տանելով սպաննելու:

«Այո շատ արտառոց կը թուի քեզիդ բան, բայց կատարելապէս կը բացատրուի:

«Տան մէջ սպանութիւնը վտանգաւոր գործ է: Ենթադրէ թէ այդ կիներ կամ իւր համախոհը՝ աղջկան բնակարանն երթային. դա՛նտապանը կամ դրացիները կրնային նշմարել: Այդ վտանգին ենթարկուիլ չէին ուզեր: Ենթադրէ թէ

ընդհակառակն աղջիկն անոնցմէ մէկուն տունն երթար և դուրս չելնէր: Աւելի գէշ: Ի՛նչ պիտի ընէին դիակը: Փողոցին մէջ սպաննել աւելի զիւրին էր՝ պայմանաւ որ ցերեկ ժամանակ չկատարուէր: Հաւանաբար, աղջիկը քիչ անգամ իրիկունը դուրս կ'ելնէր: Պէտք էր նաև որ փողոցն ամայի ըլլար և զոհն ալ մինակ: Ո՞վ կրնայ հաստատել թէ այդ աղջիկը մինակ էր, մէկը չկար հետը, բարեկամ մը կամ ուհի մը, որ մինչև կայարան ընկերակցած ըլլար անոր: Այն ժամանակ անշուշտ այդ սրիկայ զոյգը, որ թերեւս անոր ետեւէն կ'երթար ու կը դիտէր, որոչեց կառքին մէջ կատարել: Այս հանձարեղ գործիքին միջոցով շատ պարզ էր և դիւրին: Միակ դժուարութիւնն էր՝ աղջկան մեռած ըլլալը նշմարուելէ կամ իմացուելէ առաջ մեկնել. և անսար ինչպէս յաջողեցան:

«Գնա՛ հիմա գտիր զանոնք Բարիզի մէջ: Եթէ հանդիպիս ալ իրենց, չես կրնար ձանչել:

— Թերեւս մարդը ձանչեմ... բայց դարձեալ... որովհետև քիչ մը միայն տեսայ... իսկ կնկանն աչերը միայն տեսայ քողիկի մ'ետեւէն...:

— Բառական չէ, թէև ձայնը լսեցիր:

— Այո՛, հնչուն ձայն մը: քիչ մը հաստ, Փարիզեան արտասանութիւն, առանց նշանակելի մասնաւորութեան մը: Արդ՝ երբ ես գտնոնք ձանչելու վիճակի մէջ չեմ, դուն որ երբէք չես տեսած, ի՛նչպէս կը յուսաս ձեռքը անցունել:

— Օ՛, ես իմ յատակ դրութիւնս ունիմ. ձանթէն անձանթը կ'անցնիմ չափազանեաւ պէս: Երբ աղջկան ո՞վ ըլլալը դիտեմ, կը հարցընեմ կը փնտսեմ թէ որո՞ց հետ յաճախ կը տեսակցէր, և շատ ախճար պէտք է ըլլամ որ չկրնամ գտնել թէ՛ անոնց

մէջէն ո՞րք շահ ունէին այդ աղջկան մէջտեղէն վերնալուն մէջ :

— Կը մոռնաս որ հանրակառքին մարդն ու կրինն անծանօթ էին անոր, որովհետեւ ճամբան չխօսեցաւ անոնց հետ : Ըսել է թէ յարաբերութիւն չունէր անոնց հետ :

— Ուրիշներու հաշուին գործեցին :

— Յոյժ կեղակարծ ենթադրութիւն մ'է այդ : Ասկէ զատ, ծրագիրդ հիմէն խախտու է : Մեռած աղջկան ոչ անունը ծանօթ է, ոչ բնակարանը :

— Ներեցէք, Մօրկին մէջ ի տես դրուած է, և . . .

— Ապացոյց մ'է այդ թէ վրան որ և է նշանակ մը չէ գտնուած :

— Այո՛, չէ գտնուած : Տեղւոյն դիւանադպրին հետ տեսակցելով՝ բաւական տեղեկութիւն առի, զոր պիտի հաղորդէի քեզ, բայց դուն չթողուցիր՝ առարկելով թէ կը վախցընէի Բիան : Ըսաւ թէ աղջկան գրպանէն հին դրամապանակ մը ելեր էր, որուն մէջ տասնչորս սու միայն կար, և բանալիներու փոքրիկ տրցակ մը՝ պողպատէ օղակով : Կտակէղէնները տառանիչ չունէին . այցաքարտ ալ չունէր, որ զարմանալի չէ : ոչ ալ ամենափոքր թուղթի կտոր մը :

— Թուղթի կտոր, աղէկ միտքս ձգեցիր . ես թուղթ մ'ալ գտայ երէկ իրիկուն հանրակառքին մէջ :

— Թուղթ մը գտեր ես և չե՞ս ըսեր :

— Իրաւոր մտքէս ելեր էր :

— Ո՞ր է միտքդ ուրեմն :

— Նկարիս վրայ, դուն ալ պէտք է միտքդ տաս քու նկարիդ, զոր տարիէ մ'իվեր կը ծրագրես մտքիդ մէջ, և տակաւին չես սկսած :

— Հանդիստ թո՛ղ զիս մեր արհեստին վրայ խօսելէ զատ ուրիշ բան չես ըներ . ես անծանօթին սիրահարն եմ, և կը տեսնեմ որ ստուգիւ խեր չի կայ քեզնէ :

— Օ՛, բնաւ ամենեւին :

— Ուստի միայնակ պիտի գործեմ : Եթէ օգնես ինձի, առանց գիտնալու . . . և առանց ուզելու պիտի ընես : Օ՛ն . ըսէ նայիմ, ի՞նչ ըրիր այն թուղթը, կը յուսամ որ չայրեցիր :

— Ո՛չ, բայց կրնամ կորուսած ըլլալ :

— Վերջապէս ո՞ր պահեցիր :

— Վերարկուիս գրպանը դրի այդ անիծեալ գնտասեղին հետ, որով կատուս թունաւորեցիր, խեղճ Միրսաս :

Պինոս ձեռքը բռնած էր միշտ ահուելի գնտասեղը . և որովհետեւ շատ կը շարժուէր խօսած միջոցին, Ֆրընէօզ աստիճան մը սրտապանջութեամբ կը դիտէր անոր շարժումները :

— Կը խնդրեմ տեղ մը դիր այդ վըտանգաւոր գործիքը, որպէս զի նոր դժբաղդութեան մը պատճառ չըլլաս : Բաւական է անմեղ կատուս սպաննելը :

— Մի՛ վախնար, ես ինքզինքիս տէր եմ, պատասխանեց Պինոս, այսու հանդերձ պարտք սեպեց ձեռքը չբռնել կենախուզ գործիքը :

Եւ կամացուկ մը վառարանին վրայ դնելով, վազեց Ֆրընէօզի վերարկուին քով և ձեռքը գրպանին մէջ խօթելով՝ դուրս հանեց ձմրթկած թուղթը :

— Գոհութիւն Աստուծոյ, դեռ հոս է է եղեր, գոչեց : Այս է, անանկ չէ՞ :

— Կարծեմ թէ այո՛ : Բայց, շիտակը խօսելով, վրան անգամ չնայեցայ գրքապանիս մէջ դրած ժամանակս :

— Օ՛, կրնաս սրածիլ հետաքրքիր չըլլալուդ վրայ : Յիբաւի չլսուած բան է : Ինչո՞ւ վերցուցիր գրպանդ դրի ուրեմն, եթէ վրան նայելու համար չէր :

— Դիտաւորութիւնս էր, բայց դուն ժամանակ չթողուցիր . զիս կանչեցիր, ես ալ սրճարանը մտայ և քու այլանդակ ձառատումներդ գլուխս խելք չթողուցին : Վերջապէս տհա՛ ձեռքդ է, ըսէ ինձի ի՞նչ է :

— Նամակ մըն է, սիրելիս, ըսաւ Պինոս յաղթապանծ :

— Առանց պահարանի, և հետեւաբար առանց հասցէի, ըսաւ Ֆրընէօզ :

— Հոգ չէ . այս նամակէն շատ բան կրնամ իմանալ : Տեսնենք : Ա՛, չար սատանայ, գրեթէ մէջ տեղէն պատուած է վերէն ի վար, և հասկնալու դժուարութիւն պիտի տայ ինձի . բայց պիտի հասկնամ վերջապէս . . . Եգիպտական կոթողներուն վրայ քանդակուած ջորեակներուն ու թռչուններուն նշանակութիւնն անգամ կրցին գուշակել . . . որ պակասած տողերու ծայրերն ամբողջացնելէ շատ դժուար է . . . : Օ՛ն, ես կարգամ, դուն ալ մտիկ ըրէ :

— Սիրելիս (իդական) . . . յաջորդ բառը պատուած է . . . սիրելի՛ բարեկամուհիս կամ՝ անուն մը : Ցաւալի է որ չկայ . բայց յայտնի է որ կնոջ մը ուղղուած է :

— Այրէ մը, ինչպէս որ կը թուի ինձ, որովհետեւ գիրը շատ արական է :

— Այո՛, խոշոր, հաստ և անկանոն է . առեւտրական գիր մը չէ : Տեսնենք շարունակութիւնը :

«Վերջապէս գործը ձեռուրնիս է . . .

«Ամիսէ մը ի վեր եկած է և կը բընակի

«Քիչ դուրս կ'ելնէ բայց երբեմն կ'երթայ

«Դեռ չեմ գիտեր որու տուն բայց . . .

«Կը վերադառնամ իմ առաջին ծրագրիս, վասն զի աւելի

«Որ երկարած գուռի : Ուստի հաճէ

«Մեր կարգադրութիւնները, Կ'ուզուի որ ամէն բան լմնայ մինչև

«Մարդու մի՛ ըսեր, մինչև անգամ . . .

« . . . ուսած է թէ տունին մէջիները կը կասկածին

«Առ վաղիւ ուրեմն, իմ բարի Զ . . . » : Ա՛, տիկինին անունը Զ . ով կը սկսի : Այս ալ բան մ'է :

— Եւ ստորագրութիւնը . հարցուց Ֆրընէօզ :

— Չի կայ . . . պատուած է . . . և ոչ մէկ վանկը մնացած . ըսաւ Պինոս, որ բարձր ձայնով կարդացեր էր զայն՝ կանգ առնելով ամէն կտրուած խօսքերուն ու բառերուն առջև :

— Ստուգի՛ւ շատ յառաջացած ես : Այդ նամակը բացարձակապէս անհասկնալի է : Բոլոր բովանդակ սա կ'իմացընէ մեզ թէ մեռնողին անունը Զէլի, կամ Զէֆիրին, կամ Զէնոպի, կամ . . .

— Ուրեմն կը կարծես թէ մեռնողը կորսնցուցեր էր այդ թուղթը :

— Չեմ գիտեր, բայց եթէ ան չէր, ուրիշ ո՞վ էր :

— Միւս կինը, ասեղը գործածող անդամուհին : Եւ կ'ուզե՞ս ըսեմ՝ քեզ թէ՛ ի՞նչ բանի կը ծառայէր այդ նամակին կտորը . թունաւոր գնտասեղը փաթթելու . յայտնի կը տեսնուի : Նայէ՛ ո՛րչափ ձմրթկած է : Կը վախնար գարշելին որ ձեռքը կը խայթէր, այս պատճառաւ զգուշութիւն ձեռք առեր էր :

— Այո՛, մըմնջեց Ֆրընէօզ . նամակը պատուելու հոգ տարեր է, որով անհնար է բան մը հասկնալ այդ թուղթի կտորին վրայ գրուածներէն :

— Այդպէ՞ս կը կարծես :

— Ի՞նչ իմաստ պիտի հանես այդ կրօնատուած խօսքերէն :

— Ինձի համար իմաստն ա՛յնչափ բացայայտ է, որչափ որ կրնար ըլլալ ամբողջ եղած ժամանակ :

— Ծնորհակալ պիտի ըլլամ եթէ հասկըցնես ինձի, վասն զի ես բան մը չհասկցայ կարդացածէդ :

— Որովհետեւ խորհրդածելու աշխատութիւնը յանձն չառիր, միայն մէկ բան աչքիդ զարկաւ, այսինքն թէ այդ մը գրած էր կնոջ մը :

— Որուն անունը Զ . ով կ'սկսի . այս

մասին տարակոյս չի կայ. բայց ասկէ անդին... Ի՞նչ իմաստ կ'եղնէ մէջէն:

— Անդիի աշխարհք զրկել խեղճ աղջիկն որ հիմա պատկած է Մօրկին սալաքարերէն մէկուն վրայ:

— Ո՞ր սատանային ծակէն կը հանես գայդ:

— Ամէն մէկ տողէն, կեցիր մի առ մի կարգամ և գործը մատով շոշափել տամ քեզ: Նամակը կ'սկսի սա խօսքով. «Վերջապէս գործը ձեռուընդիս է: Լսել կ'ուզէ՞. վերջապէս գործելու վայրկեանը եկաւ:»

«Ամիսէ մ'ի վեր եկա՞՞՞՞ք է» . ո՞վ, աղջիկն անշուշտ, «եկած» իրական դրբուած է, և այս խօսքը խիստ սողէ կը համաձայնի մեր բրած դատողութեան թէ աղջիկը Ֆրանսացի չէ. ես լաւ մը դննեցի գայն: Մեր ափզոյն արեւը չէ որ ոսկեզօծած է անոր գոյնը:

— Ճշմարիտ է, Ապանիացիի տիպ է:

— Ընդունինք, եթէ կ'ուզես, թէ Անտարտիդիայի խորերէն եկած էք: Ի՞նչ ընելու կուգար հոս: Նամակին հեղինակը գիտէր անշուշտ, և իւր առաջին փոյժին եղաւ լրտեսել գայն. նախ ստուգեց թէ երբեմն իրիկունը կ'երթայ... որո՞ւ աուն: Դեռ չգիտեր, բայց կը բաւէր իրեն որ իրիկունը տեղ մ'երթար: Սորհոտը մ'ունի և կ'ուզէ անյապաղ գործադրել: Այդ խորհուրդը գիտենք հիմա, ասեղի հարուածն է:

«Պէտք չէ որ երկարածգուի» կը գրէ արագ միջոցներ՝ հնարող վարպետորդին: Եւ կ'աւելցընէ. «կուզուի որ ամէն բան լմննայ մինչեւ...»: Աւասիկ խօսքի ծայր մը որ պայծառապէս կը յայտնէ իւր դիրքը: Այսինքն թէ հրամաններ կ'ստանայ, հետեւապէս ուրիշի հարուին կը գործէ: Ըսել է թէ վարձու բռնուած մարդասպան մ'է այդ զարշնիին: «կուզուի...» ո՞վ է այդ անշուշտ: Հաւանաբար մարդ մը որ աղջիկը

մէջտեղէն վերցընել կ'ուզէ, բայց կը վախնայ ինքզինք վտանգի մէջ ձգել անձամբ գործելով:

— Այո՛, բաւ Ֆրանսոզ, գէշ չէ խորհրդածութիւնդ, բայց կարեւոր յայտնութեան մը հասած չես տակաւին. այդ ամէնն ալ խիստ տարտամ են:

— Ներեցէք, վարի սողին մէջ զեկոյց մը կայ որ բաւական բացորոշ է. «նէ կը բնակի...» անշուշտ նոր եկողը, «Տէ... փողոցը...»:

— Փողոցին անունը չի կայ. կը յուսանա՞ս գուշակել, յիրաւի մեծ գիւտ մը բրած կ'ըլլաս:

— Ինչպէ՞ բարեկամ, որ փողոցին անունը քեզ յօդով չի սկսիր, այլ «է ով... այս յոգնակին մեծապէս կը դիւրացընէ իմ խուզարկութիւնս: Բարիզի մէջ Տէով փողոց քանի՞ հատ կայ, խիստ քիչ, այնպէս չէ՞:

— Բայց կը սխալիս, շատ կայ: Եթէ կ'ուզես, տասներկու քի չափ հիմա ես յիշեմ... Տէդ Ամանդիէ... Տէ Պօնդ-Անֆան... Տէ Պլան-Մանթօ... Տէ Բանէթ... Տէ Բայթօ-Վան... Տէ Տէօգելքի... Տէ Մօլէ-Կարսօն...:

— Բաւական է, բաւական, հասկցայ. Պօթէնի տարեցոյցը ծայրէ ծայր պիտի կարդաս ինձի: Ես ինքնս պարպով աչքէ կ'անցունեմ գայն: Ինչ որ ալ ըսես սակայն, մատի վրայ կը համրուին այդ փողոցները, և եթէ թիւերնին յիսուն ալ ըլլայ, ես ամէնն ալ աչքէ պիտի անցունեմ. դուն է դուռ պիտի երթամ հարցնեմ թէ դեռատի աղջիկ մը անյայտապարձ է այն տուներուն մէկէն:

— Եւ երեք չօքս ամսուան մէջ պիտի կրնաս թերեւս տեղեկութիւն մը ձեռք բերել, ըսաւ Ֆրանսոզ ուսերը ցնցելով: Աւելի պարզ չըլլա՞ր տանիլ այդ ասեղն և պատուած նամակը ոստիկա-

նութեան տեսչին յաճնել, որ քրննութիւն մը կը բանայ և իր ունեցած միջոցներովը կրնայ շուտով գտնել գոհին բնակարանը:

— Շատ լաւ: Այն ատեն դուն ալ հետս պիտի գաս:

— Ե՛ս, ա՛, ո՛չ, ո՛չ: Արդէն ըսի քեզի թէ ժամանակ չունիմ կորսընցնելիք:

— Բայց ես չեմ կրնար պաշտօնական բան մը ընել առանց քեզի: Եթէ ոստիկանապետին ներկայանամ, կը հարկադրիմ ըսել իրեն ասեղն ու թուղթը ո՞ւրիկէ գտած կամ ասած ըլլալս, հարկ կ'ըլլայ նաև կատուիդ մեռնիլը պատմել: Կը կարծեմ թէ մինչեւ իսկ ուզէ տեսնել Միրասյիդ դիակը, և խեղճ կենդանիին վրայ դիտահատութիւն կատարուի:

— Երբէ՞ք, երբէ՞ք, գոչեց Ֆրանսոզ. չեմ ուզեր որ կատուս կարտեն. բաւական է դայն մեռցնելը:

— Ուրեմն անօգուտ է երթալ ոստիկանութեան տեսուչը տեսնել եղելութիւնն անոր պատմելու համար, պատասխանեց Պինոս: Վախճանն ուղողը միջոցներն ալ կ'ուզէ, սիրելիս: Եթէ գործը ոստիկանութեան յաճնենք, տարակոյս չկայ որ դուն ալ երկարօրէն և յաճախ պիտի հարցաքննուիս:

— Ես ալ այդ բանը չեմ ուզեր:

— Եւ անշուշտ այդպէս պիտի ըլլայ: Այս ժամուս հաւատացող չկայ ոճրագործութիւն ըլլալուն. այս պատճառաւ քեզ հանդիստ թողած են: Բայց եթէ Միրասյիդ թուանուրուած ըլլալը իմացուի, գործը իսկոյն ուրիշ կերպարանք կ'աւանէ:

«Այս ասեղով փորձեր կ'ընեն ուրիշ կենդանիներու վրայ, շուներ և ձագարներ կը զոհեն. բժիշկները խոշոր տեղեկագիրներ կը շարադրեն Կաթարին արդիւնքներուն վրայ, և տարակոյս չի

մնար այլ եւս հանրակառքին աղջկան սպաննուած ըլլալուն վրայ: Ոստիկանութեան բոլոր գործիչներն ոտքի վերայ կը հանուին, և որովհետեւ դուն միայն տեսար ու դիտեցիր կառքին մէջ սպաննող կիներն ու անոր համախօհը, քեզ ալ անշուշտ պիտի աղաչեն որ այն պարոններուն հետախուզութեանը ընկերակցիս, որպէս զի ձանձխա յանցաւորներն, եթէ յաջողին գտնել:

— Օ՛, օ՛, միթէ մասնաւոր մարդ մը պարտաւոր է իւր գործը թողլով այդ պիտի բանի մը ետեւէ պատելու: Վերա՞ս կը խնդաս:

— Արդարեւ քիչ մը մեծցողի ես գործը. բայց կրնաս աներկբայ ըլլալ թէ ամէն անգամ որ կատակածելի մարդ մը կամ կին մը ձեռք անցունեն, քեզ պիտի կանչեն: Դուն պիտի որոշես թէ պէ՞տք է թող տան կամ վար դնեն գայն:

— Գեղեցի՛կ հեռապատկեր: Օրն ի բուն ոստիկանութեան հրամանին ծառայել: Ո՛չ, ոչ: Դուն գիտցածիդ պէս ըրէ, սիրելի՛ բարեկամ. միայն թէ ես չհարկադրիմ բանի մը խառնուելու, այս միայն կը ինչդրեմ:

— Ուրեմն ինձի կը յաճնես գնտասեղն եւ պատուած նամակը, գիտ ազատ կը թողուս ուզածս ընելու, և բնու չես խառնուիր իմ ըրածիս, այնպէս չէ՞:

— Այո՛... սրայմանով մը սակայն... այսինքն տեղեկութիւն նոստ ինձի:

— Այդ մասին կրնաս վստահ ըլլալ: Ես այդ շարագործներուն ետեւէն պիտի իյնամ, և որովհետեւ քեզ ամէն օր կը տեսնեմ, ըրածս կը պատմեմ քեզի: Որոշուած է այս, այնպէս չէ՞: Ոստիկանութեան տեսչին չպիտի երթանք:

— Այո՛... եւ սակայն...:

— Ի՞նչ:

— Կը մտածեմ թէ իրաւունք ունի՞նք

մեր գիտցածը մեզի պահելու: Բարի քաղաքացիի մը պարտքը չէ՞ արդարութիւնը լուսաւորել. և դուն կ'ուզես լոյսը գրուանին տակը դնել:

—Ներեցէք. ես միտքս դրած եմ Արդարութիւնը լուսաւորել երբ ժամանակը գայ... այսինքն երբ այն սրիկայ գոյգը ձեռքս անցունեմ. հարկաւ շնորհակալ պիտի ըլլայ ինձի իր գործը գիւրացուցած կամ մանաւանդ պատրաստած ըլլալու համար, վասն զի թշուառականներուն դատաստանը կէսէն աւելի տեսնուած պիտի ըլլայ երբ զանոնք իրեն յանձնեմ:

—Արդարեւ կը սքանչանամ վրայ: Դուն մեծ վստահութիւն ունիս քու տաղանդիդ վրայ... և անշուշտ միտքդ դրած ես միայնակ գործել:

—Ո՛չ բոլորովին: Ես մեծ արամազրութիւն ունիմ ոստիկանութեան առաջին կարգի լրտես մը ըլլալու, բայց գործնական վարժութիւն չունիմ: Առաջնորդ մը, վարժիչ մը պէտք է ինձի առ այժմ, ոչ թէ գործին հիմնական սկզբունքներուն համար... զորս բնագրումով գիտեմ... այլ արհեստին մանր դերձաններն ինձի ցուցնելու համար: Այն մարդն ունիմ ձեռքս:

—Ի՞նչ կ'ըսես:

—Այո, ունիմ: Պարոն մ'է, որուն յաճախ կը հանդիպիմ սրճարանը... ոչ այս թաղին մէջ... Իրիկուն մը կարմիր մատիտով իւր պատկերն հանելու համար բարեկամացաւ ինձի հետ: Ոստիկանութեան վրայ կը խօսի, և շատ վարպետ կերպով. այնպէս որ տարակոյս չունիմ թէ ժամանակաւ ոստիկանութիւն ըրած է:

—Օ՛, ազուոր ծանօթներ ունիս:

—Ի՞նչ կ'ուզես, ես չեմ կրնար իմ երեկոյթներս Ալեն-Փէռմէն արուանձանին դահլիճներուն մէջը անցունել: Զիս կը մոռնան հրաւիրել: Բայց եթէ

դուն ալ ճանչէիր Պ. Յիէտուչը, կը հասկնայիր որ ես հաճոյք կ'զգամ անոր ընկերակցութենէն. շատ ուշիմ է... և շատ զուարճալի պատմութիւններ ունի:

—Կը հաւատամ, բայց չեմ ուզեր որ ինձի ներկայացնես. մինչեւ իսկ կաղաչեմ որ իմ վրայ խօսք չընես անոր:

«Եւ հիմա որ համաձայն եմք, հաճէ ազատել զիս այս տխուր պատմութիւնըն ինձ յիշեցնող բաներէն: Ա՛ռ, տար նամակը, գնտասեղը, և մինչեւ իսկ Միրսային դիակը:

— Իմ ալ ուզածս այդ է, պատասխանեց Պինոս, և այս առիթով իմ անձէս ալ կ'ազատեմ քեզ, մնաս բարով:

— Վերջին յանձնարարութիւն մը, պատասխանեց Յորժէօզ: Այս գործին խօսքը մի ըներ բնաւ Բիայի առջեւ: Շատ ջղային է, կը վախնամ որ...:

—Կրնայ դուրսն ալ թուրքերանութիւն ընել: Մի վախնար ես բան մը չեմ ըսեր անոր: Եւ եթէ հարցնէ ինձի թէ ինչ եղաւ կատուդ, կ'ըսեմ թէ դունատախտակիդ վրայի մկնդեղաւոր ներկը լզելով թունաւորուեր էր, մեռաւ:

3

Բօլ Յորժէօզ իր պատճառներն ունէր չերկնցնելու Պինոսի հետ այս խօսակցութիւնը, որ լմնալիք չունէր, եթէ խելք տար այդ յանդուգն քմայանկարին գաղափարներուն:

Պինոս կ'ուզէր որ զայն ալ իրեն հետ քչէր իւր երազած ոճրագործներն հալածելու գործին մէջ: Բայց Բօլ Յորժէօզ իւր այդ ընկերէն սրակաս երեւակայութիւն եւ աւելի ողջմտութիւն ունէր: Կը հասկնար հիմա թէ հանրակութիւն մէջի աղջիկը կրնար սպաննուած ըլլալ: Միրսային վրայ եղած փորձը վճռական էր: Բայց անկէց մինչեւ հաւատալ թէ հնար էր ոճրագործ-

ները գտնել, հեռաւորութիւնը շատ մեծ էր, և Յորժէօզ չէր ուզեր այնպիսի ձեռնարկի մը մէջ մտնել, որ իւր ժամանակը զրաւելէ գատ՝ իւր գործին համար պէտք եղած մտքի հանդարտութիւնն ալ կը խռովէր:

Առանց փառասէր ըլլալու, Յորժէօզ հաստատապէս միտքը դրած էր անկախ դիրք մը ձեռք բերել: Արդէն վաստակած էր այն համբաւը, որ հոչակաւորութեան և երբեմն փառաց կ'առաջնորդէ: Գեռտաղանդաւոր նկարիչ մ'էր. բայց կրնար մեծ պատկերհան մ'ըլլալ, և արդէն շատ ստակ կը վաստակէր:

Իւր յաջողութեան հեղինակն ինք էր: Վաճառականի մը միակ որդի, որ կրնար գեղեցիկ ժառանգութեան մը տիրանալ, տասն և ինը տարեկան հասակին մէջ առանց նեցուկի և առանց նիւթական կարողութեան մնացեր էր: Առեւտրական ծանր տագնապի մը հետեւանքով՝ հայրը կատարելապէս կործանելով՝ մեռեր էր սրտին ցաւէն, եւ միայն անարատ անուն մը թողեր էր իրեն, վասն զի իւր ստորագրած պարտքերը վճարելու համար ամեն ունեցածն զոհեր էր: Բօլ, որ ծնած ժամանակ մայրը կորուսեր էր, մինակ կը մնար աշխարհի մէջ, հօրաքեռորդիէ մը գատուրիչ ազգական չունենալով, որ գաւառի մէջ կը բնակէր, և միայն հազար ֆրանք զրկած էր իրեն, որպէս զի երթար բաղդ փնտռէր օտար երկրի մէջ:

Բօլ, որ Աւստրալիայի մէջ երթալ ոսկի փնտռելու բնաւ ճաշակ չունէր, և մեծ արամազրութիւն կ'զգար իւր վրայ նկարչութեան համար, այն ստակը գործածեց Հոռոմ երթալու, ուր հինգ տարի կեցաւ ժրութեամբ աշխատելով սպորուտի և ուսման համար: Աշկերտ գնաց և վարպետ վերադարձաւ, դեռահասակ վարպետ մը, տակաւին քըն-

նադատուած. բայց եւ միանգամայն յոյժ գնահատուած ուրիշ վարպետներէ և հասարակութեան յարգն ու համարումը զբաւած:

Քննադատող երն ալ կը պատկառէին անկէ, վասն զի դուռարաւ կը հասնէր իրեն եղած ապսպրանքներուն. այնպէս որ պատիւն ու ստակը միանգամայն դիմեր էին իրեն:

Աւելի պատուոյն ուշադիր էր, բայց չէր մոռնար որ այս աշխարհի մէջ ստակն է որ մարդու մ'ազատութիւնը կ'ապահովէ, և կը ջանար ամեն բան հաշտեցնել իրարու հետ:—«Երբ հարստութիւն կամ միայն դիւրակեցութիւն ունենամ, կ'ըսէր ինքնիրեն, կրնամ ինքզինքս բոլոր բովանդակ արհեստիս տալ, զոր ամեն բանէ վեր կը դասեմ: Հարստութիւնը նպատակ չէ, այլ միջոց մ'է:»

Եւ շուտով հասնելու համար իւր փափաքած անկախութեան, Բօլ Յորժէօզ երբեմն կը խորհէր ամուսնանալ:

Արդարեւ ծաղկատի աղջկան մը հաճելի ըլլալու համար ամեն պէտք եղածն ունէր: Բարձրահասակ, նուրբ և բարեձեւ էր, թէև դիմագծերը շատ կանոնաւոր չէին, բայց կենդանի ու համակրելի էին: Սիրուն և խելացի խօսող մ'էր, առանց բնաւ յաւակնտութեան: Բօլ ուրիշ առաւելութիւններ ալ ունէր. պատուական սիրտ մը, անկեղծ ու զրուարթ բնաւորութիւն մը:

Ամուսնութեան առիթներ չէին պակասած իրեն, մանաւանդ երկու կամ երեք տարիներէ ի վեր, ձմեռ չէր տնցներ առանց քանի մը նպատակաւոր հրաւերներ ստանալու, պարահանդէսներ կամ ճաշեր, ուր գինքն ամուսնացու օրիորդներու կը ներկայացնէին: Չերթալիք չէր ըներ, և շատ լաւ կը բռնէր իւր տեղը: Մինչեւ իսկ ինքզինքը բաւական փութկոտ կը ցու-

ցնէր քանի մ'օրիորդներու, որ ընտիր աղջիկներ էին, բայց ինքը դեռ գտած չէր իւր փնտռածը:

Յըրնէօզ միտքը դրած էր իւր սիրած կնոջը հետ միայն ամուսնանալ, բայց չէր ուզեր կուրորէն սիրահարիլ. շատ մը բարոյական ձիւղեր կը փնտռէր. բնական գեղեցկութեան վրայ իրեն յատուկ գաղափարներն ունէր, պատկերհանի գաղափարներ:

Չմեռնամուտէն առաջ սակայն նշմարեր էր աղջիկ մը, որուն հայրը ժամանակաւ գործ կ'ընէր Յըրնէօզի հօրը հետ, և մեծ համակրանք կը ցուցնէր որդւոյն՝ տեսնելով որ հարուստ և միանգամայն հոշակաւոր ըլլալու դիրքի մէջ էր:

Եւ արդարեւ Օրիորդ Մարկըրիթ Բօլէ արժանի էր ուշադրութեան և մինչեւ իսկ իւր վրայ գրադեցնելու:

Նախ սքանչելապէս գեղեցիկ էր, Բիայի չափ գեղեցիկ, թէեւ չէր նմաներ անոր, ինչպէս որ ցերեկը չի նմաներ գիշերին:

Բիա տօգոյն ու թխորակ էր, իսկ Օրիորդ Բօլէ խարտեաչ և վարդադոյն: Բիա աւելի փոքր էր, և իւր փափուկ կազմուածքը տակաւին զարգացում կը խոստանար, իսկ Օրիորդ Բօլէ մեծզի էր, և թէպէտ հազիւ քոսն տարու կար, բայց իւր շքեղապանծ գեղեցկութիւնը կատարելապէս զարգացած էր:

Բիա Ռափայէլեան կոյսի մը կը նըմանէր, իսկ Օրիորդ Բօլէ Ռիւպէնեան Յլանտրուհիի մը:

Եւ Բօլ Յըրնէօզ, որ նկարչական ամէն դպրոցներուն վարպետները կը սիրէր, իտալացի վարպետները կը նախընտրէր բայց և այնպէս կ'սքանչանար պայծառագեղ Բօլէի վրայ, որ ձմրան սկիզբէն ի վեր բազում վախեր իրեն հետ խաղալու պատիւն ըրած էր իրեն:

Օրիորդ Մարկըրիթ Բօլէ ժառանգ

մ'էր: Հայրը մեծ հարստութիւն դիզած էր՝ պատուաւորապէս վաստըղած, ինչպէս կ'ըսէին, և միակ աղջիկ զաւակ մը ունէր, Մարկըրիթ Բօլէ: Մայրը մեռեր էր՝ երկու հարիւր հազար Ֆրանք թողով, որուն պիտի տիրանար Պ. Բօլէ՛երը չափահաս ըլլար:

Պ. Բօլէ, որ երեք տուն ունէր փարիզի մէջ, տարեկան եօթանասուն հազար Ֆրանք եկամուտի տէր կը համարուէր, և անշուշտ աւելի պիտի թողուր մեռնելէն ետեւ, վասն զի տարուէ տարի կ'աւելցնէր, թէեւ շատ ճոխ կերպով կ'ապրէր:

Աղջիկն աշխարհասէր էր: Հայրը զայն այցելութեան կը տանէր ընտանեկան գումարումներու. ընդունելութիւնն ալ կը սիրէր: Գլխաւորապէս ճաշ կուտար ընտիր համադամներով, և Բօլ Յըրնէօզն ալ կը հրաւիրէր, որ բերկրութեամբ կ'ընդունէր, ո՛չ այնչափ կերակուրներուն ազնուութեան, որչափ Օրիորդ Մարկըրիթի գեղեցկութեան սիրոյն համար:

Եւ այն ձմեռն այնչափ յաճախ ճաշի գացեր էր, որ չլրնալով փոխադարձութիւն մը ընել, վասն զի ամուրի կ'ապրէր, երկար ժամանակէ ի վեր առիթ մը կը փնտռէր՝ ինչպէս կ'ըսեն՝ քաղաքավարութիւն մը ընելու Պ. և Օրիորդ Բօլէի:

Արդ, վերջին ճաշին իրիկունը, Օրիորդ Բօլէ, որ Բօլ Յըրնէօզի քովը սեղանի նստած էր, փափաք յայտներ էր Շըվալիէ տի-Պրոյետաւը տեսնելու, տուամ մը, զոր Բօլթ-Սէն-Մարթէնի թատրոնը կը ներկայացնէր:

Եւ Բօլ Յըրնէօզ, որ գիտէր թէ Բարիզի ամենահարուստ քաղքենիներն անգամ չեն արհամարհէր ձրի տեսարան երթալ, իսկոյն մտածեր էր օթեակի տոմսակ մը դրկել:

Զգուշացեր էր առաջարկելէ, բայց վարպետութեամբ մը իմացեր էր Պ.

Բօլէի պարագ իրիկունը, և այն իրիկունն համար վարձեր էր առաջին կարգի գեղեցիկ օթեակ մը, ոչ թէ վճարելով, որ կրնար Պ. Բօլէի փափկանք-կատուութիւնը վիրաւորել, այլ իւր բարեկամ լրագրագետներուն մէկէն տանելով:

Եւ այն իրիկունը ճշդիւ դժբաղդ Միրսային մեռած օրուան իրիկունն էր: Սպաննողը, Պինոս, հազիւ դուրս ելեր էր, Յըրնէօզ նամակ մը ստացեր էր Պ. Բօլէէն, որ ազնուաբար շնորհակալութիւն կը յայտնէր զրկած տոմսակին համար և ստիպողաբար կ'ազաչէր զալ գիրենք գտնել օթեակին մէջ:

Նկարիչն այն իրիկունն ախորժակ չունէր թատրոն երթալու և զուարճութեան ժամեր անցունելու Օրիորդ Մարկըրիթի սխրալի ընկերակցութեամբ:

Հանրակառքին եղբրական դէպքը տրտմեցուցեր էր զայն. Պինոսի դիտաւորութիւնները մտատանջութիւն կը պատճառէին իրեն: Կը գղջար թունաւոր գնտասեղին գտնուիլը մարդու չյայտնելու խոստմանը վրայ՝ զոր տրուեր էր Պինոսի, մինչդեռ աւելի խոհեմութիւն էր ոտտիկանութեան տեսչին յանձնել՝ հանդերձ պէտք եղած բացարձակամբք: Մինչև ի վ կը սկսէր վախնալ որ ուշ կամ կանուխ ինքզինք վտանգաւոր կատկածներու կ'ենթարկէր իւր անխոհեմ բարեկամին մէկ թուրբարանութեամբը:

Սակայն անքաղաքավարութիւն մ'ըրած չըլլալու համար շէր կրնար ետ կենալ թատրոնն երթալէ և հայրն ու աղջիկը ողջունելէ, որք զինքը տեսնելու փափաք կը յայտնէին:

Միանգամայն կը մտածէր թէ լաւ առիթ մ'էր զինքը նեղող սեւ թիթեռնիկները վանելու:

Ուստի որոշեց հագուել, և ժամը 6 ին մօտ, որովհետեւ չոր օդ մը կար, դուրս ելաւ քալելով, որպէս զի երթար մեծ պուլվարներուն վրայ ճաչէր, ախմբանոցի մը մէջ, որուն անդամակից էր, և ուր յաճախ չէր տեսնուէր:

Հոն գտնուողները ձանձրալի մարդիկ չէին, և անոնց գուարթութիւնը բողորովին փարատեց Յըրնէօզի տըխրութիւնը: Բաւական խօսակցեցաւ իրեն հաճելի եղող նիւթերու վրայ, եւ երբ ժամանակն եկաւ ձամբայ ելնելու դէպ ի Բորթ-Սէն-Մարթէն, իւր մրտահոգութիւնները մոռցած էր բոլորովին: Բայց գրուած էր թէ անակնկալ հանդիպում մը պիտի յիշեցնէր իրեն տխուր արկածը:

Թատրոնին սիւնազարդ ճակատին առջև հասած ժամանակ, կանգ առաւ ձեռքի պատուական սիկառը լմնցնելու համար և քիչ չեղաւ զարմանքը երբ տեսաւ որ թանձրամարմին կին մը հետեւալ խօսքը կ'ուղղէր իրեն.

— Մտուգիւ, չեմ սխալիր, դուք էք: Գլուխը փուլար մը կապած էք, և մէջքէն ալ ողորահիւս սակառ մը կախուած էք նարինջով լեցուն:

Յըրնէօզ չձանչեց զայն ի սկզբան, բայց կինը ժամանակ չթողուց անոր փնտռելու:

— Զիս չձանչեցիք, ըսաւ խեղդուկ ձայնով մը, բայց ես կը ճանչեմ զձեզ, երեկ իրիկուն դուք չէիք դէմս նստողը զինի վաճառանոցին հանրակառքիմէջ:

— Ա՛, շատ աղէկ, կը յիշեմ հիմա, կակազեց նկարիչն ապշած:

Կառքի մէջ ի միասին գտնուող անծանօթ մարդիկ հետեւեալ օրն իրարու հանդիպած ժամանակ սովորաբար չեն կանգ առնուր ու խօսակցիր:

Տարակոյս չկար որ պուլվար Սէն-Մարթէնի մայթին վրայ Յըրնէօզի խօսք ուղղող շատախօս կինը, հանրա-

կառքին մէջ պատահած տխուր արկածին վրայ խօսիլ կ'ուզէր :

Եւ սակայն աղջկան մեռած ըլլալը նշմարուած ժամանակ այդ կինը մեկնած էր կառքէն : Ի՞նչպէս կրնար իմացած ըլլալ : Շատ չանցաւ հասկցուց :

— Ի՞նչ կ'ըսէք եղածին : Աւասիկ պատմութիւն մը . . . Աղջկուկը ճամբան մեռեր էր հէ՞ : Որո՞ւն մտքէն կրնար անցնիլ : Ես ձեռքս կրակին մէջ դնելով կը վկայէի թէ կը քնանար : Ի՞նչ տրպաւորութիւն ըրաւ արդեօք այդ բանը ձեր վրայ, որ ուսերնուդ վրայ մեռեալ մը կը կրէիք առանց կասկածելու . . .

— Ի՞նչպէս, ո՞ւրիկէ լսեցիք :
— Բիկլալ հրապարակի կայարանէն իմացայ այս առտու : Ես ամէն օր հոնկէ կառք կը նստիմ գինիի վաճառանոցին փողոցն երթալու ու նարինջ գնելու համար . . . այս պատճառաւ կառապաններուն ու արձանագրողներուն ամէնն ալ զիս կը ճանչնն . . . և երբ ինձ պատմեցին թէ մեծ թխաթոյր մը կար որ օգնէր էր դիակը կառքէն իջեցնելու, իսկոյն գուշակեցի թէ դուք էիք . . . որովհետեւ ձեզնէ դատ ուրիշ էրիկ մարդ չկար կառքին մէջ :

— Զարմանալի է որ իմ գէմքս կը յիշէք, մըմնջեց Բօլ :

— Օ՞, ես երբ գլուխ մը տեսնեմ, չեմ մոռնար երբէք, կը յիշե՞ք այն մարդը որ աղջկուկին քովը նստած էր և իւր տեղը տիկինի մը տուաւ, կը կարծէք թերեւս որ ես ուշադրութիւն չըրի անոր : Մեզի հետ հազիւ հինգ վայրկեան նստաւ : Բայց ես եթէ հանդիպիմ անոր, երեսն երկար նայելու պէտք չունիմ նոյն մարդն է ըսելու համար :

— Եթէ Պինոս հոս ըլլար, ըսա՛մքընէօղ ինքնիրեն, անշուշտ յարաբերութեան կը մտնէր այս նարնջավաճառ կնոջ

հետ, և ամէն օր կ'ընկերակցէր անոր՝ օգուտ քաղելու համար դէմքեր ճանչնալու յիշողութենէն : Ես փափաք չունիմ բնաւ այնպէս ընելու, բայց հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչ կը մտածէ երէկուան դէպքին վրայ :

Եւ ըսաւ բարձր ձայնով .

— Ուրեմն կրնաք ճանչել նաև այն տիկինը, որ այդ պարոնին հաճոյակատարութենէն օգուտ քաղեց :

— Ա՛, դայն ոչ, վասն զի քթին ծայրն իսկ չի ցուցուց : Այն քողերով զորս հիմա տիկինները կը գործածեն, դիմակաւորներէ աւելի գէշ են : Պէտք էր արգելուէր այնպէս ինքզինքնիս ծածկել . . . վասն զի եթէ եսթաղրուի թէ կին մը չար գործ մը ըրած է . . . չորեկէն ետեւ հնար չէ ձեռք անցունել . . . : Կը յիշեմ որ կայարանին պաշտօնեան ըսաւ ինձի թէ դուք համարձակեր էիք ըսելու թէ աղջկուկը ճամբան սպաննուեր էր : Ի՞նչպէս և ինչո՞վ սպաննուեր էր, կը հարցնեմ ձեզ քիչ մը, վասն զի լսածիս նայելով՝ մարմինին վրայ խայթուած մը իսկ չի կայ եղեր :

— Այո՛, բայց այդ մահը շատ տարօրինակ երեւցաւ ինձի . . . :

— Ծղմարիտ է թէ աղմուկ չհանեց. բայց այն հասակին մէջ կեանքը շատ ուժով չէ :

— Ուրեմն դուք չէք կարծեր որ քովի տիկինը . . . :

— Այն տիկինը որուն երեսը մարդ չի տեսաւ : Օ՛, ամենեւին, եթէ անոր դէշութիւն մը ընէր, կը տեսնէինք : Ասկէ գատ, բժիշկներն ալ քննեցին աղջկան մարմինը, և բան մը չի գտան, ես չեմ գարմանար անձայն և անչարչար մեռնելուն վրայ : Իւր ծամուած թուղթէ դէմքը կ'ըսէր թէ հիւանդ էր :

— Ի՞նչքը՞ . . . տեսա՞ր ուրեմն . . . բայց ան ալ քողով ծածկուած էր .

— Ծղմարիտ է, ես տակաւին չի պատմեցի ձեզ թէ Մօրկը մտայ . . . գիտէի որ հոն էր . . . և Սէնթ-Էօսթաշի անկիւնէն մինչեւ Նօթր-Տամի անկիւնը հեռու չէ : Սպասողներու երկար շար մը կար. և պէտք չէ գարմանալ . . . : Մօրկին մէջ սովորաբար խեղճըւածներ ի տես կը դուռին, և խեղճութեամբ մը . . . տեսնելու բան չէ, իսկ այդ աղջկուկը լոյսի պէս աղուոր էր, և ինչն ալ չէր փոխած դայն . . . կարծես թէ կը քնանայ : Զինքը տեսնելու պէս ճանչեցի :

— Կը ճանչէի՞ր դայն ուրեմն, գոչեց Ֆրանէօղ :

— Անշուշտ կը ճանչէի, ըսաւ խոշոր կին : Տասն անգամ տեսած եմ դայն Մօնարթրի Սէն-Բիէն հրապարակին շուկան : Պէտք է ըսեմ ձեզի թէ ես Քլիփիանքուուի խճուղիին վրայ կը բռնակիմ :

— Ըսել է թէ գիտէք ո՞վ ըլլալը :

— Այդ ո՛չ, վասն զի հետը երբէք խօսած չեմ : Կը հասկնաք որ իմ այս հասակիս մէջ դեռատիներու հետ սասակցիլ չի վայլեր . . . մանաւանդ երբ ինչ տեսակ անձ մ'ըլլալը չգիտեր մարդ : Բայց տեսած ըլլալս, այո՛ չեմ ժխտեր . . . և եթէ հարիւր տարի ալ ապրիմ չեմ մոռնար դէմքը : Սեւ աչքեր ունէր այնչափ վառվառն . . . որ սիկաունիդ անոնցմէ վառելու փափաք կրնային ներշնչել ձեզի . . . և ձերմակ սնդուսի պէս փայլուն մորթ մը . . . բայց աժգոյն . . . տեսնողը կ'ըսէր թէ կաթիլ մը արիւն չկար երակներուն մէջ . . . :

Ֆրանէօղի սիրտը պահ մը յուզուեցաւ : Արդարեւ իր Պինոս բարեկամին պէս սիրահար չէր խուզարկուի արհեստին, բայց հանրակառքին գազանիքը իր խոստովանիլ չուզածէն աւելի մտահոգութիւն կը պատճառէր իրեն,

և կարծեր էր որ նարնջավաճառ կինը պիտի լուսաւորէր զինքը. բայց յուսացածին պէս չեղաւ :

Ըսաւ սակայն ինքնիրեն թէ կրնար թերեւս օգտակար տեղեկութիւն մը ստանալ այդ շատախօսէն և հարցուց .

— Բայց եթէ յաճախ Մօնմարթրի վաճառանոցը կուգար, ըսել թէ այն թաղին մէջ կը բնակէր :

— Օ՛, ատոր տարակոյս չկայ, պատասխանեց շաղարատուհին :

— Եւ թերեւս առուտուր ըրած խանութպաններէն ոմանք ալ կրնան ըսել ո՛ր փողոցին և ո՛ր տան մէջ բռնակիլը :

— Շատ հաւանական է. բայց գարմանալի կը թո՛ւի ինձի որ, անոր մահուան դէպքն անոնց ուշադրութիւնը չգրաւեց, թերեւս այն պատճառով որ մեծ բան մը չէր գնէր անոնցմէ : Հակիթ, բանջարեղէն, աղցան, օրը հազիւ երսուն տու կը ծախսէր : Ուստի կը հասկնաք որ այնպիսի յաճախորդ մը նշանակութիւն չէր կրնար ունենալ : Ասով հանդերձ գոռոջ էր փոքրիկ թագուհիի մը պէս. հետերնին չէր խօսեր, բայց միայն «քանի՞ է» հարցընելու համար. և երբ սուղ գտնէր, կ'առնէր կը քալէր՝ առանց սակարկութեան մտնելու :

— Սակայն հարուստ ըլլալու չէր :

— Հարո՞ւստ. օ՛, ոչ : Միշտ նոյն մաշած՝ քարտէս և սև բուրդէ հին շրջագրեալը կը տեսնէի վրան :

— Մինակ էր միշտ, հարցուց Ֆրանէօղ, չկրնալով հրաժարիլ իր ակամայ հետախուզութիւնը յառաջ վարելէ, իբրև պարզ Պինոս մը :

— Միշտ : Վաճառանոցն եկող իրեն ծանօթ սպասուհիները կը խնդային վրան՝ սիրահար չունենալուն համար :

— Գեղեցիկ և պարկեշտ . . . հազուադիւր բան է . . . մանաւանդ երբ դե-

առաջի աղջիկ մը ոչ հարստութիւն ունի, ոչ ծնողք, և հարկադրուած է աշխատելու որպէս զի ապրի: X

—Մեծոք կամ մերձաւոր ազգական չեմ կարծեր որ ունենար... բայց ինձի այնպէս կը թուի թէ գործաւորուհի չէր:

—Ինչ կ'ընէր ուրեմն:

—Թերեւս դասատուութիւն կ'ընէր ամէն մէկ դասը մէկ ֆրանքի... և գիտէք որ այդ արհեստը շահ չի բերեր:

—Ըսել է թէ շատ մարդոց տուն կ'երթար, հետեւապէս կր'այ իւր մարմինը ճանչող մը գտնուի:

—Ճանչող, պատասխանեց կինն ուսերը թոթովելով: Ամէն մարդ չի մաներ Մօրկը, և ցուցադրութիւնն ալ երեք օրէն աւելի չի տեսեր:

—Բայց դուք մտաք, և անշուշտ ըսիք հոն կեցող դատական դիւանագիրին ինչ որ հիմա պատմեցիք ինձի:

—Ե՛ս, ա՛, վախճարու բան մը չի կայ, բայց ժամանակ չունիմ կորսնցնելիք: Պէտք է որ առուտուրիս գրադիմ: Մտածեցէք անգամ մը թէ մարդս չորս ամիսէ ի վեր պառկած է յողացաւէ մը՝ զոր վաստակեցաւ իւր փայտ պարպողի արհեստին աշխատած միջոցին. ո՞վ պիտի նայի զինքը թէ որ ես չի նայիմ: Եւ եթէ գործը պահապանին պատմէի, երկու ժամ պիտի կորսնցնէի, և վազը նորէն պիտի հարկադրուէի երթալ խօսակցիլ աստիկանութեան տեսչին հետ... գէշ չէ՛ր ըլլար: Նախ թէ ինչ օգուտ պիտի ունենար. աղջկուհին ո՛չ անունը դիտեմ ոչ տեղը:

Փրընէօզ հարկադրուած էր խոտոտվանելու թէ կինն յանցանք չունէր, ինքն ալ անոր պէս ըրեր, ինքզինքը հետու բռներ էր, թէեւ բաւական բան գիտէր այդ չարաշուք դէպքին վրայ: —Ասով հանդերձ, ըսաւ կինը, եթէ

ինձի պէտք ունենաք, պատրաստ եմ ծառայել ձեզ: Անունս վիրժինի Բիլուէ, և Միւլէր փողոցին անկիւնը կը նստիմ: Մօտի պտղավաճառին հարցնէք բուսական է...: Կը տեսնեմ որ այն խեղճ աղջկան պատմութիւնը ձեզ կը շահագրգռէ... ուստի ես ալ պիտի ջանամ անգլեկութիւններ ստանալ անոր վրայ վազ առտու և ձեզի բերել: Բոլոր թաղին մէջ հարցուփորձ պիտի ընեմ անոր վրայ: Բայց, ներեցէք ինձի, տէր իմ հոս այսպէս շաղակրատած միջոցիս՝ նարինջներս չեն ծախուիր: Գուք չպիտի զնէք անշուշտ, այնպէս չէ՞: Իմ վաճառքս ձեզի պէս մեծ մարդոց համար չէ:

Եւ թողլով Փրընէօզը, շաղակրատուհին սկսաւ գոջել:

—Երեք սու, պատուական նարինջ, երեք սո՛ւ:

Բօլ մտածեց որ աւելի պնդելն անօգուտ էր: Մայր Բիլու աւելի բան մը չպիտի կրնար ըսել իրեն, սա գերազանց պատճառով որ չէր գիտեր: Միւս կողմէ ժամանակ էր թատրոնը մտնելու: Առաջին արարուածը խաղցուեր էր, և պէտք էր երկրորդը չսխած օթեակը հանել, ուր Պ. Բօլէ տեղ մը պահած էր իրեն: Այսպիսի պարագայի մը մէջ փութկոտութիւն չընելը գրեթէ անքաղաքավարութիւն է: Արդ, դադարը վերջանալու մօտ էր, և Փրընէօզ աւելի պատշաճ կը գտնէր վարագուրին բացուելէն առաջ ներկայանալ:

Ուստի դուրսը սիկարնին ծխելէ ետեւ ներս վերադարձող հանդիսատեսներուն ետեւէն ներս մտաւ, օթեակին թուահամարը տուաւ և ծանր ծանր վեր ելնել սկսաւ սանդուղէն, ջանալով ձեզքել զինքը շրջապատող բազմութիւնը: Առջեւն յաղթանդամ մարդ մը կար, որուն լայն կոնակը կը գոցէր իւր ճամբան:

Փրընէօզ քանի մ'անգամ այն մարդուն ու պատին մէջ տեղէն սողոսկելու փորձ ընելէն ետք, կամաց մը մըլտեց զայն. որպէս զի քիչ մը շուտ յառաջանայ:

Մարդն ետին դարձաւ անքաղաքավար խօսքեր մըմտալով և այսպէս իւր դէմքը ցոյց տուաւ նկարչին, որ զայն տեսնելով տարօրինակ տպաւորութիւն մը զգաց: Այնպէս թուեցաւ իրեն թէ՛ հանրակառքին բարձրաւանդն ելնող մարդուն կը նմանէր: Նոյն խիտ դիմագիծը, նոյն աղեբեկ ընչացքը, նոյն գինուորական ձեւով կողմնամօրուքն ունէր: Միայն հագուստը տարբեր էր. փոխանակ հաստ բալթոյի, մ'և թաղեայ կլոր գլխարկի, բարակ չուխայէ սեւ սրտէնկօթ մը հագած և մետաքսէ նոր փեղոյր մը դրած էր:

Աչերն արագապէս զննեցին նկարիչը, սեւ կրակոտ աչեր հաստ յօնքերով. և անշուշտ արձանի շղատեց զայն իւր բարկութեան, վասն զի՝ փոխանակ ծանր խօսք մ'ընելու՝ ինքզինքը շտկելով փութացուց քալուածքը և անհետ եղաւ նրբանցքին մէջ:

—Անշուշտ զիս ճանչելով կծկեց, ըսաւ մտքէն Փրընէօզ: Եթէ Պինոս հոս ըլլար և իմ տպաւորութիւնս անոր հազորդէի, մարդուն հետքը չէր թողուր: Բայց ես Պինոս չեմ, անոր ըրածը չեմ կրնար և չեմ ուզեր ընել:

Այս մտածութեամբ շարունակեց ճանբան, և առանց դժուարութեան առաջին յարկն ելաւ, որովհետեւ գետնայարկի մուտքին բերանը դիզուած բազմութիւնը ներս մտած էր:

Օթեակը փնտռեց, որ ձախտիններէն մին էր, և երբ գտաւ, օթեպանուհին կանչեց՝ առանց այլ ևս խորհելու քիչ մ'առաջ ըրած հանդիպման վրայ:

Օթեպանուհին վազեց եկաւ և օթ-

եակին դուռը բանալով ներս մտցուց զինքը:

Փրընէօզ բերկրութեամբ տեսաւ Օր. Մարկըրիթի այտերուն գունաւորիլն այնպիսի կարմրութեամբ մը. որ բարենշան երեցաւ իրեն: Պ. Բօլէ յոյժ սիրալիլ կերպով ընդունեց զինքը՝ ոտքի վրայ ելնելով և աթոռակ մը քշելով նորեկին առջեւ:

—Գիտէի որ չի պիտի մերժէիք մեր հրաւերը, գոջեց Պ. Բօլէ, և շնորհակալ եմ որ ձեր երեկոյթը մեզի կը նուիրէք:

Օր. Մարկըրիթի հայրը միջահասակ ծերուկ մ'էր հաճելի տեսքով, ճապուկ և դիւրախօս: Գէմքն առաւել համակրելի կրնար ըլլալ եթէ աւելի անկեղծ ըլլար: Աչերը կը ագեղցնէին զայն քիչ մը, վասն զի ուղղապէս դիմացինին չէին նայեր, և կասկածելի շարժումութիւն մ'ունէին: Ասիէ զատ՝ շուրթերը չափազանց ժպտուն էին հաստարակ ժըպիտով մը, բայց իր ամբողջն անհաճոյ չէր, և Պ. Բօլէ կրնար յաջողապէս ներկայանալի անել մ'ըլլալ:

Օր. Մարկըրիթ բարեբաղդաբար չէր նմաներ անոր: Անշուշտ մօրը կը նմանէր հասակին բարձրութեամբը, դէմքին գոյնովն և շնորհալի համարձակութեամբը, որ մասնաւոր հրապոյր մը կուտար իւր անձին:

Փրընէօզ կրցեր էր հաճելի ըլլալ Պ. Բօլէի. ակնածալից վարմունքով մը, զոր նկարիչները շատ չեն շուայեր քաղքենիներուն: Համբերութեամբ մըտիկ կ'ընէր անոր խեղճ գնահատումները հին և նոր պատկերհաններուն վրայ, և կը զիջանէր պատասխանելու:

Օրիորդ Մարկըրիթ ալ թերեւս հօրմէն աւելի ձեռնհասութիւն չունէր նրկարչական խնդրոց մէջ: Բայց աւելի սուր դատողութիւն ունէր, և գոհ էր որ Փրընէօզ չէր ծիծաղեր իւր հօրը վրայ:

—Սիրելիս, ըստ մէկէն Պ. Բօլէ, շատ յարմար ծամանակին եկաք մեր մէջ վիճարանութեան նիւթ եղող խընդիր մը լուծելու համար:

—Կանխաւ կ'ըսեմ, պատասխանեց Յրընէօզ համեստաբար, թէ դուք իրաւունք ունիք և Օրիորդն ալ անիրաւ չէ:

—Օ՛ մի վործէք ինքզինքնիդ ետ կեցընել քաղաքավար պարտութեամբ մը: Դուք շատ ձեռնհաս էք մեր վէճը լուծելու, և անպատճառ պէտք է որ ձեր կարծիքը տաք: Ըսեմ նախ թէ վիճարանութեաննիս ձեր պատճառով ծագեցաւ:

—Պատիւ կը համարիմ ես ինձի որ դուք և օրիորդն իմ վրայ մտածեր էք:

—Հաւատացէք, կ'աղաչեմ, սիրելի՛ Յրընէօզ, որ այդ բանը յաճախ կը պատահի մեզի: Դուք այն անձերէն չէք, որ մոռցուիք, երբ կը ճանչուիք, ինչպէս որ մեք ալ ճանչած ենք զձեզ. և եթէ անձամբ չճանչէինք, գոնէ ձեր գործերը պիտի ճանչէինք, որք կ'արձեն զբաղեցնել ձեր վրայ: Ձեր անունն ամենուն բերանն և ամէն լըրագրաց մէջ է: Ամէն տեղ կը խօսուի այն նկարին վրայ, զոր այս տարի պիտի ներկայացնէք նկարահանդէսին մէջ. և սալոնին մեծ յաջողութիւնը պիտի ըլլայ, ըսին ինձի, և կը հաւատամ: Ահա ճշդիւ այդ նկարն է որ մեր վէճին չուկէտն եղած է...:

—Բայց, առարկեց նկարիչն՝ երկչոտ կերպով մը, կը ցաւիմ որ դուք պատիւ չբրիք ինձի դալու դայն տեսնելու... որպէս զի կարենայիք դատել դայն...:

—Ես գիտեմ ինչ ըլլալը... նկարիչներուն մէջ միակ խնդրոյ նիւթն է այս միջոցիս... Հոռոմի դիւզերէն դեռուտի այծարած ազլիկ մը նստած Մէթէլլայի... ոչ, Սէսիլիայի... շիրմին

ոտքին տակ... վերջապէս գերեզման... և խօսքը մէջերնիս, կրնայիք աւելի գուարթ նիւթ մը ընտրել... մարդ մը որչափ և սիրահար ըլլայ նկարի, շատ չի սիրեր իր դահլիճին մէջ տեսնել գերեզմանի պատկեր մը... և այս բանը կրնայ թերևս միշտ ալ այդ նկարին վաճառուելուն...:

—Օ՛, Սէսիլիա Մէթէլլա շատոնց մեռած է, ըսաւ լրջութեամբ Յրընէօզ, որ խնդալ կ'ուզէր Պ. Բօլէի քթին:

—Չքանչաք մ'է ըրածնիդ, բայց խնդիրն ատոր վրայ չէ: Ես պահ մը առաջ կը պնդէի Մարկրիթին թէ դուք նկարիչներդ լաւ չէք ըներ յամառելով որ ձեր կտաններուն վրայ միշտ խտալացիներ և խտալուհիներ նկարէք: Ես կ'ըսեմ թէ տիպարի, մանաւանդ կնոջ տիպարի համար Փրանսուհիներն սքանչելի տիպարներ կրնան ընծայել ձեզ:

—Հապար անգամ իրաւունք ունիք, պարոն, և ես հեռու չեմ երթար հատ մը գտնելու համար, ըսաւ մէկէն Յրընէօզ Օր. Բօլէի նայելով:

—Տեսա՞ր, Մարկրիթ, ես ալ ինչ կ'ըսէի քեզի դոչեց Պ. Բօլէ: Յրընէօզ կը վկայէ թէ փառաւոր տիպար մը կրնաս ըլլալ դուն:

—Ես զիս շատ լաւ չեմ տեսներ Հոռոմի գեղերէն այծարածուհիի կերպարանքով, ըսաւ Օր. Մարկրիթ ծիծաղելով:

—Դուք ամէն կերպարանքով գեղեցիկ կ'ըլլաք, օրիորդ, պատասխանեց Յրընէօզ ջերմ համակրանքով մը:

—Ի՞րանգամայն պէտք է որ ես կարենամ ներկայացնել ձեր ընտրած անձը: Արդ, իտալուհիները խարտեաչ չեն ըլլար, իսկ ես խարտեաչ ըլլալու դժբաղդութիւնն ունիմ: Արեւը չէ ոսկեզօծած իմ երեսիս գոյնը, չէ սևուցուցած մազերս և դիմազիծս բացար-

ձակապէս զուրկ է նկարագրէ:

—Բա՛, ըսաւ Պ. Բօլէ կարելով Յրընէօզի խօսքը՝ որ գովեստ մ'էր պարգասպէս, դուն այդպէս խիստ աղէկ ես, և ես շատ մարդ կը ճանչեմ որ իմ կարծիքէս են:

—Կ'աղաչեմ որ զիս այն մարդոց կարգը դնէք, աւելցուց նկարիչն՝ ուրախ ըլլալով որ առիթ կը գտնէր Օր. Մարկրիթի գեղեցկութեան վրայ իւր ըսքանչացումը յայտնելու:

—Կը խոստովանիմ որ, ըսաւ հայրը, ես չեմ կրնար գոնայիլ այն գլուխներուն վրայ, զոր նկարիչները կ'երթան այնչափ հեռուները կը փնտռեն: Արդարեւ գեղեցիկ են ձեր Հոռոմայեցի կիներն իրենց կիտրոնի գունովն և կ'որ աչերովը: Բայց ի՛նչ կերպարանք: Այնպիսի լաթեր, զորս խոհարարուհի մը չի համարձակիր վրան առնել բարեկենդանին օրը պտըտելու համար: Այնպիսի հագուստով դուրս ելնելը պէտք էր արդիւրէր:

—Շատ խիստ էք այդ խեղճ աղջիկներուն համար, մրմնջեց Յրընէօզ: Պէտք է որ իրենց արհեստը գործեն, տիպարի պաշտօն կատարելու համար չեն կրնար փարիզեան նորաձեւութեանց պատկերներու պէս հագուիլ:

—Լա՛ւ, կը հասկընամ գայդ, տեղական գոյն պէտք է. դիտեմ ի՛նչ ըլլալը, թէ և քաղքենի մ'եմ ես: Բայց եթէ նըկարիչ ըլլայի ես, ուրիշ կերպ կ'ընէի: Հանդերձարան մը կ'ունենայի տանս մէջ, և եթէ Յորնարիայի մը պէտք ունենայի, Փրանսուհի մը կ'ընտրէի, և դայն ուղած կերպարանքս կը մոցընէի տիպար ընելու համար:

—Բայց, հայրիկ, միեւնոյնը չի կըրնար ըլլալ, ըսաւ օրիորդ Բօլէ, նախատիպը շատ տարբեր է:

—Հանդարտ թող զիս քու նախատիպովդ, գեղեցկութիւնը գեղեցկութիւն է:

Յրընէօզ գլուխը խոնարհեցընելով ձայն չէր հաներ: Չէր ուզեր վիճարանիլ այսպիսի անհեթեթ խօսքեր ընող մարդու մը հետ, և կ'սկսէր հարցընել ինքնիրեն թէ պիտի կրնա՞ր մտիկ ընել այսպիսի աներ մը, որ բացարձակապէս զուրկ էր գեղարուեստական ըզգացուէ:

Բայց Մարկրիթ կռահեր էր նկարչին մ'աւելն անցածը: Այնպիսի նայուածք մ'անոր ուղղեց, որ իսկոյն մոռցընել տուաւ Պ. Բօլէի դէմ ունեցած դժգոհութիւնը: Շատ բան կը հասկըցընէր այն նայուածքը. գորովալից և գրեթէ աղերսական էր: Երբում կը խնդրէր իւր հօր ճաշակի սխալներուն համար, որոնց բնաւ համամիտ չէր աղջիկը:

—Մնաց որ ես յատուկ պատճառներ ունիմ իտալացիներն առելու: Մտածեցէք, սիրելիս, որ այդ անզգամները պիտի զրկէին զիս գեղեցիկ ժառանգութենէ մը, որ իմ իրաւունքս էր... եղբօրս ժառանգութիւնը:

—Ի՛նչ կ'ըսէք, հարցուց Յրընէօզ զարմանքով: Ես չէի գիտեր ձեր եզբայր մ'ունենալը:

—Մարդ չի գիտեր, վասն զի գաւառը կը բնակի, և անուննիս ալ մէկ չէ, մայրս երկու անգամ ամուսնացած էր, և այս եղբայրս երկրորդ ամուսնութենէն էր: Բայց ես հիմա անոր միակ ազգականն եմ, և հետեւաբար միակ ժառանգորդը, թէ՛ զինքը չեմ տեսած և չեմ տեսներ երբէք: Երկար ժամանակ է ի վեր քէնով ենք իրարու հետ: Պատճառելով թէ Փարիզի կլիման չէր յարմարեր իրեն, դնաց Յրանսայի հարաւակողմը փոքրիկ քաղաք մը քառուեցաւ: Մարկրիթ չի ճանչեր իւր հօրեղբայրը:

—Բայց պատճառ մը չէ այդ ձեզ ժառանգութենէ զրկելու, ըսաւ նկարչին:

րիչը մտազբաղ կերպով մը՝ զոր այս տեղեկութիւնները չէին շահագորգուեր:

—Ո՛չ, բայց տեսէք ո՛ւր է գէշութիւնը: Այդ կենդանին, որ առաջին կարգի տարօրինակ մեղած էր միշտ, պատանութեան միջոցին կարծելով թէ նկարչութեան տրամադրութիւն ունէր, քանի մը ասորի Խալիոյ մէջ անցուց կտաւներ չաղելով, որոնց ամենէն աղէկը տասն և հինգ ֆրանք չարժեր: Եթէ իւր թողած ժառանգութիւնն իւր այդ նկարները միայն ըլլային, ես շատոնց սուգս կատարած կ'ըլլայի, բայց հարուստ է... Ինձի չափ հարուստ է եթէ ոչ աւելի, և անհնար չէ որ կրտակ մ'ընէ յօգուտ աղջիկ զաւակի մը որ ունեցած է Հոռոմ եղած ասեներ:

—Ամուսնացած էր հոն ուրեմն:
—Ըսին, բայց ապացուցուած չէ: Ըսին թէ չեմ գիտեր ի՛նչ տեսակ արարած մ'ամուսնութեան առեր է, նկարչութեան համար իբրև տիպար ծառայող աղջիկ մը: Բայց ես չեմ կարծեր որ մինչեւ հոն երթայ: Միայն թէ, որովհետեւ իւր հարստութեան տէրն ինքն է, կրնայ իւր բնական աղջկան թողուլ: Կը հասկընաք հիմա, սիրելիս թէ ի՛նչ պատճառաւ կ'ատեմ այդ իբրև տիպար ծառայող իտալուհիները:

«Եւ այս պատմութեան մէջ ամենէն հետաքրքրաշարժն այս է որ, յարեց Պ. Բօլէ, իմ անմիտ եղբայրս, Հոռոմի մէջ կազմած այդ պատուական ընտանիքին վրայ երբէք հոգ չտարաւ: Իւր գործերը կարգի դնելէ ետեւ Հոռոմի մէջ, յանկարծ միտքը փոխեց, խելքին փչեց նրանսա վերադառնալ, և գնաց Փարիզէն հարիւր յիսուն փարսախ հեռու բնակութիւն հաստատեց գեղջկական ծակի մը մէջ, ուր բուր պէս միայնիկ կ'ապրի:

«Երբ իմացայ ես իւր այս որոշումը, գրեցի իրեն և հաշտութիւն խնդրեցի

...առաջարկեցի ի միասին ապրիլ, և կամաւ յանձն կ'առնէի անձամբ երթալ, զի՛նքդ գտնել իւր անապատին մէջ և հոս բերել: Արդ, խիտ չոր նամակով մը պատասխանեց ինձի թէ ոչ հաշտութիւն կ'ընդունէր ոչ ալ տեսակցութիւն: Եւ այսպէս մնացինք տասն տարիէ ի վեր: Բայց ես հսկողութիւն ընել կուտամ վրան առանց իւր գիտնալուն: Իւր նօտարն իմ շահերուս կը ծառայէ. անոր ամէն ըրածը կ'իմացընէ ինձի: Արդ, վերջին օրերս իմացայ որ այդ կէս եղբայրս ի նպաստ օտար անձանց կտակելու խօսք կ'ընէ եղեր, և այս լուրը մեծ մտահոգութիւն պատճառեց ինձի: Կանխարգել միջոցներ ձեռք առի. զորօրինակ իմանալ թէ...:

—Բայց հայրիկ, ընդմիջեց քաղցրութեամբ Օր. Մարկրիթ, չեմ կարծեր որ այդ մանրամասնութիւններն հաճոյք պատճառեն Պ. Ֆրենէօզի: Արդէն վարագոյրն ալ բնցուելու վրայ է, անշուշտ թող կուտաս ինձի նայիլ և մըտիկ ալ ընել:

—Իրաւունք ունիս, զաւակս, արդարեւ մեծապէս ձանձրացուցի մեր բարեկամը՝ իմ ընտանեկան գործերս պատմելով իրեն, բայց կը յուսամ որ ներողամիտ կ'ըլլայ: Գու օգտիդ համար է որ այսպէս կիրք կ'ելնեմ, վասն զի այդ անխելք եղբորս հարստութիւնըն ալ ինձմէ ետքը քեզի կը մնայ:

«Ասկէ զատ, յարեց Պ. Բօլէ ծիծաղելով, կ'ուզէի հասկցնել մեր սիրելի Բօլին թէ ինչո՞ւ կ'ատեմ իտալուհիները: Ասով հանդերձ մտադիր եմ այս օրերս երթալ տեսնել իւր նկարած պատկերը:

Ֆրենէօզ գլուխը խոնարհեցուց ի նշան հաճութեան, և որովհետեւ վարագոյրը կը բացուէր, պատասխանելու հարկէն զերծ մնաց:

Ճշմարիտը ըսելով, հագիւ մտիկ ըրեր էր Մարկրիթին հօրը պատմած

խառնաշփոթ պատմութիւնը. բայց հարկադրուած էր ճանչելու որ այդ միլիոնատէրին խօսակցութիւնը համով ըլլալէ հետո էր, և թէ նկարչութեան վրայ յայտնած կարծիքներն անճոռնի էին: Ֆրենէօզ ուժ չէր զգար իր վրայ անոր հետ վիճաբանութեան մտնելու, Հոռոմէն Փարիզ եկող և Ֆրանսացի նրկարիչներուն իբր տիպար ծառայող իտալուհիներուն արժանեաց վրայ: Աւելի կը սիրէր լուսթեամբ սքանչանալ անոր աղջկան գեղեցիկ գլխուն վրայ, որուն երեք քառորդ մասը կը տեսնէր, և որ կարծես թէ Ֆրանսացի վարպետէ մը քաշուած պատկերի մը ընդօրինակութիւնն էր,

Նկարիչը մտասոյզ ընկղմած էր իւր ակնապիշ հայեցման մէջ, որուն յօժարակամ ինքզինք նուիրած կը թըուէր Օր. Մարկրիթ, մինչ Պ. Բօլէ՝ զուգադիտակով մը գրնեալ՝ թատերասրահը կը դիտէր, որ լի էր երկու ունէ հանդիսատեսներով:

—Հիմանալի՛, կ'ըսէր մտքէն Ֆրենէօզ ճանչողի մ'աչօք դիտելով անոր կիսադէմին հրաշակերտ գիծելը, և կը կարծեմ թէ ուշիմութիւն և ազնիւ սիրտ ալ ունի: Սիրած մարդը դժբաղդ չըլլար, ասկէ գատ, զինքը կնութեան առնողը չի հարկադրուիր հօրը հետ ապրելու: Աւելի կը սիրէի որ պակաս հարուստ ըլլար, և հայրն ալ նուազ քաղքենի: Այնպիսի գաղափարներ ունի, որք զիս կը զգուեցնեն, և կը զարմանամ թէ չի նշմարեր որ չենք կրնար երբէք համաձայնիլ: Բաւական ցոյց կուտայ թէ հաւնած է ինձի, և չեմ հասկնար թէ ինչո՞ւ. վասնզի իրեն հաւնեցնելու բան մը չեմ ըրած:

«Թերեւս չի քաշուիր զիս իւր բարեկամներուն ցուցնելէ իբրև հազուագիւտ թաշուն մը, տեսակ մը սնափառութիւն է այս՝ բաւական տարածուած

իւր նմաններուն մէջ: Կը սիրեն իրենք գիրենք նկարիչներու համակիր ցուցնել: Եւ սակայն ոչ, ինձի կը թուի թէ աւելի բան մը կայ, և թէ իւր փութկոտութիւնը նպատակ մ'ունի: Եւ անշուշտ ուրիշ կերպ չէր ըներ, եթէ զիս իրեն փեսայ ընել չմտածէր: Ինձի համար խնդիր է նախ գիտնալ թէ հաճոյ եղած ե՞մ իւր աղջկան, վասն զի չեմ ուզեր յառաջ նետուիլ և զիս յուսախաբութեան ենթարկել: Ես դեռ սիրահարած չեմ Օր. Մարկրիթի բայց շատ չանցած պիտի սիրահարիմ, եթէ շատ երեկոյթներ անցունեմ քով: Պէտք է որ այս երեկոյթէն օգուտ քաղեմ փորձ մ'ընելու համար:»

Այս խորհրդածութիւնն ըրած միջոցին Ֆրենէօզ աչերովը կը լսփէր զՕր. Բօլէ, որ իւր բոլոր ուշադրութիւնը թատերախաղին նուիրած կը թըուէր, բայց և շատ աղէկ կը նշմարէր երիտասարդ նկարչին վրայ ըրած ազդեցութիւնը: Եկաւ վայրկեան մը, որ Օր. Մարկրիթ նեղութիւն զգաց երիտասարդին անթարթ աչերով իւր դէմքը զննելու յամառութենէն, և վերջ տալու համար զուգադիտակն առաւ հօրը ձեռքէն և ժաք Շէքսպիր վրայ ուղղեց, որ իւր դերը կատարել կը սկսէր:

Ֆրենէօզ հասկնալով աղջկան միտքը, ինքն ալ սկսաւ թատերաբեմի տղջելի նուագածուներուն թիկնաթռները դիտել:

Բայց շատ չանցաւ աչերը կանգ առին մարդու մը վրայ, որ թատերաբեմին յարակից պատին առջեւ ոտքի վրայ կեցած և կոնակը պատին տուած Պ. Բօլէի և աղջկանը նստած օթեակը կը դիտէր: Նկարչին աչքը, որ սրբատես էր, մարդուն աչերուն հանդիպելով, իսկոյն ձանձեց գայն:

Սանդուղին վրայ հանդիպած մարդն

էր, որ տարտամ կերպով հանրակառքին բարձրաւանդի ուղեւորին կը նմանէր:

Այս անգամ Յրընէօզ կրցաւ ուշադրութեամբ դիտել զայն, որովհետեւ իւր աչքին դէմը կեցած էր լուսին մէջ և ջանաց իւր յիշողութիւնն ամփոփելով միտքը բերել հանրակառքին մէջ տեսած մարդուն դէմքը: Այո, շատ կը նմանէր անոր, բայց ստուգիւ այն ըլլալուն վրայ վստահ չէր: Փարիզ լըցուն է այնպիսի մարդոցմով, որք վըրձինի պէս ընչացք և մինչեւ ականջին երկնցած կէս մօրուք ունին: Հասակը նոյն էր, ինչպէս նաև մարմնոյն կազմը և շարժումներուն խստութիւնը: Մերթընդ մերթ անկանոն շարժումներ կը նէր, որք մէկու մը ուզողուած կը թուէին, բայց ոչ Յրընէօզի նստած օթեակին անձերուն, վասն զի ոչ հայրը, ոչ աղջկը ուշադրութիւն չէին ընծայեր այդ աննշան մարդուն, որ հեռուէն գիրենք կը դիտէր:

Բայց այս ամէնը բան մը չէին ապացուցանէր, և Յրընէօզ ալ, որ Պինոսի եռանդը չունէր, ետ պիտի կենար իւր գննութիւնը շարունակելէ, տեսաւ որ մարդը ծռելով բան մը ըսաւ իւր քովը նստող կնկան մը:

Ինքնին բնական բան մ'էր այս, և սակայն խկոյն գաղափար ծագեցաւ նկարչին մտքին մէջ թէ նոյն կինը, այն անգամուհին պէտք էր ըլլար, որ թունաւոր գնտասեղը գործածելը էր: Կեղակարծ գաղափար մը, որուն ճշդութիւնը ստուգել անհնարին էր. որովհետեւ խեղճ մեռեալին քովը նըստող կինը բնաւ ցոյց չէր տուած իւր երեսը: Սակայն մարդուն ստաջին խօսքերուն վրայ, կինը մէկէն դառնալով, գլուխը վեր առաւ և մարդուն նշանակած օթեակին նայեցաւ:

Ջահին լոյսն ուղղակի կնոջն երեսին վրայ իջած ըլլալով, Յրընէօզ տեսաւ

որ խոշոր դիմագծեր ունէր, բաւական կանոնաւոր, բայց յոյժ քաջորոշ, և թեթեւապէս թխորակ: Սակայն ամբողջութիւնը անհաճոյ չէր: Տարիքը երսունուհինգէն քառասունին մէջ կերեւէր:

—Արդեօք ինձի՞ կը նայի այսչափ ուշադրութեամբ, կը հարցնէր Բօլինքնիրեն: Կ'երկրայիմ՝ վասն զի հազիւ կրնայ տեսնել զիս այս կեցուածքովս. և եթէ ինձի չէ, ուրեմն Պ. և Օրիորդ Բօլէի կը նայի... մանաւանդ Օրիորդին, որովհետեւ բաւական դեղեցիկ ըլլալով կրնայ ուշադրութիւն հրաւիրել... և սակայն զարմանալի բան է... կին մը որ եղերերգութիւն մը տեսնելու եկած է, փոխանակ տեսարանը դիտելու, գեղեցիկ օրիորդի մը նայելու գրադած է...:

Պ. Բօլէ ալ չէր զբաղեր խաղին տեսարաններով: Յաղթական ձեւով մը կռնակն օթեակին միջնորմին տուած, բաճկոնէն ոլորածեւ կախուած ժամացոյցի խոշոր շղթան և շապիկին վրայ փայլող աղամանդէ կոճակները կը պարզէր ամէնուն աչքին, միանգամայն ծանօթ դէմքեր կը փնտռէր վարի սրահին հանդիսականներուն մէջ: Վերջապէս տեսաւ երաժշտարանին անկիւնը նստող զոյգը:

Իսկոյն կինն երեսը թատերաբեմին դարձուց, բայց մարդն ողջունեց դրամատէրը, ոչ թէ ձեռքով ինչպէս սովորութիւն է բարեկամներու, այլ խորին յարգանքով ձեռեցաւ, խոնարհ քաղաքավարութիւն մը, որ այնչափ հեռուէն ծաղրելի էր: Պ. Բօլէ գլխու թեթեւ ու չոր շարժումով մը պատասխանեց: Մարդն անշուշտ գոհ ըլլալով Պ. Բօլէի աչքին հանդիպելէն, սկսաւ հծծել իւր ընկերուհիին հետ:

—Այ հիմա ինձի կ'իյնայ, ըսաւ Բօլ, հասկընալ այս մարդուն ո՞վ ըլլալը, որ կէս ժամէ ի վեր միտքս կ'զբաղեցընէ:

Օր. Մարկըրիթ ժամանակ չթողուց անոր: Զուգադիտակը վար դրած ըլլալով, տեսեր էր ողջոյնի փոխանակումը:

—Ո՞վ է այդ պարոնը, հարցուց հօրը: Մեր տունը եկա՞՞ծ է: Ձեմ՝ յիշեր երբէք տեսած ըլլալ:

—Այո՛, կուգայ երբեմն առաւօտուն, և իմ սենեակս կ'ընդունիմ, պատասխանեց Պ. Բօլէ: քեզի ներկայացնելու մարդ չէ, որպէս զի հիւրասրահն ընդունիմ: Պարզ գործակատար մ'է:

—Ի՞նչ տեսակ գործակատար, հարցուց Օր. Մարկըրիթ մտազբաղ կերպով մը:

—Միրելի՛ գաւակս, քիչ մը երկար կ'ըլլայ հասկցնել, մանաւանդ որ չի շահ գորգեր քեզ, կը կարծեմ գիտնալ որ այս պարոնները... մարդիկը ըսել կ'ուզեմ, իրենց յանձնուած շահերը խնամելու կը ծառայեն դրամական վարձատրութեամբ... դժուարին պահանջներ ձեռք անցունելու, կնձուտ հաշիւներ մաքրելու, ամէն տեսակ խուզարկութիւններ ընելու կը ծառայեն: Իրենց մասնագիտութիւնն են վէճի նիւթ եղող խնդիրները:

«Գալով այս գործակատարին որ բովանդակ թատերասրահին մէջէն զիս ողջունելու կը համարձակի, առաջին անգամ կանչել տալուս պիտի խնդրեմ իրմէ որ բաղմութեան առջեւ ցոյց չընէ ինձի: Ծարպիկ մարդ է, և կը հաւատամ նաև թէ պարկեշտ ալ է. բայց պատճառ մը չէ այս, որ զիս ծանչելու ցոյց ընէ հազար հինգ հարիւր հոգիի առջեւ: Կը հասկընամ իւր դիտաւորութիւնը, ինձի պէս դրամատէր մը պ'ընենք ինքզինք իրերէ կարեւոր անձնաւորութիւն ցոյց տալ կամ տեսակ մը յանձնարարութիւն է այս տեսակ խեղճ մարդու մը համար: Զինքը կը գործածեմ երբ օգտակար ծառայութիւն մը

կրնայ ընել, բայց չեմ ներեր իրեն ընտանի ձեւեր առնել:

—Կ'ըսէք թէ վարպետ է իւր արհեստին մէջ, հարցուց նկարիչը:

—Օ՛, շատ վարպետ, լսածիս նայելով: Բարեկամ վաճառական մը յանձնարարեց ինձի: Ես ալ բաւական փափուկ գործ մը յանձնեցի իրեն, և դեռ ժամանակ չունեցայ արդիւնքէն զինքը դատելու. բայց կ'երեւի թէ տեղեկութիւններ ստանալու մասին նմանը չի կայ:

—Ուրեմն, պարոն, չնորհապարտ կ'ըլլամ ձեզի եթէ զիս յարարերութեան դնէք այդ մարդուն հետ: Ես ալ առնելիք մ'ունիմ գանձելիք, պարտապանս աներեւոյթ եղած է...: Եթէ ձեր գործակատարը կրնայ...:

—Շատ աղէկ, զինքը այս օրերս պիտի տեսնեմ, ձեզի կը դրկեմ:

—Օ՛, փոխանակ այդ անօդուտ յոգնութիւնն յանձն առնելու, ես կը գրեմ իրեն որ ինձի պայ, եթէ կը հաճիք անունն ու տեղը ըսել ինձի:

—Անո՞նք, ա՛հ, չար սատանայ, միտքէս ելաւ. այնպիսի անուն մ'է որ դժուարաւ միտք կը մնայ: Բայց ես այցաքարտն ունիմ առնը, և վաղ առտու կ'իմանաս ո՞ւր բնակիլը:

—Շնորհակալ եմ, ըսաւ Յրընէօզ, թեթեւ մը նեղանալով:

Ուրախ եղեր էր մտքէն, որ անակընկալ մը պիտի ընէր իւր Պինոս բարեկամին, ճիշդ տեղեկութիւն տալով հանրակառքի ուղեւորին նմանող մարդու մը վրայ, իսկ հիմա հարկ կ'ըլլար սպասել որ Պ. Բօլէ հաճէր անոր հասցէն զրկել իրեն, եթէ միտքը գար:

—Օ՛, ըսաւ դրամատէրը, արդէն կ'իջեցընեն վարագոյրը. գայթակղական կերպով կարճ տեսարաններ կը ներկայացընեն: Մեզք տրուած ստակին:

—Կը թուի ինձի, հայրիկ, թէ տե-

սարանական մասի մը վերջն է, պս-
տասխանեց Օր. Մարկըրիթ: Այո...
տեսէ՞ք, երեք անգամ դարկին, և մարդ
չի շարժիր տեղէն:

— Հոգ չէ՛, կրնանք հանգիստ խօ-
սակցիլ: Ես շատ կը ձանձրանամ երբ
խօսելու համար հարկադրիմ փոփոխ,
որպէս զի տեսարանը չչիոթեմ, ըստ
Բօլէի, որ կը սիրէր իւր կողորդին հըն-
չականութիւնը ցոյց տալ:

— Ըսել է թէ, սիրելի բարեկամ, յա-
րեց նկարչին դառնալով, ստակ փոխ
կուտաք, որովհետեւ առնելիք ունիք:
Շատ աղէկ, շատ աղէկ, ձեր այդ տա-
րիքին մէջ պարտապաններուն նալը և
ոչ պարտատէքներ: Չէք սխալած ձեր
վրայ: Դուք պատուաւոր կերպով կ'ապ-
րիք, բայց այդ շարքիւեր զձեզ խը-
նայողութիւն ընելէ: Տարակոյս չի կայ
որ դուք մեծ գումարներ դիզած պէտք
է ըլլաք: Նկարչութիւնը բարձրանալու
վրայ է, և դուք ալ համբաւ ունիք:
Անպատեհ է արդեօք հարցընել ձեզի
թէ ի՞նչ կը շահիք տարին:

— Բայց դժուարին է ինձի գումար
մը ճշդել, ըսաւ Ֆրընէօզ քիչ մը կար-
մըրելով: Պարագաներէ կախում ունի:

— Օն, ըսէք մօտաւոր հաշուով:

— Անցեալ տարի յիսուն հազար ֆը-
րանքի մօտ գանձեցի, և եթէ ուզէի...
պատկերներ նկարել...

— Աւելի պիտի շահէիք: Պէտք է նը-
կարել, սիրելիս, պէտք է նկարել: Ար-
դէն բոսած էի, նորէն կ'ըսեմ, այսօր-
ուան օրս ձեր արուեստէն լաւ արուեստ
չի կայ: Եւ ինձի ծանօթ վարպետ մը
կը հաւատտէր անցեալ օր թէ՛ աւելի
արդիւնաբեր պիտի ըլլայ: Ամերիկա
կ'սկսի գնել, և...

Օթեպանուհին կտրեց Պ. Բօլէի խան-
դավառ գնահատումները: Կամացուկ
մը օթեպանին գոնէն ներս մտնելով՝ ը-
սաւ անոր.

— Դուրսը մէկը կայ որ կ'աղաչէ ձեզ
վայրկեան մը դուրս ելնել... յոյժ ստի-
պողական հեռագիր մը բերած է ձեզի:

Պ. Բօլէ՛ ներում խնդրելով նկարի-
չէն՝ դուրս ելաւ, և օթեպանուհին գո-
ցեց օթեպանին դուռը:

Կենացը մէջ առաջին անգամն էր որ
Ֆրընէօզ մինակ կը գտնուէր Օրիորդ
Բօլէի հետ: Մեծ ընտանիքներու մէջ
առանձին տեսակցութիւնները խիստ
հազուադէպ են, Գաշնակահարութեան
կամ օրէնաներու ժողովածուի մը թեր-
թերը դարձունելու միջոցին, կամ սե-
ղանի մը շուրջը փոխանակուած քանի
մը խօսք, երբ ծաղկատի աղջիկն իւր
ձերմակ ու փափուկ ձեռքով թէյ կը
լեցընէ հօրը հրաւիրած ամենէն վայել-
չագեղ հիւրին:

Անակնկալ դիպուածով մը, նկարչին
ձեռք անցուցած առիթը պատուական
էր վերջ տալու համար չնչին խօսակ-
ցութիւններու, և Ֆրընէօզ կ'ուզէր օ-
գուտ քաղել առիթէն: Օր. Մարկըրիթ
ալ նոյն փափաքն ունէր անշուշտ. ո-
րովհետեւ նախ ինքը խօսք բացաւ
մտերմական ձեռով մը:

— Կը վախնամ որ հայրս ձեզ չնե-
ղացնէ ձեր հասոյթներու գումարը
ճշդելու ստիպելով զձեզ, ըսաւ իւր ա-
մենաքաղցը ձայնով. պէտք չէ սրդո-
ղիլ. ստակի վրայ մեծ սէր ունի...
զոր ես չունիմ բնաւ. բայց ինձի հա-
մար է: Կը պաշտէ զիս, և կը կարծէ
թէ ես չեմ կրնար երջանիկ ըլլալ ա-
ռանց մեծ հարստութեան... Կը խոս-
տովանիմ որ ես երջանկութիւնը բոլո-
րովին ուրիշ կերպ կը հասկնամ: Այրս
հարուստ թող ըլլայ, չեմ դժգոհիր,
բայց ամեն բանէ առաջ կ'ուզեմ որ
հաճելի ըլլայ ինձի:

— Ես ալ, Օրիորդ, մեծապէս կը մը-
խիթարուիմ կնութեան առնելով ա-
ռանց օժիտի աղջիկ մը, զոր սիրտս
սիրէր:

— Ուրեմն կրնանք համաձայնիլ, ը-
սաւ Օրիորդ Բօլէ ժպտելով: Օն տես-
նենք թէ հիմադրին միւս կէտերուն
վրայ ալ համաձայն ենք: Ի՞նչ պէտք
է ընել որպէս զի ձեր սիրտը սիրէ:
Դուք նկարիչ էք հարկաւ տիպար մը
կ'երազէք:

— Գտած եմ:

— Կրնամ հարցընել թէ ո՛ւր:

— Լուվրի թանգարանը կ'երթա՞ք եր-
բեմն:

— Ոչ յաճախ: Հայրս արդի պատ-
կերները միայն կը սիրէ... օրեր կան
որ ես ալ համամիտ եմ իրեն:

— Աղաչեցէք իրեն որ մեծ սրահը
տանի ձեզ. և հոն ձախակողմի հինգ և
վեցերորդ գերաններուն միջև Ռիւպէ-
նի նկարած մէկ պատկերը տեսէք:
Ռիւպէն դարերէ ի վեր մեռած է, բայց
անոր իբր տիպար ծառայող կիներ ողջ
է... դուք կը ճանչէք զայն... և ես
պէտք չունիմ անունը ձեզի ըսելու,
երբ տեսնէք այն չքնադագեղ պատ-
կերը...: Նմանութիւնը աչքի կը զար-
նէ... և այն ժամանակ կը գիտնաք
ի՞նչ է իմ մտատիպարս:

— Բայց... եթէ չեմ սխալիր, Ռիւ-
պէն ֆլանտրուհիներ միայն նկարած
է. և անոնք ալ խարտեաշ կ'ըլլան:

— Իմ մտատիպարս ալ խարտեաշ է:

— Ձարմանալի բան, դուք միշտ թու-
խեր կը նկարէք:

— Որովհետեւ իբրեւ տիպար ծառա-
յողները լեցուն են փողոցներուն մէջ...
միայն ընտրելու գործը կը մնայ...
մինչ խարտեաշները հազուադիւս են
ազնիւ մարգըրիտներու պէս:

— Ստոյգ է որ իտալիայէն խարտե-
աշ շատ չեղներ: Ուրեմն եթէ ես հա-
ձիմ իբր տիպար ծառայել ձեզ...:

— Չափազանց երջանիկ կ'ըլլամ, Օ-
րիորդ:

— Բայց... ամէն օր ձեր աշխատա-
նոցը գալ հարկ կ'ըլլայ:

— Ձեր Պ. հայրը կրնայ ձեզի հետ
գալ:

— Օ, անոր ալ ուզած բանն է: Մի-
այն թէ...:

— Ի՞նչ:

— Կ'ուզէի ապահով ըլլալ որ ուրիշ
անձի չհանդիպիմ ձեր աշխատանոցին
մէջ... մանաւանդ թխաթոյր իտալու-
հեներու...: Ես հօրս պատճառները
չունիմ գանոնք ատելու, բայց մեծ
պակասութիւն մ'ունիմ: Սոսկալի կեր-
պով նախանձոտ եմ.

Այս անգամ պարզապէս յայտա-
բարութիւն մ'էր Օր. Բօլէի ըրածը, և
նկարիչը որ անոր նշանակութիւնը լաւ
կը հասկնար, ինքն ալ իրենը պիտի
չեշտէր, յանկարծ Պ. Բօլէ ներս մտաւ:

— Սիրելի բարեկամս ըսաւ յուզեալ
դէմքով մը, հաճեցէք ներողամիտ ըլ-
լալ ինձի: Աղջիկս ու ես հարկադրուած
ենք ձեզնէ բաժնուելու: Ստացած հե-
ռագիրս կ'իմացնէ ինձի թէ եղբայրս
այսօր ժամը Յին մեռեր է:

— Հաւատացէք, պարոն, թէ ես ալ
ցաւ կ'զգամ ձեզի հետ, թոթովեց մը-
րընէօզ:

— Հեռագիրը կ'իմացնէ նաեւ թէ զիս
կը զրկէ ժառանգութենէ իւր բոլոր հա-
րըստութիւնը կը թողու չեմ գիտեր որ
փողոցաշրջիկ օտարուհիի մը: Բայց թէ
և պատճառ մը չունիմ իւր յիշատակն
օրհնելու, չեմ կրնար կենալ թատրոնի
մէջ: Ամօթ բան կ'ըլլայ: Եկո՛ւ, Մար-
կըրիթ. սենեկապան ծառաս կառք մը
պիտի բերէ և մեր երեկոյթին մնա-
ցած մասը տունը պիտի անցունենք:

Ֆրընէօզ, չփոթած այս անակնկալ
լուրէն, ոտքի վրայ ելած և օթեպանին
առջև կեցած էր:

Օրիորդ Բօլէ ալ ոտքի վրայ ելած
էր, և դէմքը ոչ թէ ցաւ կամ կակիծ,
այլ դժգոհութիւն կ'արտայայտէր:

Անշուշտ իւր վրայ այնչափ տխուր

անպարտութիւնն չըրաւ երբէք չտեսած հօրեղբոր մը մահը, ո՛րչափ բաժնուիլն իրեն հաճելի ընկերութենէ մը:

Պ. Բօլէ գարհուրած կ'երեւէր և անշուշտ ոչ իւր եղբօրը մեռնելուն վըրայ: Գոր հազիւ կը ճանչէր և չէր ալ յիշեր: Բայց ո՛րչափ հարուստ, որչափ և միլիոնատէր ըլլայ մարդ, դիւրաւ չկրնար հանդուրէի կարեւոր ժառանգութիւնն մը կորսնցնելու:

Յորնէօզ այս դէպքը կը նկատէր աւելի Պ. Բօլէի և անշուշտ հետ ունենալիք յարաբերութեանց հետեւանքին տեսակէտէն, և կը թուէր իրեն թէ ցաւելու պատճառ չունէր: Իրենց ձեռքէն պրծած ժառանգութիւնը պիտի կրկնապատկէր թերեւս իրենց հարստութիւնը. և ո՛րչափ աւելի հարուստ ըլլար Մարկըրիթ, ա՛յնչափ աւելի հաւանական էր որ Պ. Բօլէ պահանջկոտ ըլլար իւր փեսայէն սպասելիք նիւթական առաւելութեանց մասին:

Բայց խորհրդածելու ժամանակ չէր: Հայրը կ'արտորար չուելու, և անոր հրամանաւ օթեպանուհին կը բերէր օրիորդին փեղոյրն ու թիկնոցը: Յորնէօզ, ինչ ըսելիքը չգիտնալով, միջնորմին կըթնած՝ անոնց կը նայէր, և այսպէս երեքը մէկէն օթեակին առջեւ խմբակ մը կազմած էին, զոր ամէն մարդ կը տեսնէր:

Դադարի միջոցն ըլլալով, թատերասրահին մէջ բազմաթիւ դուզողիտակներ օրիորդ Մարկըրիթի վրայ ուղղուեցան:

— Գուք կեցիք, բարեկա՛մ, ըսաւ Պ. Բօլէ նկարչին, որ կը պատրաստուէր ուղեկցիլ անոնց մինչեւ կառքին քով: Դուք սգաւոր չէք, գո՛նէ դուք ներկայ գտնուեցէք տեսարանին մինչեւ վերջը: Մեր մեկնումն ընկերական պատշաճից հարկ մ'է: Հաւատացէք որ աւելի կը սիրէինք մեր երեկոյթը ձեզի հետ աւարտել:

Եւ մինչ Յորնէօզ նորէն կը պնդէր մեկնելու դիտաւորութեանը վրայ,

— Մի պնդէք, սիրելի՛ս, ըսաւ ձերուկը, զիս կը վշտացնէք: Մեր այս բաժանումն երկար չի տեւեր, քանի մը օրէն վերստին կը տեսնենք զիրար: Աներկբայ եղիք որ դժբաղդ եղբօրս մեռնելուն պատճառաւ ինձի պէտք եղած հոգերէն ազատելուս պէս, կուգանք կը կոխենք զձեզ ձեր աշխատանոցին մէջ:

Յորնէօզի ուրիշ բան չէր մտար ընելիք. բայց միայն խոնարհիլ: Օր, Բօլէի ձեռքը սեղմեց, Պ. Մարկըրիթ ալ իւր ձեռքը երկնցուց անգլիական ձեւով. և իւր այս շնորհալի ցոյցն ստորագծեց՝ քաջալերիչ ժպիտ մ'ուղղելով անոր:

Յորնէօզ մինակ մնաց, բայց օրիորդին մեկնելուն վրայ անմխիթար չէր. վասն զի իւր գործերը լաւ ճամբու մէջ էին, և կը յուսար որ աւելի պիտի յաջողէին: Հայրը լաւ տրամադրութիւններ ցոյց կուտար, աղջիկն ալ երեք վայրկեան գլուխ գլխի տեսակցութեան մէջ ա՛յնչափ առաջ գացեր էր, ո՛րչափ կը ներէր բարեկիրթ օրիորդի մը պարտքն եղող խոհականութիւնը:

— Գործը լուրջ կերպարանք մը կը ստանայ, ըսաւ նկարիչը, և կը սկսիմ հաւատալ որ ինձմէ կախում ունի քիչ ժամանակէն ձեռքս անցունել պաշտելի կին մը և եթե անասուն հազար ֆրանք տարեկան հասոյթ ունեցող աներ մը: Խնդիրն է հիմա գիտնալ թէ այս ամէն յաջողութիւնները կ'արժե՞ն ազատութիւնս զոհել: Արդարեւ ես գայն ուրիշ բանի չեմ գործածեր, այլ միայն առաւօտէն մինչեւ իրիկուն աշխատելու. բայց վերջապէս իմ հաճոյքիս համեմատ կ'աշխատիմ, և եթէ ամուսնանամ օրիորդ Բօլէի հետ, այն ժա-

ժամանակ խարտեաշներ միայն նկարելու պիտի դատապարտուիմ: Ինքը հասկցուց ինձի:

«Խեղճ Բիա, հարկ պիտի ըլլայ ինձի աշխատանոցիս դուռը գոցել իւր առջեւ, և կրնայ սրտին ցաւէն մեռնիլ...»

«Բայց կրնամ վերջապէս զինքը Սուպիաքօ զրկել գեղեցիկ գումարով մը, որ կրնայ ծառայել իրեն լաւ ամուսին մը գտնելու հոն իւր երկրին մէջ:»

Այսպէս խորհրդածելով փեղոյրը գլուխը կը դնէր մեկնելու համար, վասն զի ախորժ չունէր թատերախաղին մնացորդը տեսնելու: Արդէն մաս մը հանդիսականներ ալ մեկնած էին, վերջին դադարի միջոցին նախաթոռներուն հանդիսատեսները նստած էին կիսէ մը գատ, որ դուրս ելնել կ'ուզէր ճիշդ այն վայրկեանին որ վարագոյրը բացուելու վրայ էր, և կը ջանար պարոնի մը քով հասնելու, որ նրբանցին բերանը կեցած՝ նշան կ'ընէր որ փութայ:

— Օ՛, մըմջեց Յորնէօզ, գործակատարն և ընկերուհին են որ կը մեկնին տեսարանը շարունակուած միջոցին: Ի՞նչ է արդեօք իրենց այս աճապարանքին պատճառը: Ձիս Պ. Բօլէի օթեակին մէջ տեսնելնի՞ն է: Կարելի է, վասն զի ես օթեակին ետեւօքը նստած էի մինչեւ հօրն ու աղջկան մեկնած վայրկեանը: Հետեւապէս կը վախնան որ եթէ խաղին վերջը ինձի հետ մի և նոյն ժամանակ դուրս ելնեն՝ կրնանք իրարու հանդիպիլ: Ուրեմն պարսպ հանեմ իրենց այս հաշիւը, իրենցմէ առաջ դրանք մէջ հասնիմ, որպէս զի քիթ քիթի գալով՝ լաւ մը դիտեմ զիրենք: «Ո՛վ Պիտոս, ի՞նչ խենթութիւններ ընել կուտան ինձի քու երեւակոյսական գաղափարներդ, որոնցմով խճուղեցիր ուղեգոս:»

Այս կոչումն ընելով՝ Յորնէօզ՝ դուրս

ելաւ օթեակէն և վազեց սանդուղին գլուխը՝ առանց հագնելու իւր կրկնոցը, զոր օթեպանուհին տուաւ իրեն:

Յորնէօզ առաջին օթեակներուն սանդուղին չորսական ոտքերը մէկէն առնելով՝ խկոյն վար իջաւ և ա՛յնչափ շուտ վազեց որ կասկածելի գոյգէն առաջ թատարոնին դուռը հասաւ: Եւ որովհետեւ կ'ուզէր որ ինքը տեսնէր առանց տեսնուելու, դուրս ելաւ թատրոնէն և փողոցին դրան աջ կողմը կեցաւ:

Վայրկեան մը ետքը մարդն ու կինը երեւցան սինազարդ գաւթին մէջը, իրարու թեւ մտած, և վայրկեան մը կանգ առին դրան սեմին վրայ:

Մարդը մէկ կողմ՝ կը նայէր, կինը միւս կողմ:

— Լա՛ւ, ըսաւ Յորնէօզ ինքն իրեն, վախ ունին, չեն համարձակիր փողոցն ելնել առանց վստահ ըլլալու որ զիրենք չեմ դիտեր ես: Տարակոյս չի կայ որ կը վախնան ինձի հանդիպելէ...: Ա՛, կինը վար քաշեց քողիկը... և գէշ ըրաւ, վասն զի ալ հիմա բոլորովին կը յիշեցընէ ինձի հանրակառքին մէջի կիսն ըլլալը... կը կարծեմ սակայն թէ զիս չտեսաւ տակաւին:

Նոյն միջոցին նարնջավաճառ կինը դիմաւորելով զանոնք՝ սկսաւ գոչել.

— Երեք սու գեղեցիկ նարնջ: Առէք, պարոն իշխանագուն, զովացուցէք ձեր տիկինը. թատրոնին հանրասրահին մէջ ծախուածէն աժան է:

Կնոջն այս առաջարկը յաջողութիւն չգտաւ: Մարդը գայն ետ հրելով, անցաւ և իր ընկերուհին քաշելով՝ թեւ թեւի հասան Բօրթ-Սէն-Մարթէնի պատմական հոյակերտ դրան մօտ:

Յորնէօզ խկոյն իր դարանէն ելնելով՝ վազեց նարնջավաճառին քով, որ սա սրամիտ խօսքով ընդունեց զինքը:

— Է՛, առածը շատ իրաւունք ունի.

«Երբ գայլին խօսքն ըլլայ» գիտէք մնացածը... չէ՞՞ ըսեր ձեզի թէ կը ճանչեմ դանոնք և պիտի ճանչեմ...

— Բարձրաւանդին մաբոյրը քնարմիջեց ծրընէօզ, ան չէ՞:

— Ա՛, կ'երզնում որ նայն ինքն է: Եւ քաշելով տարած կիներն ալ կը թուի ինձի թէ առջի իրիկունը գինիի վաճառանոցէն վազելով հանրակառքն կը կող և ձեր դիմացը նստողն է: Կերեւի որ կառքէն իջած ժամանակ ծանօթացած են իրարու... որովհետեւ էր տեղն անոր տուած էր... Ահա տես թէ ի՞նչ է տիկիններու հետ քաղաքավարութեամբ վարուիլը: Բայց ազնիւ մարդ չէ եղեր այդ պարտնը... կրնար իմ նարինջս ճաշակել ապա իր իշխանուհիին, չէր սնանկանար այնպէս չէ՞:

Շաղակրատուհին կը խօսէր տակաւին և ծրընէօզ հեռացած էր արդէն: Աւելի քաջալերուած անոր վկայութեամբ որ իւր կասկածները կը հաստատէր, նկարիչը դիմեր էր գոյգին ետեւէն, որ արագ քայլերով կ'երթար առջեւէն:

Կ'ուզէր անպատճառ գիտնալ թէ ո՛ւր կը բնակէին, և միաքը դրեր էր ետեւնուն երթալ մինչեւ իրենց բնակավայրը, որպէս զի կարենար հետեւեալ օրը ցոյց տալ Պինոսի, որ իւր վրայ կ'առնէր խուզարկութեան կատարումը:

Հասկցաւ նախ որ կը վախնային իրմէ: Կինը յաճախ ետին կը դառնար, մարդն ալ ինքզինք ծածկելու փոյթունէր՝ խառնուելով Ռընէսանս թատրոնին հանդիսատեսներուն մէջ, որք դադարի մը ժամանակ դուրս ելած էին օդ առնելու: Բայց ծրընէօզ, որ սուր աչեր ունէր, չէր վրիպեցնէր զանոնք իւր տեսութենէն:

Սրունքներն ալ զօրեղ էին, կրնար չուտով անոնց ետեւէն հասնիլ, բայց

որովհետեւ չէր ուզեր շատ մօտէն սեղմել զանոնք, պատշաճ հեռաւորութենէ մը կը հետեւէր անոնց:

Անշուտ նշմարեր էին զայս, վասն զի ոչ եւս ետեւնին նայելով՝ փութացուցին իրենց քայլերը:

Ճրընէօզ տեսաւ որ արագապէս դարձան Բօրթ-Սէն-Մարթէնի մօտ կեցած կառքերուն քովէն, և արուարձանին ու դրան մէջտեղէն անցնելով՝ շտկուեցան դէպի պուլվառ Սէն-Տընի որ քիչ մ'անդիէն կը սկսի, և վերջապէս հասան լայն քարուղին որուն եզրը հրապարակի կառքերու երկար շարք մը կար:

Կառք պիտի նստին, յայտնի է, ըսաւ ինքնիրեն նկարիչը, այս չէր անցած մտքէս... Բայց... ես ալ կառք մը կը վարձեմ և ետեւնուն կ'երթամ մինչեւ իրենց բնակած տան դուռը:

Ճրընէօզ չէր սխալած: Մարդն ու ընկերուհին կառքի մը մօտեցան և բանակցութեան մտան կառավարին հետ որ կառքէն վար իջած էր:

Կառքերու շարքին գլուխը Բօրթ-Սէն-Տընի կը հասնէր, և անոնց ընտրածը հինգերորդ կառքն էր, վարի ծայրէն սկսելով: Ճրընէօզ՝ անոնց ուշադրութիւնը շարթնցնելու համար՝ վերջինը բռնեց, և ձեռքը դռնակին վրայ դնելով իւր ծխատուփին մէջ սիկառ մը փնտռել ձեւացուց. որպէս զի կասկածելի գոյգին ժամանակ տայ կառքը մտնելու:

— Ո՛ւր պիտի երթանք, հարցուց կառապանը նստած տեղէն:

— Կը տեսնէ՞ք նա պարոնն ու տիկինը որ կը խօսին ձեր ընկերին հետ: Երբ կառքը մտնեն ու ճամբայ ելնեն, դուք ալ ետեւնուն պիտի երթաք:

— Հասկցայ, ուրեմն ժամով կը վարձէք:

— Այո՛, և լաւ պարգեւ մը պիտի առնէք եթէ ետ չի մնաք:

— Թողո՛ւմ որ հեռանայ ինձմէ այն խեղճ կառքը, մի՛ վախնաք, մտէք և ինձի թողէք ձեր հետամտած գոյգը չկոթանցնէ՛ ու գործը...: Ես դիտեմ այդ պատմութիւնները, ըսաւ ձերմակ վեղդորով կառավաթը:

Ճրընէօզ, ուրախ ըլլալով որ ուշիմ մարդու մը հանդիպած էր, աչքին սրտով կը դիտէր իւր գոյգը, որ կը բանակցէր՝ քիչ մը հեռուն, և կը դարձանար որ այնչափ երկար կը տեւէր ստիպելութիւնը:

— Նարնջավաճառուհին իրտունք ունէր, ըսաւ մտքէն, բարձրաւանդին պարտնը վերջին ծայր կէժի մ'է: Երկար բարակ կը սակարկէ մէկ ընթացքի մը համար: Ա՛, վերջապէս կ'որոշէ կանխիկ վճարել, ստակը կառապարին ձեռքին մէջ կը դնէ... կառքին դուռնակը կը բանայ, կինը մէջը կը մտցընէ... ինքն ալ ետեւէն կը մտնէ, և հիմա ես ալ նստիմ...: Կը կարծեն թէ իրենց հետքը կորսնցնել տուին ինձի, և չեն կասկածիլ թէ իրենց ետեւէն պիտի խցնամ:

— Երթա՞նք, պարո՛ն, հարցուց կառավարը, ձերինները կառքը մտան և իմ ընկերս ալ՝ իւր թառն ելնելով՝ ձին կը մարակէ:

— Երթանք, ըսաւ ծրընէօզ, բայց շատ մի՛ մօտե՛նաք, որպէս զի չի նըշմարեն մեր հետամուտ ըլլալը:

— Անհօգ եղիք, մեր կանթեղին լոյսը միայն կրնան տեսնել:

Ճրընէօզ ցատկեց կառքը մտաւ, և գլուխը պատուհանէն դուս հանելով՝ բերկրութեամբ տեսաւ որ միւս կառքը շարքէն դուրս ելնելով՝ ծանր ծանր կը յառաջանար պուլվառին միջուղիին վրայ:

Կառավարին պարծիլը սուտ չէր. իւր ձին լաւ էր, և պէտք չի կար մղելու որ հեռաւորութիւնը պահէր: Գնաց

հանրակառքերու ընդհանուր ընկերութեան քառուղի հրադարակէն տասն քայլ անդին կեցաւ:

— Ո՛ւր կ'երթան, կը հարցնէր ծրընէօզ ինքնիրեն: Հաւանաբար իմ թաղըս: Երէկ իրիկուն մարդը Թուր Կոմիտէի փողոցը իջաւ, կինն ալ լաւալ փողոցը:

Սակայն զարմացաւ տեսնելով որ զանոնք օտանող կառքը ձախակողմ դառնալով Սէվասթօփուլի պուլվառէն երթալ սկսաւ:

— Սխալ է եղեր կարծիքս, ըսաւ ինքնիրեն, բոլորովին հակառակն է: Կրնակին Մոնմարթրի կը դարձունեն: Եւ իրօք ապացոյց մը չի կայ հոն բռնակելուն: Իհիկալ հրապարակին հանրակառքը նստել էին իրենց անգգամութիւնը կատարելու համար... և յետոյ կամուրջներէն անցնելով իրենց բնակարանը գացեր էին: Ինձի համար հոգ չէ Սէնի ձախ կողմը բնակելին: Ամբողջ երեկոյթս իմա է: Այսպէս չէի կրնար լսել եթէ ամուսնացած ըլլայի: Այս վերջին խորհրդածութիւնը յիշեցուց իրեն Օրիորդ Բօլէն, զոր քիչ մը մոռցեր էր օթեակէն դուրս ելնելէն ի վեր. յիշեց նաեւ թէ այդ պաշտելի աղջկան հայրը կը ճանչէր այդ խոզանակածեւ ընչացքով մարդը. և այնչափ լաւ կը ճանչէր, որ իբրեւ գործակատար կը գործածէր:

— Զարմանալի չէ՞ ուրեմն այսչափ աշխատութիւն յանձն առնելս այդ մարդուն բնակավայրը գիտնալու համար: Պ. Բօլէ չկրցաւ միաքը բերել, բայց իւր յուշատետրին մէջ նշանակած են, և խոստացաւ հաղորդել ինձի: Ուստի աւելորդ է իմ այս հետապնդումս, որ Պ. Բօլէի իմացնելիքէն աւելի բան մը չպիտի սովորեցնէ ինձի:

Ձեռքը վեր առաւ կոճակը դարձու-

ներու և կառավարը կանչելու համար, բայց ուրիշ գաղափարներ ծագեցան մտքին մէջ:

— Մտածեց թէ Պ. Բօլէ բոլոր գիտցածը կ'ըսէր իրեն. բայց կրնայ ըլլալ որ այդ սատանորդին կեղծ անունով մը ներկայացած և կեղծ հասցէ մը տունձ ըլլար անոր: Այդ տեսակ մարդ մը կրնայ երկու բնակավայր ունենալ, և շահեկան է ստուգել նաև թէ քովի չարածճի կինն ալ անոր հետ կը բնակի:

Ասկէ զատ ե՞րբ պիտի տեսնէր Պ. Բօլէն, եղբօրը մահը նոր զբաղուններ պիտի բերէր անոր, որք չպիտի թոյլ տային զինքը ընդունիլ: Ինքն ալ չպիտի համարձակէր մինչեւ քանի մ'օր անոր տունն երթալ, և գտնուած ներկայ պարագաներուն մէջ անպատշաճ կ'ըլլար գիր գրել իրեն չնչին տեղեկութիւն մը ստանալու համար:

Ուստի, ըսաւ, ժամանակ կը չսկսիմ սկսած հետապնդումս մինչեւ ծայրը հասցնելով. հիմա խնդիր է գիտնալ թէ այս սիրուն զոյգը զիս ո՞ւր պիտի տանի, հաւանաբար ջուրին անդիի կողմը: Հիմա Շաթլէի հրապարակը կը հասնինք. և կառքը դէպի Շանթի կամուրջը կ'երթայ ուղղակի...: Եթէ այսպէս շարունակէ, զիս մինչեւ Աէն-ժաքի դուռը կրնայ տանիլ, և հազիւ մէկ ժամէն կը հասնինք այս կրիայի ընթացքով:

Եւ ճշմարիտ էր: Զոյգին նստած կառքը շուտ չէր երթար. դայն քաշող երկու ձիերը մեռելակառքի մը ետեւէ երթալու պէս ծանր կը քալէին, և զարմանալի էր որ գործակատարն իւր տունը վերադառնալու համար այդ երկու նստարանով մեծ կառքը ընտրեր էր:

Յորձնէօզի կառավարը դժուարութիւն կը կրէր թող չտալու իւր ձիուն որ այդ դանդաղ կառքը անցնէր:

— Աւասիկ մարդիկ որ արտորալու պէտք չունին, կ'ըսէր նկարիչն ինքն իրեն: Ապացոյց մ է այս թէ չեն գիտեր որ ես իրենց ետեւէն ինկած եմ: Ի՞նչ դէմք պիտի առնեն երբ իմ ալ իրենց հետ կառքէն իջնելու տեսնեն: Բայց պէ՞տք է որ իջնեմ. կարծեմ թէ բոլորովին անօգուտ է, վասն զի իրենցմէ բացատրութիւն ուզելու միտք չունիմ, բաւական է ինձի գիտնալ միայն ո՞ւր բնակելնին. և երբ իրենց բնակարանը մտնեն, ես ալ անմիջապէս իմ տեղս կը վերադառնամ:

Ինչպէս որ նկարիչը դուշակած էր, կառքը Շաթլէի հրապարակն անցնելէ ետեւ՝ Շանթի կամուրջէն ալ անցաւ, և գետին ձախ եզրէն շարունակելով հասաւ մինչեւ Հանրի-Քաթր կամուրջին բերանը:

Հոն քիչ մը դէպի աջ քշելով ձիերը Ծօսէ-Սէն-Պէռնարի փողոցին և պուլվառին անկիւնը կազմող տան մը առջեւ կեցաւ:

Յորձնէօզ կառքին առջևի հայելին վար քշելով՝ կառավարին քղանցք քաշեց, որ դառնալով՝ կամացուկ մը ըսաւ իրեն.

— Եթէ կը հաճիք թող տալ ինձի որ կենալու տեղս ընտրեմ, դուք կրնաք տեսնել առանց տեսնուելու:

Չայս ըսելով՝ կառքը քշեց և դնաց մայթին եզրը կեցաւ առաջին կառքին ետին:

Յորձնէօզ իսկոյն դռնակին փակաւ, որպէս զի զոյգին իջնելը տեսնէր անվրէպ:

Բայց մեծ եղաւ զարմանքը տեսնելով որ մարդ չէր իջնէր կառքէն: Միայն կառավարն իջաւ իւր նստարանէն, ձիերուն սանձը հանեց, վարսակով լեցուն պարկեր կախեց անոնց վրէջն, և ինքն ալ ծանր ծանր ծխափողը վառեց, հանդարտօրէն ծխելու համար:

— Ի՞նչ կը նշանակէ այս, մրմուաց Յորձնէօզ. տեղերնին հասան. ինչո՞ւ չեն իջնէր կառքէն. արդեօք կը կապածին թէ կը դիտեմ՞ զիրենք: Չեմ կարծեր, որովհետեւ այն ատեն կառքն աւելի հեռուները քշել կուտային իրենց հետքը կորսնցնել տալու համար ինձի:

Հինգ վայրկեանի չափ անստոյգ արտատանջութեամբ սպասելէ ետեւ՝ նկարիչը լսեց որ իւր կառավարը կ'ըսէր ինքնիրեն.

— Ինձի կուգայ որ այն մարդը խաղ մը խաղաց մեզի, և կառքին մէջը պարապ է:

Այս մտածութիւնը լուսոյ նշոյլ մ'եղաւ Յորձնէօզի համար, բացաւ դռնակը վար ցատկեց, և միւս կառքին քովն երթալով, տեսաւ որ մէջը մարդ չիկար:

— Եւ ճանբորդներօք, հարցուց կառավարին անհող դէմքով մը, ի՞նչ ըրիր, ճանբուն վրա՞յ ցանեցիր:

— Ճանբորդներս, պատասխանեց կառավարն հեզնոտ ծիծաղով մը, կ'սպասեմ որ դան, բայց չեմ կարծեր: Հող չէ սակայն, որովհետեւ մինչեւ ժամը տասն ու կէս հոս սպասելու համար վճարուած եմ. և դեռ տասը քառորդ կ'անցնի: Եւ երբ ձիերս իրենց վարսակն ուտեն լմնցնեն, ընկերութեան մօտի կայարանին ախոռը պիտի քաշեմ: Իմ օրականս ելած է, հինգ ֆրանք պարգեւ առած եմ:

— Բայց այն պարոնն ու տիկինը որ կառքը մտան Սէն-Մարթէի դրան առջև...:

— Ա՛, դուք տեսո՞ք, դուք... և անկէց մինչեւ հոս անոնց ետեւէն կուգայիք. Օ՛, խաբեցին զձեզ: Մէկ կողմէն կառքս մտան, միւս կողմէն դուրս ելան: Այնպէս խօսք ըրեր էինք այն պարոնին հետ: Տասն ֆրանք կանխիկ

տուաւ ինձի, որպէս զի դանոնք կառքի մէջէն անցունեմ, և մինչեւ հոս ալ պարապ կառքս քշեմ: Աւասիկ ձեզ մինչեւ գինիի վաճառանոցը բերելու պատմութիւն մը, մինչ իրենք մեծ պուլվառներուն վրայ ճեմելով կը զուարճանան: Կը տեսնեմ զայս հիմա, և կը կարծեմ թէ աւելորդ է իմ հոս այս դրան առջեւ կենալս...: Հասկընալով որ իրենց ետեւէն կը դիտէիք զիրենք, այս խաղը խաղացին և էջ չեն որ հոս գան ու բռնուին:

Յորձնէօզ զգաց այս խորհրդածութեան նշուածութիւնը. ուստի, առանց խօսք մ'ըսելու՝ ետ դարձաւ գլուխը կախած, ամօթահար այսպիսի խաղի մ'եկած ըլլալուն վրայ, և երդում ընելով որ անգամ մ'ալ ուրիշի հետք խուզելու անմտութիւնը չի գործէ:

— Օ՛ն, կ'ըսէր իւր կառքը վերադառնալով, ամէն մարդ իւր արհեստը: Ես ոտականի պաշտօն կատարելու համար ծնած չեմ, ինչպէս Պինոս ալ նկարչութիւն ընելու համար: Բայց հիմա ապահովապէս համոզուած եմ, որ մարդն ու կինը հանրակառքին մէջն էին երէկ իրիկուն: Եթէ զիս չի ծանչէին, այսչափ աշխատութիւն յանձն չէին առնել ինձմէ պրծանելու համար: Եւ այսչափ ինձմէ վախնալնին ապացոյց մ'է թէ խիղճերնին մաքուր չէ: Բարեբաղդաբար Պ. Բօլէ պիտի տայ ինձի ատոնց հասցէն և այն ժամանակ կը տեսնենք:

«Բիկալի հրապարակ, կառավար, եւ արա՞գ...»



Ռօշտարի պուլվառը գլխաւոր թաղըն է վարնոց սրճարաններու, որք Փարիզեան լեզուով բարձր կը կոչուին: Յարգի սրճարաններ ալ կը գտնուին:

ուր պարկեշտ գործաւորներ կ'երթան լիար մը գինի կը խմեն հաշուեսեղանին վրայ և կ'անցնին կ'երթան. բայց ասպետները մեծամասնութիւն կը կազմեն:

Սակայն ասոնց յաճախորդներուն ալ ամէնը մոլի կամ սրիկայ մարդիկ չեն: Նկարիչներու աշխատանոցներ շատ կան այն կողմերը, և պարապ պարտող անյաջող նկարիչները շատ դժուարահաճ չեն ունեւիրքներու և ըմպելիքներու անասկին և ընկերներու ընտրութեան մէջ: Կը բաւէ իրենց որ սրճարանապետը վարկ բանայ իւր յաճախորդներուն, և շատ պահանջող չըլլայ անոնց նիստ ու կացի մասին, եթէ գործաւորի շարժիկով երթան, ձայներնին ձգելով խաղեր կանչեն, և ատաւօտէն մինչեւ իրիկուն կամ ամբողջ իրիկունը աստիճանաբար յաճախ ըմպելու:

Պինոս ալ ասոնցմէ էր, և երկար ժամանակէ ի վեր յաճախորդ էր այդ ասպետներէն մէկուն: Միւրրա փողոցը ձեղնայարկի մը մէջ կը բնակէր և կոչու Պո: Կոչուած սրճարանն ալ երկու քալ անդին էր. Գլխեանքուր փողոցին և Օրնանօ պուլվարին մէջակողմ:

Այդ սրճարան-գլխեանքուրը դուրսէն հաճելի երևոյթ մը չունէր, ապակեփայտ ճակատը չէր մաքրուէր յաճախ, և ազտա վարագոյրներ անցորդներուն աչքէն կը ծածկէին ներսի սրահին գաղտնիքը, ուր ծովիկամ գնտասեղան մ և փայտէ նստարաններ կային, որոց վրայ գինովները կրնային հանգիստ քնանալ: Բայց ներսի պատերը ծածկած էին այլանդակ և անպատշաճ պատկերներով, որ Պինոսի քմահաճ վրձինին արդիւնքն էին. ճրի կատարուած աշխատութիւն, որով սէրն ու համակրանքը գրաւած էր տան տիրոջը՝ հայր Բօապօյէ, որ աւելի ծանօթ էր հայր Բօապօս անունով ապսէնթի

սիրահար ըլլալուն պատճառաւ: Օրը կանոնաւորապէս կէս լիւր կը խմէր, և չէր մնասուէր, թէ և օրն ի բուն արբեալ էր և գրեթէ ամէն իրիկուն լոյլիկ կը պառկէր:

Պինոս հոն գրեթէ իւր տանը մէջն էր, բայց հաշիւ մ'ունէր և անահման վարկ: Օրուան քսանէջորս ժամուն տասն երկուքը հոն կ'անցունէր: Երբ նկարչութեան մեծ արուեստին վրայ ճանախօսէր, յաճախորդները բան մը չէին հասկնար, բայց պատգամի պէս մտիկ կ'ընէին:

Այս կերպով բազմաթիւ բարեկամներ վաստկեր էր, զորս ապահով էր հոն գտնելու. վասն զի շատ դուրս չէին ելներ անկէց, և պատիւ կը համարէին իրենց խմբընել անոր երբ ծաբաւ ունենար, որովհետեւ ամէն մարդու հետ չէր տեսակցեր: Մէկ կողմ կը թողուր գեղանի պարոնները, Պուլ-Նօսանէն և Ռէն-Պլանչէն եկող պարիչները, որք սիրով կը ժողովուէին հայր Բօապօսի սրճարան-գլխեանքուր մէջ եւսահա գատրիյ խաղալու համար: Պինոս լաւ գիրք ունեցող մարդոց հետ միայն կը տեսակցէր. գործիական Սէնդ-Ուանի գերեզմանատան մարմարակոփին հետ, որուն համար այլանդակ շիրիներու օրինակներ կը ծրագրէր, հասութատէրի մը հետ, որ Պ. Բիէտուչ կը կոչուէր, և յոյժ լաւ երեւոյթ ունէր: Գործէ քաջուած գեղարվածատի մը հետ, որ չէր փայլէր խօսակցութեան մէջ, վասն զի խուլ էր, բայց կ'ընթանար նկարիչներուն վրայ ընդհանրապէս, և Պինոսի վրայ ալ մասնաւորապէս:

Այս վերջինն ալ, ճշմարիտն ըսելով Պինոսի կատակներուն առարկան էր, բայց չէր սրբողէր բնաւ, և միշտ իւր այդ հալածչին ընկերակցութիւնը կ'փնտռէր:

Իսկ ընդհակառակն՝ Պինոս անհաճաւոր համակրութիւն մ'ունէր Պ. Բիէտուչի վրայ: Անկեղծ բնաւորութեան տէր, ազատ և հաճելի կերպով խօսող, շատ երկիր տեսած, շատ մարդ ճանչող, ընդարձակ հմտութիւն ունեցող անձ մ'էր: Ամէն բանի վրայ կը խօսէր և լաւ խորհրդատու էր, բայց միայնգամայն զգուշաւոր, իւր գործերը, մանաւանդ երիտասարդութեան ժամանակ ըրածները չէր պատմեր:

Պինոս կը կռահէր թէ Պ. Բիէտուչ ժամանակաւ գինուորական ծառայութիւն ըրած էր. և հիմա ալ քաղաքագիտական կամ դիւանագիտական բարձր ստիկանութեան անդամ էր. այս պատճառաւ աւելի կ'սիրուէր անկէ: Ոստիկանութիւնն իւր պաշտելի կուռքն էր: Առիթ չէր փախցընէր խօսակցութիւնն այս շահեկան նիւթին վրայ բերելու, բայց Բիէտուչ միշտ զգուշաւորութեամբ կը խօսէր:

Պինոս, երեք օրէ ի վեր փափաքելով տեսնել իւր այս սիրելի ընկերը, ընդունայն կ'սպասէր անոր կոչու Պո: սրճարանին մէջ: Պ. Բիէտուչ ոչ եւս կ'երթար հոն, և այս անակնկալ անտեսութիւնը մեծապէս կը տրտմեցնէր զինքը, որ անհամբեր ու անձկանօք կը փափաքէր խորհուրդ հալընել անոր հանրակառքի դէպքին վրայ:

Բիէտուչ անտեսանելի եղեր էր ճշդիւ այն եղբրական արկածին հետեւեալ օրէն ի վեր:

Պինոս դառնապէս կը ցաւէր այս ճակող զուգարիպութեան վրայ. իւր Բիէտուչը կը հալընէր Կոստ-Պօքի բոլոր արձագանգներուն. բայց տեսնող չէր եղեր. և հայր Բօապօս ալ չէր կարող լուր մը տալ իր հաստատութեան այդ հաւատարիմ յաճախորդին վրայ:

Գիտէին որ Բիէտուչ նոյն թաղին

մէջ կը բնակէր, ոմանք կ'ըսէին Անվէտի հրապարակը, ոմանք ալ Տիւնքէրք փողոցը. ճշդիւ չէին գիտեր, վասն զի իւր տունը չէր ընդուներ սրճարանի ծանօթները. և Պինոս ինքն ալ չէր գիտեր անոր հասցէն, թէ և քանի մ'անգամ խնդրած ալ էր: Բիէտուչ միշտ զգուշացեր էր տալէ, և այս գաղտնապահութիւնը մեծապէս նպաստէր էր համոզելու զինքը թէ գաղտնի ստիկանութեան անդամ էր:

Այս անբացաբերի բացակայութիւնն ալ աւելի հատատուէր էր Պինոսի կարծիքը: Համոզուէր էր թէ գաղտնի պաշտօն մը յանձնուած էր Բիէտուչի, հետեւաբար չպիտի կրնար ժամանակ մը տեսնել զայն: Եւ կը ցաւէր, վասն զի անոր հմտութեան և միշտ իսկ աջակցութեան վստահեր էր լուսաւորելու համար այն կնճառ դէպքը, զոր պարծեր էր լուծել:

Երբեք էր մըրնէօզի թէ պիտի գտնէր գնտասեղը գործածող կինն և անոր դաւակիցը: Այժմ կը հասկընար որ շատ առաջ գացեր էր, և ինքը միայնակ չպիտի կրնար բան մ'ընել: Կը զգար իւր անկարողութիւնը, և այս զգացումն ա'յնչափ կ'ամօքնէր զինքը, որ չէր համարձակեր իւր բարեկամ նկարչին տունն երթալ: Միւս կողմէ մըրնէօզ ալ աշխատութիւն չէր յանձն առներ երթալ Պինոսը գտնելու: Երբ Պինոս աշխատանոցը դար, մըրնէօզ բարեկամարար կ'ընդունէր, ի յիշատակ վաղեմի ընկերակցութեան մը, որ գեղարուեստից վարժարանին մէջ ծնած էր իրենց պարմանութեան հեռաւոր օրերը: Բայց նոյն դունէն կենաց մէջ մանկէնէն ետեւ այն աստիճան տարբեր ճանրանելու հետեւեր էին, որ այն ընկերակցութեան կապերը քիչ մը թուլցեր էին: մըրնէօզ բարձր դասընկերութեանց մէջ կը մտնէր, և պատ-

ուսուր դիրք մը գրաւած էր. իսկ Պինոս, իւր գոեհիկ կերպարանքով ու ձեւերով արատ կ'ըլլար հիւրանոցի: Յորնէօզ կը գարչէր վարնոց սրճարաններէ, իսկ Պինոս անոնցմէ դուրս չէր ելներ: Այս պատճառաւ էր որ իրար չէին տեսեր երեք օրէ ի վեր:

Պինոս մշտնջենապէս հաստատուեր էր կուան-Պոքի մէջ: Փանի մ'անգամ միայն դուրս ելեր էր Մօրկը երթալու համար, որպէս զի հասկընար թէ հանրակառքին աղջիկը տակաւին հո՞ն էր, կամ թէ ո՞վ ըլլալը ճանչող մ'եղե՞ր էր: Եւ միշտ ետ դարձեր էր՝ առանց նոր բան մ'իմանալու: Մարդ չէր ներկայացած մեռեալը պահանջելու, և ըստ կանոնի սահմանուած պայմանաժամը լրացեր էր երրորդ օրուան առտուն: «Այսօր պիտի թաղեն» ըսեր էր Մօրկին դիւանագալիքը: Խեղճ մարմինը հանրային փոսը պիտի նետուէր, և ոճրին գազոնիքն ալ գոհին հետ պիտի թաղուէր հիւանդանոցներուն գերեզմանատան մէջ:

Այս մօտալուտ վախճանին ստուգութիւնը զարհուրեցուց զՊինոս. և խիղճը խայթել սկսաւ: Սկսաւ մտածել թէ լաւ չէ՞ր ընել գնտասեղը պարզապէս օստիկանութեան տեսուչին տանիլ և հանրակառքին դէպքը պատմել առանց նկատելու իւր Յորնէօզ բարեկամին խառնուիլ շուղելը այս գործին: Բայց աւելի կը սիրէր ինքնին գործել, աշտկոյնութեամբ Բիէտուչի, որ՝ ըստ իւր գնահատման՝ աշխարհի բոլոր օստիկաններէն վարպետ էր:

Մինչ Պինոս այսպէս կը անտնար այն մարդուն սպասելով, Բօլ Յորնէօզ, որ կարեւոր տեղեկութիւններ կրնար տալ Պինոսի, հանգիստ նստած էր իւր տանը մէջ և չէր ուզեր տեսնել զայն: Յորնէօզ՝ երկար խորհելով՝ որոշեր էր հանդարտ կենալ և սպասել մինչեւ որ

Պ. Բօլէ տար իրեն այն գործակատարին հասցէն, որ Շվալիէ-Պրոյե-Պրոյե-Պրոյե ներկայացման իրիկունը վարպետութեամբ պրծեր էր իւր ձեռքէն,

Բօլ Յորնէօզ մոլեգնաբար կ'աշխատէր և աւելի Օրիորդ Մարկըրիթին վրայ կը մտածէր՝ քան իւր հետապընդած կասկածելի գոյգին:

Ուստի երրորդ օրը, ցերեկուան մօտ Պինոս նախաձայն ընելէ և քանի մը գաւաթ գարեջուր խմելէ ետեւ, իւր սիրելի Կոլա-Պիեռ նախասրահին մէջ տխրութեամբ կը ձեմէր: Մտահոգ դէմքով և ծխափողը բերանը կ'երթար ամէն մէկ երթեւեկին՝ աչքը կը դնէր դրանն ապակիին, յուսալով միշտ որ պուլվառին վրայէն Բիէտուչի գալը տեսնէր: Այն ժամուն էր որ սովորաբար կուգար գնտասխաղ կամ տօմինօ խաղալու: Բայց Բիէտուչ չէր երեւար:

Հայր Բօավոօ կը քնանար իւր հաշուեսեղանին վրայ, շիչ մ'ապսէնդի և պարապ գաւաթի մը մէջ տեղը: Գործէ քաշուած խուլ դեղավաճառն ալ՝ Բիկաչ՝ անկիւն մը քաշուած լրագիր կը կարդար: Պինոս, գայրանալով սպասելու ձանձրոյթէն, կը պատրաստուէր չար կատակ մ'ընել խուլին՝ ձեռքի լըրագիրը լուցկիով մը բռնկեցնելով, յանկարծ սրճարանին դուռը բացուեցաւ:

— Բարի լոյս, ընկերներ: Ողջոյն հայր Բօավոօ, ըսաւ հաստ ձայն մը, որ արթնցուց սրճարանին տէրը, և դեղավաճառին ալ գլուխը վեր առնել տուաւ, որ իւր լրագրին ընթերցման մէջ ընկղմած էր:

— Բիէտուչ, գոչեց Պինոս: Վերջապէս եկա՞ք: Շատ ուրախ եմ, որովհետեւ երեք օրէ ի վեր ձեզ կը հարցընեմ ամիսուն:

— Պատուական գինի մ'ինձի խմցընելու համար անշուշտ, ըսաւ Բիէտուչ, որ սերախ դուարթ կ'երեւնար:

— Նախ աղօղ... և յետոյ ուրիշ բանի համար: Բայց ի՞նչ եղաք. ո՞ր մրնացիք: Հիւսանդ էիք:

— Ե՛ս, հիւսանդ, երբէ՞ք. երեսոս նայեցէք անգամ մը, հիւսանդի գոյն և կաղմ ունի՞մ:

— Ո՛չ, արդարեւ, բայց որչափ և ամրակաղմ ըլլայ մարդ, երբեմն անհանգստութիւն կրնայ ունենալ: Ես յաճախ մազերու ցաւ կ'ունենամ, ես որ շատ քաջաողջ եմ: Եւ երբ տեսայ որ երեք օր երեւան չելաք, սիրտս անհանգիստ եղաւ: Եթէ ձեր բնակարանը գիտնայի, կուգայի կը տեսնէի ձեզ:

— Օ՛, չէր արժեր յոգնելնիդ: Ես միմիայն քնանալու համար կ'երթամ տուն, և այն ա՛լ: Երեքաբթի իրիկուն դուրս տեղ մը գացի և այս առտու վերադարձայ:

— Ուրեմն հասկցուեցաւ: Հեռօ՛ւ տեղ գացիք:

— Ոչ, Փարիզէն տասն-հինգ փարսախ հեռու... գործի համար... փոքրիկ ժառանգութեան մը համար որ գլխուս վրայ ինկաւ:

— Գէշ չէ, գլխուդ վրայ կ'ըմիտար մը կամ սալաքար մ'իյնապէ լաւ է... Խնդակցութիւնս կը յայտնեմ ուրեմն... այնպիսի արկած մ'է որ ինձի պատահելիք չունի:

— Բե՛հ, ո՞վ գիտէ: Բայց հիմակու հիմա ես հրամցընեմ այս առտու:

Եւ շիչ մը քոնեաք և երեք ալ գաւաթ բերել տալով՝ ափսէն սեղանին վրայ դրաւ ծերունի Բիկաչի մօտ, որպէս զի ան ալ մասնակցի:

— Անշուշտ եթէ ես ալ ժառանգութեան մը տիրանայի, փողոցէն անցնողներուն ամէնն ալ կը հրաւիրէի, բայց չեմ ուզեր Հայր Բիկաչի մօտը նստած խմել:

— Ի՞նչ պատճառով, ի՞նչ ըրաւ քեզի խեղճ մարդը:

— Օ՛, բան մը չըրաւ, բայց եօ դէպք մ'ունիմ քեզի պատմելիք, և խորհուրդ մը խնդրելիք ինձի համար միայն:

— Շատ լաւ, կրնանք մեք մեզի խօսակցիլ, Հայր Բիկաչ չի լսեր, վասն զի խուլ է:

— Իրաւունք ունիք, այդ չեկաւ միտքս. ուրեմն կրնամ հոս նստած խօսիլ ցած ձայնով:

— Մտերմական խնդրի մը վրայ է անշուշտ: Լաւ. նախ խմենք մէկ մէկ հատ, ըսաւ Բիէտուչ գաւաթները լեցընելով:

— Ձեր առողջութեանը, հայր Բիկաչ, ըսաւ ծերունիին ուսին զարնելով:

— Աղէկ եմ, փառք Աստուծոյ: Եւ դո՞ւք, պատասխանեց ծերունի շնորհով:

— Կը կարծէ թէ որպիսութիւնը կը հարցընեմ, ըսաւ Բիէտուչ ծիծաղելով: Թողունք զայն և մեր խօսքին նայինք. կ'ուզէ նէ խմէ. իսկ եթէ չի խմէ, մենք երկուքս կը խմենք:

Պինոս արմուկը սեղանին վրայ յեցած սկսաւ պատմել հանրակառքին դէպքը, սկիզբէն մինչեւ վերջը, առանց մանրամասնութիւն մը մոռնալու, սկսեալ հանրակառքին մէջի մարդուն իւր տեղը տիկինի մը տալով՝ կառքին բարձրաւանդն ելնել նստելու միջոգէպէն, մինչեւ աղջկան մեռած ըլլալը տեսնուելուն վերջակէտը: Գունագեղ ոճով մը նկարագրեց եղբերգին երեք դերակատարները, երկու համախոհներն ու անոնց զոհը. Նոր-կամուրջէն իջած միջոցին կառքին մէջ անցած համր տեսարանը, և կառապանին ու կայարանին պաշտօնեաներուն յապուշ կրթիլն, երբ ստուգուեցաւ ուղեւոր աղջկան մեռած ըլլալը:

Բան մը պակաս չէր սրտայոյզ նկարագրին, միայն թէ ինքզինքը դրաւ տեսարանին մէջ՝ առանց իւր բարեկա-

մին խօսքն ընելու: Բացարձակապէս
ինք ստանձնեց Բօլ Ֆրընէօզի դերը:
Անձնասիրութիւնն իր հաշիւը կը գըտ-
նէր այդ դերին մէջ. միանգամայն ա-
նօգուտ կը դատէր բերան տալ ընկեր
մը, որ չէր ուզեր երեւալ այս տեսակ
գործի մը մէջ:

Պ. Բիէտուշ ուշադրութեամբ մտիկ
ըրաւ: Սակայն երկու երեք անգամ
ժպտեցաւ. և վերջն ալ գոչեց:

—Աւասիկ արկած մը: Բայց դուք
ի՞նչ գործ ունէիք կէս գլխերէն քա-
ռորդ մ'առաջ գինիի վաճառանոցի
թաղին մէջ:

—Իրիկունն անցուցեր էի՝ այն թա-
ղին մէջ կամ շրջակաները բնակող կին
մը փնտռելու: կամ տիպար մը, թո-
թովեց Պինոս, որ չէր նախատեսած
այս հարցումը:

—Լաւ, պէտք էր ըսէիք զայդ. յի-
րաւի շատ շահեկան է այդ յանկար-
ծական մահուան պատմութիւնը, բայց
... ի՞նչ բանի վրայ կ'ուզէք խորհուրդ
հարցնել ինձի:

—Կ'ուզէի գիտնալ թէ դուք ի՞նչ
կը խորհիք այս տարօրինակ դէպքին
վրայ:

—Բայց, պատասխանեց Բիէտուշ ու-
սերը թոթվելով, բան մը չեմ խոր-
հիր: Ես բժիշկ չեմ:

—Ես ալ չեմ՝ և սակայն տարակոյս
չունիմ որ այն խեղճ աղջիկն սպան-
նուեցաւ հանրակառքին մէջ:

—Օ՛, որմէ՞ և ի՞նչպէս, եթէ կը հա-
ճիք:

Ասոր վրայ Պինոս մտաւ պատմու-
թեան երկրորդ մասին մէջ զոր կը
պատրաստէր երեք օրէ ի վեր: Պատ-
մեց թունաւոր գնտասեղին և նամակի
կտորին գտնուիլը, կատուի մը վրայ
եղած փորձը, յետոյ քանի մը անգամ
Մօրկն երթալը, իւր կտակածները եւ
և երկար խորհրդածելէ ետև ըրած ու-

րողումները: Աւարտեց աղաչելով Բիէ-
տուշի որ օգնէր իրեն իւր լոյսերովը,
և գործակցէր գտնելու այն անիծեալ
զոյգն որ այս սրիկայական ոճիրը գոր-
ծեր էր:

Բիէտուշի դէմքը լըջացեր էր: Գլու-
խը կ'երեքրընէր խոկուն դէմքով մը
Պինոսի ամէն մէկ դիտողութիւններուն,
և պատասխան տալէ առաջ երեք գա-
ւաթ պարպեց ետևէ ետև:

—Իրաւ որ, ըսաւ վերջապէս, ես ալ
կը սկսիմ հաւատալ թէ այդ մահը բը-
նական չէ: Ձեր այդ պատմածները
հասկցուցի՞ք ոստիկանութեան տեսչին:

—Ո՛չ, չուզեցի անոր դիմել առ
այժմ: Երբ այդ դաւաճան կ'ընձ և ա-
նոր մեղսակցին բնակավայրը գտնեմ,
այն ժամանակ կ'իմացնեմ ոստիկանու-
թեան տեսչին:

—Շատ իրաւունք ունիք: Ոստիկա-
նութեան տեսուչները ժամը իննին կէս
օր կը փնտռեն... ձեր վրայ պիտի
կասկածէին: Բայց ըսէք ինձի... պա-
հեցի՞ք այն գնտասեղն և պատուած
նամակը:

—Անշուշտ, սրտիս վրայ պահած եմ,
տեսէք:

Չայս ըսելով Պինոս իւր թիկնոցա-
կին դրպանէն երկայն տուփ մը հա-
նեց, որուն մէջ կը դնէր սովորաբար
իւր սիրելի ծխափողը: Բայցաւ և ցու-
ցուց երկու սպացուցական նիւթերը,
զորս Ֆրընէօզ իրեն յանձնած էր:
Գնտասեղը ծխափողին տեղը գրաւած
էր տուփին մէջ, և թուղթն ալ ծխո-
ցին տեղը:

—Աւասիկ հանձարիմաց պահարան
մը. ըսաւ Բիէտուշ ծիծաղելով:

—Կը հասկնաք որ կը վախնամ կոր-
անցնել այս կարեւոր սպացոյցները, և
մանաւանդ կը վախնամ ալ զիս
խայթելէ, գոչեց շաղկերաւը, բայց
չեմ արգիլեր զձեզ զննելէ, և կ'աղա-

չեմ իսկ, միայն թէ զգուշութեամբ
զննեցէք գնտասեղը:

—Ձեմ զններ ընաւ, աւելի ապահով
կ'ըլլամ, բաւական կը համարիմ միայն
այդ թուղթի կտորին վրայ գրուածին
իմաստը լուծել, եթէ թող կուտաք:

—Ինչպէ՞ս, թող կուտամ: Ընդհա-
կառակն կը փափաքիմ գիտնալ թէ
դուք ի՞նչ կը խորհիք ատոր վրայ: Ես
կը գտնեմ որ ոճրին սպացոյցն ամէն
մէկ տողին ծայրն է:

Եւ մինչ Բիէտուշ կը բանար ճմութ-
կած թուղթը, Պինոս գլուխը վեր
առնելով տեսաւ որ հայր Բիկալ կը
ժպտէր չարածձի դէմքով մը:

Ծերուկն իւր լրագրին ընթերցում-
վը մտադրաւ չէր այս խօսակցութեան
միջոցին. թէեւ խուրձինը թող չէր
տար լսել, բայց կը հասկնար. և գըն-
տասեղին տեսքը մեծապէս կ'ուրախա-
ցնէր զինքը:

—Ա՛, բարեծաղիկ. ըսաւ մատովը
զայն ցուցնելով, այդպիսի մատուցներ
կը կազմէք ձեր բարեկամուհիին զար-
դիկներովը: Այսպէս է երիտասարդու-
թիւնը: Գեղեցիկ է հէ՛ գայդ իւր փե-
ղոյրին վրայ կրող սիրուհիինիդ:

—Ձեռք մի՛ դպցնէք, կը խածնէ
հա՛, գոչեց անոր Պինոս, և աւելի ա-
պահովութեան համար գոցեց ամիլը:

—Լաւ, լաւ, այդչափ նախանձոտ
մի՛ըլլաք, տղա՛ս, ըսաւ խուլ ձերուկը:
Իմ տարիքիս գործերը չեն այդ վսեն-
ղութիւնները:

—Նամակը մեծ բան մը չտպացու-
ցնէր, մրմոաց Բիէտուշ, չի կայ խօսք
մը որ ամբողջ իմաստ մը ներկայացնէ:

—Ո՛չ, բայց բոլորովին անիմաստ
չէ: Ահի՛ն ծի վեր էի՞ք ե... նէ յայտնի
է որ հանրակառքին մէջ սպաննուած
աղջկան համար է: Կը վերադառնամ ի՞մ
տանըն ծրագրեմ... այսինքն զայն գըն-
տասեղով մեռցնելու ծրագրին...

շա՛ր էիլ Գորս կ'ընէ, Բայց երբե՞ն էրիկանը
կ'երթայ... միշտ նէ, այսինքն աղջկուկը:
Ատնք գորող սրիկան չէր գիտեր որո՞ւ
տուն երթալը, բայց գիտէր որ կողմ
երթալը... գինիի վաճառանոցին թա-
ղը, հետեւաբար անոր վերադարձին
սպասեց:

—Սիրելի՛ բարեկամ, դուք շատ կո-
րովամիտ էք... ինձմէ աւելի կորո-
վամիտ. վասն զի ես երբէք չպիտի
կրնայի գտնել ձեր այդ ըսածները:
Բայց գնտասեղին համար, եթէ կը
փափաքիք գիտնալ ինչ տեսակ թոյնով
օծուած ըլլալը, ես տարբարոյժ մը կը
ճանչնամ, որ շատ վարպետ է այս
տեսակ բաներու մէջ. փորձեր, լու-
ծումներ կ'ընէ... և կը գտնէ ինչ սա-
տանայական գործ ըլլալը:

—Շատ աղէ՛կ, գոչեց Պինոս:
—Միայն թէ պէտք է ինձի յանձ-
նէք զայդ, աւելցուց Բիէտուշ:

—Ձեզի յանձնել գնտասեղը, ըսաւ
Պինոս, ամենայն սիրով: Ես աներկբայ
եմ որ դուք չար նպատակի մը չէք
գործածեր, ուստի թէ՛ իմ քովս է մը-
նացեր, թէ՛ ձեր քով, միևնոյն բանն է:

—Կ'առաջարկէի ձեզ, որ դուք ալ
ներկայ գտնուիք փորձերուն, բայց
տարբարոյժս կրնայ նեղանալ... վասն
զի... կը հասկընաք, դատարաններու
երդուեալ քննիչ է, և մեր ընել տա-
լիքն ալ օրինական քննութիւն մը չէ...:
Եթէ հանրակառքին դէպքը պատմեմ
իրեն, թերեւս կը վախնայ թէ իւր գի-
տութիւնը անձանթ մասնաւորի մը ծու-
ռայութեան նուիրած համարուի...
բայց իմ բարեկամս ըլլալով, բացա-
տրութիւն մը չի պահանջեր ինձմէ կամ
կը շատանայ իմ հնարելիք բացատրու-
թեամբս:

—Շատ ճիշդ է... ուստի տարէք
գնտասեղը, սիրելի՛ս, պահարանով
հանդերձ... պայմանով մը սակայն...:
—Ի՞նչ պայման:

—Պայմանով որ հետո աշխատելու խօսք տաք ինձի: Ես երդում ըրած եմ յանցաւորները գտնելու, և առանց ձեր օգնութեան չեմ կրնար յաջողիլ:

—Ո՞ր կէտեւր էք այդ բարձր գաղափարը իմ ճարտար հետախոյզ մ'ըլլալուս վրայ, հարցուց Բիէտուշ ծիծաղելով:

—Իրաւ որ մեր ունեցած մտերմութիւնը կը ներէ ինձի ըսել, գոչեց Պինոս: Ես այս կարծիքը կամ մանաւանդ համոզումն ունիմ որ դուք ժամանակաւ հետախոյզ ոստիկանի պաշտօն կատարած էք:

—Շատ վաղաքիչ է ինձի համար... մանաւանդ եթէ դուք ալ չէք այն մարդոց կարգէն որք նախապաշարունակներ ունին ոստիկանութեան և անոր ամէն յարակիցներուն դէմ:

—Եւ, եթէ նկարիչ չըլլայի, կ'ուզէի ծածուկ ոստիկան ըլլալ, այսինքն, ոչ թէ վարձեալ լրտես... այլ հետախոյզ... իմ կամ բարեկամներուս հաշուին... ինչպէս կապօրիօի վէպերուն Պ. Լըքօքը:

—Պ. Լըքօք, եթէ չեմ սխալիր, հետախոյզ ոստիկան եղած էր:

—Ես ոչ: Ես ասպարէզէս վրիպած մարդ մ'եմ: Բայց դուք եթէ եղած ալ ըլլաք, չեմ մեղադրեր ձեզ:

—Ինչ և իցէ, ըսաւ Բիէտուշ խորհրդաւոր ժպտով մը, հաւատացէք որ հիմա չեմ:

—Աւելի պատճառ մ'է այդ իմ գործիս զբաղելու: Եթէ դուք ոստիկանութեան յարեալ ըլլայիք, զժուար կ'ըլլար ձեզի պաշտիլ ինձի հետ, իսկ ազատ ըլլալով, ինչպէս որ էք, կրնաք իմ ընելիք հետախոյզութիւններուս առաջնորդել:

—Արդարեւ արգելք մը չի կայ, բայց... եթէ արդիւնքի մը յանդի, ի՞նչ շահ պիտի գայ մեզի ատկից:

—Անզգամներէ սպաննուած խեղճ աղջկան մը մահուան վրէժն առնելու հաճոյքը:

—Բան մ'է վերջապէս: Միայն խընդիրն է գիտնալ թէ պիտի կրնա՞նք յաջողիլ: Ըսէք ինձի, կարծեմ թէ մեռեալը չճանչուեցաւ Մօրիին մէջ:

—Դժբարեաբար ոչ, և այս իրիկուն պիտի թաղուի:

—Չա՛ր սատանայ, ուրեմն վայրկեան մ'իսկ չունինք կորսնցընելիք: Եթէ մեռնողին ո՞վ ըլլալը չի յայտնուի, մեռցընողները չեն կրնար գտնուիլ: Եւ կը խոստովանիմ թէ չեմ գիտեր ի՞նչպէս պիտի կրնանք գիտնալ անունը:

—Միակ միջոց մը կայ, այն է բնակարանը գտնել:

—Եթէ կը կարծէք թէ դիւրին է...

—Ո՛չ, բայց անհնարին ալ չէ: Արդէն նշանակ մ'ունինք, կարդացէք պատճառ նամալը: Երբորդ տուին մէջ րէ... փողոց գրուած էր և ոչ րէ...

—Արդարեւ այդ յօգնակին չուկէտ մ'է:

—Կատարելապէս... և արդէն ես պաշտած կ'ըլլայի այն ամէն փողոցները, որոց անունը յոգնակի է, եթէ ձեզ տեսնելու յուսով հոս չսպասէի: Այսօր երէք օր է որ կ'աւան-Պօքէն դուրս ելած չեմ գրեթէ, Բօավոօին կրնայիք հարցընել եթէ գիտնով չըլլար...:

—Ի՞նչ ընեմ. ժառանգութեանս խնդրովն զբաղած էի: Արդարեւ շատ ցաւալի է այդ յապաղումը, և պէտք է ջանալ որ դուրմանուի: Պօթէնի տարեցոյցէն կրնանք քաղել րէով սկսող փողոցներուն անուններն և գործը մէջերնիս կը բաժնենք: Փարիզի կէսը դուք աչքէ կ'անցընէք, կէսն ալ ես: Ասկէ դատ մեր խուզարկութիւններն համարօտելու միջոց մ'ալ ունինք: Այդ սարաբողդ աղջիկը գինիի վաճառանոցին վերջին հանրակատքը նստած էր, ըսիք ինձի:

—Այո՛, այն հանրակատքն որ կէս գիշերն անցնելէ ետեւ կը հասնի իւր տեղը:

—Ըսել է թէ ննջելու համար իւր բընակարանը պիտի մտնէր, հետեւապէս Բիկալ հրապարակին մօտերը կը բնակէր: Ուրեմն պէտք է այն թաղէն սկըսիլ: Կը ձանչե՞ս հոն րէով սկսող փողոց...:

— Բանի մը հատ գիտեմ. Տէ Մարթիլ փողոց... տէ զԱպէս փողոց...:

— Ուրեմն ամէնէն առաջ այդ երկու փողոցներն աչքէ անցունենք:

— Տէ Մարթիլ փողոցը սարսափելի կերպով երկայն է. Նօթր-Տամ տը Լօրէթ եկեղեցիէն կ'սկսի և մինչև Մօնմարթր բլուրին վրայ կը հասնի:

— Օ՛, գոչեց Բիէտուշ ծիծաղելով. դուք հիմակուց կը վախնաք աշխատութեան:

— Ո՛չ, ժամանակ կորսնցնելէ կը վախնամ:

— Ուրեմն տէ զԱպէս փողոցէն սկըսինք:

— Շատ մօտ է այս տեղին, ըսաւ Պինոս, և շատ երկայն ալ չէ, ուստի կրնանք անկէ սկսիլ: Կրնանք կ'ըսեմ. վասն զի հետո դալու տրամադիր կ'երեւիք: Իմ ալ ուզած բանս է: Առանց ձեզի՛ ես լաւ բան մը չեմ կրնար ընել. դեռ չեմ գիտեր թէ ինչպէս պէտք է խօսիլ դռնապաններուն հետ: Ես անոնց հրամայել միայն գիտեմ: Դուք պիտի սովորեցնէք ինձի արհեստը, և երբ անոր սկզբնատարերքը սովորիմ, կը տեսնէք որ կրնամ յաջողիլ:

— Համոզուած եմ, ըսաւ Բիէտուշ ծանրութեամբ, պիտի տեսնէք որ շատ դժուարին չէ: Համարձակութիւն և քիչ մ'ալ սքամութիւն պէտք է: Բայց եթէ կ'ուզէք որ ձեր առաջին փորձն օգտակար ըլլայ ձեզի, պէտք է որ դուք ինքնին առնէք տեղեկութիւններ:

ըր: Ես ի հարկին կ'օգնեմ ձեզի:

— Շատ աղէկ, ուրեմն գործի սկսինք: — Կը սիրեմ այդ պղնիւ եռանդը, և ձեռքէս եկած օգնութիւնը կ'ընեմ ձեզի: Կը ներէ՞ք որ տանիմ թունաւոր դնտասեղը:

— Գնտասեղն ալ, նամակն ալ, եթէ կ'ուզէք: Սիրտս աւելի հանգիստ կ'ըլլայ երբ ձեր ձեռքը գտնուին. վասն զի իմ բնակարանիս մէջ բանիլքով կըղպուելիք կահ մը չի կայ. և գրպաններուս ամենն ալ քիչ շատ ծակ են:

— Ա՛, ցաւալի բան կ'ըլլայ կորսնցնել այսպիսի թանկագին ապացոյցներ, և որովհետեւ այդպէս է, ես կը պահեմ ամէնն ալ, իրրեւ առանդ, ուզած ժամանակնիդ վերադարձունելու պայմանաւ, ըսաւ Բիէտուշ, պատճառ թուղթն ալ գնտասեղին պահարանին մէջ խոթելով: Յետոյ գնաց սրճարանապետն արթնցուց, խուսած քոնեաքներու գինը վճարեց և դուրս ելաւ սրճարանէն: Պինոս ալ ետեւէն գնաց պուլվառին վրայ, և քովքովի քալելով հասան Սէն-Բիէտո հրապարակը, որ Մոնմարթրի բլուրին ստորոտը կը տարածուի: Անկէց կրնայ անցնիլ մարդ տէ զԱպէս փողոցը հասնելու համար, և Բիէտուշ անուշա իւր պատճառներն ունէր այն ձանբան ընտրելու:

Բիէտուշ մաքուր հագուած ըլլալով՝ չէր ուզեր թերեւս բազմամարդ փողոցներէ անցնիլ, երբ ընկեր ունէր իրեն գործաւորի աղտոտ թիկնոցակով և այլանդակեղր կակուղ գլխարկով մարդ մը:

— Սիրելիս, ըսաւ Օրսէլ փողոցը մըտած ժամանակնին, ինձի կը թուի թէ այդ խեղճ աղջիկը, ձեր նկարագրած կերպարանքէն դատելով, իրեն՝ յատուկ կահերով բնակարան մը չունէր: — Իրաւ է որ արդուզարդը փայլուն չէր, մըմնջեց Պինոս, գործաւորուհիի

կերպարանք ունէր. հետեւաբար ձեռնայարկի կահաւոր խցիկ մը վարձած պէտք էր ըլլար:

—Ուրեմն մեր քննութիւնը պանդոկներէն սկսինք:

—Պատուակա՞ն գաղափար, պատուական: Ա՛հ, դուք հոտառութիւն ունիք, դո՛ւք: Այդ բանն իմ միտքս չպիտի գար երբէք: Եւ որովհետեւ այդչափ աղէկ կը խորհրդածէք, ըսէք ինձի քիչ մը թէ ինչո՞ւ սպաննուեցաւ այդ աղջկուհիը... անշուշտ կողոպտելու համար չէր... վրայէն տասնէնչորս սու միայն գտնուեցաւ:

—Ինչպէ՛ս, չկրցի՞ք գուշակել կնոջական վրիժառութիւն մ'է պարզապէս: Կնոջ մը էրիկը կամ տարփաւորը յափշտակեր էր, այն կինն ալ այդ կերպով հաներ է վրէժը:

—Կարելի է, և սակայն ուրիշներուն այրերը գողնալու երեւոյթ չունէր:

—Ներեցէք, դուք ինքնին ըսիք ինձի թէ նշանաւորապէս գեղեցիկ էր:

—Այո՛, բայց համեստ և զգուշաւոր դէմք մ'ունէր՝ մօրմէ բնաւ չզատուած աղջկան մը պէս:

—Բէ՛հ, պէտք չէ հաւատալ արտաքին երեւոյթներու: Խեօք աղջիկները կէս դիշերուն մինակուկ չեն պտտիր հանրակասքերուն մէջ: Երբ իմանանք ո՛վ ըլլալը, կրնանք փնտռել սպաննուելուն ալ սպտճառը:

—Իրաւունք ունիք, դասապե՛տ, ըսաւ Պինոս, որ միշտ համամիտ կը գտնուէր Բիէտուշի:

Արագ կը քալէին, և արդէն անցած էին Մոնմարթրի թատրոնը, որմէ քիչ մ'անդին կը սկսի տէ գՍպէս փողոցը: Թաղին լաւ բնակուած փողոցն է, և գործաւորաց համար վարձելի կահաւոր տուններ խիստ քիչ կան հոն: Տուները պատուաւոր երեւոյթ ունին: Տասնութերորդ թաղապետու-

թեան և թղթատարութեան պաշտօնարաններն ալ հոն են: Շատ բազմամարդ ալ չէ, և մարդ հոն կրնայ հանգիստ խօսակցիլ առանց անցուդարձը նեղելու:

Բիէտուշ կանգ առաւ խճուղիին մէջ և միջադուռ մը ցուցնելով:

—Սիրելի՛ս, ըսաւ, աւասիկ խեղճուկ երեւոյթով տուն մը, ուր կրնաք և կ'արժէ մտնել:

—Ձեզի հետ, աւելցուց Պինոս:

—Ո՛չ, առանց ինձի:

—Ինչպէ՛ս. կ'ուզէք որ ես մինա՛կ մտնեմ այդ տունը և առանց ձեզի՞հարցաքննեմ վարձակալը: Ստատան տանի զիս եթէ գիտեմ ինչ հարցաքննելիքս: Տեղեկութիւն խնդրել մէկու մը վրայ, որուն անունը չեմ գիտեր, շիտակը խօսելով՝ դիւրին բան չէ:

—Մ՛, դուք այդչափ չնչին բանի համար կ'անձրկիք: Քանի մը ձեւեր կան գործելու:

—Ի՞նչ են:

—Ամէնէն պարզն է, գրպանէս աղւոր հինգ ֆրանքնոց մը հանել այնպիսի ձեւով մը, որ տան տէրը նմարէ...: Եթէ պարզ դռնապան մ'է, երկու ֆրանքնոց մ'ալ կը բաւէ... և քաղաքավարութեամբ կը խնդրեմ՝ որ իմացընէ ինձի թէ սա ու նա ձեւով ու կերպարանքով աղջիկ մը կը բնակի՞ հոն: Գրաւ կը դնեմ որ չի դժկամակիր պատասխանելու, և եթէ բացասական պատասխան տայ, հաւատացէք որ ճշմարիտ է: Այդ մարդիկը գիտեն ի՛նչ ըսել է խօսիլ, և կը տեսնեն որ դուք ստակը չէք տար իրենց եթէ ձեր ուզած տեղեկութիւնը չի տան կամ ձեր գործը չի դիւրացընեն:

—Ես կը կարծեմ որ դուք ինձմէ աւելի լաւ կրնաք խաղալ այդ կատակերգութիւնը:

—Ո՛չ, վասն զի ես չեմ տեսած այն

աղջիկը որուն անունը գիտնալ կ'ուզէք և հարկաւ չեմ կրնար ճշդիւ նկարագրել զայն. խի դուք որ ուշադրութեամբ զննած էք, կրնաք այնչափ ճշդիւ նկարագրել, որ խոկոյն կը ճանչնաք:

—Շիտակը խոստովանիմ ձեզի. զիս վարանեցնող կէտը սա է որ վրաս ոչ հինգ ֆրանքնոց ունիմ, ոչ ալ երկու ֆրանքնոց, դրամապանակս տունը մոռցեր եմ:

—Այդ բան մը չէ: Աւասիկ իմ դրամապանակս, ըսաւ Բիէտուշ, զրպանէն գեղեցիկ կաշիէ քսակ մը հանելով: Ասոր մէջ գտնուած ստակը կրնայ մ'օճմարթրի բոլոր վարձակալներուն լեզուին կապը քակել: Առէք և տեսէք ձեր գործը:

Պինոս ձեւի համար վարանեցաւ քիչ մը, բայց վերջապէս ընդունեց ըսելով.

—Կ'ընդունիմ իբրեւ պարզ փոխառութիւն, մէկ երկու օրէն վճարելու պայմանով... բայց կը մտածեմ թէ խընդրելիք տեղեկութիւնս ստանալէ ետեւ ալ մեծ բան մը շահած չի պիտի ըլլամ...: Ենթադրենք որ ըսուի ինձի թէ աղջիկն հոն կը բնակէր, բայց երեք օրէ ի վեր անյայտ եղած է... Ի՞նչ պէտք է ընեմ:

—Վարպետութեամբ մը կը տեղեկանաք անոր սովորոյթներուն, տեսակցած անձերուն, զացած տեղերուն... կը հարցընէք թէ կահ կարասի... թուղթեր և այլն թողա՞ծ է իւր սենեկին մէջ... Ի՞նչ անունով մտաւ այն տունը, և երբ այս ամէնը իմանաք, ա՛լ ուրիշ բան չի մնար ձեզի ընելիք, բայց միայն վազել Մօրկը երթալ, ձեր իմացածներն յայտնել ատենագրարին, որ ոստիկանութեան կ'իմացընէ:

«Տանը տէրը կամ վարձու սուղը կը կանչուի... կը կանչէ իր վարձակալը, որովհետեւ թաղուած չէ տակաւին... և այն վայրկեանէն գործողու-

թեան հիմ մը ունենալով, կրնաք ըսել հետախուզութիւն մը ընել:

—Ձեզի հետ անշուշտ:

—Ինձի հետ, եթէ անպատճառ այնպէս կ'ուզէք: Բայց ես յայտնի կերպով չեմ մտնէր գործին մէջ, այլ միայն խորհուրդ կուտամ ձեզի, եթէ կը կարծէք թէ պէտք կ'ունենաք:

—Բիէտու՛շ, ձերունի՛ բարեկամ, կեանք և մահ, բաժանում չկայ մեր մէջ, գոչեց Պինոս խանդավառ: Ահա կը մտնեմ սա դռնէն ներս, որ պարտաւ մը դուռ չէ, և ձեր խորհրդին համեմատ պիտի ձեռնարկեմ առանձնական դիւանագիտութեան: Յետոյ պիտի գամ տեղեկագիրս ներկայացնեմ ձեզի, վասն զի աներկբայ եմ որ պիտի սպասէք ինձի:

—Ամենայն սիրով, նա վերը թաղապետութեան առջեւի հրապարակին մէջ, եւ մի՛ աճապարէք, ես ժամանակ ունիմ: Եթէ փորձերնիս յաջող ելնէ, հարցաքննութիւննիդ առաջ տարէք... մանրամասն տեղեկութիւն ստացէք... մի՛ մոռնաք մանաւանդ հարցընել թէ անհետացած վարձակալուհին թուղթեր ունէ՞ր...: Ձեր տպագայ գործողութեանց համար հարկ է որ անոր անձնականութիւնն ստուգուած ըլլայ վաւերական թուղթերով:

—Հասկցայ, սիրելի՛ բարեկամ, ըսաւ Պինոս դիմելով դէպի նշանակեալ գճուճ օթեւանը: Բիէտուշ ալ յամրաքայլ ելնել սկսաւ տէ գՍպէս փողոցն ի վեր:

Օթեւանին դուռը բաց ըլլալով, Պինոս ներս մտաւ համարձակ քայլերով:

—Ի՛նչ մարդ, մրմաջ ինքնիրեն, եթէ ստուգիւ հոս կը բնակէր աղջիկը, Բիէտուշ արդի ժամանակներուն ամենամեծ ոստիկանն է, վասն զի զիս ուղղակի բուն պէտք եղած տեղը տարած պիտի ըլլայ:

Տանը բակը նորանցք մ'էր: Երկու մարդ հագլու կրնային քով քովի անցնել. լոյս ալ չէր: Պինոս զգուշութեամբ կը յառաջանար երկու քովի պատերը շոշափելով: Վերջապէս ձախ կոզմը անկիւն մը զգաց պատին մէջ և ձայն մը գոչեց իրեն:

—Ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք:
—Դունապանը տեսնել կ'ուզեմ, պատասխանեց Պինոս:

—Հոս դունապան չի կայ, ըսաւ ձայնը, որ կնկան մ'էր:

—Տանտէրն ուրեմն:

—Ես եմ տանտէրը: Ըսէք ի՞նչ կ'ուզէք. սենեակ պիտի վարձէք:

—Ո՛չ, ձեր վարձակալուհիներէն մէկուն համար կուգամ:

—Ձեմ գիտեր: Ես այրեր միայն կը բնակեցնեմ հոս:

—Եւ սակայն ըսեր էին ինձի թէ...

—Ի՞նչ... շուտով ըսէք, և նախ առաջ եկէք որպէս զի տեսնեմ երեսնիդ:

Պինոսի ուզածն ալ այս էր, բայց բան մը չէր տեսնէր, և չէր գիտէր որ կողմ դառնար, որպէս զի կարենար երես երեսի խօսակցիլ այդ դաժան կնոջ հետ, որ այսպէս խտուր կը հարցապնդէր զինքը: Սակայն բաւական խարխափելէ ետև ձեռքին տակ ապակեւոր դուռ մը զգաց, բաց ապակեփեղկով մը: Դուռը կէս բաց էր. քչեց և կէս լոյս օթեակի մը մէջ մտաւ: Լոյսը փոքրիկ կլոր պատուհանէ մը ներս կը մտնէր ներքնագաւթի մը: Բաւական դժուարութեամբ տեսաւ փոքրիկ խոռած պառաւ կին մը, որ հանքածուխի կէս մարած կրակի մը առջև նստած կը տաքնար:

—Լա՛ւ, խօսեցէք հիմա, գոչեց, կը հասկնամ ի՞նչ տեսակ մարդու մը հետ է գործս,

Պինոս ետ չէր մնար անոր բերնին

չափը տալէ, բայց բռնեց ինքզինք: Կը մտածէր թէ ուրիշ սկսէր: Անհնար կը թուէր իրեն Բիէտուչի ապարամ ձեւը գործածել: Հինգ ֆրանքնոց մը ցուցնելն արդիւնք մը չպիտի կըրնար ունենալ, սա գերազանց պատճառաւ որ պառաւը չպիտի կրնար անոր փայլելը տեսնել իւր մատներուն մէջ: Բայց Պինոս չէր կրնար երկար մնալ վարանման մէջ: Եթէ դիւանագիտութեան մէջ ճարտար չէր, երկչոտութեան պակասութիւնն ալ չունէր, և բնական հակում մը ունէր, ինչպէս կ'ըսեն, կոչիկով թոնիրը մտնելու:

—Կ'ըսէք թէ գիտէք ի՞նչ տեսակ մարդու հետ է ձեր գործը, ըսաւ Պինոս յանդուգն ձեւով մը. Գրաւ դենք թէ չէք գիտեր:

—Եթէ գրաւ դենք, դուն կը կորսնցնես, տղա՛ս ըսաւ կինը երկու խաժ աչեր տնկելով վրան, որք կատուի մը բիբերուն պէս կը փայլէին մութին մէջ: Ձեզ գրապանիս պէս կը ձանչեմ:

—Օ՛, ըսէք նայիմ ի՞նչ է անունս:

—Անունդ չեմ գիտեր, բայց դիտեմ որ արհեստդ լաւ կտաւներ շարժել է անշահ գոյներով: Այսինքն նկարիչ ես, բայց ոչ վարպետ նկարիչ: Ես քեզ յիտուն անգամ տեսած եմ Քլիշիի պուրվառին վրայ, ներկերուդ տուփը ձեռքդ:

—Ուրեմն կը խոստովանիմ մայրիկ, և ձեր պատկերն ալ կը հանեմ երբ որ ուզէք:

—Ես պէտք չունիմ պատկերիս: Յիտուն տարիէ ի վեր հայելիներուն մէջ կը տեսնեմ, և կը բաւէ: Ասկէ պատ կ'արդիլեմ քեզի մայրիկ կոչել զիս, որովհետև ես ոչ գաւակ ունիմ. ոչ էրիկ, փառք Աստուծո՛յ:

—Լա՛ւ, օրիորդ կը կոչեմ:

—Գործարանի կատակ չեմ ուզեր, լակո՛ւտ, ես չեմ սիրեր այնպիսի կատակներ: Ըսէ նայիմ ի՞նչ կ'ուզես:

—Գիտնալ թէ դուք, ձեր այս տան մէջ, չունէի՞ք դեռատի աղջիկ մը, որ կը շահագորգուէ զիս:

—Ա՛, հասկցուեցաւ: Ես գուշակեցի որ անոր կողմէն կուգաս:

—Որո՞ւ կողմէն, հարցուց Պինոս շփոթած:

—Իտալացի աղջկան, անշուշտ Պիանֆայի կողմէն:

—Ա՛, քանի որ գուշակեցիք... հարկ չեմ համարիր հակառակը պնդել, մըմնջեց Պինոս, թողլով որ պառաւը խօսէր:

—Ըսել է թէ դուն գլխէ հանեցիր զայն, գարշելի՛ գորտ: Միտքէս կ'անցնէր որ այդ ապուշ հաւը նկարչի աշակերտներու ձեռք ինկեր էր. ճաշակն անիծեմ որմէ դուն օգուտ քաղեցիր, բայց վատ բան է ըրածդ: Այն աղջիկը մոլութիւն չունէր, և ձեռքս կըրակը դնելով կ'երդնում որ խելօք էր: Երբ քեզ իւր ձանրուն վրայ գտնելու չարարողութիւնն ունեցաւ. ո՛ւր ձեռքդ անցուցիր զայն, ըսէ՛, ճիւտ'ալ: Աէն-Բիէնի վաճառանոցի՞ն մէջ, ուր առտունները կ'երթար կանանչեղէն կը դնէր իւր նախաձաշին համար, կամ Բիկալ հրապարակի՞ն վրայ, երբ իւր երգի դասէն կը վերադառնար:

—Ձեր գլխուն վրայ կ'երդնում թէ՛ ես այնպիսի բան մը չեմ ըրած:

—Լուէ՛, օ՛ձ: Երեք օրէ ի վեր եկած չէ հոս. ան որ երեք դուրսը չէր պակկեր... կը համարձակի՞ս ըսել ինձի թէ դուն զայն քու որջը չի տարի՛ր:

Պինոս զարմացկոտ աշերով պառաւին կը նայէր, բայց մտքովը ցնծումի մէջ էր այս անհիմն կշտամբանքը լսելով. վասն զի ասոնցմէ կ'իմանար որ բուն տեղը դիմեր էր: Երեք օրէ ի վեր անհետացած Իտալուհին հանրակառքին մէջ մեռնող աղջիկէն զատ ուրիշը չէր

կրնար ըլլալ. անունն ալ Պիանֆա է եղեր. ասկէց աւելին իմանալն ալ իւր գործը պիտի ըլլար:

—Լա՛ւ, դուն պարապ տեղը մի՛ աշխատիր ինձի սատանութիւն ծախելու, ես կ'ընող չեմ: Աղջիկն ուր կ'ուզէ երթայ: Բայց դուն եկեր ես անոր պաշտակն ու լաթերն ուղղելու այնպէս չէ՞: Ըսէ անոր իմ կողմէս որ ինք պէտք է զայ առնէ:

«Այդ աշխատութիւնը ծանր թող չի գայ իրեն, քեզի հետ նստելով իշխանուհի չեղաւ:

—Ներեցէ՛ք, կակազեց Պինոս, արդէն ըսի ձեզի թէ...

—Օ՛, ես գիտեմ որ չուզեր զիս տեսնել, վասն զի ես չեմ ծամծամեր խօսքերս երբ ճշմարտութիւն են. զինքը պիտի կշտամբեմ իբրև գիշերայած ցոփամիտ, և չպիտի կրնայ բերանը բանալ, վասն զի ամօթ բան է ըրածը: Ես եթէ գիտնայի որ այս վախճանը պիտի ունենար, չէի ընդուներ տանս մէջ:

—Բայց, բարի՛ տիկինս...

—Ասանկ բանի մը համբերող բարի տիկին չկայ: Երբ կը մտածեմ արիւնս կը դառնայ: Ա՛հ, անմեղ գառնուկը: Գրաւ կը դնեմ թէ չի պատմեց քեզի ինչպէս իմ առնա մտնելը: Իրիկուն մ'էր, այնպիսի անձրեւ մը կը տեղար որ շուն մ'անգամ չէր կրնար դուրսը պառկիլ: Դռնէս ներս մտաւ, լակոտի մը հետ, որ իւր արկղիկն շալկած էր... ձերմակ փայտէ տուփ մը, որուն մէջ հագլու կրնար սղմիլ երկու շրջողգետ և վեց շապիկ, «Տիկի՛ն, կ'ըսէ ինձի զարմանալի ձայնով մը, կրնա՞ք աման գնով սենեակ մը վարձու տալ ինձի: Ծատ ստակ չունիմ, բայց ամէն օր կը վճարեմ»: Երբ ինքը զայս կ'ըսէր, ես դէմքը կը դիտէի, և առաջին նայուածքով հասկցայ որ փողոցի թափառիկ

մը չէր: Հարցուցի իրեն թէ, ո՞վ ըլ-
լալն և ուրիշ գալը ծանուցանող թուղ-
թեր ունէ՞ր: Իտալական անցագիր մը
հանեց տուաւ ինձի... Ասթրոտի Պի-
անքա տասն և ութ տարեկան, երգ-
չուհի...: Կը հարցնեմ քեզի քիչ մը...
երգչուհի, խեղճ սատանուհի մը, որ
Լիոնի կայարանէն մինչեւ հոս քարե-
լով կուգար կառքի ստակ չի տալու
համար... ինչպէս օրինակի համար
դուն «նկարիչ եմ» ըսէի, դուն որ
գունատաստակներ մաքրելէ և վրձին-
ներ սրբելէ գատ ուրիշ բան չես կրնար
ընել:

—Շնորհակալ եմ:
—Թերեւս պիտի պնդես ինձի թէ՛
պատկերներ կը քաշես նկարահանու-
սին համար: Գնա՛ այդ խճիպը Պիան-
քային հասկցու, եթէ կրնաս: Կարելի
է կը կլնէ, քանի որ արդէն կլնեցու-
ցիր իրեն թէ զինքը երջանիկ պիտի
ընես. բայց ինձի չես կրնար: Ես գի-
տեմ քու արժէքը. խեղճ կտաւ ներ-
կող, և այս պատճառով է որ կը բար-
կանամ քեզի դէմ այն խեղճ աղջկուկը
գլխէ հանելուդ համար: Երբ կը մտա-
ծեմ թէ ամիսէ մ'ի վեր որ հոս էր, ոչ
էրիկ մարդ մը, ոչ ալ կին մը ուր կո-
խեց սենեակը... մարդ չէր ճանչեր...
միայն դուրս կեղնէր երգի վարպետի
մը երթալու համար որ՝ իւր խօսքին
նայելով՝ հայրենակիցն էր...: Ասկէ
գատ թերեւս կուգար սէր կը մանէր
քու ձեռնախցիկիդ մէջ:

—Երբէ՞ք, բնաւ երբէք: Ես չեի
ճանչեր գայն:

—Կարելի է, բայց ետքէն ճանչե-
ցիր...: Եթէ կը հասկնամ թէ ինչու
բռնուեցաւ քեզնէ, հարկ էր որ զինքը
խաբած ըլլաս: «Ես նկարիչ եմ, դուն
ալ երգիչ ես. երկուքս ալ գեղարուես-
տագէտ... հետեւապէս երկուքս ալ ի-
րարու համար ստեղծուած ենք: Ման-

սարտ մ'եւ իմ սիրտս»։ Ու խեղճ աղջի-
կը հաւտա՛ց: Աստուած իմ, ի՛նչ ան-
միտ են սա աղջիկները:

Պինոս գլխու շարժումով մը բողո-
քեց, առանց ընդմիջելու պառաւին
խօսքը. կ'ուզէր որ աւելի շողակրա-
տելու գրգռէր, և այս դուրսիւնը
շատ լաւ կը յաջողէր իրեն, վասն զի
հինգ վայրկեանի մենախօսութեամբ
գրեթէ ամբողջապէս հասկցուցեր էր
իրեն ինչ որ կ'ուզէր իմանալ, առանց
հարցնելու:

—Բայց ժամանակ կը կորսնցնեմ,
յարեց ցասկոտ պառաւը, գործս թո-
ղուցեր բան կը հասկցնեմ քեզի պէս
թուշունի մը: Կարծեմ թէ բաւական
տեսայ քեզ, քաշէ կառքը:

—Ո՛չ, մինչեւ որ չըսէք...:

—Ի՞նչ ըսեմ, հերիք չե՞ն ըսածնե-
րու: Ի՞նչ կ'ուզես, կը յուսաս որ աղ-
ջկան լաթերը քեզի՞ յանձնեմ: Այն-
չափ յիմար չեմ: Թերեւս պիտի տա-
նիս գրաւի դնես: Բայց գիտցիր որ
մինչեւ իսկ վեց Ֆրանք չեն տար, որ
ինձի վճարելիք երեք օրուան վարձքն
է. բայց հոգ չէ: Արկղիկը քովս է և
կը պահեմ: Ըսէ իրեն իմ կողմէս որ
եթէ գայ խնդրէ ինձմէ, կուտամ իրեն
առանց վար դնելու վեց Ֆրանք պա-
հանջս, խեղճը շատ ստակ չունի գի-
տեմ... մանաւանդ հիմա որ քեզ ալ
թերեւս սնուցանելու հարկին մէջ կը
գտնուի:

—Օ՞, ալ շատ եղաւ, ես համբերող
մարդ եմ, բայց չեմ ներեր մէկուն
որ...:

—Երեսիդ նեւէ քու ճշմարտութ՝ւն
ներդ: Ներես կամ ո՛չ, իմ հոգս չէ: Ը-
սէ նաեւ իրեն թէ իւր սենեակն ու-
րիշի վարձու տրուեցաւ, և Թէ այլ
եւս չպիտի ընդունիմ զինքը թէեւ օ-
րը քան Ֆրանք վճարէ ինձի. ես
այդպիսի բարեպառուներ չեմ ընդու-

նիր տանս մէջ, ոչ ալ դատարկաշրջիկ-
ներ...:

—Ես ալ չեմ փափաքիր ձեր վարձա-
քնակն ըլլալու: Աւելի կ'ընտրեմ դուրսը
պառկիլ քան թէ ձեր տանը մէջ: Ե-
թէ դուք թող տայիք ինձի որ խօսէի,
պիտի հասկնայիք որ այդ ըսածներուդ
մէկն ալ չկայ: Բայց ես չի կըցի դեռ
խօսք մ'արտասանել: Կ'ուզէ՞ք զիս մը-
տիկ ընել վերջապէս... այո՛ կամ ոչ,
ես հոս փուճ խօսքեր մտիկ ընելու
չեկայ:

—Ո՛չ, որովհետեւ Պիանքայի համար
եկած ես:

—Անոր պատճառով, այո՛, բայց ին-
քը չէ զրկողը, ինքը մեռած է:

—Մեռած, գոչեց պառաւը: Ա՛,
սուտը շատ խոշոր է:

—Սուտ չէ: Այդ աղջիկը, գոր դուք
Պիանքա կը կոչէք, մեռաւ, և եթէ կը
կարծէք թէ սուտ կ'ըսեմ, Մօրկը գնա-
ցէք և տեսէք, հոն է:

—Մօրկը, կրկնեց պառաւը, մէկէն
ոտքի վրայ ելնելով, ո՛չ. կը ծաղրէք
զիս անհնարին է:

—Գնացէք տեսէք, կ'ըսեմ ձեզի,
բայց չուտով, վասն զի երեք օրէ ի
վեր հոն է և այսօր պիտի թաղեն:

—Երեք օրէ ի վեր... ասկէ դուրս
ելած օրէն ի վեր... բայց այն ժամա-
նակ դուք չէք...:

—Ըսի ձեզի թէ չէի ճանչեր գայն...
առաջին անգամ տեսայ գայն Մօրկին
մէջ մարմարէ սեղանի մը վրայպառկած:

—Ի՞նչպէս կըցար գուշակել թէ իմ
տունս կը բնակէր, հարցուց պառաւը
Պինոսի դէմքը դիտելով:

—Բնաւ չի գուշակեցի: Խօրհեցայ որ
այս թաղին մէջ բնակած պէտք էր
ըլլար և թէ իրեն յատուկ բնակարան
չունենալով, վասն զի հարուստ չէր,
կահաւոր սենեակ մը վարձած պիտի
ըլլար: Ուստի միտքս դրի կահաւոր

սենեակ վարձող տուններն երթալ հար-
ցնել: Նախ ձերինէն սկսայ և յաջող
եղայ: Մէկէն անունը զրուցեցիք ին-
ձի, գոր չէի գիտեր...:

—Ա՛. դուք ստիկանութեան մարդ
էք ուրեմն, ես ձեզ...:

—Ես ժաք Պինոս կը կոչուիմ մայրիկ.
և նկարիչ եմ: Մօրկը մտայ և դժ-
բաղդ աղջիկը տեսայ հոն ցոյցի դըր-
ուած... իւր գեղեցկութիւնը յուզեց
զիս... և երբ իմացայ որ զինքը ձան-
ջող չէր եղեր, անմիջապէս փնտռելու
եղայ իրբեւ գեղարուեստասէր, և ա-
ղէկ ըրի: Գոնէ հիմա կրնան տնունը
ընել թէ՛ մահուան ծանուցագրին և
թէ՛ փայտէ խաչին վրայ, զոր ես պի-
տի տնկեմ իւր թաղուելիք փոսին
վրայ:

—Անունը. անունը, բայց պէտք է
ապացուցանել թէ իմ տանս մէջ բնա-
կող Պիանքա Ասթրոտին է այդ աղջիկը:

—Բայց դուք պիտի ապացուցանէք:
Պէտք է որ երթաք տեսնէք զինքը:

—Ե՛ս, երբէ՞ք, միտքս բերելն իսկ
սարսուռ կ'սողդէ ինձի:

—Կը հասկնամ գայդ. սիրելի տի-
կին, բայց այդ աշխատութենէն ա-
զատ մնալ անկարելի է ձեզի: Ես հի-
մա պիտի երթամ իմացնեմ ոստիկա-
նութեան տեսչին, և ան ալ իսկոյն
մարդ պիտի զրկէ ու կանչէ ձեզ:

—Ա՛հ, չարածձի, եթէ այդ խաղն
ընես ինձի, չես կրնար ձեռքէս ազա-
տիլ:

—Ես չեմ կրնար ինձի պահել իմացա-
ծրս: Դուք ալ անչուշտ չէք ուզեր որ
ձեր այդ վարձակալ խեղճ աղջիկն ան-
դամատուելու սահմանուած մեռնե-
րու ծակին մէջ նետեն:

—Ո՛հ լուէ, մի՛ սարսափեցնէր զիս:
Աստուած իմ, խեղճ աղջիկ, ի՞նչպէս
հանդիպեցաւ այդ աղետալի փորձու-
թեան: Արդեօք ինքզինքը գե՞տը նե-

տեց, կամ կառքի մը տակ երթալով ջախջախուեցա՞ւ:

— Հանրակառքին մէջ մեռած գըտնուեցաւ: Բիկալ հրտարակին կայարանին առջեւ:

— Ա՛, ա՞ն էր, Բըրէ Ժառնակին մէջ կարդացի: Եւ բնաւ կասկած չըրի ա՛նոր վրայ, երբոր այն գիշերը տուն չի վերադարձաւ... Ես պարզապէս կարծեցի թէ...:

— Ապացոյց մ'է այդ թէ մարդ կըրնայ սխալիլ: Այլ հիմա իմ մեղքս չէք առներ...:

— Թէ հրապուրեցիր դայն, ոչ: Բայց դարձեալ մութ է այդ մահը: Պիանքա ծանր չէր կշտեր, հմայքի մը պէս թեթեւ էր: Արդեօք թունաւորեցի՞ր զինքը:

— Թերեւս, բայց ո՞վ պիտի թունաւորէր: Դուք ըսիք ինձի թէ մարդու հետ չէր տեսակցեր:

— Հոս, ո՛չ. բայց ամէն իրիկուն դուրս կ'երնէր. երբեմն ցերեկն ալ:

— Ո՛ւր կ'երթար, այդ պէտք է գիտնալ:

— Ինձմէ մի սպասեր: Պիանքա շատախօս չէր, ես ալ հետաքրքիր չեմ: Ուստի բան մը չեմ գիտեր: Երգի դասատուի մը խօսք կ'ընէր, որ դաս կուտար իրեն և բուսաբանական պարտէզին կողմը կը բնակէր...: Մինչեւ իսկ այս ալ զարմանալի թուեցաւ ինձի... որովհետեւ այն կողմերը փողոցի երգիտն զարնողներ միայն կան. ուստի փողոցի կամ բակերու մէջ երգել սովորելու համար էր թերեւս...: Անգամ մ'ալ ըսաւ ինձի թէ ազգականներ ունէր ֆարսիցի մէջ, բայց ո՛ւր բնակէրնին չէր գիտեր... ըսի մաքէս թէ կը պարծենար...:

— Բայց սուտ չէր ըսելը թէ բուսաբանական պարտէզին կողմը կ'երթար, վասն զի գինիի վաճառանոցէն եկող

հանրակառքին մէջ մեռաւ: Զարմանալին այս է որ իւր դասատուն կամ ազգականները, եթէ ունէր, չեն գացեր Մօրկը նայեր: Անշուշտ կարդացեր էին լրագիրները, պէտք էր սրտերնին անհանգիստ ըլլար անոր երեւան չեղնելուն վրայ:

— Օ՛, կարեւորութիւն չեն տար ա՛նոր: Ամիսէ մ'ի վեր հոս էր, ոչ մէկը չեկաւ չի հարցուց:

— Լինի կայարանէն կուգար, ըսաւ Պինոս ինքնիրեն. զարմանալի է որ Մօնմարթը եկեր էր բնակելու:

— Բնաւ զարմանալի չէ. Բարիզը չէր գիտեր: Իտալացի մը, որ անցեալ տարի հոս նստած էր, այս տունս ցուցուցեր էր անոր:

— Ըսել է թէ ուղղակի իտալիայէն կուգար:

— Միլանէն. այնպէս գրուած է անցագրին վրայ:

— Եւ այդ անցագիրը ձեր քով է:

— Վերը իր արկղիկին մէջն է իւր, ուրիշ թուղթերուն ու հանդերձներուն հետ: Արկղիկը կը պուսած է և բանլիքն ալ հետը տարած էր:

— Բանլիքը, դրօպանէն ելաւ դրամապանակի մը հետ, որուն մէջ քանի մը սու միայն կար:

— Հարկաւ, խեղճը հարուստ չէր: Ատոր հետ մէկտեղ կասկածոտ ալ էր, միշտ գոց կը պահէր իւր արկղիկը: Կրնայի դարձին մը կանչել և բանալ տալ, երբ տեսայ որ չէր վերադառնար, բայց կը սիրէի այդ աղջկուկը... միանգամայն կը յուսայի որ պիտի վերադառնար: Եւ դուրս չպիտի ընէի եթէ վերադառնար: Բաւական պիտի համարէի յանդիմանել զինքը... ո՛րովհետեւ ես, աղա՛ս, չար չեմ...: Կրնաս հարցնել զիս այս թաղին մէջ... ամենն ալ պիտի ըսեն քեզի թէ Սօֆի Գորնիւ երբէք նեղած չէ իւր վարձակալները:

— Կը հաւատամ... թէ եւ խօսուած մար վարուեցաք ինձի հետ քիչ մը առաջ:

— Մի՛ նեղանար ատոր համար՝ տըղա՛ս, ձեզ այն սրիկաներէն մէկը կարծեցի, որք Բլիշէի պուլվառներուն վրայ կը սլքտան, դէմերնին ելնող խեղճ աղջիկները խաբելով գլխէ հանելու համար: Յանցանքը ոչ քուկդ է, ոչ այ իմս, քու երեւոյթդ աղէկ չէ... և ես այն գաղափարն ունիմ որ դուն շատ օրեր չես աշխատիր:

— Ամէն օր մէյմէկ քիչ, սիրելի՛ աիկին:

— Կ'ուզեմ հաւատալ, թէ որ հաճոյք կը պատճառէ քեզի: Հիմա որ կը տեսնեմ թէ դուք չէք առեւանգած Պիանքան. այլ եւս բան մը չունիմ քեզի դէմ: Մինչեւ իսկ գոհ քեզ տեսնելուս վրայ, թէ եւ գէշ լուր մը բերիր ինձի: Գոնէ գիտեմ խեղճ աղջկան գլխուն եկածը. և թող չի պիտի տամ որ դայն հանրային փոսը նեանն, եթէ յիսուն ֆրանք տալով կրնամ թաղելու տեղ մը գնել:

— Շա՛տ աղէկ, ես գուշակեր էի որ դուք բարի սիրտ ունիք: Ուրեմն հիմա Մօրկը պիտի գաք:

— Ա՛հ, դժուար բան ինձի համար:

— Պէտք է սովայն: Ես այդ աշխատութիւնը կրել չէի տար ձեզի, բայց չեմ կրնար ձեր գործը կատարել: Ես չէի ձանչեր այդ աղջիկը, մինչ դուք որ դայն ձեր տան մէջ բնակեցուցած էք և թողթերն ալ ձեր քով են...:

— Այո՛, կրնամ բոել անունն և հաստատել իւր իսկութիւնը: Գիտե՞ս որ դեռ թաղուած չէ:

— Աներկրայ եմ: Եթէ պատկած աղէկն փերցուցին կրնաք դիտանալ իրին խօսիլ և կը ցուցնէ ձեզ:

— Ա՛հ, արիւնս պիտի դառնայ: Չանչեղէս ետեւ ի՞նչ պիտի ըլլայ:

— Այլ դորձ չի մնար ձեզի: Ոստիկանութիւնը մարդ կը զրկէ հոս և անոր անուկը կ'ուզէ: Կը քննեն թուղթերը, և ո՞վ գիտէ... թերեւս կը գտնեն դժբաղդ աղջկան ազգականներն, որոց վրայ խօսած է ձեզի,

— Այդ չեմ յուսար: Ասկէ զատ, ի՞նչ բանի կրնայ ծառայել: Զարմանալի՛ ազգականներ. որոց առջեւ կորսուած շան մը չափ ալ արժէք չունի խեղճը:

— Բայց ուրիշ բան մը կայ, աղա՛ս: Եթէ հիմա ես դուրս ելնեմ, պէտք է որ մէկը կենայ հոս: Սպասուհիս լուսցարանը գացած է: Երթամ դրացիի մ'աղաչեմ երթայ զինքը կանչէ: Դուն ալ հոս մի՛ սպասեր պարապ տեղը: Գնա՛, և եթէ կ'ուզես, վաղը եկուտես դիս, աւելի լաւ ընդունելութիւն կ'ընեմ քեզի, և եթէ կ'ուզես, հետս կուգաս և ներկայ կը գտնուիս թաղուելուն:

— Շատ աղէկ, բայց ծախքը մէջերնիս բաժնելու պայմանով:

— Ծախքը մէջերնիս բաժնել: Ամենեւին: Դուն անկուտի տղայ մը, ես, փառք Աստուծոյ, կրնամ անոր արծանապէս թաղուելուն բոլոր ծախքը վրձարել: Վաղը կը խօսինք ասոր վրայ, հիմա քակէ չուանդ, ժամանակ չունիմ աւելի խօսելու:

Պինոսի ուզածն ալ այս էր, և այնչափ շողովուն և առատածեռնական տառաջարկներ ընելուն նպատակն էր շահիլ այդ պատան, իւր միտքը դրածը յաջողեցնելու համար: Պինոս կատարելապէս յաջողեր էր իւր այս դեսպանական պաշտօնին մէջ: Յաղթանակի էր: Ինքզինքը առաջին կարգի դիտանալէս կը համարէր, ճիշդ այն մարդոց նման, որք թղթախաղի մէջ կը շահին, ձեռք բնուն մէջ լաւ թուղթեր ունենալուն չնորհիւ, և կը կարծեն թէ իրենց յաջողութիւնն իրենց տաղանդին արդիւնքն է:

Հրաժեշտի ողջոյն տալով Սոփի Գորնիւի փողոց նետուեցաւ: Բիէտուշ բարեկամը ժամադիր եղեր էր Մօնմարթրի թաղապետութեան առջև: Վազեց գաւազայն՝ երկու թեւերը գլխէն վեր բարձրացնելով՝ սրպէս զի ծանուցանէր հեռուէն թէ լաւ լուր մը կը բերէր:

— Է՛, ի՞նչ լուր, հարցուց Բիէտուշ հանդարտօրէն:

— Օ՛հ, գտայ մեր փնտուածը, պատասխանեց Պինոս: Ձեր նշանակածը շատ ճիշդ էր, սիրելի՛ բարեկամս, և բացայայտ կ'ըսեմ թէ դուք մեծ մարդ էք: Աղջիկն հոն կը բնակի եղեր Բարիզ գալէն ի վեր, այսինքն ամիսէ մ'ի վեր: Եւ այն խենդուկ պառաւր որ այն խեղճուկ օթեւանին սենեակները վարձու կուտայ, մ'օրկը պիտի երթայ աղջկան դիակը տեսնելու: Խեղճին տնունն և ամէն բանը յայտնեց ինձի...

— Ուրեմն թուղթերն ալ քո՞վն են:

— Թուղթերը, լաթերը, ամէնն ալ աղջկան արկղին մէջն են. և ոստիկանութեան տեսչին պիտի յանձնուին՝ երբ նոյնութիւնը ստուգուի:

— Կատարեա՞լ: Բայց... ըսի՞ք անոր հանրակառքին մէջի մահուան վրայ ձեր ունեցած կարծիքը: Գիտե՞՞ թէ աղջիկն սպաննուած է:

— Ոչ, չի գիտեր: Ես անսխալ մարդ չեմ, երեւոյթէս աւելի խորամանկ եմ. մտածեցի որ եթէ ոճիրի խօսք ընէի, կը խորշէր՝ վախնալով որ կասկած կը հրաւիրէր իւր վրայ. իսկ այնպէս կարծեցընելով իրեն թէ իւր վարձակալը բնական մահով մեռած էր, աներկբայ էի որ դժուարութիւն չէր ցուցներ երթալ տեսնելու:

— Կը շնորհաւորեմ ձեզ, սիրելիս: Արդարեւ հին վարպետի մը պէս վարուեր էք: Եւ կը մտածեմ թէ բնաւ պէտք չունիք իմ դորձակցութեանս: Դուք ալ ինձի չափ գիտէք:

— Ա՛, բայց ո՛չ, գոչեց Պինոս. առանց ձեզի խենթութեամբ բաներ կ'ընեմ ես: Նախ չեմ գիտեր թէ ուսկի՛ց պէտք է սխտիմ... երթալ պարզապէս ոստիկանութեան տեսուչին պատմե՞լ մեր գործը:

— Ամենեւի՛ն, ըսաւ մէկէն Բիէտուշ: Ոստիկանութեան տեսուչը ձեզ խելագարի մը տեղ կը դնէ պարզապէս: Այդ մարդիկը երեւակայութեան հետ գործ չունին, և դուք ալ դրական բան մը չունիք անոր յայտնելու: Պառաւ տանտիրուհին ըսաւ ձեզի թէ աղջիկը մարդ չէր ընդուներ բնաւ, ուստի դուք ալ չէք կրնար մէկու մը վրայ կասկած յայտնել:

— Պառաւն ըսաւ ինձի թէ աղջիկն աղգականներ ունէր Փարիզի մէջ, և թէ ամէն օր կ'երթար երգի դաս կ'առնէր:

— Փարիզի մէջ աղգականնե՞ր. խիստ տարտամ խօսք:

— Երգի դաս առնելն ալ թերեւս պատրուակ մ'էր: Ո՛ւր թառած էր այդ երգի դասատուն:

— Պառաւը չի գիտեր:

— Ուրեմն ամէն բանէ առաջ այդ դասատուին ո՞վ ըլլալն և ո՞ւր բնակիլը պէտք է գանել:

— Կ'երեւի որ բուսաբանական պարտէզին կողմը կը բնակի: Եւ աշխարհի մէջ ձեզմէ դատ ոչ ոք կարող է գտնել դայն:

— Կը ջանամ, և թերեւս յաջողիմ ալ Բայց այդ հետախուզութիւնը ժամանակի կը կարօտի: Հրաշք մ'է որ դուք կրցիք մէկէն ի մէկ գտնել աղջկան բընակած տունը. հրաշք մ'է որ չի կըրկնուիր:

— Չա՛ր սատանայ. բայց այսօր պիտի թաղեն, և անգամ մը որ խեղճ աղջիկը թաղուի, ի՞նչպէս կրնայ ստուգուիլ գնտասեղով մը թունաւորուած ըլլալը:

— Այդ պիտի ըսէ ինձի գիտնական բարեկամս, երբ քննէ գնտասեղը: Եթէ յայտնէ ինձի թէ, սպաննողին գործածած թոյնը հեռք մը չունի, կարելի չէ բան մ'ընել ո՛չ հիմա, ոչ ալ ետքը: Եթէ ընդհակառակն, հեռք ունի, միշտ ժամանակ կունենանք հաստատուլու: Եւ այս ժամանակ մեր ժողովելիք բարոյական ապացոյցները կրնան դժուրութիւն մ'ունենալ: Առաջին կէտն է ստուգել թէ այդ աղջիկը վերցնելու գործին մէջ շահ ունեցողն ո՞վ էր:

Պինոս քիթը կախեց և շատ համոզուած չէր երեւար:

— Սիրելիս, յարեց Բիէտուշ, եթէ վստահութիւն չունիք իմ վրաս, յայտնապէս ըսէք ինձի, ես բնաւ փախաք չունիմ այդ գործին խառնուելու:

— Բայց այո՛, այո՛, անսահման վրստահութիւն ունիմ ձեր վրայ:

— Ուրեմն, թոյլ տուէք ինձի որ գիտցածիս պէս ընեմ, բացարձակ իշխանութիւն կ'ուզեմ:

— Օ՛, ամենայն սիրով: Ձիւ ձեր հըրամանին տակ կը դնեմ, և ձեր խօսքէն դուրս չեմ ելնէր բնաւ:

— Շատ աղէկ, այն ատեն կրնամ աշխատիլ յաջողելու յուսով: Պայմանով մը սակայն...

— Կանխաւ կ'ընդունիմ:

— Պայմանով որ մէկու մը չընէք իմ խօսքս: Եթէ իմացուի որ ես այդ գործին ետեւէն եմ...

— Մարդու չեմ յայտներ, որո՞ւ կ'ուզէք որ խօսիմ:

— Ձեր ընկերներուն անշուշտ: Դուք շատ ընկերներ ունիք թաղին ամէն գործարաններուն մէջ, թուրքերան մարդիկ, որոց քով գաղտնիք չի մընար: Կը կասկածիմ իսկ որ արդէն չաղակրատած էք անոնց: Երբք օրէ ի վեր որ զիս կը փնտռէիք, լուռ չի կեցաք, դրաւ կը դնեմ որ շատերու յայտնեցիք:

— Կ'երդնում, Բիէտուշ, որ...
— Երդում մի՛ ընէք, բարեկամ, ձեր աչերուն մէջ կը կարգամ որ մէկու մը յայտնեցիք: Ըսէք ինձի թէ որո՞ւ, դո՛ւ կ'ըլլամ:

— Ճշմարտան ըսելով, չեմ կրնար ձեզնէ պահել: Այո՛, մէկը ունիմ մտերիմ, լրջամիտ երիտասարդ մը, որ թուրքերան չէ, մանաւանդ որ դէպքը չի շահագրգռեր բնաւ, և տարակոյս չունիմ որ մուցած ալ է: Ինք ուրիշ գործով զբաղած է, մանաւանդ որ չի հաւտար ոճիր գործուած ըլլալուն: Նկարիչ Բօլ Փրընէօզն է, որ յառաջիկայ նկարահանուի մէջ մեծ շքադրամ պիտի ստանայ թերեւս: Տարին վաթսուն հազար ֆրանգ կը շահի:

— Օ՛, լսած եմ համբաւը... տեսած ալ եմ: Ըսիք անոր թէ իմ վրայ դրած էք ձեր վստահութիւնը:

— Ո՛չ, ձեր գոյութիւն ունենալն իսկ չի գիտեր: Պատուոյս վրայ խօսք կուտամ որ ձեր անունը չպիտի արտասանեմ անոր առջև... պիտի կարծէ թէ ես առանձին կը գործեմ... առանց օժանդակի:

Խորամանկ Բիէտուշ մտածեց վայրկեան մը: Պինոսի վերջին յայտարարութիւններն ու խոստումները քիչ մը դուրս թացուցին անոր դէմքը, տխրած էր Պինոսի թուրքերանութեան խոստովանութիւններէն, և կարճ լուրթենէ մ'ետեւ ըսաւ բացորոշ կերպով մը:

— Ձեր պատուոյ խօսքին կը հաւատամ և կը վստահիմ. հետեւապէս վրաս կ'առնեմ ձեր գործը, դուք հանդարտ կեցիք և վաղը կ'առնուիք, թերեւս նոր բան մը կ'ունենամ ձեզի իմայնելիք: Հիմա պէտք է բաժնուինք իրարմէ:

— Կը հնազանդիմ մեծաշուք վարպետ, ըսաւ Պինոս գուարթութեամբ Բիէտուշի ձեռքը սեղմելով, որ իսկոյն դէպի դուրսի պուլվարը ձանրայ ելաւ:



Յ

Մինչ յանդուզն Պինոս և կորովա-
միտ Բիէտուշ, այնպիսի դիպուածով
մը՝ որ նարպիկ մարդոց կը պատահի,
խեղճ մեռելուհւոյն բնակարանն ու ա-
նունը կը գտնէին, դրամատէր Բօլէ,
հանրակառքին ոճրագործները փնտոե-
լէ բոլորովին տարբեր հոգեր ունէր,
բազում պատճառներով, որոց առա-
ջինն այս էր որ բնաւ ծանօթութիւն
չունէր այս պատմութեան:

Պ. Բօլէ դրամական ու առեւտրական
լրագիրները միայն կը կարդար, և երբ
քաղաքական լրագիր մ'աչքէ անցու-
նէր, արհամարհելով կ'անցնէր այլ և
այլ լուրերը: Պ. Բօլէ կը պարծէր իբ-
րեւ լրջամիտ մարդ, և միայն լուրջ գոր-
ծերու կարեւորութիւն կ'ընծայէր: Կը
պարծէր թէ երբէք կարդացած չէր
վէպ մը, և եթէ ժամանակէ մ'իվեր
նկարիչներով կ'զբաղէր, պատճառն այս
էր, որ մեր օրով նկարչի արուեստն
ամենէն չահարներէն մէկն է երբ
յաջողակէս գործադրուի:

Այս համոզումը մեծ դժուարութեամբ
ստացեր էր: Չախող կամ համբակ նը-
կարիչները միշտ արհամարհած էր իւր
կենաց մէջ, ինչպէս կ'ըսէր իրրեւ ա-
ւուր հացի կարօտ անպիտաններ: Բայց
բարեկամներէն մէկը, որ հետաքրք-
րաշարժ կամ հազուագիւտ նիւթեր,
հնութիւններ և նկարներ ծախելով հա-
րջատացած էր, թուանշաններով և օ-
րինակներով հասկըցուցեր էր իրեն թէ՛
նշանաւոր նկարիչները շատ ստակ կը
վաստակին և ոմանք միլիոնատէր կ'ըլ-
լան: Գործերնին ապահով է միշտ, կ'ը-
սէր յիշեալ բարեկամը, և բնաւ վախ
կամ կասկած չունին սնանկութենէ: Այս
վերջին փաստը շատ զարկեր էր Պ. Բօ-

լէի մտքին, որ իւր աղջկան հարստու-
թեանը վտանգ մը պատահելու հաւա-
նակութենէն կը սարսափէր:

Արդ, իւր ձեռքին տակ յաջող ա-
պագայ խոստացող նկարիչ մ'ունէր,
որ արդէն շատ սուղ կը ծախէր իւր
հանած նկարները, և աւելի թանկ գը-
նով վաճառելու ճամբուն մէջ էր. աշ-
խատասէր, խնայող և պարկեշտ աղայ
մը, որուն վարուցն ու բարուցն և ըն-
տանեացը ծանօթ էր, բարեկիրթ և
պատուաւոր, երիտասարդ, պատուական
փեսայացու մը, որ իւր աղջկան ալ հա-
ճելի էր:

Ուստի Պ. Բօլէ իւր ընտրութիւնն ը-
րած էր Բօլ Ֆրընէօզի վրայ, և իւր
աղջկին անոր առաջարկելու համար ա-
ռիթի կ'սպասէր, որ քիչ օրէն անվրէ-
պապէս պիտի ներկայանար: Քիչ մնա-
ցեր էր որ Բօլթ-Սէն-Մարթէնի թատ-
րոնին մէջ, Շըլալէէ Գի-Պրայետա-
ր խաղցուած միջոցին, գործը վճռական
դարձուած մը պիտի ստանար: Բայց
խօսակցութիւնը յանկարծ ընդմիջուեր
էր այնպիսի միջադէպով մը, որ այն
օրէն ի վեր շատ գէշ գիշերներ ան-
ցունել տուեր էր խարտիչագեղ Մար-
կըրիթի հօրը:

Հեռագիրն որ կը ծանուցանէր թէ
իւր եղբայրը մեռեր էր զինքը ժառան-
գութենէ զրկելով, հեռագիրներու սո-
վորական ոճովը գրուած էր. այսինքն
զրկողն այն աստիճան խնայողութեամբ
բառերը գործածեր էր, որ հազիւ հաս-
կընալի էր: Պ. Բօլէ իսկոյն հեռագիր
գարներով բացատրութիւններ խնդրեր
էր, և թղթակիցն ալ որ մեռնողին նօ-
տարն էր, սա լակոնական պատասխա-
նը զրկած էր. — «Վաղը ճանբայ պիտի
եղնեմ Փարիզ դալու համար»:

Եւ Պ. Բօլէ անհամբերութեամբ կ'ըս-
պասէր այդ պարկեշտ նօտարին գա-
լուն, որ միշտ պաշտպանած էր իւր

չահերն, և հաւանաբար առանց ծանր
պատճառներու չէր յանձն առներ այդ
երկար ուղեւորութիւնը: Կտակողը մե-
ռեր էր Ամէլի-լէ-Պէնի մէջ, հանքային
բազնիքի քաղաք մը արեւելեան Պիրե-
նեանց ստորոտը, մայրաքաղաքէն եր-
կու հարիւր յիսուն փարոսիս հեռու:
Դատական պաշտօնեան որ անոր վեր-
ջին կամքն առած էր, անուշտ տեղէն
չէր շարժեր և թէ հարկ չըլլար անժա-
ռանդեալ եղբորն յանձնել կտակին
վաւերական պատճէնը:

Ուստի Պ. Բօլէ երեք օրէ ի վեր յու-
սոյ և տրտմութեան փոփոխակի ազ-
դեցութեան ներքե կ'սպրէր: Իւր հան-
գիստն ալ հարստութեանը չափ սիրե-
լի էր իրեն, և այս անստուգութիւն-
ներն այնչափ կը վրդովէին զինքը, որ
ախորժակն ու քունը միանգամայն կը
կորսնցնէր: Աղջիկը, որ անոր չափ
չէր յուզուեր, ոչ եւս կը ճանչէր զայն:
Հետը չէր խօսուեր: Ջանացեր էր յի-
շեցնել իրեն թէ Բօլ Ֆրընէօզ իրենց
այցելութեանը կ'սպասէր իւր աշխա-
տանոցին մէջ. հայրը շատ գէշ ընդու-
ներ էր զինքը: Մինչեւ իսկ յայտներ
էր բացորոշակէս թէ դուրս չպիտի ել-
նէր մինչեւ որ չտեսակցէր նօտարին
հետ որ վայրկեանէ վայրկեան կ'ընար
հասնիլ: Եւ Մարկըրիթ հարկադրուեր
էր յոյսը կտրել զայն համոզելէ: Կը
մտիթարուէր սուգի արդուգարդներ
պատրաստելով, որ շատ աղէկ կը վայ-
լէին երեն:

Պ. Բօլէ դուրս չէր ելներ իւր սենեա-
կէն. հոն ժամանակը կ'անցունէր հին
թղթակցութիւններ աչքէ անցունելով,
զորս եղբօրը հետ փոխանակած էր ի-
րարու դէմ գժտելէ առաջ: Կը ջանար
իւր եղբօրն իաւալիս բնակած միջոցին
գրած նամակներուն մէջ նշաններ գրա-
նել այն ամուսնութեան մասին, զոր կը
կասկածէր թէ կնքած էր Հոմի մէջ,

և որոշ բան մը չէր գտներ: Գլխաւոր
խնդիրն էր դիտնալ թէ վախճանեալը
օրինաւոր կամ բնական զաւակներ ու-
նեցած էր հոն, և թէ մանաւանդ ի՞նչ
եղեր էին անոնք: Պ. Բօլէ հետախու-
զութիւններ ընել տուեր էր, որք կա-
տարեալ արդիւնքի մը չէին յանգած,
և իւր եղբօրը մեռնելէն ի վեր աւելի
պէտք կ'ըլլար իրեն ստուգել այս կա-
րեւոր կէտերը:

Չորրորդ օրը, տխուր նախաճաշէ մը
ետեւ, որուն Մարկըրիթ ներկայ չէր
գտնուեր՝ գլխու ցաւ պատճառելով,
անժառանգեալ հայրը գնացեր նստեր
էր գրասեղանին առջեւ. յանկարծ ծա-
ռաներէն մէկն եկաւ ըսաւ իրեն թէ
պարոն մ'եկեր իրեն հետ խօսիլ կը
խնդրէր:

— Ի՞նչ է այդ պարոնին անունը, հար-
ցուց Պ. Բօլէ: Եւ երբ իմացաւ թէ
այցելուն չէր ուզեր յայտնել իւր ա-
նունը.

— Ես անծանօթ մարդ չեմ ընդունիր,
պատասխանեց:

— Կ'ըսէ թէ խիստ կարեւոր գործի մը
վրայ խօսելու եկեր է, ըսաւ ծառան:

— Արդեօք իմ սպասած նօտարն է,
ըսաւ ինքնիրեն: Այդ դաւառացիները
չեն գիտեր այստեղի սովորութիւննե-
րը: Թերեւս կը կարծէ թէ իւր գրա-
սենեակը մտնելու պէս կրնայ իմ սե-
նեակս ալ մտնել... ուստի և աւելորդ
սեպեր է իւր այցաքարտը տալ...

— Թո՛ղ զայ, ըսաւ բարձր ձայնով:

Եւ ոտքի վրայ ելաւ ընդունելու հա-
մար անհամբերութեամբ սպասած անձը:
Վայրկեան մ'ետքը գուռը բացուելով
մարդ մը ներս մտաւ որ ոչ նօտար էր,
ոչ գաւառացի:

— Օ՛, դժէք էք, ըսաւ Պ. Բօլէ յօն-
քը պոստելով: Պատուիրեր էի ձեզի որ
չի գաք մինչեւ որ տարտամ հաւանա-
կութիւններու տեղ ստոյգ տեղեկու-

Թիւններ չունենաք ինձի բերելու:

— Ճշդիւ ձեր հրամանը կատարեցի, պարոն, պատասխանեց այցելուն: Ժամանակէ մ'ի վեր չի տեսաք զիս, որովհետեւ նոր լուր մը չունէի ձեզի տալու, բայց այսօր ձեռքերս լեցուն են ստուգութիւններով:

— Տեսնենք: Բայց նախ յիշեցուցէք ինձի ձեր անունը որ բոլորովին ելած է մտքէս, ըսաւ Պ. Բօլէ արհամարհոտ ձեռով մը:

— Պլանչէն, պարոն, Օկիւսթ Պլանչէն:

— Շատ աղէկ, կը յիշեմ հիմա: Ինքզինքնիդ գործակատար կը կոչէք, և Սէնթ-Օնօնէի վաճառանոցին կողմը կը բնակիք:

— Տըլա Սուռաիէս փողոց, Թիւ 74:

— Ձեր այդ հասցէն տեղ մը նշանակած եմ, բայց մտքէս ելած էր...: Քանի մ'օր առաջ մէկը խնդրեց ինձմէ և չի կրցի տալ... լաւ կ'ըլլայ որ այցաքարտնիդ ինձի թողուք:

— Չունիմ վրաս... բայց եթէ հաճիք իմացնել ինձի զիս տեսնել ուզող պարոնին հասցէն...:

— Շատ աղէկ, երբ ինձի հաղորդէք ձեր բերած լուրերը... բայց նախ պէտք է ըսեմ ձեզի թէ անցեալ իրիկուն համարձակեցաք ողջունել զիս թատրոնին մէջ, ամբողջ սրահին մէջէն, մինչ ևս արտօնած չէի ձեզ այդ անսակ ազատութիւններով վարուիլ ինձի հետ:

— Բայց արգիլած ալ չէիք:

— Կարելի է, բայց կ'աղաչեմ որ մէկ մ'ալ չընէք: Հիմա տեսնենք թէ ինչ ունիք ինձի ըսելիք: Ի՞նչ վիճակի մէջ են ձեր հետախուզութիւնները:

— Լմեցած են:

— Ի՞նչպէս:

— Ապացոյց ունիմ ձեռքս թէ անց-

եալ տարի Հոռմի մէջ Պարթոլովէա Ասթրոտի՝ 1862ին աղջիկ մ'ունեցեր էր Պիանքա անունով:

— 1862ին, կրկնեց Պ. Բօլէ դժգոհ դէմքով մը:

— Այո՛, պարոն, դեկտեմբեր 24ին: Մկրտութեան վկայականին մէկ օրինակը կրցի ձեռք անցունել:

— Տեսնեմ:

— Վրաս չէ, բայց կը յանձնեմ ձեզի երբ ժամանակը գայ:

— Հարկաւ գիտէք պարունակութիւնը: Այդ Պարթոլովէա Ասթրոտին ամուսնացած էր:

— Ո՛չ, պարոն: Իւր Պիանքա աղջիկը նշանակուած է իբրեւ անձանօթ հօրմէ ծնած:

— Ա՛, չէեց Պ. Բօլէ ծանր մտահոգութենէ մ'ազատածի պէս: Ի՞նչ եղաւ այդ աղջիկը: Անյայտ եղաւ անշուշտ:

— Այսինքն ծնելէն աասն կամ տասներկու տարի ետքը բաժնուեցաւ մօրմէն: Բայց մայրը գիտէր միշտ անոր ուր ըլլալը:

— Այս ձմրան սկիզբը Պիանքա կ'երգէր Միլանի Սքալա թատրոնին պարերգներուն մէջ:

— Տակաւին հոն է՞:

— Ո՛չ, պարոն, ասկէ ամիս մ'առաջ Փարիզ եկաւ:

— Փարիզ, ի՞նչ ընելու:

— Հայրը փնտռելու, որ Ֆրանսացի մ'էր:

— Օ՛, գոչեց Պ. Բօլէ շփոթելով: Վէպ մը կը յօրինէք ինձի:

— Ճշմարտութիւն է, պարոն: Կատարելապէս ստուգած եմ, այնպէս որ կրնամ այդ Ֆրանսացիին անունն ալ ըսել ձեզի: Ֆրանսի Պօայէ կը կոչուի: Այդ դաւակը Հոռմի մէջ ունեցած է, ուր կը բնակէր այն ատեն: Իսկ հիմա Բիրէնէ-Օրիանթալ նահանգին մէջ կը բնակի:

— Այդ կէտը ձեզի չի վերաբերիր, ըսաւ Պ. Բօլէ խիստ կերպով մը: Ես հօրը վրայ տեղեկութիւն առնելու պաշտօն չի յանձնեցի ձեզի:

— Ո՛չ, բայց ես կրակատար գործ չեմ տեսներ: Աղջկանը վրայ տեղեկութիւն առած ժամանակս՝ ուզեցի գիտնալ թէ ի՞նչու մեկներ էր իւր երկրէն... և իմացայ:

— Ի՞նչպէս իմացաք:

— Այդ, պարոն, իմ դաղտնիքս է: Եթէ գիտ գործածողներուն յայտնեմ իմ գործածած միջոցներս, այնուհետեւ պէտք չեն ունենար ինձի: Վերջապէս գիտեմ և կրնամ ապացուցանել... ուրիշ շատ բաներ ալ գիտեմ:

— Ի՞նչ են նայինք, հարցուց Պ. Բօլէ անտարբեր դէմք մը կեղծելով:

— Պարոն, ըսաւ Օկիւսթ Պլանչէն, կրնամ շատ կէտերու վրայ լուծիւն պահելով հանդերձ, յայտնել ձեզի թէ ինչ կերպով կատարեցի ձեր ինձի յանձնած պաշտօնը: Տեղեկութիւն պիտի առնէի տղու մը վրայ, զոր ասկէ քսան տարիի չափ առաջ Հոռմի մէջ ծնած էր Պարթոլովէա Ասթրոտի անուն կին մը: Այդ տեղեկութիւնները կը բերեմ ձեզի, և կրնամ հաստատել վաւերական ապացոյցներով: Ուրեմն ուրիշ բան չի մնար ինձի, բայց եթէ այսչափը միայն յայտնելով, աշխատութեանցս գինը պահանջել ձեզնէ:

— Ես չի վճարել չեմ ըներ:

— Գիտեմ, բայց իմ ծառայութիւններս իրենց բուն արժէքով չպիտի կրնամ գնահատել տալ ձեզի եթէ այսչափը միայն հասկցնեմ: Կը կարծեմ թէ ժամանակն եկած է ձեզի հետ սեղանի վրայ թուղթ խաղալու:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք այդ խօսքերով:

— Ըսել կ'ուզեմ թէ գիտեմ ինչ պատճառաւ կ'ուզէք իմանալ նկարիչներու

իբր տիպար ծառայող Ասթրոտի աղջկան ինչ եղած ըլլալը:

— Ի՞նչ պատճառաւ... բայց ես բնաւ պատճառ կամ շահ մը չունիմ:

— Լըջաբար խօսինք, կ'աղաչեմ, եթէ շահ չունենայիք, հաղար Ֆրանքնոց արժեթուղթ մը չէիք խոտանար ինձի: Ճիշդ տեղեկութիւններ ձեզի բերելու փոխարէն:

«Արդ, պարոն այդ շահն ես փնտռեցի, և շատ աշխատութիւն պէտք չեղաւ դռնելու:

«Պիանքա Ասթրոտի, Պարթալովէա Ասթրոտի աղջիկը ձեր եղբոր աղջիկն է:

— Սխալ է... ես եղբոր աղջիկ չունիմ:

— Օ՛, ձեր եղբոր աղջիկն է ձախ ձեռքէ...: Ասկէ զատ, հայրը, Պ. Ֆրանսի Պօայէ, ձեր խորթ եղբայրն է, այսինքն կէս եղբայր, ի՞նչպէս կ'ըսեն ռամիօրէն:

«Այսու հանդերձ դուք անոր բնական ժառանգն էք ձեր մօրմէն անոր ինկած հարստութեան, և այդ բաժինը արհամարհելի բան չէ, վասն զի կարեւոր դրամագրուիս մը կը կազմէ:

— Եւ երբ այդպէս ըլլայ, դոչեց Պ. Բօլէ, այդ աղջկան գոյութիւնը ինձի չի դպչելու: Կ'ըսէք թէ այդ աղջիկն իբրեւ դաւակ ճանչցուած չէ, ուրեմն ժառանգութեան իրաւունք բնաւ չունի:

— Օրինաւորապէս պահանջելու իրաւունք չունի արդարեւ. բայց գիտէք որ եղբայրները պահեստի ժառանգներ չեն: Պ. Պօայէ կրնայ իւր ունեցածն ուզած մարդուն կամ կնոջ թողուլ: Օրինակի համար Պիանքա Ասթրոտի: Եւ ասելի բարեբաղդութիւն է այդ աղջկան համար որ Պ. Պօայէ չէ ճանչցած գայն իբրեւ դաւակ, վասն զի այն ատեն չէր կրնար իւր ամբողջ հարս-

տութիւնը անոր թողուլ: Օրէնքն այսպէս կը տրամադրէ:

— Եթէ եղբայրս գիտաւորութիւն ունենար իւր հարստութիւնը օտարուհիի մը կտակելու, հոգ կը տանէր այդ աղջկան... բայց երբէք չէ ուղած տեսնել զայն երկար տարիներէ ի վեր:

— Թերեւս աչքէ կորսնցուցած է զայն, բայց չէ մոռցած:

— Գոնէ զայն գտնելու փափաք կը յայտնէր... և որ և է կերպով իւր գիտաւորութիւնները կը յայտնէր:

— Բայց յայտնած է, և եթէ չի տեսաւ իւր աղջիկը, յանցանքն իրենը չէ:

— Օ՛, դուք կ'երեւի թէ ինձմէ աղէկ գիտէք, ըսաւ Պ. Բօլէ նեղանալով:

— Գոնէ ձեզի չափ, պատասխանեց Օկիւսթ Պըլանչէն պաղ արիւնով: Պատիւ ունեցայ ձեզի ըսելու թէ իմ սովորութիւնս է ինձի յանձնուած գործը հիմնովին քննել, հասկնալ, գիտնալ. ուստի պարտք սեպեցի յարարերութիւններ գտնել այն երկրին մէջ, ուր բնակութիւն հաստատեց ձեր եղբայրը Ֆրանսա դառնալէն քիչ ետքը: Թըղթակից մ'ունիմ Ամէլի-լէ-Պէնի մէջ:

— Օ՛, շափազանց յանդուութիւն: Ձիս լրտեսելու ելնել և երեսիս ալ ըսելու համարձակի՛ր... կը կարծէ՞ք որ ձեզի ստակ վճարեմ այդպիսի բաներու համար. որք բնաւ ձեզի չէին վերաբերիր:

— Ես բան մը չեմ պահանջեր, միայն եղերութիւնները կը ներկայացնեմ: Ձեզ կը վերաբերի անոնց հետեւութիւններն հանել:

— Կորուսեցէ՛ք ձեր հետեւութիւններուն հետ, գոչեց Պ. Բօլէ բարկութեամբ. ձեզի պէտք չունիմ հիմա, եղբայրս մեռաւ:

— Ես գիտէի:

— Դուք գիտէի՞ք:

— Այո՛, երէկուրէն է ի վեր: Գիտեմ

նաեւ թէ ձեզ զրկեց ժառանգութենէ, և իւր բոլոր ունեցածը Պիանքա Ասթրոտի թողուց:

— Պիտի ըսէք թերեւս ինձի նաեւ թէ կտակագիրը անսաք:

— Ո՛չ, ինչպէս որ դուք ալ չի տեսաք, զայն ստացող նօսարը հարկաւ դրեց ձեզի: Հետեւաբար գիտէք:

— Գիտնամ կամ ոչ, այլ ևս պէտք չունիմ ձեզի:

— Ընդհակառակն, հիմա աւելի պէտք ունիք: Ի՞նչ կուտաք ձեզի սպացոյց բերողին թէ Պիանքա Ասթրոտի մեռաւ:

— Ի՞նչպէս կը համարձակիք ինձի ըսել թէ այդ աղջիկը մեռաւ: Կը ծաղրէք զիս: Քիչ մ'առաջ կ'ըսէիք թէ Փարիզ եկած է:

— Է՛հ, բայց Փարիզի մէջ ալ կը մնանի մարդ ինչպէս ուրիշ տեղեր, պատասխանեց Պըլանչէն հեղուութեամբ:

— Ապացոյց ունի՞ք:

— Ունիմ և պատրաստ եմ ձեզի տալու, բայց ոչ ձրի:

— Շատ ախմար պէտք է ըլլամ որ ձեզի ստակ վճարեմ, երբոր ձեզի պէտք չունիմ իմանալու համար:

— Փորձեցէ՛ք:

— Բաւական է ինձի Փարիզի թաղապետութեանց տոմարներէն ստուգել:

— Ազատ էք, բայց պէտք է գիտնաք որ մեռնողները շատ անգամ չեն արձանագրուեր իրենց բուն անունով:

— Եթէ այդ Ասթրոտին ալ ուրիշ անունով արձանագրուած է, ի՞նչպէս կրնաք անոր մեռած ըլլալը հաստատող պաշտօնագիր մը բերել ինձի:

— Իմ գործս է:

— Եւ եթէ կարենաք իսկ բերել, ի՞նչ օգուտ կրնայ ունենալ ինձի: Եթէ այդ իտալուհին ժառանգած է, անկէ ալ իւր պղտկան ժառանգորդներուն կը մնայ:

— Անշուշտ: Բայց ո՞ր օր մեռաւ Պ.

Ֆրանսի Պօայէ:

— Չորեքշաբթի ժամը երեքին:

— Եթէ Ասթրոտի երեքշաբթի օրը մեռած էր, այն ժամանակ ի՞նչպէս կ'ըլլայ:

— Բան մը չըլլար:

— Ես կը կարծէի, պարոն, թէ աւելի լաւ գիտէիք օրէնքը:

— Կարծեմ թէ ինձի օրէնսգիտութիւն դատ տալու չէք ելներ: Եւ ես ժամանակ չունիմ կորսնցնելու: Ըսելիքնիդ պարզապէս խօսեցէք և լինայ:

— Իմ ալ ուղածս այդ է: Մէկուն ժառանգ ըլլալու համար, պէտք է ասորիլ անկէ ետեւ, այնպէս չէ՞:

— Անշուշտ:

— Ուրեմն մեռեալի մը վրայ եղած կտակը ոչինչ է:

— Տարակոյս չկայ, բայց...:

— Օրէնքն ալ էր վճռած է այնպիսի կտակը: Հետեւապէս չեղեալ կը համարուի, և կտակեալ ինչքը բնական ժառանգներուն կը մնայ:

— Վստա՞հ էք ձեր այդ ըսածին վրայ:

— Բացարձակապէս վստահ: Եթէ կը կասկածիք, հարցուցէք ձեր նօսարին կամ ուրիշ իրաւագէտի մը:

— Այսինքն եթէ այդ աղջիկն եղբորմէս օր մ'առաջ մեռած է...:

— Օր մը կամ ժամ մը, միեւնոյն է:

Չի կրնար ժառանգել, եթէ կտակին բացուելէն առաջ մեռնի: Պարզապէս թուականի խնդիր մ'է, զոր լուծելու համար բաւական է երկու մահուան պաշտօնագրերը տեսնել: Չեր եղբոր մահուան պաշտօնագիրը կրնաք ստանալ էրբ ողէք, եթէ չէք ստացած արդէն: Կը մնայ տեսնել թէ կ'ուզէ՞ք Պիանքա Ասթրոտի մահուան պաշտօնագիրն ալ ձեռք անցունել:

— Ըսել է թէ զայն ինձի վաճառելու եկած էք:

— Այո՛:

— Գիտէ՞ք, Պ. Պըլանչէն, թէ զարմանալի ասուտուր մ'ընելու ելեր էք:

— Այս աշխարհի մէջ ամէն մարդ կրցածը կ'ընէ: Եթէ ձեզի պէս կալուածատէր ըլլայի, ժառանգութեանց առուտուրով չէի գրադեր: Բայց այս ալ արհեստ մ'է ուրիշ արհեստներու պէս և յաճախորդներս երբէք դժգոհ եղած չեն ինձմէ: Դուք ալ, պարոն, գոհ պիտի ըլլաք, եթէ, ինչպէս կը յուսամ, կարենանք համաձայնիլ վասն զի իմ միջոցովս գեղեցիկ հարստութեան մը տէր պիտի ըլլաք, բաղդատաբար փոքր գումար մը վճարելով: Սա ալ չմտնանք որ դուք եկաք գտաք զիս:

— Ներեցէք. բարեկամներէս մին ըսեր էր ինձի թէ դուք ստակով հետախուզութիւններ կ'ընէք անձերու վրայ, և ձարալի մարդ էք: Ես ալ բերել տուի ձեզ, և յանձնարարեցի տեղեկութիւն ստանալ Պարթօլուէա Ասթրոտի անուն կնկան մը վրայ... բայց ժառանգութեան վերաբերեալ խօսք մը չըրի ձեզի:

— Այո՛, այդպէս է. բայց ես կատարեալ աւանակ մը պէտք էր ըլլայի չզուշակելու համար թէ ժառանգական գործի մը համար էր: Ուստի սկսայ տեղեկութիւն հասաքել այն ժառանգութեանց վրայ, զորս կրնայիք ստանալ բնականապէս կամ պատահաբար: Եւ այսպէս կրցի հասկնալ ձեր եղբոր և ձեր կացութիւնը:

— Եթէ զիտնայի ձեր այդ ընթացքը, չ'ի գործ յանձնել ձեզի:

— Այդպէս ըսել հաճոյ կը թուի ձեզի հիմա: Եւ կը ներէք որ ես ալ հակառակը խորհիմ, և յիշեցնեմ ձեզի այն խօսակցութիւնը զոր ունեցայ ձեզի հետ... ոչ առաջինը, այլ երկրորդը: Վասն զի դուք զիս երկու անգամ քննուցիք: Մեր վերջին տեսակցութեան մէջ երբ կը հարցնէի ձեզի թէ ի՞նչ

պէտք էր ընէի եթէ ստուգէի թէ Պարթ-
թորովէա Ասթրոտի գաւակ մը ունեցեր
էր, պուռացիք թէ այդպիսի գաւակ մը
եթէ կար, փափաքելի էր որ մեռ-
նէր:

—Կը յուսամ թէ չպիտի յանդգնիք
ըսել թէ դայն սպաննելու պաշտօն
յանձնեցի ձեզ:

—Օ՛, ըստ Պլանչլէն ուները անկե-
լով, միթէ ձեզի պէս մարդ մ'այդպի-
սի յանձնարարութիւն մը կ'ընէ՞ իւր
գործակատարին. իդձ կամ բողձանք
մը միայն կը յայտնէ. դուք ալ այն-
պէս ըրիք: Կէտ առ կէտ կը յիշեմ
ձեր խօսքը. «ով որ լուր բերէ ինձի
թէ այն իտալուհիին ծնած դաւակը մե-
ռեր է, ուրախաւի՞թ աւետիս մը տուած
կ'ըլլայ ինձի»: Քաջ կը յիշեմ նաև իմ
տուած պատասխանս թէ «բարի լու-
րերը սուղ կը վճարուին: Դուք ալ պա-
տասխանեցիք թէ «ես գիներ չեմ խնա-
յեր»:

—Դուք զարմանալի յիշողութիւն
մ'ունիք, պարոն, մըմնջեց Պ. Բօլէ շը-
փոթելով: Կը տեսնեմ որ ձեզի հետ
գործ ունեցողը պէտք է զգուշութեամբ
կռէ իւր խօսքերը:

—Նմանապէս գրածը: Չեմ ծածկեր
ձեզնէ թէ ինամով պահած եմ ձեր ին-
ձի գրած մէկ նամակը, որ մանրամասն
հրահանգներ տուած է ինձի: Կը պա-
տուիրէր որ եթէ Պարթովէա Ասթ-
րոտի գաւակ մը թողած ըլլայ, հաս-
կընամ թէ ի՞նչ եղեր էր այն գաւակը,
և երբ ինանամ, ամէն ջանք ընեմ թող
չտալու համար որ Ֆրանսա գայ: Կա-
ւեցնելիք նաև որ եթէ զիպուածով
Ֆրանսա եկած է. և տակաւին հոն
կը գտնուի, ամէն միջոց ի գործ դնեմ
որպէս զի հոն չի մնայ. կը հասկնա՞ք
ինչ ըսել է «ամէն միջոց ի գործ դը-
նել»:

—Ստորագրելի միջոցներ ըսել կ'ու-
զէի, գոչեց Պ. Բօլէ: Թեև չաւելցու-

ցի այդ բառը, ստիպյն ինքնին կը
հասկցուէր: Պարկեշտ մարդիկ երբէք
չեն գիտեր անխոստովանելի միջոցնե-
րու, և ես ալ սպարկեշտ մարդ եմ:

—Տարակոյս չունիմ: Բայց ոչ նուազ
ճշմարիտ է նաև թէ դուք ինձի բա-
ցարձակ իշխանութիւն տուիք մէջտե-
ղէն վերցնելու այդ աղջիկը, որ արգելք
կ'ըլլար ձեր ժառանգութեան:

—Ես մէջտեղէն վերցնել ըսած չեմ
երբէք. . . : Զորմանալի կերպով կ'ընա-
րէք ձեր գործածած բառերը:

—Ես կ'ընտրեմ այն բառերը որք
լաւ կը բացատրեն միտքս:

—Ուրեմն կը պահանջեմ որ բացատրէք
ձեր միտքը: Զեզ խողը կը հետևեցնէ
պարզապէս թէ դուք սպաննեցիք այդ
աղջիկը, և հիմա կը ջանաք զիս մեղ-
սակից ցուցնել ձեզի:

—Չափազանց հեռու կ'երթաք, ը-
սաւ Պլանչլէն: Ես մարդ մեռցուցած
չեմ, կը խնդրեմ որ հաւատաք: Ես
ուզեցի միայն ցուցնել ձեզի թէ ա-
ռանց հրամանի գործած չեմ, և թէ
ձեր հաշուին համար աշխատած եմ:
Արդէն ինքնին ալ կը հասկցուի: Ես
անձնապէս շահ մը չունէի Պարթովու-
մէա Ասթրոտի աղջկան անհետացման
մէջ:

—Անհետացման, անհետացման,
հաճո՞յք կը զգաք այդպիսի երկդիմի
բառեր գործածելուն մէջ:

—Ի՞նչէն երկդիմի: Աղջիկը մեռաւ:
Երբ մէկը կը մեռնի, բնականաբար
կ'անհետանայ:

—Բայց ի՞նչպէս մեռաւ:

—Եթէ ըսեմ, դուք կ'ընաք զիս նե-
տել ձեր գլխէն, ես ալ այդ չեմ ու-
զեր: Ես բուական յոգնութիւն կրեցի,
որպէս զի պատշաճապէս վարձատրէք
զիս: Մտածեցէք անգամ մը թէ ո՞րչափ
գործ կատարեցի ամիսէ մը ի վեր:
Երկու երեք խուզարկութիւն մէկէն

ւրի և յաջողութեամբ գուլի հանեցի:
Խուզարկութիւն Պիանքայի մօրը՝ հան-
գուցեալ Պարթովէայի վրայ, խու-
զարկութիւն ձեր կիսեղբոր Պ. Ֆրան-
սի Պոայէի վրայ:

—Օ՛, այդ վերջինին համար գոհու-
թիւն մը չունիմ ձեզի յայտնելիք, ըսաւ
Պ. Բօլէ:

—Ես շնորհակալութիւն չեմ սպասեր
ձեզնէ, պատասխանեց Պլանչլէն հեզ-
նոտ քաղցրութեամբ, միայն կ'առա-
ջարկեմ ձեզի որ Պիանքա Ասթրոտի
մահուան վկայագիրը գնէք ինձմէ:

—Կը հասկնամ, ամէն մտածութիւն
ընելէ ետեւ կը մերժեմ ձեր այդ ա-
ռաջարկը:

—Ազատ էք, սիրելի՛ պարոն: Կըր-
նա՞մ խնդրել ձեզմէ որ այդ մերժման
պատճառը յայտնէք ինձի:

—Հարկ չկայ. որովհետեւ այդ վը-
կայագիրը բոլորովին անօգուտ է ին-
ձի:

—Ըսել կ'ուզէք թէ դայն ձեռք ան-
ցունելու համար պէտք չունիք ինձի:

—Ընդհակառակն կ'ընդունիմ որ
չպիտի կրնամ առանց ձեզի ստանալ
դայն, մինչեւ իսկ չեմ ուզեր փորձել:

—Ուրեմն կը հրաժարիք ձեր եղբոր
ժառանգութեանէն: Աւասիկ անշահատի-
րութիւն մը, որուն իմ իսկըս չի հաս-
նիր:

—Ներեցէք, կտակընկալը մեռած է,
այնպէս չէ:

—Մեռած ու թաղուած:

—Ըսել է թէ չի պիտի գայ պահան-
ջէ իւր ժառանգութիւնը:

—Ոչ: Բայց եթէ դուք պահանջէք
ձեր բաժինը, չեն տար: Կտակագիրը
տեղւոյն դատարանին նախագահին
յանձնուած է, և ընական ժառանգնե-
րը չեն կրնար ժառանգութիւնը ձեռք
անցունել, մինչեւ որ Պիանքա Ասթրո-
տի մեռած ըլլալը չսպացուցուի վա-

ւերական վկայագրով: Խնամակալ մը կը
կարգուի որ կը մտաակարարէ կտակ-
եալ հարստութիւնը մինչեւ որ ներկա-
յանայ կտակընկալը կամ անոր մահ-
ուան վկայագիրը. . . եւ այդ հարստու-
թիւնը շահու կը դրուի մշտնջենապէս,
և կը բազմապատկի. վասն զի մարդու
մը ձեռք չանցնիր: Միտիթարութիւն
մ'է այս արդարեւ, բայց շատ նիհար:
Կրնաք ըսել թէ երսուն տարի ետքը
ձեր իրաւունքը կ'ըլլայ, բայց ձեր
թոռներուն կ'անցնի. . . վասն զի հա-
ւանաբար դուք չուած կ'ըլլաք ա-
խարհէս, թերեւս իսկ ձեր օրիորդ
աղջիկն ալ:

—Քաւակա՞ն է, գոչեց Պ. Բօլէ՝
չդիմանալով այս անհերքելի խորհր-
դածութիւններուն: Ի՞նչ կ'ուզէք ինձ-
մէ այդ վկայագիրն տալու համար:

—Վերջապէ՛ս, գոչեց Պ. Պլանչլէն,
իրաւունք կը հատկեաք, և պիտի կըր-
նանք համաձայնիլ վասն զի ես արդար
պայմաններ պիտի առաջարկեմ ձեզի,
և իմ պահանջումներս շատ չափաւոր
են:

—Յայտնեցէք ուրեմն, ըսաւ Պ. Բօ-
լէ դժգոհ դէմքով մը:
—Շատ աղէկ: Ձեր եղբայրը մէկ
միլիոն երկու հարիւր հազար Ֆրանքի
չափ հարստութիւն կը թողու:

—Աղկէ շատ պակաս:

—Աներկրայ եմ որ յիսուն հազար
իսկ սխալ չեմ ըսեր: Իմ տեղեկու-
թիւններս լաւ աղբիւրէ են:

—Ամէն պարագայի մէջ, այդ հա-
րստութեան կիսուն վրայ միայն իրա-
ւունք ունիմ:

—Գիտեմ: Միւս կէտը հօրը կողմին
ժառանգներուն միայն կ'իյնայ, որով-
հետեւ Պ. Պոայէ մօրը կողմէ միայն
եղբայր է ձեզի:

«Մինչեւ իսկ, չի մոռնամ ըսել, այդ
ժառանգներուն հետ ալ գործ պիտի

ունենաք, որք ձեզի չափ շահ ունին կտակընկալին մեռած բլլալը ապացուցանելու: Ես անոնց վրայ չի դեղեցայ, և չի պիտի դեղալիմ: Բայց դուք կրնաք, անոնց հետ համաձայնելով ձեր ինձի վճարելիք վարձուն մէկ մասըն ստանալ անոնցմէ. վասն զի արդարութիւնը կը պահանջէ որ կէսն անոնք վճարեն:

— Թերեւս, մրմնջեց Պ. Բօլէ. բայց անցնինք... Թիւ մը ըսէք:

— Կրնամ կէսը պահանջել, բայց կը շատանամ հինգերորդովը, այսինքն հարիւր հազար ֆրանքով...: Կը տեսնէք որ ես նուազագոյն մասին վրայ կը հաշուեմ, վասն զի ձեր եղբայրը վեց հարիւր հազար ֆրանքի մօտ կը թողու ձեզի:

— Հարիւր հազար ֆրանք, երեսունի՞ք ինձմէ հարիւր հազար ֆրանք պահանջելու: Աւելի կը սիրեմ ամենէն հրաժարիլ քան թէ ձեզի տալ:

— Ձեր գիտնալիք բանն է, պարոն, պատասխանեց Պրլանչէն պազ կերպով: Ես իմ աշխատութիւններս կորուսած պիտի ըլլամ, դուք ալ հարստութիւն մը:

Պ. Բօլէ՛ բարկութեան շարժում մը ընելով՝ սկսաւ մեծ քայլերով ձեմել սենեակին մէջ:

— Ես չեմ աշխատիր ձեզ համոզելութէ անիրաւ էք, յարեց գործակատարը, միայն կը յորդորեմ ձեզի որ վերջնական որոշում մը ընելէ առաջ լաւ մտածէք, վասն զի եթէ առանց համաձայնութեան մը յանգելու մեկնիմ ասկէ, մէկ մ'ալ ոտք չեմ կոխեր հոս, գիտցած եղիք: Ես չուտով լմբնցող գործերը կը սիրեմ, և ժամանակ չունիմ կորսնցնելիք: Ձեզի համար տեսած գործս այս իրիկուն պիտի ջրնջեմ տուամարէս, և եթէ վաղը զիս կանչէք, չի պիտի շարժիմ տեղէս:

— Բայց վերջապէս, պարոն, ըսաւ Պ. Բօլէ կանգ առնելով մէկէն, այդ հարիւր հազար ֆրանքն այսօր ստանալու պահանջում չունիք կարծեմ:

— Ո՛չ, վասն զի աղջկան մեռած ըլլալուն վկայագրին պատճէնը վրաս չէ: Երբ բերեմ ձեզի տամ դայն, այն ժամանակ կը վճարէք. կամ մանաւանդ... տեսէք ս'ըջափ ուղղամիտ եմ... երբ ձեր ժառանգութիւնը ձեռք անցունէք:

— Այդ հիման վրայ կրնանք համաձայնիլ, եթէ...:

— Բայց ես գրաւոր խոստում մը կ'ուզեմ:

— Ի՞նչ, կը կտակածի՞ք իմ վրաս:

— Ամենեւին, բայց գործերը գործ են: Ո՛վ կ'ապրի, ո՛վ կը մեռնի, մարդ չգիտեր: Եթէ դիպուածով դուք բան մ'ըլլաք այս գործին կարգադրուելէն առաջ, ի՞նչպէս պիտի համարձակիմ Սը. Բօլէէն պահանջել իրմէ չկնքուած դաշնագրի մը գործադրութիւնը:

— Պէտք է որ գիտնամ նաեւ ձեր խնդրած դաշնագրին ձեւը. քանի որ այդ անունը կուտաք անսովոր պայմանագրի մը:

— Բաւական է որ ապօրէն չըլլայ: Պարզապէս պիտի գրէք դրոշմաւոր թուղթի մը վրայ թէ՛ իփոխարէն ձեր հրամանով կատարուած ձեռնարկներու, կը պարտիք ինձի հարիւր հազար ֆրանք, զոր պիտի վճարէք այն օրն՝ ուր ստանաք ձեր եղբոր ժառանգութենէն ձեզի ինկած բաժինը: Ասոր մէջ բարոյականի դէմ բան մը չի կայ: Դատարանները կը վաւերացնեն ամուսնական գործակալութեանց հետ կնքուած պայմանագրերն ու պարտամուրհակները:

— Ես ալ, եթէ ստորագրեմ, դատ չեմ բանար ձեզի դէմ, մրմնջեց Պ. Բօլէ: Այս չէ՞ ուզածնիդ:

— Այո՛... պայմանէ մը դատ, զոր անտարակոյս պիտի ընդունիք, և որուն համար բուսական կը համարիմ բերանացի խոստում մը:

— Ի՞նչ է նայինք:

— Պիտի խնդրեմ որ ձեր պատույն վրայ խօսք ասք մէկու մը շխտանելու մեր այս կարգադրութիւնը:

— Օ՛, եթէ այդ է խնդրածնիդ... ես բնաւ վաւիաք չունիմ անով պարծելու:

— Առանց անով պարծելու, կրնաք ձեր բարեկամներէն մէկուն պատուել... օրինակի համար այն անձին որ իմ հոտցէս խնդրած է ձեզնէ:

— Ձեր հասցէն խնդրող անձը բնաւ հետաքրքրութիւն չունի այս գործերն իմանալու, ըսաւ Պ. Բօլէ: Իմ գործերս չեն շահագրգռեր զայն, և ես ալ չեմ յայտնէր անոր:

— Կը հաւատամ, պատասխանեց Պրլանչէն, բայց ապահով ըլլալ կ'ուզեմ:

— Կարծեմ թէ դրոշմաւոր թուղթի վրայ մուրհակ մ'ալ ասոր համար չէք պահանջեր:

— Արդէն ըսի ձեզի թէ ձեր պատուոյ խօսքը կը բաւէ ինձի:

— Դժուար բան մը չէ, կուտամ:

— Ես ալ կ'ընդունիմ ամենայն վրատահութեամբ: Կրնա՞մ հիմա խնդրել ձեզնէ ձեր այդ բարեկամին անունը, որ իմ ընտկավայրս գիտնալ կ'ուզէ:

— Ի՞նչ հարկ կայ, քանի որ չէք ձանձեր զայն:

— Բայց ուրախ կ'ըլլամ ծանօթանալով անոր: Անշուշտ իմ ծառայութեանս պէտք ունի, և ես ալ անով կ'ապրիմ: Ուստի կ'ուզեմ շտոցնել յաճախորդներս:

— Կը հասկնամ, ուրեմն գրկեմ ձեզի այդ պարոնը: Իւր մէկ պարտապանը գտնել պիտի տայ:

— Իմ մասնագիտութիւնս է այդ, և

կրցածս կ'ընեմ՝ եթէ ձեր բարեկամն ուզէ գործածել զիս: Անշուշտ վաճառական մ'է: Հասարակ մարդ մը գործակալութեան չղիմեր առնելիք գանձելու համար:

— Վաճառական չէ, նկարիչ մ'է:

— Նկարիչ, Օ՛, գիտեմ ո՛վ ըլլալը: Անցեալ իրիկուն ձեր հետն էր Բօրթ-Ալէն-Մարթէնի թատրոնը, Բօլ Յըր-նէօզ:

— Ա՛, մրմնջեց Պ. Բօլէ զարմանքով: Յարաբերութեան մէջ էք հետը:

— Յարաբերութեան մէջ, ո՛չ: Բայց ցուցացին ինձի, և յաճախ կը տեսնեմ փողոցին մէջ կամ թատրոնը: Այնպիսի դէմք մ'է, որ տեսնողը չի մտնար... Հապէս Փարիզեան դէմք մը: Մեծ տաղանդի տէր է, նոյնչափ ալ համբաւի:

— Ուրեմն աւելորդ է յանձնարարել ձեզի:

— Բողոքովին անօրուտ: Ես անձամբ անոր տրամադրութեան ներքեւ կը դնեմ զիս, եթէ իմ ծառայութիւններս կրնան օգտակար ըլլալ իրեն: Բայց մասնաւորապէս կը խնդրեմ որ դուք չի զրկէք զայն ինձի:

— Ի՞նչ պատճառով:

— Վասն զի ես չեմ հաւատար որ իտկապէս դիտաւորութիւն ունի ինձի դիմելու: Աւելիք որ նկարիչ մը, հագուազխտ բան է... և տեսնուած չէ երբէք որ նկարիչ մը պարտապանի մը ետեւէն իյնայ: Այդպիսի զաղափար մը կրնայ Ֆրընչօզի մօքէն անցնիլ, բայց գրաւ կը դնեմ որ մէկ կողմ դրած է կամ փոխած... և որովհետեւ ես ժամանակ չունիմ կորսնցնելիք, աւելի կը սիրեմ չիտանուել այնպիսի գործի մը, որ օրին մէկը թողալ հարկ պիտի ըլլայ ինձի: Ուստի կ'ազատեմ որ եթէ դարձեալ իմ հասցէս խնդրէ, ըսէք իրեն թէ մոտցած էք:

— Լաւ, կը խոստանամ որ չի տամ իրեն: Աղէկ ըրիք որ ըսիք ինձի. վասըն դի չի պիտի ծածկէի իւմէ, և հաւանական է որ մօտ օրէն տեսնեմ զինքը:

«Բայց դանք աւելի կարեւորներուն: Ե՞րբ պիտի բերէք ինձի Ասթրոտի աղջկան մեռնելուն վկայագիրը:

— Վաղը կամ վերջապէս յաջորդ օրը... Եթէ այսօր ստորագրէք իմ միջնորդէքի իրաւունքս երաշխաւորող խոստմնագիրը:

Եւ տեսնելով որ Պ. Բօլէ չէր փութար գրիչը ձեռք տունելու և խոստմնագիրը գրելու, Պլանչէն աւելցուց.

— Ի՞նչ կը վախնաք: Զեզի առաջարկած գրութիւնս ո և է երկդիմութեան կամ կասկածի անդ չի թուլուր: Դուք ձեր ժառանգութիւնը ձեռք անցունելէ ետե պիտի վճարէք ինձի:

«Մեր մէջ հնար չէ թիւրիմացութիւն... ոչ ալ որ և է դժուարութիւն: Երկուքս ալ շահակից ենք, և դիւրաւ պիտի կարգադրենք մեր շահերը, երբ հասնինք մեր նպատակին... և այդ երջանիկ ժամը չպիտի ուշանայ: Մինչև երկու օր կարող պիտի ըլլաք հաստատելու թէ Պ. Ֆրանսի Պօայէյ կը տակընկալ աղջիկը մեռած էր կտակին ստորագրոտած ժամանակը. եւ ամիս մը չի քշեր, պիտի տիրանաք ձեր ժառանգութեան բաժնին:

Այս յուսալից յայտարարութիւնն յաղթեց Պ. Բօլէի դժկամակութեան: Նստաւ դրասեղանին առջև, դարակ մը բացաւ, և դրոշմաւոր թերթ մը առնելով՝ Պլանչէնի առաջարկած ձեռով խոստմնագիր մը գրեց տուաւ անոր: Ան ալ ուշադրութեամբ կարդալէ ետեւ իր թղթապատնակին մէջ դրաւ յայտնի զոհուծակութեամբ:

— Ա՛լ ուրիշ բան չի մնար ինձի բայց միայն մնաք բարով ըսել ձեզի, և ա-

ղաչել որ հրամայէք ձեր ծառաներուն՝ ընդունիլ զիս երբ դամ ձեզ տեսնելու: Կը յուսամ որ աղջկան մեռնելուն վերջապէս վաղայաջորդ օրը կը յանձնեմ ձեզի կէս օրէն առաջ: Մնացեալը ձեր գործն է:

— Շատ աղէկ, կը սպասեմ ձեզի, մրմնջեց Պ. Բօլէ:

Գործակատարը մեկնեցաւ Պ. Բօլէ ալ իւր գրասեղանին քով վերադարձաւ մտախոհ. յանկարծ հիւրաբանին հետ հազորդակցող դուռը կամացուկ մը բացուելով: Օր. Մարկըրիթ սեմին վրայ երեւցաւ:

— Կրնամ՞ մանել, հարցուց մը պատելով:

— Ինչո՞ւ չէ, քանի որ մինակ եմ, պատասխանեց Պ. Բօլէ:

— Այո՞, քանի մը երկվայրկեանէ ի վեր: Ես կարծեցի թէ այն պարոնը երթալիք չունէր:

— Գիտես ուրեմն թէ մէկու մը հետ էի:

— Զեզ տեսնելու եկեր էի, և երբ ներս պիտի մտնէի, երկու խօսակից ձայն լսելով սպասեցի:

— Գոնէ կը յուսամ որ դունէն մտիկ չըրիր:

— Ո՛չ, բայց կամ ականջս սուր է, և դուք ալ բարձր ձայնով կը խօսէիք:

— Եւ հասկցար մեր խօսակցութեան նիւթը:

— Ոչ բոլորովին, բայց անուն մը գըրաւեց ուշադրութիւնս:

— Ի՞նչ անուն:

— Պ. Բօլ Ֆրընէօզի անունը, և դարմացայ: Այդ պարուն ի՞նչ կ'ըսէր ձեզի անոր համար:

— Շատ հետաքրքիր ես, աղջիկ:

— Այ ձեր կարծածին չափ: Անշուշտ դադանիք մը չէ:

— Կը սխալիս: Այնպիսի գործերու վրայ կը խօսէինք, որք քեզի վերաբերուի չունին:

— Ուրեմն գործեր ունիք Պ. Ֆրընէօզի հետ:

— Մարկըրիթ, կը ձանձրացընես զիս, ըսէ ինձի ըսելիքը և դնա:

— Կուզեմ հարցընել ձեզի թէ չորս օրէ ի վեր զիս բանտարկելիք չի՞ պիտի վերջ գտնէ:

— Ի՞նչպէս բանտարկութիւն: Միթէ բնակարանիդ դուռը կ'ըսես զիս յիշող: Աղատ չե՞ս ուղածք ընելու, ինչպէս միշտ:

— Ինչե՞ր կ'ըսէք, հայրիկ, գիտեմ որ արգելափակ եղած չեմ, կրնամ բնակարանիս մէկ ծայրէն միւսն երթալ գալ, անդէք մը չունիմ պատուհանն ելնելու և ֆէրմ-տէ-Մաթիւրէն տնայի փողոցէն անցնող դարձողները տեսնելու: Եւ եթէ այն դրասկան տեսարանը չբաւէ զիս գրադեցնելու, կրնամ դուսելնել դատարանէն Միս Պէթսիի հետ, որ զիս Շանդ-Էլիգէ տանի պարտելու և Բիվօլի փողոցին անդրիպահան ծաղարարէն կարկանդակ ուտելու:

— Ասկէ ուելի ի՞նչ կ'ուզես, ըսաւ Պ. Բօլէ ուսերը ցնցելով. կ'ուզես որ ձաշե՞ր ստամ, կամ քեզ թատարու տանիմ, երբ ծանր սուգ մ'ունինք, դեռ շատ նոր: Եղբայրս մեռաւ, չե՞ս գիտեր:

— Ասկէ երկու հարիւր փարտախ հեռու մեռեր է, և ես բնաւ տեսած չեմ զինքը: Անշուշտ չէք պահանջեր ինձմէ որ տրամիմ, և իրաւունք ունիք, վասն զի չեմ կրնար կեղծել չունեցած զգացումս:

— Կը հասկնամ... ես իսկ ինքզինքս հարկադրեալ չեմ կարծեր որբալու այդ դժբաղդ Ֆրանսին, որ տարիներէ ի վեր անունս չէ տուած, և այժն ջանք բրած է իւր ժառանգութեանէն զիս զբրկելու: Բայց բնկերական պատահութիւններ կան, որոցմէ խուսափիլ կարելի չէ:

— Մ' ես չեմ խնդրեր ձեզնէ երեկոյթներու երթալ: Կը տեսնէք որ ես ալ սովորութեան յարմարեցայ, ոտքէս մինչեւ գլուխս սեւերը մայր: Բայց սովորութեան հետ հաշտուելու ձեւեր ալ կան: Օրինակի համար չեմ կարծեր որ մեր բարեկամները տեսնելու երթալն ալ արգելուած ըլլայ:

— Անշուշտ ոչ: Միայն թէ... չէի գիտեր՝ որ իմ բարեկամներս կրնան ըզբօսցնել քեզ:

— Արդարեւ շատ բարեկամներ ունիք որք բնաւ չեն կրնար հաճոյք պատճառել ինձի: Բայց կը թուէր ինձի թէ անցեալ իրիկուն Բորթ-Սէն-Մարթէնի թատրոնին մէջ Պ. Բօլ Ֆրընէօզի խօսք աուեր էիք իւր աշխատանոցն երթալու:

— Ա՛, այդ է եղեր նպատակդ, պզտիկ խորամանկս, սկիզբէն կրնայիր անկեղծարար իմացնել ինձի քեզ տոչորող տեսչը:

— Ուրեմն անպատեհութիւն մը չէք տեսներ:

— Ո՛չ, չեմ տեսներ... այնչափ: Այդ երիտասարդը շատ բաւ է, նկարիչներու պակասութիւնները չունի... Եթէ ունենար, տունս չէի բնդուններ զինքը: Եւ որովհետեւ խօստացայ իրեն երթալ իւր աշխատանոցին մէջ զինքը տեսնել, կ'երթանք... այս քանի մը աւուր մէջ:

— Ինչո՞ւ այսօր չերթանք:

— Վասն զի վայրկեանէ վայրկեան կը սպասեմ այն նօտարին, որ եղբորս կտակն ստացած է, և Փարիզ կուգայ զիս տեսնելու:

— Ի՞նչ, այդ նօտարը Փարիզ կուգայ: Ես կը կարծէի թէ Պ. Պօայէ ձեզ զրկած էր ժառանգութենէ:

— Ունեցաւ այդ դիտաւարութիւնը, բայց դէպք մը վրայ եկաւ, զոր երկար կ'ըլլայ քեզի հասկցնել, մանա-

ւանդ որ դուն չես հասկնար գործերէ . . . : Գոհ եղիր միայն գիտնալով որ գործը կարգին է : Գեղեցիկ հարստութիւն մը պիտի թողում քեզի . և չի պիտի կորսնցունես ինչպէս որ կը վախնայի՝ հորեղբորդ հարստութիւնը : Վերջապէս՝ յուսացածէս աւելի հարուստ պիտի ըլլաս , անուշիկ Մարկըրիթս , եզրակացուց Պ . Բօլէ ձեռները շփելով :

— Աւելի աղէկ . ես ալ կրնամ իմ ճաշակիս համեմատ ամուսնանալ , գոչեց աղջիկը : Ունենալիք ստակս երկուքիս ալ կրնայ բաւել :

— Իաւ , կը հասկընամ : կը նշանակէ այդ թէ դուն գլուխդ դրեր ես Բօլ Ֆրանէօզի հետ ամուսնանալ , այնպէս չէ՞ :

Մարկըրիթ կարմրեցաւ քիչ մը , բայց չի շփոթեցաւ :

— Դուք շարգիլեցիք ինձի Պ . Ֆրանէօզի վրայ խորհիլն ըստաւ :

— Ո՛չ , չարգիլեցի , պատասխանեց Պ . Բօլէ . կրնաս իսկ աւելցընել թէ այդ երիտասարդին ըրած ընդունելութեամբս հակըցուցի քեզի թէ անհաճոյ չըլլար ինձի քեզ անոր տալ . . . եթէ խնդրէ :

— Պիտի խնդրէ , հայրիկ :

— Ի՞նչպէս կրցիր այդպէս լաւ հասկընալ անոր դիտաւորութիւնը . . . Ա՛ , միտքս եկաւ . . . անցեալ իրիկուն , թատրոնին մէջ ձեզ երկուքդ պահ մ'առանձին թողուցի . ան ալ իմ բացակայութեանէս օգուտ քաղելով՝ միտքը յայտանց քեզի : Աւելի լաւ կ'ընէր ինձի դիմել նախ . . . ինչպէս որ օրէնք է . . . : Բայց նկարիչներն իրենք գիրենք ոգտաւ կը համարին ուրիշներուն պէս չընելու .

— Բայց , հայրիկ , հաւատացէք որ Պ . Ֆրանէօզ ամենափոքր յայտարարութիւն մը չըրաւ ինձի :

— Աւրեմ ի՞նչպէս կրցիր դիտալ անոր միտքը :

— Կին չէի ըլլար եթէ չկրնայի գուշակել :

— Եւ դուն ալ քաջալերեցիր կինքը , այնպէս չէ՞ :

— Քաջալերել , ո՛չ . այնչափ սոսաջ չէի կրնար երթալ , բայց չվհատեցուցի ալ :

— Ըսել է թէ կը սիրես զայն :

— Հաւած եմ իրեն , մրմնջեց Մարկըրիթ աչերը խոնարհեցնելով :

— Այդ պատասխան չէ , ըսաւ Պ . Բօլէ , որ չէր սիրեր երկդիմի խօսքերը : Չարմանալի են այս աղջիկները . երբ ամուսնութեան խօսք կ'ըլլայ իրենց , անմիտ կը ձեռնան , և խելացի խօսք մը չկրնար աւնտել իրենց բերնէն : Օ՛ն , բացորոշ կերպով ըսէ , կը սիրե՞ս Ֆրանէօզը թէ ոչ :

— Բուն ճշմարտութիւնը կ'ուզէ՞ք , հայրիկ , հարցուց Մարկըրիթ քիչ մը վարանելէ ետեւ :

— Անշուշտ , որո՞ւ պիտի ըսես եթէ հօրդ չըսես :

— Չեմ գիտեր թէ կը սիրե՞մ թէ չեմ սիրեր :

— Աւատիկ նոր բան մը , շատ դարձունալի : Կարելի՞ բան է որ դուն չի գիտնաս քու պագուսներդ :

— Թերեւս արտառոց բան է , բայց այսպէս է : Կը հարցընէք ինձի թէ կը սիրե՞մ . . . : Պէտք էր նախ բացատրէիք ինձի թէ՛ ի՞նչ կը հասկնաք «իլել ըսելով» :

— Ա՛ , կ'ուզես որ այդ նիւթերուն վրայ դատախօսութիւն ընեմ քեզի . . . : Ըսէ ինձի վերջապէս . կը յօժարիս ամուսնանալ Բօլ Ֆրանէօզի հետ :

— Այո՛ , կը յօժարիմ : Եւ այն ամէն մարդոցմէն զորս ներկայացուցած էք ինձի , Բօլ Ֆրանէօզը միայն կ'ընդունիմ ամուսին :

— Աւատիկ բացորոշ խօսք մը , գոչեց Պ . Բօլէ ձիծաղելով : Չէր արժեք

այնչափ ձեւեր գործածել սիրող ինձի բանալու համար : Դուն այդ երիտասանդն ընտրեցիր առանց ինձի հարցնելու . բայց չեմ մեղադրեր քեզ այդ ընտրութեանդ համար : Ես պայն սունս ընդունելէս ի վեր ուշադրութեամբ քննեցի , տեղեկութիւններ աւելրան , և հիմա որ աղէկ կը ճանչեմ , կը կարծեմ որ կրնայ քեզի յարմարիլ :

«Հարստութիւն չունի . հայրը բան մը չէ թողած իրեն . . . բայց շատ ստակ կը վաստակի , և գիտեմ որ իր վաստակածը չի մսխեր : Մանջու մը համար շատ աղւոր բան է խնայողութիւնը : Խելօքութեան երաշխաւորութիւն մ'է , և երբ մարդ անոր պէս վարուի , լաւ ամուսին , լաւ հայր կ'ըլլայ : Ես համադրած եմ որ քեզ երջանիկ կ'ընէ :

— Ստակը չէ երջանիկ ընողը , ըսաւ Մարկըրիթ կամայ մը :

— Ո՛չ միշտ , բայց դօրեղասպէս կը նպաստէ , պատասխանեց հայրը որ դործնական մարդ էր : Արդէն այս կէտին վրայ խնդիրը լուծուած է : Քու օժիտովդ և Բօլ Ֆրանէօզի վաճառած նկարներուն արդիւնքովը բաւական հարուստ կ'ըլլաք : Ֆրիլեքսպէս ալ հաճելի պէտք է ըլլայ քեզի , վասն զի աղւոր երիտասարդ է , խելացի և քաղաքավար ալ է : Կը մնայ միայն գիտնալ թէ ընտրութիւնը կը յարմարի՞ քեզի :

— Ի՞նչպէս կրնամ գիտնալ , ո՛չ ես անոր ընտրութիւնը գիտեմ , ոչ ալ ան իմ գիտէ :

— Եւ սակայն քանի՞ քանի անգամ տեսած էք զիրար :

— Ընկերութեանց մէջ , այո՛ . բայց մարդ մ'անոնց մէջ՝ չի ցուցընէր իւր սպակասութիւնները :

— Անշուշտ չի ցուցընէր : Եւ սակայն ամուսնութիւններն ուրիշ կերպով չեն կատարուիր : Նախապէս զիրար փորձել

շատ դժուար է , պէտք է քիչ մ'ալ երեւոյթներուն նայիլ : Ես որ կը խօսիմ քեզի հետ , մայրդ վստահութեամբ սուի , առանց երկար բարակ քննութեան , բայց չի զզջացի : Հարսնիքէն առաջ տասն անգամ իսկ տեսած չէի զինքը , մինչ դուն . . . :

— Ես աւելի պահանջկոտ եմ , կ'ուզեմ հիմնովին ճանչել ամուսինս . . . անոր կենացը մէջ մտնել :

— Ա՛ , կը սխալիս , եթէ դիւրին կը կարծես :

— Ամենապարզ միջոց մը կայ :

— Ի՞նչ է , կը սիրեմ գիտնալ :

— Մոռցա՞ր որ Պ . Ֆրանէօզ իմ պատկերս հանել առաջարկեց ինձի :

— Ո՛չ , բայց չեմ տեսներ . . . :

— Պատկեր մը մէկ օրուան մէջ չի նկարուիր , շատ նիստերու կը կարօտի : — Իաւ :

— Եթէ իւր աշխատանոյը երթամ , կը գիտնամ նաեւ անցած դարձածը :

— Բայց ես կ'ենթադրեմ թէ Բօլ Ֆրանէօզի աշխատանոցին մէջ որ և է անպատշաճ բան չի գործուիր : Եթէ հակառակը խորհէի , դուռս կը գոցէի այդ երիտասարդին : Լսե՞ր ես որ անկարգ կեանք մը կը վարէ :

— Ո՛չ , բայց դիտեմ որ տխարներ կ'ընդունի :

— Քնականաբար : Կ'երեւի որ նկարելու համար անհրաժեշտ են :

— Այս օրերս , օրինակի համար՝ դուստտի աղջկան մը պատկեր կը նկարէ :

— Ար այժեր կ'արածէ . դարձանալի նիւթ մը , ինչո՞ւ համար սագեր արածող մը չէ ընտրեր հոն եղած տոներ : Այս նկարիչները արտառոց դազափարներ ունին : Բայց քեզի ի՞նչ վնաս կայ աղկէց :

— Կ'երեւի որ այդ պատկերին իբրև տխար ծառայող խալուհին հրաշայի դեղեկութիւն մ'ունի : Պ . Ֆրանէօզ

սքանչանքով խօսեցաւ ինձի անոր վրայ :

— Ի՞նչ, սիրահարած է անոր ըսել կ'ուզես :

— Ո՛չ, այդ չեմ բեր, բայց հետաքրքիր եմ տեսնելու :

— Կը յուսամ որ իրեն ծանօթանալ չէ միտքդ : Այդ չլիկները, որ նկարիչներու աշխատանոցներու մէջ ինքզինքնին վարձել տալու համար Փարիզ կուգան, յանձնարարելի արարածներ չեն, և ես կը սիրեմ հաւատալ, որ եթէ Ֆրենէօզ քու պատկերդ քաշել սխի, այդ այծարածուհին չես տեսներ իւր աշխատանոցին մէջ :

— Ես ալ այդպէս կը կարծեմ, բայց բան մը չապացուցաներ այդ . . . ընդհակառակն :

— Ա՛յ, նախանձո՞ւ ես արեմն, ես այդ պակասութիւնը չէի գիտեր :

— Վասն զի մինչեւ այսօր երբէք առիթ չեմ ունեցած ցուցնելու : Ամէն մարդ մէկ էր ինձի համար :

— Եւ հիմա այնպէս չէ, հատ մը կայ որ քեզ կը դրաղեցնէ : Ազոր ըսելիք չունիմ, քանի որ գայն ինձի փետայ ընդունելու միտք անիմ : Բայց ճշմարիտն ըսելով, նախանձոտութիւնը քիչ մը կանուխ եկեր է վրայ : Գոնէ սպասէ որ ամուսնանաս :

— Մէկը շարգիւր միտք, պատասխանեց Օր . Բօլէ ժպտելով : Ի՞նչ ընեմ, այսպէս եմ, չեմ կրնար գիտ փոխել : Գիտեմ թէ սովորութիւն չէ որ աղջիկ մը իւր ամուսնութեան առնելիք մտքուն առաջուան կեանքը իմանալու գրադի : Բայց ես կ'ուզեմ իմանալ, և կը կարծեմ թէ իրաւունք ունիմ :

— Սկզբունքով չունիս, բայց հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչ միջոց պիտի գործածես նպատակիդ հասնելու համար : Պէտք է թռչնիկ մ'ըլլալ մար-

դու մը վրայ հսկելու համար՝ առանց նշմարել տալու . . . բայց թռչնիկներն ալ չեն մտներ նկարիչներու աշխատանոցը : Կը կարծե՞ս թէ պիտի կրնաս ճիշդ գաղտնար մը կազմել Ֆրենէօզի վարուց ու բարուց վրայ, երբ անոր բնակարանը տանիմ քեզ :

— Թերեւս, ես սուր աչեր ունիմ, կրնամ շատ բաներ տեսնել, որք կը վրիպին ձեր տեսութենէն : Օրինակի համար եթէ իտալուհին հոն տեսնենք, իսկոյն կը հասկնամ թէ նկարիչն իր լոկ տիպո՞ր կը գնահատէ զայն :

— Ես վստահութեամբ կը պատատրանեմ թէ այն կարմիր վտուակով փողոցաշրջիկները չեն կրնար հրատարակ ճաշակի տէր երիտասարդ մը : Եւ ամենէն ունելի նկարիչները չեն բռնուիր անոնցմէ . վասն զի շատ տեսած են :

— Սակայն պատահած է : Գուք չըսի՞ք ինձի թէ հօրեղբայրս . . .

— Ինչ հօրեղբայրդ բան մը չէր ընել ուրիշներուն պէս :

— Կուզեմ ապահով ըլլալ որ Ֆրենէօզ ալ չընէ անոր պէս . . . Եւ ասոր համար պէտք է նախ գիտնամ թէ Սպիրիդի այծարածուհին Ֆրենէօզի ըսածին չափ աղւո՞ք է :

— Հա՛ւ, բայց կ'զգուշանայ մեր հոն եղած ժամանակ զայն կոչելէ, և իրաւունք ունի :

— Ժիշդ ազոր համար է որ կ'ուզեմ յանկարծ վրայ երթալ : Գիտէ որ դուք ձեր եղբայրը կորուսիք, կը մտածէ թէ դուք ժառանգական գործերով գրազած էք, հետեւաբար չի սպասեր ձեր այցելութեան :

«Այսօր գեղեցիկ օդ մը կայ որ շատ յարմար է նկարելու . հարկաւ չի կորսնցներ առիթը և կ'աշխատի որպէս զի ժամ մ'առաջ աւարտէ իւր նկարը, որ ուշ մնացած է, վտան զի ստոնը մայիս լին պիտի բացուի :

«Տարակոյս չունիմ որ տիպարը հոն է, և աշխատութեան ալ ժամն է : Այնպէս որ եթէ ուզէք, պտոյտ մ'ընելու կ'եղնենք, և իբր թէ դիպուածով Բիկա : Հրապարակը կ'երթանք :

— Եւ վեր ելնելով ընտանեբար կը զարնենք աշխատանոցին դուռը : Քիչ մը անձախ չըլլա՞ր մեր բնթացքը : Նախ կրնայ դուռը չի բանալ իրաւամբ, առաջուրն է իմացուցած չըլլալնուս պատճառաւ : Լսած եմ նաև թէ նկարիչները դուռերնին չեն բանար երբ տիպար մ'ունենան իրենց առջեւ, վախնալով որ դիւրքը կ'արուի :

— Ադոր ճարը կայ : Երբ դրանն առջեւ հասնինք, ես բարձր ձայնով կը խօսիմ ձեզի, Ֆրենէօզ կը ճանչէ իմ ձայնս, և վրձինները վար կը դնէ մեզ ընդունելու համար : Եթէ մեզ դուրսը թողու, չեմ ներեր ըրածը :

«Որոչուեցաւ, այնպէս չէ՞, սիրելի հայրիկս, կը տեսնէք ահա որ ես պատրաստ եմ դուրս ելնելու . միայն փողոյս դնել և թիկնոցս վրաս առնել կը մնայ : Զեզի ալ նոյնպէս :

— Եւ գաւառէն եկող նոտա՞րը, որուն վայրկեանէ վայրկեան կ'սպասե՞մ :

— Նօտա՞րը, կրկնեց Մարկըրիթ արհամարհանքով :

— Այո՛, նօտարը, ըսաւ Պ . Բօլէ, եղբօրս կտակին պատճէնը պիտի բերէ ինձի, և անհամբերութեամբ անոր գալուն կ'սպասեմ : Ինձի ուղղած հեռագիրները շատ համառօտ ըլլալով աղէկ չեն հասկցուիր : Բանի մը ֆրանք պահաս վճարելու փոյթ : Այդ գաւառացիներն աւանակ են :

— Ես կ'ընեմ որ եթէ այսօր Փարիզ հասած ըլլար, արդէն եկած էր հոս : Ծոյկեկատքն առտու իրիկուն կը հասնին, և այդ նօտարն եթէ այս առտու չեկուր, ցերեկը չի կրնար գալ հոս :

— Ընպրնթայնեք . . . բայց ես կը

կասկածիմ որ հասարակ շոգեկառքով կուգայ . . . միշտ խնայութեան համար : Այդ մարդիկը չեն գիտեր բրիտանական առածը . ժամանակը դրամ է . . . Ի՞նչպէս կ'ըսես անգղիերէն :

— Թո՛յ՛ էլ էնէ՛, հայրի՛կ : Եւ այս պատուական առածը գործադրելու համար՝ պիտի երթամ պատրաստուիմ :

«Եթէ այդ մարդը մեր բացակայութեան միջոցին հոս գայ, ձեր սենեկապան ծառան թող զայ գտնէ ձեզ : Ասոր համար ուրիշ բան չունիք ընելիք, բայց միայն պատուիրել և Պ . Ֆրենէօզի հասցէն տալ :

— Գէշ գաղափար չէ : Այս կերպով կրնամ առանց անպատեհութեան ժամ մը բացակայ գտնուիլ :

— Երկուք ալ, ըսաւ կամացուկ մը օրիորդ Բօլէ, որ աշխատանոցին այցելութիւնն երկու ժամ տեսել տալու միտք ունէր :

— Բայց, ըսաւ հայրը, ի՞նչ պատուակ պիտի բռնենք այսպէս յանկարծակի Պ . Ֆրենէօզի աշխատանոցն երթալուս :

— Նախ՝ պէտք չունինք պատրուակի : Ինքը քանի մ'անգամ հրախրեց մեզ երթալու իւր նկարած պատկերը տեսնելու :

— Լաւ, բայց երբ մէկը մարդ հրաւիրէ, կ'ուզէ կանխաւ դիտնալ անոնց այցելութեան օրն ու ժամը, որպէս զի պատշաճապէս ընդունելու պատրաստուի : Ֆրենէօզ շատ դո՛կ չըլլաք իւր աշխատանոցն անկարգ վիճակի մէջ մեզի ցուցնելէ :

— Բայց ես յանկարծ կոխել կ'ուզեմ :

— Այն ատեն պէտք կ'ըլլայ հասկըցընել իրեն մեր յանկարծօրէն երթալուն պատճառը . . . և սրով հետեւ չես կրնար բռն պատճառդ բերլ . . .

— Կ'ընէք իրեն թէ իմ պատկերս քաշել տալու եկանք : Ինքը առաջարկեց

ինձի անմիջապէս սիսիլ երբոր ուզեմ : — Հր՛, ծանր է, շատ ծանր է, բաւ Պ. Յօլէ գլուխն երկրցընելով :

— Ինչէ՞ն շատ ծանր է :

— Ձե՞ս մտածեմ որ եթէ ընդունիմ իւր ատաջարկը, գրեթէ խօսք տուած պիտի ըլլամ քեզ իրեն ամուսնութեան նուիրելու :

— Ինչո՞ւ համար : Իւր արհեստն է պատկեր հանել, քանի որ նկարիչ է : Եւ արդէն քանինքն հանած է : Անցեալ տարի իւր մէկ քաջած պատկերը տեսայ սալոնին մէջ... կնոջ մը պատկեր... որ գլուխ դարձոյ մ'էր :

— Հաւանական է որ վճարուած էր... և թերեւս ալ շատ թանկ... : Կր կարծե՞ս որ քու կինիդ համար ստակ ընդունի :

— Ո՛չ, չեմ կարծեր :

— Ըսել է թէ ասան հաղար ֆրանքի բնծայ մը առած պիտի ըլլաս իրմէ... : Իւր քաջած պատկերներն այդ գնով կը ծախէ : Գիտեմ... : Արդ աղջիկ մը իւր նշանածէն միայն կրնայ նուէր ընդունիլ պարկեշտորէն :

— Ուրեմն, եթէ չամուսնանամ Պ. Յըրընէօզի հետ, դուք ծախու կ'առնէք իմ կենդանագիրս, և այսպէս պարտական չէք մնար անոր :

— Գուն հիմա բար թէ ստակով չի ծախեր ինձի, հետեւաբար քու կենդանագիրդ աշխատանոցին պատէն կախուած կը մնայ : Գէշ չըլլար :

— Այդպիսի անարգանք մը չընեմ ինձի, աներկբայ եմ : Միւս կողմէ կը յուսամ որ դիտաւորութենէս ետ կենդանագիրդ աշխատանոցին պատէն կախուած կը մնայ : Գէշ չըլլար :

— Քու գգուած դիտաւորութենէդ, որուն ես ալ հաւանութիւն տուած եմ : Կր յուսամ քեզի պէս թէ կը յաջողի, սակայն գալիքը մարդ չի կրնար գիտնալ, և պէտք է ամէն բան նախատեսել :

— Ես կը նախատեսեմ. բայց փորձաւ կատարել կ'ուզեմ. ինչ որ ալ ըլլայ հետեւանքք :

— Մտածէ նաեւ թէ ժամանակն ալ աղէկ ընտրուած չէ նիստեր խնդրելու համար օրընէօզէն : Եթէ քու պատկերը քաղելու ձեռնարկէ, չախախտ կըրնայ աւարակ նկարահանողէսին համար սկսածը :

— Իմ ուզածն ալ այդ է :

— Որովհետեւ պիտի հարկադրի այն ժամանակ ձանբել իրրեւ սիպար ծառայող խտարուհին : Իրաւցընէ, սիրելի Մարկըրիթս, բարբոտին փոխուած կը տեսնեմ քեզ :

— Արդարեւ շատ փոխուած եմ, բաւ օրիորդ Յօլէ համարձակաբար :

— Հասկըցայ որ դուն այդ տղուն խենթն ես. եթէ դէմ կենամ քեզի, կրնաս հիւանդութիւն մը բերել վրագ : Գնա փեղսրդդ գի՛ր, ես ալ պէտք եղած պատուէրները տամ ֆրանսոային :

— Մարկըրիթ կրկնել չի տուաւ հօրն ըսածը : Գիտէր որ պիտի հասնէր նրպատակին, և սենեկապանուհին ալ պատրաստ կը սպասէր վերջին արդարադր լրացընելու :

Հայրը սողորած էր անոր ուզածն ընելու. միւս կողմէ ալ գոհ էր գործակատարին տուած լուրէն թէ Պիանքա Աթրոտի մեռած էր : Հետեւաբար սեղի գուարթութիւն մ'ունէր :

Պատուիրեց սարաստորներուն որ նուտարն սպասեցընեն եթէ ներկայանայ, և անմիջապէս լուր բերեն իրեն :

Տասն վայրկեան յետոյ Պ. Յօլէ և աղջիկը ճանրայ ելան, թե թեւի տուած դէպի Բիկալ հրապարակը :

6

Շըվալիէ Կի- Պրոյեաբի ներկայացումն ի վեր Բօլ օրընէօզ ճգնաւորի կեանք կը վարէր, կամ որ նոյն է, իրրեւ նկարիչ մը, որ ուշ մնացած էր իւր նկարը քննիչ յանձնաժողովին ղրկելու, հետեւաբար բուռն եռանդով կ'աշխատէր որպէս զի Սալոնին բացուելուն հասցնէր :

Առաջին օրը ծանր դացեր էր աշխատութիւնը : Նախորդ իրիկուան ճախորդ հետապնդումը միաքէն չէր ելնէր, կը մտածէր նորէն սկսիլ խուզարկութիւնը՝ երբ առիթը ներկայանար :

Քիչ մ'եւ օրիորդ Յօլէի վրայ կը խորհէր. և երբ նկարակապին առջեւ կը նստէր, Մարկըրիթի գեղեցիկ պատկերը իւր նկարչական սիրարկու երեւակայութեան մէջ միշտ ներկայ, յաճախ կուզար իւր աչերուն ու նկարին մէջտեղը կը կանգնէր :

Բայց այս ամէնն օր մը միայն տեսց, հետեւեալ նստին, արուեստին սէրը վրայ ելաւ : Կառքով հետապնդելուն յիշատակն և ուրիշ մտայոյզ տեսիլները փարատեցան, և իւրքը բոլորովին իւր արուեստին նուիրեց :

Ալ յարմար ժամանակն էր սկսած գործը լմնցնելու :

Պ. Յօլէ, եղբօրը սպովն գրադած, ժամանակ մը չէր կրնար կատարել իւր աշխատանոցն այցելութեան գալուխտուովը :

Աւելի մեծ բարբաղդութիւն մ'ալ այն էր, որ Պիանս, քանի մ'օրէ ի վեր անտեսանելի եղած էր, չէր դար գեղերիլ աշխատանոցին մէջ շարունակ ծխելով և ներսէն դուրսէն շաղկիւսակելով :

Բիւս ամէն օր հինգ ժամ նիստ կուտար, կէս օրէն առաջ կուզար և իրի-

կուան մօտ կը մեկնէր, օրինակելի կանոնաւորութեամբ նստի միջոցին բնաւ չէր շարժեր, բնաւ չէր խօսեր, ոչ ալ հանգիստ կամ դադար կը խնդրէր : Հարկ կ'ըլլար որ օրընէօզ հրաւիրէր զայն աթոռակէն ելնելու և շարժում կամ ստոյտ մ'ընելու : Առաջներն այնչափ հանգարտ չէր, նստին ընդմիջումներէն օգուտ քաղելով ստքի վրայ կ'եղնէր՝ ծուռեբուն թմրութիւնն անցունելու և լեզուին կապը խզելու համար : Հաճոյք կը զգար աշխատանոցն աչքէ անցունելէ : Գիւտերու ճշմարիտ ճանապարհորդութիւն մը կ'ընէր. ուրուագծեալ պատկերները, զորս օրընէօզ պատին դարձուցած էր, վեր կ'առնէր, կը գննէր և ուրախական բացազանչութիւններ կ'արձակէր : Երբ անոնց տիպարներէն մին ձանչէր, անակնկալ բաղդատութիւններ, հանձարեղ հարցումներ կ'ընէր, և թուշունի մը պէս կը ճոռուղէր :

Բայց այս գուարթութիւնը քիչ քիչ մարեր էր. մանաւանդ քանի մ'օրէ ի վեր խեղճ աղջկուկը բոլորովին փոխուած կը թուէր, ոչ եւս կը վազվզէր, ոչ եւս կը կարկաչէր : Նիստին աթոռէն ելած ժամանակ կ'երթար տիրութեամբ անկիւն մը կը նստէր ցած աթոռակի մը վրայ լուի, անշարժ, արմուկները ծուռեին և ծնօտը ձեռներուն վրայ յեցած :

Օրընէօզ՝ իւր ուշն ու ուրուշը գործին նուիրած ըլլալով՝ սկիզբները չէր նշմարած Բիայի այս վիճակը. բայց երբորդ օրը տեսեր էր որ աչերը կարմրած էին, և պատճառը հարցուցեր էր :

Տղեկը պատասխաներ էր թէ Միրոսան միաքը եկեր էր : Նկարիչը չէր հատուցեր անոր այս պատճառարանութեան. բայց որովհետեւ կորսնցընելու ժամանակ չունէր, չէր ուզած առայժմ խոստովանցընել զայն, և

միաքր դրեր էր որ ձեռքի գործը լմնցրնէլէ ետեւ հարցաքննէ գայն:

Գժբաղդարար, կատուին մեռնելէն հինգ օր ետքը Գորնէօզ տեսաւ որ Բիսայի կեցուածքը նոյնը չէր: և հարկադրեցաւ դիտողութիւն ընել:

— Աղջկուհի, բաւառ ռշադրութեամբ աչքին մէջ նայելով, կեցուածքը սնտալ է, գունը գերեզմանի քով կեցած կոյսի մը, կազմ անպարտի մէջ կեցած Մագդաղենացիի մը երեւոյթն ունիւր և ոչ Սուպիաքոյի հոյութեանի մը: Գուն այդպիսի յուղարկութեամբն ախոր դէմք չունէիր:

— Սուպիաքօ եղած Ժամանակս, վիշտ չունէի, քսաւ տղին այնպիսի ցած ձայնով մը որ հայտն կը լսուէր:

— Ի՞նչ վիշտ ունիս հոս, դոչեց Գորնէօզ, սրտի՞ վիշտ:

— Աղէկ գիտէք թէ ոչ:

— Լաւ դուն ըսիր ինձի թէ սիրող չունիս, ես ալ կը հատաստ խօսքիդ: Գուն թեպօք աղջիկ ես եւ սիրող չես տար Լորէնծոյի տանը մէջ կա՛ւ Բիկայ հրապարակին վրայ դէմք երևող մանչերու: Ուրեմն ի՞նչ ունիս, բռն տեսնեմ:

— Բան մը չունիմ:

— Այդպէս մի պատասխաներ ինձի, ես քեզ աղէկ կը ճանչեմ, քու դէմքիդ վրայ կը կարդամ բաց գրքի պէս, և կը յայտնեմ քեզի թէ նոյնը չես: Չես խնդար առաջուան պէս, գլուխդ շիտակ չես բռներ, և թեւերդ վար կը կախես՝ տրտմութեան արձանի մը տիպար ըլլալու պէս: Այդ վիճակիդ մէջ ես չեմ կրնար այլ ես լաւ բան մը բնել, և եթէ այդ լացը շարունակես, չպիտի կրնամ նկարս յաջողցնել: Այժմարածուհիս հրացանի բռնուած առաջակի մը սղջկան դէմք պիտի ունենայ: Ուստի շտկուելու համար մէկ միջոց մը կայ, սիրելի՛ Բիաս, պատմէ ին-

ձի ցաւը, որպէս զի սիրտուիս, և ես դեղը գտնեմ: Օ՛ն, խօսէ նայիմ, բռն ինձի ո՞վ ինչ յրաւ քեզի: Կամ թէ ստակի՞ պէտք ունիս:

— Օ՛, ոչ, ինձի պէտք գածին կրկինը կը վատակիմ ձեր քով:

— Հայրենացաւ ունի՛ս: Սուպիաքոյի լեռնէ՞րը կարօտցեր ես:

— Ի՞նչ պիտի ընեմ հոն: Մարդ չունիմ, մրմնջեց խեղճ աղջիկը:

— Զննարիտ է բաւա Գորնէօզ յուղուելով, որք ես:

— Մայրս անցած տարի մեռաւ:

— Հայրդ չե՞ս տեսած երբէք:

— Շատ պղտիկ էի տեսած Ժամանակըս, հազիւ կը յիշեմ:

— Պրտնացի մ'էր, այնպէ՛, չէ՞:

— Այդպէս ըսին ինձի: Մայրս անոր խօսքը չէր ըներ բնաւ:

— Ուրիշ ազգական չունի՞ս:

— Այո՛, քոյր մը: Կը կարծէի թէ գիտէիք:

— Այո՛, կը յիշեմ հիմա որ պատմեցիր ինձի թէ տասներկու տարու եղած Ժամանակ Սուպիաքոյէն մեկներ էր: Քեզնէ մե՞ծ էր:

— Ես ինը տարու էի անոր մեկնած տակեր:

— Մայրդ ի՞նչպէս թողուց որ մեկնեցաւ:

— Մայրս ա՛յնչափ խեղճ էր, որ գայն սնուցանելու կարող չէր:

— Այո՛, հայրենակիցս շատ գէշ վարուէր է: Մարդ մ'իւրկինու ու գտտակները չի թողուր երեսի վրայ երբ սիրտ ունի:

— Ես իմ հացս կը հանէի այժեր արծելով: Քոյրս ինձմէ աւելի վաճառի ըլլալով, չէր կրնար գիմանալ թշուառութեան: Լաւ ձայն ունէր, օր մը երգի դասատու մը, որ աշակերտներ կը փնտռէր, քոյրս տեսնելով՝ առաջարկեց երածշտութիւն սովորեցնել և Օրէնայի մը մէջ դնել: Քոյրս ալ գնաց:

— Այլ եւս լուր չունի՞ր իրմէ:

— Ամէն տարի նամակ կը գրէր Սուպիաքոյի մը, և ան ալ շուր կուտար մեզի: Մայրս կարդալ չէր դիտեր... ևս ալ Գորնէօջի մէջ սովորեցայ... ձեր շնորհիւ:

— Վերջապէս ի՞նչ եղաւ այդ քոյրդ, առաջ գնա՞ց թատրերդի մէջ:

— Իտալիոյ քանի մը մեծ քաղաքներու մէջ երգելէ ետեւ, անցեալ տունին Միլան էր և Սքայա թատրոնին մէջ կ'երգէր:

— Իբրեւ քու զննած:

— Ո՛չ, պարերգներու մէջ:

— Ընել է թէ վատաբանք մեծ բան մը չէր: Ի՞նչպէս կրցիր իմանալ ատենք, քանի որ մեկնած ես Սուպիաքոյէն:

— Գրեր էին իրեն թէ մայրերնին մեռեր էր, և Լորէնծօ գիտաւ Փարիզ բերեր էր: Մեր երկրին մէջ ամէն մարդ կը ճանչէ Լորէնծօն, և ո՛ր բնակիչն ալ գիտեն: Վեց շաբաթ առաջ գիր մ'առի՝ քրոջմէս: Տէ Ծօսէ-Ալէն-Պէռնար փողոցն ուղղուած նամակ մը: Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ ինձի նամակ կը գրուէր:

— Հարկաւ վերջինը չպիտի ըլլայ, անշուշտ պատասխան գրեցիր քրոջդ:

— Այո՛, անգամ մը. յետոյ երկրորդ նամակ մ'եկաւ, որով կը ծանուցանէր թէ Փարիզ պիտի գար:

— Օ՛, և ետե՞ս:

— Այո՛, ամիս մը կայ:

— Բայց չիմացուցիր ինձի, ի՞նչպատճառով:

— Քոյրս պատուիւրեց որ իւր վրայ չի խօսիմ: Կուգէր որ մարդ չիմանար իւր հոս ըլլալը:

— Անպայն դուն կը տեսնէիր գինքը:

— Այո՛, բայց քանի մ'օրէի վեր տեսած չեմ, և այս պատճառաւ է որ կուլամ բաւ Բիաս, նորէն փոխելով:

— Ինչո՞ւ համար չես տեսներ, աւ-

րուեցա՞ք իրարու հետ, գոչեց Գորնէօզ:

— Աւրուեցա՞նք, ո՛հ, ո՛չ, հառաջեց խեղճ իտալուհին, երկու քոյր միայն մնացած ենք աշխարհի վրայ, վարելի է չի սիրել զիրար:

— Ուրեմն ինչո՞ւ չէք տեսակցիր:

— Վասն զի չեկա իմ բնակարանս:

— Իո՞ւն թող երթայիր գինքը տեսնելու:

— Բնակած տեղը չեմ գիտեր:

— Զարմանալի՛ բան: Քոյրդ Փարիզ կուգայ քեզ գտնելու, և իւր բնակած տեղը չիմացըներ քեզի: Բայց կրնար քեզի հետ նստիլ:

— Ո՛չ, հայր Լորէնծօյի տունը չէր յարմարեր իրեն: Հոն ակնածութեամբ կը վարուին ինձի հետ, վասն զի ես տակաւին տղայ եմ. իսկ քոյրս տասն և ութ տարու է և գեղեցիկ,

— Կը կարծես թէ դուն ազե՞ղ ես: Բայց խնդիրը ատոր վրայ չէ: Ընդունիմ պահ մը թէ քոյրդ շուղէ բնակիլ Ծօսէ-Ալէն-Պէռնար փողոցի իմեանին մէջ. բայց այդ պատճառ մը չէ իւր բնակած տեղը քեզի չիմացնելու:

— Պատճառ մ'ունէր հարկաւ, գոր ինձի չի յայտնեց, ես ալ չի հարցուցիր իրեն: Այս միայն գիտեմ որ չէր ուզեր մարդ ընդունիլ իւր բնակարանը:

— Բայց վերջապէս ինքը կուգար քեզ տեսնելու:

— Այո՛, ամէն իրիկուն:

— Ինչո՞ւ համար իրիկունները:

— Վասն զի գիտէր որ ցերեկները հոս կը գտնուէի տիպարի պաշտօնով:

— Ուրեմն իմ վրայ խօսած ես իրեն:

— (՛), յաճախ:

— Ինքը ի՞նչ բանի վրայ կը խօսէր քեզի:

— Մեր մօրը, մեր ազգայութեանը, մեր երկրին վրայ:

— Կը սիրէ՞ր ձեր երկիրը:

— Այո՛, կ'ըսէր թէ իւր ամենէն սիրելի բաղձանքն էր հոն երթալ ապրիլ ինձի հետ :

— Ուրեմն պիտի հարկադրէր հրաժարել թատրոնէն :

— Առանց ցաւելու . երգեցիկի արուեստը հաճելի չէր իրեն :

— Գուն ալ պիտի յօժարէի՞ր տիպարի պաշտօնէդ հրաժարել :

— Չեմ գիտեր, մըմնջեց աղջիկն աչերը խոնարհեցնելով :

— Բայց վերջապէս պիտի պարտաւորիս ուչ կամ կանուխ հրաժարիլ : Չես կրնար բոլոր կեանքդ աշխատանքներու մէջ անցունել : Պիտի ամուսնանաս տնչուչա :

— Ես չեմ ուզեր ամուսնանալ, բաւ թիա չեչտելով :

— Լաւ, հիմակուան կարծիքդ է այդ Գանք քրոջդ : Գոնէ հասկցո՞ւց քեզի փարիզ գալուն պատճառը : Հարկանպատակ մ'ունէր, քանի որ թատրերգակ ըլլալէ չէր ախորժեր :

— Երդում ընել տուաւ ինձի որ մարդու չըսեմ :

— Չարմանալի՛ բան, ի՛նչ մեծ գաղտնիք է եղեր որ ինձի յայտնելդ խի արգելեր է քեզի :

— Ձեր խօսքը չըրաւ : Ձէր գիտեր որ դուք ինձի թոյլ կուտաք նիստի միջոցին այսպէս խօսակցիլ ձեզի հետ :

— Ձէ՞ր ալ գիտեր որ ես բարեկամ եմ քեզի : Եթէ գիտնար, բացառութիւն մը կ'ընէր ինձի համար : Ձէր ուզեր որ հայր Լորէնձոյ ծանօթութիւն ունենար իւր գործերուն : Կը հասկընամ : Բայց ես Լորէնձոյ չեմ . . . ոչ ալ իտալացի . . . և տարակոյս չունիմ որ զիս արժանի կը դատէր իւր վստահութեան : Պէտք է որ քոյրդ ինձի բերէիր :

— Ձէի համարձակեր :

— Լաւ, բայց հիմա որ սիրող անհանդիստ է անոր ի՛նչ եղած ըլլալուն վրայ, կրնաս պատմել ինձի թէ ի՛նչ ընելու եկած էր Փարիզ : Չայդ գիտնալս կ'օգնէ թերեւս ինձի զինքը գանելու :

— Եթէ կարենայի յուսալ . . . :

— Կրնաս յուսալ . . . կարծեմ թէ անվստահ չես իմ վրաս :

— Ո՛հ, ոչ :

— Ուրեմն խօսէ : Ես գրեթէ գուշակեցի գաղտնիքդ : Քոյրդ մէկը կը փնտռէր, այնպէս չէ՞ :

— Ճամարիտ է :

— Երբ գիտնամ ո՞վ է փնտաւոր, ես ինքս ալ փնտաւոր կ'ելնեմ, և առանց գիտնալու կուրաբար չեմ գործեր : Ես շատ մարդ կը ճանչեմ, և եթէ քոյրդ ինձի գիտնած ըլլար, կրնայի թերեւս օգտաւար ակզեկութիւններ տալ իրեն :

— Սօք կուտա՞ք ինձի թէ դուք միայն պիտի գիտնաք ինչ որ պիտի ըսեմ ձեզի :

— Որո՞ւ պիտի ըսեմ, աղջիկ : Իմ բոլոր բարեկամներուս մէջէն Պինտո միայն կը ճանչէ քեզ, և ես ալ զայն ինձի խորհրդակից չեմ ըներ : Չափազանց շատախօս է, ասկէ գտա չկրնար ալ ինձի օգտակար ըլլալ : Իւր կեանքը սրճարաններու մէջ կ'անցունէ, և անշուշտ քրոջդ փնտաւած անձը սրճարաններու մէջ չալիսի գտնենք :

— Իրաւունք ունիք Պարոն Բօլ : Քըրօն փնտաւած անձը . . . մեր հայրն է :

— Ձեր հայրը, կրկնեց Յըրնէօզ, որ չէր սպասեր այս յայտարարութեան : Այո՛, ճամարիտ է, Յրանսացի է : Բայց դուն քիչ մ'առաջ ըսիր ինձի թէ հազիւ կը յիշես զայն տեսած ըլլալդ :

— Քոյրս լաւ կը յիշէ, քսաւ թիա, վստահ երեք տարու մեծ է ինձմէ, և երբ մեր մայրն ու մեզ երեսի վրայ թողլով հեռացաւ, քոյրս հասկընալու զիճակի մէջ էր :

— Ուրեմն ետքէն պատմած է քեզի այդ տնցքը, և ձեր հօրն այսպէս իւր գաւակներն երեսի վրայ թողուլը, որ շատ գէշ գործ է, վստահ իւր ուրացած չէ իւր հայրութիւնը, և ժամանակ մ'ալ ձեզ իբրեւ իւր աղջիկները նայած է :

— Ես շատ տարտամ տպաւորութիւն մը պահած եմ այդ ժամանակին վրայ : Ետքէն իմացած եմ որ Հռոմի մէջ կը բնակէինք, և ամէն օր կ'երթայինք զինքը կը տեսնէինք իւր տանը մէջ, որ Սպանիոյ հրապարակին վրայ հին շէնք մ'էր :

— Բայց յանկարծ դադրեցաք հոն երթալէ :

— Այո՛, մէկէն ի մէկ չուեր էր . . . Յրանսա վերադարձեր էր . . . : Այն ժամանակ մենք ալ Սուպիաքոյ վերադարձանք . . . : Մայրս կրնար սպրուտը ճարել՝ նկարիչներու իբրեւ տիպար ծառայելով . . . շատ գեղեցիկ էր . . . բայց չուզեց, և մեզ առաւ Սուպիաքոյ լեռը տարաւ :

— Ինչո՞վ ապրեցաք :

— Մայրս քիչ մը ստակ պահած էր՝ նկարիչներու իբրեւ տիպար ծառայելով . . . բայց շատ քիչ բան էր :

— Ի՞նչպէս, հայրդ բան մը չէ՞ր թողած անոր :

— Ոչինչ :

— Նողկալի՛ բան :

— Քոյրս կ'ըսէ թէ աղքատ ըլլալուն պատճառով չկրցաւ մեր ապրուստն ապահովել :

— Սխալ կարծիք : Ապրուստի միջոց ունէր, որովհետեւ Յրանսայէն իտալիա գնացեր էր նկարչութիւն սովորելու : Եթէ չէր կրնար հարուստ եկամուտներ թողուլ ձեզի, գոնէ պէտք չէր որ ձեզ թշուառութեան մէջ թողուր : Եւ Աստուած զիտէ ո՞րքան տառապանք քաշեցիք : Գոնէ բնակարան ունէի՞ք :

— Մայրս գիւղէն դուրս հիւղակ մը վարձած էր ինքը երկու կամ երեք հարուստ տուներու լաթերը կը լուար : Քոյրս և ես ալ խաշնարածութիւն կ'ընէինք :

— Ձեր հայրը լուր չէ՞ր զրկեր ձեզի :

— Ո՛չ, անգամ մը գիւղին երէցը դուրսեց մօրս թէ Յրանսայէն գրով հարցուցեր են իրեն թէ Սուպիաքոյ էինք միշտ : Մայրս ալ աղաչեւ էր քահանային որ պատասխան գրէ թէ մեկնած էինք հոնկէ : Բայց գրեց՝ չիմացանք երբէք :

— Ըսել է թէ խեղճ կ'ինք չէր ուզէր անոր անունը լսել . կ'երեւի որ սաստիկ վշտացուցած էր զինքը : Հարկաւ կ'անիծէր զայն :

— Երբէք դառն խօսք չելաւ բերնէն, մինչեւ խի անունը տուած չէ իմ առջևս :

— Բայց դուն գիտես անունը :

— Քոյրս գիտէ :

— Քեզի շատ չէ՞ :

— Ձեմ հարցուցած իրեն՝ տեսնելով որ չէր ուզէր յայտնել ինձի : Ամէն անգամ որ Փարիզ երթալուն նպատակին վրայ հարցում մը կամ ակնարկութիւն մ'ընէի, լալ կը սկսէր :

— Այդ ամենն ալ խիտ տարօրինակ են, բայց ըրած պատմութիւնդ մեկնելու ժամանակը չէ հիմա : Քոյրդ գտնելու նայինք : Ո՞ր օր դադրեցաւ քեզի դալէ :

— Անցեալ չորեքշաբթի իրիկունն իրուն սպասեցի և չերեցաւ :

— Նախորդ իրիկունը տեսած էիր :

— Այո՛, սովորականէն ալ աւելի նստած էր հետս, և մեկնած ժամանակ խօսք տուաւ յաջորդ իրիկունը գալու :

— Ի՛նչպէս կուգար քեզի, հարցուց Յըրնէօզ, քիչ մը խորհելէ յետոյ :

— Քալելով անշուշտ, հարուստ չէր որ կառքով երթար զար :

—Հաւանաբար տեղը հեռու չէր քու բնակարանէդ. հետը չէիր երթար երբ կը մեկնէր բնակարանէդ:

—Ո՛հ, արգիլած էր:
—Երբէք չե՞ս հանդիպած իրեն փողոցի մէջ:

—Ո՛հ, ես խիստ քիչ դուրս կ'ելնեմ. հոս երթեւեկելու համար ալ հանրահաւք կը նստիմ:

—Քոյրդ Սուսիւքայի կերպարանքովն էր:

—Օ՛, ո՛չ, Իտալիոյ մեծ թատրոններու մէջ երգելէն ի վեր Ֆրանսական սճով կը հագուէր:

Փրքնէօզ, Բիայի անյայտացեալ քրքրով սովորութիւններուն վրայ ըրած հարցուփորձը շարունակելու վրայ էր, երբ տարօրինակ ձայն մը գրաւեց ուշադրութիւնը:

Դուռը կը քերթուէր կամացուկ մը, ետքն ալ ողբական միաւիւն մը լսուի սկսաւ:

—Ո՛հ, Աստուած իմ, Միքսան է գոչեց աղջիկը:

—Միքսան, կրկնեց Փրքնէօզ, չե՞ս գիտեր որ մեռաւ. կատուները յարութիւն չեն առներ:

—Բայց կատու է, մտիկ ըրէք, դժբանքը վարի ծայրը կը քերթէ:

Երկրորդ միաւիւն մը լսուեցաւ աւելի ողբաձայն, և աղջիկը ցնցուեցաւ:

—Խեղճ անասունը շատ նօթի է, ըսաւ, կը ներէ՞ք որ ելնեմ դուռը բանամ:

—Բացէք նայինք: Եթէ իմ Անկորայիս հոգին չէ որ կը վերագառնայ, նոր ընկեր մը կուգայ մեզի: Գէշ չէ. առանձնութիւնը կը ծանձրացնէ զիս: Պահ մը խորհեցայ կապիկ մը կամ թութակ մը գնել, բայց կատուն աւելի ազէկ է ինձի համար. վասն զի աւելի դիւրու կը պահուի. և որովհետեւ նախախնամութիւնը կը զրկէ հատ մը...

Բիա արդէն դրանք քօյն էր, բայց հազիւ բացաւ, յանկարծ դարմացական ձիջ մ'արձակեց:

Պինտո կանգնած էր դէմը. զլխարկը դէպ ետին ծռած, ձեռները տափափին գրպաններուն մէջ, ծխափողը բերանը:

—Օ՛, դո՛ւն ես, գոչեց Փրքնէօզ, ի՞նչ կ'ընենակէ այդ խենթ կատակը:

—Սիրելիս, պատասխանեց Պինտո ներս մտնելով, կը կատկածէի թէ նեղացած էիք ինձի դէմ: Եթէ սովորական Բը+ Բը+ով դուռը գարնէի, պիտի հասկնայիք թէ ես եմ և դուռը չբանայիք: Եւ որովհետեւ բնութիւնը կենդանիներու ձայները կեղծելու տաղանդը տուած է ինձի, Կիրոսային ձայնը ձեւացուցի: Ի՞նչպէս, ճշդիւ նմանը չէ՞ք:

—Ամաչելու էիր դո՛հիդ յիշատակը նորոգելէ:

—Պէտք էր, պէտք էր, ըսաւ Պինտո թեւերն երերցնելով եզերքերգակ դերասանի մը պէս, և դառնալով Բիայի. — Բարեւ աղջկուկ, այս առաւորտի մը պէս դեղեցիկ ես:

Բիա պատասխան չի տուաւ այս դժանքին: Եւ դեռաց տխրութեամբ նրստաւ իւր տիպարի աթոռակին վրայ՝ հասկցնելու համար Փրքնէօզի թէ չէր ուզէր քրքր խօսքն ընել այս այցելուին առջեւ, գոր չէր սիրէր:

Բայց Փրքնէօզ, որ Պինտոսի այսպէս խաբէութեամբ իւր աշխատանոցը մըտնելուն վրայ նեղացեր էր, չկրցաւ ինքզինքը բռնել քանի մը յանդիմանական խօսք անոր ընկէ:

—Քեզ դուրս պէտք էր վռնտէի, ըսաւ անոր: Չորս օրէ ի վեր երեւան չի կայիր, անշուշտ գինեատան մը նըստարանին վրայ ինկած մնացեր էիր, և հիմա եկեր հոս կ'ստորաւանդիս, վասն զի գինեղանն ապաստիկ տալը դադարեցուցեր է անշուշտ ինչ որ է, այս ան-

գամ ալ թող անցնի, չեմ ուզեր աններող դանուիլ բնակարանիս մէջ, բայց պայմանով մը, այսինքն բերանդ չի պիտի բանաս: Ես գործի սկսելէ առաջ Բիայի հետ խօսք ունիմ ըսելիք, և բացարձակապէս կ'արգիլեմ քեզ մեր խօսակցութեան խառնուիլ:

Բիա աղերսաւոր նայուածք մ'ողղեց Փրքնէօզի, որ հասկցաւ նշանակութիւնը:

—Մի վախնար սիրելի՛ աղջիկ, ես քու գաղտնիքդ այս դիմովին չեմ յայտներ. բայց մէկ երկու հարցում ալ ունիմ ընելիք: Օ՛ն, տեսնենք, այսօր երկուշաբթի է, ըսել է թէ հինգ օր է որ քոյրդ աներեւոյթ եղած է: Ի՞նչ կը կարծես որ պատահած ըլլայ իրեն... Արկած մը:

—Աւա՛ղ, այո՛... Փարիզ վտանգաւոր տեղ է, ու մանաւանդ իրիկունը: Միտքէս սարսափելի բաներ կ'անցնին... Արդեօք կառքէ մը կոխտուելով ջախջախեցա՞ւ... կամ սարանեցի՞ն զինքը... Քանի մ'անգամ մտարերեցի Մօրկը երթալ... բայց չի համարձակեցայ... վախցայ որ հոն կը գտնէի: Պինտո բերանը բանալու վրայ էր, նկարիչն արգիլեց, և Բիայի դառնալով ըսաւ.

—Մտիկ ըրէ, սիրելի՛ աղջիկ: Ես խօսք կուտամ քեզի ամէն ջանք ընել քոյրդ գտնելու համար: Այս քաղաքը ձեր լեռներուն չի նմանիր, որպէս զի մարդ աներեւոյթ ըլլայ առանց հեռք մը թողու: Բաւական է եղելութիւնն իմացնել ստիկանութեան տեսչին, որպէս զի խուզարկութիւններ հրամայէ... և աներկբայ եղիր որ կը գտնեն: Բարիկ եկող օտարական մը անպատճառ պանդոկի մը մէջ կը բնակի, եւ պանդոկապետները հարկադրուած են իրենց վարձակալներուն անունը արձանագրել տումարի մը մէջ, գոր ոս-

տիկանութեան տեսուչներն աչքէ անցունելու իրաւունք ունին երբ ուզեն:

—Քրքն անունը Պիանքա է, մըրմնջեց աղջիկը:

—Իսկ մականո՞ւնը:

—Նոյնն է, ինչ որ է իմս:

—Այո՛, ձեր մօրը մականունը, գոր ինձի ըսիր անցեալները, բայց ես մտացայ, և պէտք է որ դիտեամ խուզարկութիւն խնդրելու համար: Ըսէ ի՞նչ էր:

—Ասթրոտի, պատասխանեց Բիա: Թէև խիստ ցած ձայնով արտասանեց, բայց Պինտո սուր ախանջ ունէր:

—Ասթրոտի՛, գոչեց: Ասթրոտի անուն աղջկան մը վրայ լո՞ւր կ'ուզուի. ես կրնամ աալ:

—Ինչո՞ւ կը խառնուիս դուն, գոչեց անոր Փրքնէօզ, չպատուիրեցի՞ քեզի որ խօսքի չպիտի խառնուիս:

—Լաւ, կը լուեմ, մըմնաց Պինտո, բայց կը սխալիս. վասն զի կարեւոր տեղեկութիւններ կրնամ տալ քեզի:

—Ի՞նչ բանի վրայ:

—Բիայի յիշած անձին վրայ:

—Ուրեմն մտիկ կ'ընէիր մեր խօսքերը, մեզ կը լրտեսէի՞ր: Ատուգիւ սխալ գործեցի քեզ սենեակիս մէջ ընդունելով, ուստի գոհ կ'ըլլամ եթէ դուրս ելնես:

—Ես մտիկ չէի ըներ ձեզ, և ապացոյցն այս է որ ձեր խօսքերէն ոչ մէկ բառ չսեցի, և սրովհետեւ ախանջներս խցած չէի, այդ ինձի ծանօթ անունը կրցի լսել:

—Ինչէ՞ն ծանօթ է քեզի:

—Քու դիմապիւք բանդ չէ: Ես ալ իմ գաղտնիքս ունիմ, և անշուշտ չես ուզեր որ յայտնեմ: Ուստի շարունակէ խօսակցութիւնդ, սիրելի՛ բարեկամ, և վտահ եղիր որ ձուկի պէս համր կը կենամ:

—Բայց կ'ուզեմ իմանալ այդ Ասթրոտիին վրայ գիտցածդ:

— Բան մը չեմ գիտեր :

— Սուտ կը խօսիս : Քիչ մը առաջ ըսիր թէ կարեւոր տեղեկութիւններ կրնայիր տալ անոր վրայ :

— Կարելի է, բայց ինձի կը պահեմ :

Բիա սրտատարտի ուշադրութեամբ մը տիկ կ'ընէր այս վիճարանութիւնը, առանց խօսքի խառնուելու համարձակութեան. բայց աչքը ձրընէօղի երեսն էր, որպէս զի անոր աչերուն մէջ կարգար թէ ինչ կը մտածէր Պինտսի արձակած խօսքին վրայ :

— Մտիկ ըրէ, ըսաւ ձրընէօղ շաղիչին, ես մինչեւ հիմա համբերեցի, բայց ահա կը յայտնեմ քեզի : Եթէ հիմա չի յայտնես գիտցածդ, պիտի խնդրեմ քեզնէ որ խօսյն մեկնիս աշխատանոցէս, և այլ ես յաւիտան չի պիտի ուզեմ երեւոյ աեսնել :

— Անկեղծութեամբ կ'ըսես :

— Կատարեալ անկեղծութեամբ, և պատուոյս վրայ . . . :

— Ուրեմն ամէն բան խոտտովանիմ, և դիտցիր որ միմիայն քու շահուղ համար է : Ինձմէ տեղեկութիւն կ'ուզես Ասթրոտի անուն անձի մը վրայ : Ուստի ըսեմ նախ թէ դու տեսած ես զայն :

— Ես, բայց դուն խենդ ես :

— Բնաւ ամենեւին : Դուն անգամ մը միայն տեսար զայն, բայց ժամ մ'անցուցիր անոր հետ . . . կամ լաւ եւս անոր քով :

— Ո՞ւր տեղ :

— Չե՞ս յիշեր քիչ մը :

— Ամենեւին :

— Ուրեմն յիշողութիւնդ շատ կարճ է : Մտածէ, հաւաքէ յիշատակներդ : Ինչպէս անցուցիր վերջին երեքշաբթի օրուան երեկոյթդ :

— Երեքշաբթի՛, մրմնջեց ձրընէօղ, առանց կարենալ յիշելու նախորդ շաբթուան այս կամ այն իրիկունն ինչպէս անցուցած ըլլալը :

— Ուրեմն օգնեմ քեզի : Բնակարանդ կուգայիր, զիս տեսար սրճարանի մը մէջ . . . և ներս մտար :

— Հանրակառքէն իջնելէ՞ս ետեւ, հարցուց ձրընէօղ խիստ յուզուած :

— Ճշդիւ : Եւ այն հանրակառքին մէջ տեսար այն աղջիկը, որուն վրայ այդչափ հոգածութեամբ տեղեկութիւն կը խնդրես :

— Ի՞նչ կ'ըսես, այն աղջիկը որ . . . որ . . .

— Այո՛, այն աղջիկը, Պիանքա Ասթրոտի կը կոչուէր : Ես երէկ իմացայ, և կը համարձակիմ ըսել թէ այս գիւտար պատիւ կը բերէ ինձի. որովհետեւ իմ անյողգողդ յարատեւութեան և կորովամտութեան արդիւնքն է :

— Ի՞նչպէս կրցիր ստուգել անոր անունն ըլլալը :

— Բնակարանը գտայ. հոս մօտը կը բնակէր, աէ գԱպէս փողոցը տան մը մէջ : Վարձու տուող կիներ տեսայ, և մանրամասն տեղեկութիւններ տուաւ ինձի, միանգամայն Մօրկը դնաց և տեսաւ մարմինը : Այդ յարգելի կնոջ անունը Սօֆի Քորնիւ է, և շատ բարի սիրտ մ'ունի, վասն զի թաղման ծախքը՝ ամբողջապէս վճարեց այս առտու : Ես ու ան էինք յուզարկուտը :

— Լաէ՛, գոչեց ձրընէօղ, բայց շատ ուշ էր : Բիա ամէն բան լսեր էր : Ոտքի վրայ ելաւ, և քայլ մ'առաջ դնաց դէպի Պինտս, որ չէր հասկնար իր խօսքերուն ըրած տպաւորութիւնը :

— Քոյրս մեռե՛ր է, մրմնջեց : Եւ մարեցաւ ինկաւ :

— Չախո՞ղ մարդ, տեսա՞ր ըրածդ, գոչեց ձրընէօղ :

— Ես կրնայի՞մ գուշակել թէ այս աղջիկն ալ Ասթրոտի մ'էր, ըսաւ Պինտս, ես անոր Բիա փոքրանունը միայն գիտէի :

Պինտս նուրբ դատում և խոհունակութիւն չունէր բայց բարեւիրաւ էր :

Ինքզինք կրցածին չափ արդարացնելով հանդերձ, վաղեց օգնել բարեկամին որպէս զի վերցունեն աղջիկը :

Եւ երկուքը մէկէն ոտքի վրայ հանեցին դայն. բայց մարած էր : Հարկ եղաւ որ ձրընէօղ թեւերուն մէջ զըրկելով տանի աշխատանոցին ճակատը բազմոցի մը վրայ դնէ :

— Քոյրս է եղեր, կը մրմնջէր շուտաբար, քոյրն է եղեր. պետք էր կուսէի ըրած պատմութեանէն : Երեքշաբթի իրիկուն անհետացեր է . . . ճշդիւ հանրակառքին մէջ պատահած դէպքին իրիկունը . . . :

— Ես ալ պէտք էր կասկածէի, գոչեց Պինտս : Մեռած աղջիկը յար եւ նման էր Բիայի : Ի՞նչպէս չմտածեցի ես ալ : Հասակը, խտալական դիմատիպը ամէն բան նոյն էր, բայց միտքէս չէր անցներ թէ Բիա քոյր մը ունէր : Շատ թաքնասէր է այս աղջկուհի :

— Լաէ՛, անպիտան . . . և սա կահին վրայի անգլիական աղին սրուակը բեր :

— Բերեմ, բայց դուն ալ շուտով քակէ սեղմիրանը, խեղճ աղջիկը կը խըղդուի :

ձրընէօղ մտիկ ըրաւ Պինտսի խըրատը, և աղջկան թխորակ ուսերը դուրս ցայտեցան կարմիր շրջազգեստէն :

— Աւասիկ ուզած սրուակդ, գոչեց Պինտս, դուն բռնէ աղջիկը, ես ալ քթիս տակը դնեմ սրուակը. չեմ գիտեր ինչ է այս մէջինը, բայց այնչափ կծու հոտ մը ունի, որ մեռեալն անգամ կրնայ արթնցնել :

Բիա, բազմոցին վրայ տարածուած, իր գեղեցիկ գլուխը Բօլ ձրընէօղի կուրծքին յեցած էր, մազերը քակուած և երկար հիւսքերով տժգոյն այտերն

ի վար կախուած էին. աչերը գոց էին, և հազիւ տկար շունչ մը կ'ելնէր կիտարաց շրթունքէն :

— Մեացուցի՛ր, ըսաւ ձրընէօղ շաղիչին, որ ծունգի վրայ եկած, աղը խեղճ աղեկին քթին բռնած էր :

— Օ՛, մի վախնար, վայրկեան մը չի քշեր աչքը կը բանայ, և ես կը ջանամ մխիթարել զինքը : Ո՞ր սատանան կրնար գուշակել այնչափ դիւրազգած ըլլալը : Խտալուհիներն ազատ են այդ պակասութեանէն : Ես հատ մը գիտեմ որ առտուն ամուսինը կորանցուց և ցերեկն իբրեւ բաքսեան քրմուհի տիպար կը ծառայէր Հէննէրի աշխատանոցին մէջ :

— Բաւական է, կը ներեմ ըրած անխելքութիւնդ, բայց չեմ ուզեր որ քրոջն ինչպէս մեռնիլն ըսես Բիայի :

— Մի վախնար, ես պատմութիւն մը կը յերկրեմ և զինքը կառնեմ կը տանիմ այն տեղն որ քոյրը տարինք այս առտու : Սոֆի Քորնիւ շատ լաւ կերպով կատարեց ամէն բան. հանդիսաւոր հոգեհանգիստ մը կատարել տուաւ Մոնմարթրի եկեղեցւոյն մէջ, և հինգ տարիի համար տեղ մը վարձեց Սէնթ-Ուանի գերեզմանատան մէջ : Ես ալ անմեռուկէ պակի մ'եւ մանիշակէ մեծ ծաղկեփունջ մը նուիրեցի :

Այսպէս շաղախատելով հանդերձ, Պինտս կը շարունակէր սրուակը աղջկան քթին բռնել առանց յաջողելու : Բիա մէկ երկու անգամ ցնցուեցաւ, բայց չկրցաւ ուշաբերիլ. և ձրընէօղ կրակ կը կտրէր անուղայ շաղիչին դէմ, որ չէր կրնար բռնել իւր լեզուն, այն անիծած լեզուն, որ պատճառ եղած էր խեղճ աղջկան այս տխուր վիճակին :

Այս ձկտեայ կացութեան ամենէն ծանր վայրկեանին դրան գանգակն հընչեց :

— Ինձի տուր սրուակդ և դնա բաց դուռն, ըսաւ Ֆրընէօզ՝ Պինոսի լեթէ չի բանամ, նորէն պիտի հնչեցնեն: Բայց երբ տեսնես ո՛վ ըլլալը, գոհ կ'ըլլամ լեթէ դուռը գոցես երեսին, և թող չի սաս ոք դայ զիս անհանգիստ ընէ այս նեղ վայրկեանիս մէջ:

— Եթէ պարտապահանջներ ունենալիր, պիտի կարծէի թէ անոնցմէ մին է կը մըմուար Պինոս դէպի դուռն ուղղուելով: Ձանգակն իշխանական և ազգեցիկ ուժով մը հնչեց:

Բիա լսեր էր, և այնչափ ջղային էր որ վախնալով՝ Ֆրընէօզի պարանոցին փաթթուելով զայն դէպի իրեն կը քաշէր. այնպէս որ Բօլէ շուրթերն անոր ճակտին կը քսուէին:

Եւ այսպէս, աւանց դիտնալով՝ նըկարախուժը մը կը կազմէին, զոր պատկերհան մը մեծ հաճոյքով կը նկարէր, եթէ տեսնէր:

Կատարեալ պատկեր մ'էր:

Պինոս, որ չէր տեսներ զայն, դուռը կէս մը բանալով՝ գլուխը դուրս երկնցուց: Մտնը խօսք մը պատրաստեր էր վճարելու համար ինքնակոչ հիւրը:

Բայց խօսքը կոկորդին մէջ մնաց, երբ տեսաւ դեռատի հրաշագեղ կին մը գուարթագէմ և փարթամ երեսոյթով պարոնի մը հետ:

Պինոս՝ Ռիւպէնի սիրահարն էր, գոյներու վեհապետին, և տեսածը Ռիւպէնի կատարեալ պատկեր մ'էր յոյսի մէջ:

Տպաւորութիւնն այնչափ բուռն եղաւ, որ Պինոս՝ իւր հիացումը չի կրրնալով զայել, դուռը կրնրկին վրայ բացաւ, փոխանակ գոցելու:

— Ֆրընէօզ ինչ կ'ուզէ թող ըսէ: Ես չեմ կրնար այսպիսի հիասթափեց պատկեր մը սանդուղին վրայ թողուլ:

Միանգամայն իւր թաղեայ գլխարկը

հանելով ակնածաբար ողջունեց խորին խոնարհութեամբ, և երեք քայլ ետ քաշուեցաւ ճանրայ բանալու համար յաղթական գեղուհիին, որ համարձակ քայլերով ներս մտաւ առանց Պինոսի երեսը նայելու:

Հետի պարոնն ալ ետեւէն ներս մտաւ քիչ մը վարանելով, և Պինոս, ձեռքը ճակտին տանելով՝ իւր մեծին անցած ժամանակ բարեւի կանգնող անգէն զօրականի մը դիրքն առաւ:

— Ֆրընէօզ զարմացման աղազակ մ'արձակեց, որմէ Բիա ցնցուելով՝ բացաւ աչքերը:

Պ. Բօլէն և աղջիկը տեսեր էր:

Բագմոցն, որուն վրայ Բիա կէս պառկած էր, գլուխը Ֆրընէօզի կուրծին յեցած և թեւն ալ անոր վզին փաթթած, այդ ձախող բազմոցը ճշդիւ դրանը դէմն էր այն քառակուսի մեծ պատուհանին տակը, որ աշխատանոցը լիապէս կը լուսաւորէր, և հետեւապէս դռնէն ներս մտնողներուն աչքին առջեւն էր:

Պ. Բօլէ կանգ առեր էր տեսնելով այս շնորհալի պատկերը, և անհասկընալի խօսքեր կը մըմնջէր:

Աղջիկը, որ այնչափ վախկոտ չէր, բայց և այնպէս վարանելով կը յառաջանար, յօնքերը կը պոստէր և արիւնն երեսը կ'ելնէր:

Պինոս հանդարտութեամբ դուռը գոցելով՝ տեսակ մը սքանչանքով կը դիտէր այս տեսարանը, որ նկարչի սիրտը կը բերկրեցնէր:

Բայց Բօլ Ֆրընէօզի վիճակը դժնդակապէս ծագրելի էր:

Ինեզ՝ երիտասարդը չէր կրնար ետ քշել աղջիկը որ իրեն փայլ թուած էր, և զայ իւր յարգական ողջոյնը նուիրել օրիորդ Մարկրիթին:

Վերջապէս Բիա վերջ տաւ անոր այս տաղանապալից վիճակին: Ինքզինքը

գտնելով՝ կորզեց անոր թեւերուն մէջէն: Մինչեւ իսկ կարողութիւն ունեցաւ իւր կուրծքը ծածկելու, մաղբը շակելու և ոտքի վրայ ելնելու: Տժգոյն և դողդոջուն, կանգնած կեցաւ, ու շողբութեամբ նայելով գեղեցիկ նորեկին, որ արհամարհոտ դէմքով մը զինքը կը դիտէր:

— Կը տեսնեմ որ ձեզ անհանգիստ ըրինք, ըսաւ վերջապէս Պ. Բօլէ: Եթէ դիտնայի, հաւատացէք, կ'աղաչեմ, սիրելի՛ պարոն, թէ ներս չէի մտներ:

— Ես ալ շատ պիտի ցաւէի ձեր այցելութենէն զրկուելուս վրայ, պատասխանեց Ֆրընէօզ ճիգ տալով իրեն, և կ'աղաչեմ որ ներողամիտ ըլլաք ինձի: . . . Այս աղջիկը, որ իբրեւ տիպար կը ծառայէ ինձի, նստի միջոցին մարեցաւ: . . .

— Եւ դուք օգնեցիք իրեն, շատ բընական է, Բայց մեք պիտի նեղենք ձեզ հոս մնալով, ուստի պէտք է մեկնելնք:

— Ո՛հ, պարոն, գոչեց Պինոս, այդչափ շատով մեկնելու անգթութիւնը մի՛ ընէք: Եթէ ակիկներ կ'ըլլայ, ինձի այնպէս կը թափ թէ արեւը կը մարի:

Չայս բանով՝ շարժին եկեր համարձակ տնկաւոր գեղեցիկ էր գեղանի Մարկրիթին առջեւ, և շացեալ մարդու մ'աչեքով կը դիտէր զայն:

Այս բրածը անհաճոյ չէր օրիորդ Բօլէի, վասն զի կը ծպտէր, բայց Ֆրընէօզ կը խեղդուէր բարկութենէն:

— Աղջկուկն ոտքի վրայ ելած է, ըսաւ անպատկառ շարժը: Սա կանանչ նստարանին վրայ վաշտեան մը հանդիսաւ, և մէկ մ'ալ շեքնար:

«Այնպէս չէ սիրունիկս, ըսաւ խեղճ աղջիկն որ կուլար:

— Ո՛չ, պիտի երթամ, ըսաւ արտասուրը սրբելով:

— Իրատունք ունիս, աղջիկս, բաց

օգը կը կաղդուրէ քեզ: Գնա՛ պտոյտ մ'ըրէ Բիկալ հրապարակին վրայ, և ետքը դարձիր եկուր, երբ ինքզինքդ կարող զգաս տիպարի պաշտօնդ կատարելու:

— Ա՛լ չեմ վերադառնար, մըմնջեց Բիա:

Եւ դէպի դուռը շտկուեցաւ զողորմ քայլերով:

Ֆրընէօզ պիտի վաղէր բռնէր զայն, բայց Օր. Մարկրիթի մէկ նայուածքը դասեց զայն կեցած տեղը:

Բիա նշմարեց այն գոռոզ նայուածքը. իւր տժգոյն դէմքը կարմրեցաւ, և անուշ երեսը ցաւագին կերպով կնճուեցաւ: Սրահն վերաւորուած էր:

Բայց չի կեցաւ:

Այս անգամ Ֆրընէօզ չի կրցաւ դիմանալ: Օր. Բօլէի առջեւէն անցնելով Բիաի քով հասաւ այն միջոցին, որ ձեռքը դրան կոճակին վրայ կը դնէր:

— Տեղդ դարձիք սիրելի՛ Բիա և քաջ եղիր, ըսաւ անոր բաւական ամուր ձայնով, որպէսզի Պ. Բօլէ և աղջիկը լսէին: Ես մէկ պահէն կուգամ կը տեսնեմ քեզ, և վաղը միասին ծաղիկներ կը ստանինք գերեզմանատունը:

— Մեաք բարով, պատասխանեց իտալուհին հեղեկանք մը զսպելով:

Եւ դուրս ելաւ՝ թողով Ֆրընէօզն իւր խղճի խայթերուն: Եւ արդարեւ ունէր ալ, վասն զի կորովը կը պակասէր երբեմն պէտք եղած պարագաներու մէջ, թէեւ շատ դիւրազգած էր:

Բիայի կոկիծը կը դաչէր սրտին, և եթէ աւելի տէր ըլլար ինքզինքին, չէր թողուր որ մեկնէր. բայց Օր. Բօլէի ներկայութիւնը շտարեցուցեր էր զինքը:

— Սաուգիւ շատ կը ցաւիմ, գոչեց Մարկրիթի այրը, զուք անշուշտ այդ փոքրիկին հետ երթալ պիտի ուզէիք:

— Բողբովին անօգուտ էր, ըսաւ

Պինտո: Ես կը ճանչեմ սոյդ ազնիկը, երկաթէ կամք ունի, և եթէ միտքը դրաւ որ մինակ երթայ, ոչ ոք կրնայ փոխել տալ:

«Մնաց որ, հիւանդ չէ, կակիծ միայն ունի:

—Ի՞նչ կակիծ, հարցուց Օր. Մարկըրիթ չոր կերպով մը:

—Օ՛, մեծ կակիծ, իւր քրոջ մեռնելը իմացաւ:

—Հո՞ս իմացաւ:

—Այո՛, տիկին, և դիպուածով... դժբաղդ դիպուածով մը: Ես չի գիտնալով որ քոյր մ'ունէր, Ֆրընէօզ բարեկամիս կը պատմէի թէ ներկայ դատնուէր էի այսօր աղջկան մը թաղուելուն, զոր բնաւ չէի ճանչեր, բայց Մօրկին մէջ մարմինը տեսած էի: Անունը միայն գիտէի և անխոհեմութեամբ ըսի այդ փոքրիկին առջեւ թէ Ասթրոտի էր:

—Ասթրոտի՛, այդ մեռնող աղջկան անունն Ասթրոտի՛ էր, գոչեց Պ. Բօլէ:

—Այո՛, Պիանքա Ասթրոտի. պատասխանեց Պինտո, զարմանալով որ ձերուկ պարոնը յուզման նշաններ ցոյց կուտար:

—Ապացոյց ունի՞ք մեռած ըլլալուն:

—Նիւթական ապացոյց, Հոգը դըրուեցաւ, և ես ներկայ էի:

—Անշուշտ անոր մահուան վկայագիրը կրնայ ստացուիլ:

—Անշուշտ: Երէկ դժուար էր, որովհետեւ գինքը ճանչող չի կար, թէեւ երեք օրէ ի վեր Մօրկին մէջ ի ցոյց դրուած էր:

—Ուրեմն դիպուածով մեռած է:

—Այո՛, պարոն, դիպուածով մը... տարօրինակ...:

—Կրնա՞ք ըսել ինձի ս'ւր կը բնակէր:

Այս անակնկալ հարցումն իսկոյն արգիլեց Պինտո թուրքերանութիւնը:

Բաղքենիները չէր սիրէր: Այսպէս կը կոչէր այն ամէն մարդիկը որ նկարիչ ըլլալու պատիւը չունէին, և միշտ ըզգուշութեամբ կը վարուէր անոնց հետ, Սրբ, իսկոյն հասկցեր էր որ Պ. Բօլէ առաջին կարգի քաղքենի մ'էր, և եթէ դեռ ծանր խօսք մ'ըրած չէր անոր, պատճառն Օր. Մարկըրիթն էր որ կը թոյլէր գինքն իւր մեծամարթամ գեղեցկութեամբ: Չէր ուզէր պատմել անոր՝ հանրապետքին եղերական պատմութիւնը, զոր պերճաշուք Բիէտուչ մէկու մը չի յայտնելու համար երդում ընել տուեր էր իրեն:

—Չեմ գիտեր, պատասխանեց վրաստան կերպով մը: Բայց եթէ կուզէք բնակարանը գիտնալ, կրնաք ուսիկանութեան պաշտօնատունէն իմանալ:

Ֆրընէօզ փուշերու վրայ էր Բիաի չուելէն ի վեր: Կը տեսնէր որ Օր. Բօլէ լուրիւսն գինքը կը դիտէր, և ինչ պատճառաւ դիտելը կը գուշակէր:

Կը մտածէր հասկցրնել անոր թէ ի՞նչ պատճառաւ այն դեռտուի իտալուհին թեւերուն մէջ առած էր, բայց միւս կողմէ կը զգար թէ իրեն չէր իյնար սպասուած հարցումի մ'առաջն առնել:

Առանց իրեն հարցուելու ինքզինք արդարացնելու երեւն անտեղի յանձնապատանութիւն մ'էր: Ըսել կ'ըլլար պարզապէս — «Գիտեմ որ դուք նախանձու էք իմ մասին, և կ'ուզեմ հասկըցընել ձեզի թէ պատճառ մը չեմ տուած»: Բայց Օր. Մարկըրիթ չէր փորձուած իր ապաւորութիւնները ծածկելու: Ուտի ստանց վարանելու նետուեցաւ բուն ինքրոյն մէջ, որուն վրայ Ֆրընէօզ չէր համարձակիր խօսիլ:

—Գեղեցիկ է այդ փոքրիկը, բաւազատ ձայնով մը: Ամէն օր կուզայ տիպարի պաշտօն կատարելու:

—Այս նկարս սկսելէս ի վեր, օրի-

որդ, պատասխանեց Ֆրընէօզ, որ սուտ չէր խօսէր երբէք:

—Ըսել է չորս ամիսէ ի վեր, եթէ չեմ սխալիր:

—Չորս ու կէս, օրիորդ:

—Կը հասկնամ աւելի շուտով չմնցրնելուդ պատճառը, եթէ յաճախ հարկադրուած էք ձեր նիստերն ընդմիջելու, ինչպէս որ ընդմիջեցիք այսօր:

—Առաջին անգամն է որ այս բանը կը պատահի ինձի, օրիորդ: Այս աղջիկը սովորաբար խիտ աղէկ կը կատարէ իւր տիպարի պաշտօնը. բայց ձեր ներս մտած միջոցին՝ յանկարծ այն աստիճան տիուր լուր մ'առաւ, որ ինքզինքը կորսնցուց, և ես հարկադրեցայ գինքը վերցընելու և սա բազմոցին վրայ բերելու:

—Շատ բնական էր. ի՞նչպէս չի համակրէիք իրեն: Ամէն օր գինքը կը տեսնէք, երեք-չորս ժամ, և կը թուի ինձի թէ ինքն ալ շատ յարեալ է ձեզի. վասն զի աչքն արաստուքով լեցուն էր երբ «կ'երթամ» բառն արտասանեց:

—Կուլար, վասն զի քոյրը մեռեր էր:

—Ա՛, մեռնողը քոյրն էր:

—Այո՛, օրիորդ:

—Ի՞նչ կ'ըրէք, Պիանքա Ասթրոտին այդ աղջկան քոյրն էր, գոչեց Պ. Բօլէ:

—Այո՛, պարոն, չէի՞ ըսած ձեզի: Մարկըրիթին հայրը հաճելի անակրէնկալ մ'ունեցեր էր լսելով Պինտոի բերնէն թէ Պ. Պիանքէն ճմարիան բեր էր իրեն: Փարիզի մէջ երկու Պիանքա Ասթրոտի չի կար, և այն մէկն ալ միւս աշխարհ չուէր էր. այս մասին տարակոյս ներելի չէր, վասն զի գործին մէջ շահ չունեցող մարդիկ կը հատուակէին:

Մտքին մէջ ուրախ եղեր էր այդ պատուական մարդը. մինչեւ իսկ հար-

ցուցեր էր ինքնիրեն թէ կարելի չէ՞ր գործակատարին տուած խոստումէն ինքզինքն ազատել: Ի՞նչ հարկ կար մահուան վկայագրին մէկ օրինակն այնքան սուղ գնելու, հիմա որ գիտէր թէ ուրիշ կրնար ստանալ: Բայց ուրախութիւնն անխառն չի մնաց, երբ իմացաւ թէ մեռեալ աղջիկը քոյր մ'ունէր: Ո՞վ էր այդ չի յուսացուած քրոջ հայրը: Աւստիկ խնդրոյն մտի կէտը, զոր Պ. Բօլէ լուսաւորել կ'ուզէր:

—Բիա ալ Ասթրոտի կը կոչուի. յարեց Ֆրընէօզ, իրենց մօրն անունն է:

—Ուրեմն գործս կարգին է, բաւ վախճանեալ Ֆրանսի Պօպէի բնական ժառանգօրդը: Եղբայրս այս երկրորդ աղջկան խօսքն ըրած չէ երբէք. հետեւաբար իրմէն չէ: Եւ որովհետեւ Պիանքայէն օր մ'ետքը մեռած է, այս աղջիկը բնաւ իրաւունք մը չունի անոր թողած հարստութեան վրայ:

—Բայց, հայրիկ, բաւ Օր. Մարկըրիթ ժպտելով, մեք Պ. Ֆրընէօզի աշխատանոցը չեկանք այդ Ասթրոտինելուն աղբակցութիւնն ստուգելու, և որովհետեւ դուք կը մուսաք ըսել, ես կը յիշեցնեմ իրեն թէ իւր աշխատանոցին մէջ դուռուած հետաքրքրաշարժ պատկերները ցուցընել խոստացաւ մեզի, և կը ինքրեմ տեսնել, վասն զի դեռ կարմիր շրջադեմտով իտալուհի մը միայն տեսնեք կանանց նոտարանի մը վրայ տարածուած:

Ֆրընէօզ յոյժ քաջարոյ ճակում մ'ունէր Օր. Բօլէի, և շատ ուրախ էր անոր այցելութիւնն ընդունելուն վրայ. բայց Բիայի վրայ խօսելուն ձեւը կը վերստուգէր գինքը:

Անխղճութիւն և գրեթէ անգթութիւն էր այսպէս հեգնութեամբ դատել խեղճ աղջիկ մը, որ այսչափ արհամարհանքի արժանի չէր:

Ոչ գտուղ ոչ ալ ծաղրող էր այդ

Բիան, դոր այսպէս մէկէն ի մէկ ճան- բերուն վրայ կը գղջար: Առանց արտն- ջելու կը վշտակիւնը դժբաղդ որբը, և կը սիրէր իւր բարերարը:

Իսկ գեղանին Մարկըրիթ աւելի հա- մարձակութիւն ունէր քան գորովական զգացում: և որչափ որ համակրանք կը յայտնէր Բօլ Ֆրընէօզի, և անոր հա- նած ըլլալը ցոյց կուտար, միանգա- մայն չէր վախնար զայն վիրաւորելէ՝ շատ բարձր բռնելով զայն տղեկի մը հետ, որուն հոգ կը ասնէր:

Նկարիչը սրտի տէր էր. չէր կրնար մտքին մէջ բաղդատութիւններ չընել, որք հարուստ ժառանգուհիին նպաս- տաւոր չէին: Բայց Մարկըրիթ այնչափ գեղեցիկ էր, որ Ֆրընէօզ անոր թե- րութիւններուն ներելու տրամադիր էր:

— Իրաւ որ, օրիորդ, ըսաւ Չանարով աղնուարար պատասխանել անոր ա- ռարկութիւններուն, կը փախնամ որ ունայն սարձենկոտութիւն մ'ըրթի աշ- խատանոցիս մէջ հետաքրքրաշարժ նը- կարներ կան ըսելով: Այնչափ կը փա- փարէի ձեր այցելութեան, որ հրաշա- լիքներ ունիմ ըսելու չափ առաջ գացի, յուսարով որ ձեզ հոս կը քաշեմ: . . . հրա- շարիքներ, որք գոյութիւն չունին:

« Հոս գտնուածները ուրուագիծներ են, փորձեր, հնութիւններ, զորս հա- տաքած եմ Հռոմի գաշտերն ու գեղերը պարտած ժամանակս . . . վաղեմի գոր- գերու կտորներ, փղոսկրէ դրուագնե- րով քայքայուած հին կահեր . . . : Ձեր հայրն անոնցմէ շատ ազտորներն ունի:

— Բայց ձեր հարաարարուեստ նկար- նե՞րը, սիրելի՛ վարպետ, գոչեց Պ. Բօլէ, մեք յատկապէս դանտեք ան- նելու եկանք:

— Իմ նկարներս ճարտարարուեստ կոչուելու արժանի բաներ չեն, ըսաւ Ֆրընէօզ համեստարար, բայց և այն- պէս պատիւ կը համարէի ցոյց տալ

ձեզ, եթէ հոս գտնուէին: Դժբաղդա- բար չեմ կրնար հոս պահել . . . որովհե- տեւ կը վաճառեմ:

— Այո՛, բարձր գիններով կը վաճա- ուէք, և ուրախ եմ, գոչեց Պ. Բօլէ: Դուք մեծ հարստութիւն մ'ունիք ձեր մատնելուն ծայրը. նկարչութիւնն ար- հեստներուն վեհապետն է: Եթէ մասն զաւակ մ'ունենայի, պատկերհան կ'ը- նէի:

— Բայց դուք գոնէ պատկեր մ'ու- նիք հոս զոր Սալոնին համար կը պատ- լասաէք, ըսաւ Օր. Մարկըրիթ՝ Ֆրը- նէօզի ուղղելով խօսքը, չե՞նք կրնար տեսնել զայն:

— Անշուշտ կրնաք տեսնել, պատաս- խանեց նկարիչը փութկոտութեամբ, և կ'երդնում, օրիորդ, որ եթէ ձեզի հաճոյ ըլլալու բարեբաղդութիւնը ու- նենայ, քննիչ յանձնաժողովին դժգո- հութեանը կարեւորութիւն չեմ տար:

Հայրն ու աղջիկն եկան խոնջն կը- տաւին գէմը, և հայրը գոչեց:

— Աւասիկ քոյր կրնոցրնող խաղա- հին, կրնաք պարծիլ, սիրելիս, այս- չափ ճշգիւ նմանցրնելուդ վրայ: Ար- դարեւ սքանչելի է նմանութիւնը:

— Կը տեսնեմ որ կը շոգոքորթէք զին- քը, ըսաւ Օր. Բօլէ իւր հօրը: Արդա- րեւ աղւար աչեր ունի, բայց դեմքին վարի կողմը գուրկ է նրբութենէ: Եւ եթէ համարձակէի կարծիքս ամբողջա- պէս յայտնել, պիտի աւելցրնէի թէ այս տիպարները առաջ սեռք գուրկ է սպնուութենէ:

— Ես ալ ամէն օր զայդ կ'ըսեմ Ֆը- րընէօզի, գոչեց խեղկատակ չաղիչը: Ասոնք կը յամառին միշտ Հռոմէն իտա- րուհիներ բերել տալու, որք յատկա- պէս արտածութեան համար շինուած վաճառքներ են, և գրեթէ ամէնն այ իրարու կը նմանին: Եթէ Ռիպէն ու- գէր Սէսիլիա Մէթէլլայի շիրիմին քո-

վը նստող այժարածուհի մը նկարել, գեղեցիկ Յընարուհի մը կ'ընարէր, և Անվերսի միջնարեւոյն ալ շիրիմը կը ներկայացընէր:

« Ա՛հ, սիրելի Բօլս, եթէ օրիորդը հաճէր Բիայի տեղը նստիլ, ճշմարիտ նկար մը կը հանէիր, նկար մը, որ վեհ ինքնատիպութեան կնիք մը կ'ունե- նար:

— Բայց, ըսաւ պայծառագեղ օրիոր- դը, ենթադրելով որ կը հաճիմ, Պ. Ֆրընէօզ չի հաճիր, կարծեմ, իւր նը- կարին վրայէն աւելել այդ աղջկան դեմքը, վասն զի եթէ հաւնած չըլ- ար, չէր ընարեր:

Ֆրընէօզ կը գլխար որ իւր տալիք պատասխանէն կախում ունէր իրեն սի- րելի եղած նպատակին յաջողութիւնը:

Օրիորդ Բօլէ անոր կը նայիր այն- պիտի աշխրով, որք յայտնապէս կ'ը- սէին: Եթէ կ'ուզէք զիս ամուսնու- թեան առնել, պէտք է դո՛հէք այդ պատկերն ու փխար իտալուհին:

Ոչ թէ դիտաւորութիւն ունէր իւր անձը Պինտի երեւակայած ծաղրելի տեսութիւններուն գործադրութեանը նուիրելու: Իւր կիրթ ճաշակը չէր նե- րէր ինքզինք իրեւ Ապրիլգեան այ- ծարածուհի նկարել տալ, այլ իւր ա- պագայ ամուսինը փորձի մ'ենթարկել կ'ուզէր:

Տիպարը չէր իրեն անհաճոյ եղողը, այլ կինը, խեղճ Բիան, որուն անժխ- տելի գեղեցկութիւնը կը մրցէր իրե- նին հետ:

— Ինեթ ես դուն, ըսաւ Պ. Բօլէ: Մեր Ֆրընէօզ բարեկամը չի կրնար ինքզինք ցուցահանդէսէն զրկել քո- միկ քմահաճոյդդ գոչացընելու հա- մար:

Եթէ օրիորդը հաճէր թոյլ տալ ինձի իւր պատկերը նկարել, մարդոց ամէնէն երջանիկը կ'ըլլայի ես, մըմըն-

ջեց Ֆրընէօզ, որ կը յուսար այս խու- սափու առաջարկով դուրս ելնել դրժ- ուարութեան մէջէն:

— Ես ալ ստուգիւ կանանց ամէնէն երջանիկը կ'ըլլայի, պատասխանեց իը- րոխա Մարկըրիթ չոր կերպով մը բայց բոլոր կենացս մէջ պիտի մեղադ- րեմ զիս որ այդ փոքրիկ աղջիկը զըր- կեցի այն անմահութեանէն զոր դուք պիտի տայիք անոր:

— Կ'երդնում ձեզի օրիորդ, թէ ես յաւակնութիւն չունիմ հաւատարութէ իմ գործերս պիտի ապրին ինձմէ ետ- քը . . . ինչպէս նաեւ Բիա ալ չյուսար թէ իւր դիմագիծերն սպագային պի- տի մնան: Ինչ՞՞ աղջիկն ապրելու հա- մար միայն կ'աշխատի . . . ես ալ նմա- նապէս, քրովհետեւ կը վաճառեմ նը- կարներս:

« Բայց մոլեգնաբար կը սիրեմ ար- ուեստս, և եթէ դուք հաճէիք իը- րեւ տիպար ներկայանալ, աներկբայ եմ որ գեղեցիկ պատկեր մը կը նը- կարէի:

« Մեզի պակասը շատ անգամ ներ- շնչումն է, և գիտէք որ մեր տաղան- դովը միայն ապրելու հարկադրեալ ենք մեք նկարիչք:

« Աւելի ստակ շահելու համար, գնող հասարակութեան հընձած կամ աւելի հաճոյ եղած նիւթերը կ'ընարենք: Ի- տարական տեսարաններն աւելի արժէք ունին: Բայց եթէ կարենամ երազած պատկերս նկարել, այն ստեն ներշն- չութիւն կ'ուզայ ինձի. և միայն ինձի համար կը նկարեմ:

— Ինձի համար ալ, կը յուսամ, ա- ւելցուց ժպտելով օրիորդ Մարկըրիթ, զոր այս յայտարարութիւնը, հաւատոյ դաւանութեան ձեւի տակ, մեծապէս գուարթացուցեր էր:

« Կ'իմացրնեմ ձեզի, որ եթէ յանձն առնեմ ձեզի համար պատկերս քաշել տալ, ձեր քովը չեմ թողուր:

— Ուրախութեամբ կուտամ ձեզի, ըսաւ մէկէն Յորընէօզ, բայց չեմ կրնար երդնուիլ թէ մէկ օրինակն ալ ինձի համար չեմ պահեր :

— Ձեռք ընդդիմանար : Խնդիրն է միայն գիտնալ թէ պիտի կրնամ հանել տալ : Հայրս կ'ըսէ թէ մեծ վնաս պիտի կրէք այս գրեթէ աւարտած պատկերը մէկդի թողլով :

— Բայց... կրնամ աւարտել զայս և միանգամայն ձեր պատկերը հանել, ըսաւ Յորընէօզ հասկնալով Օր. Բօլէի միաքը :

— Ըսել է ձեր ժամանակն ու աշխատանոցը պիտի բաժնէք իմ և օրիորդ Բիայի միջեւ. երկու կտաւ և երկու պատկերակալ պիտի ունենաք : Այժարածուհին մէկ անկիւնը պիտի նստի, ես ալ միւս անկիւնը, և երկուքս ալ կարգաւ տիպարի պաշտօն պիտի կատարենք : Մեծապէս շնորհակալ եմ, պարոն, ձեր յօժարամտութենէն, բայց ներեցէք ինձի որ չկրնամ ընդունիլ այդ հանձարեղ կարգադրութիւնը :

Այս խօսքն այնքան չոր կերպով մը ըսաւ, որ նկարչին արիւնը գլուխը ցատկեց :

— Ես այդպիսի բան մը չեմ առաջարկեր ձեզի, օրիորդ, պատասխանեց պազութեամբ : Շատ աղէկ դիպեմ որ դուք չէք կրնար հոս նիստեր տալ ինձի. վասն զի ես ստիպուած եմ այնպիսի անձեր ընդունելու, որոց հանդիպելն անհաճոյ է ձեզի, բայց եթէ ձեր Պ. հայրն արածնէ զիս իւր տանը մէջ աշխատելու... :

— Օ՛, ամենամեծ հաճոյքով, գոչեց Պ. Բօլէ :

— Բայց չէք մտածեր, հայրիկ, ընդմիջեց Մարկըրիթ. ձեր բնակայարկին մէջ պէտք եղածին չափ լոյս չի կայ նկարելու համար :

«Միւս կողմէ, եթէ ես պատկերս

հանել տալ ուզէի, վաղուքն պէտք էր սխալի, և Պ. Յորընէօզ կր մոռնայ թէ խօսք տուաւ այն աղջկան՝ վաղը ի միտսին քրոջը թաղուած գերեզմանատունն երթալու : Այդ խոտուածը նուիրական է, և Ստուած չընէ որ ես արդեւք ըլլամ կատարուելուն :

Յորընէօզ աւելի վերաւորուելով՝ չուզեց խօսքի տակ մնալ :

— Պէտք էր որ անսիրտ մարդ մ'ըլլայի այդ խոտուածն չի բռնելու համար, ըսաւ՝ Օր. Բօլէի աչերուն մէջ նայելով. ես տիրաներուն կողմն եմ և պիտի ըլլամ միշտ :

— Մեծ վեհանձնութիւն է այդ, ըսաւ Մարկըրիթ հեզնութեամբ, բայց երբեմն վեհանձնութիւնը սուղի կը նստի :

— Ես ծախքին չեմ նայիր, պատասխանեց նկարիչը :

— Մարկըրիթ, շատ առաջ կ'երթաս, գոչեց Պ. Բօլէ : Պ. Յորընէօզ աղատ է իւր ժամանակն ուղածին պէս գործալու : Ձեզ համաձայնեցնելու համար՝ ես կ'առաջարկեմ որ... :

Այս հաշարարութեան փորձն ընդմիջուեցաւ գրան բոժոժն ուժգնապէս հնչելով :

Պինոս, որ դժգոհ աչքով կը դիտէր այս բանակուիւրը, և բորբոսի Օր. Բօլէի կողմն էր, զոր շատ փառաւոր կը գտնէր, գայրացեալ իգառիւծի դիրքին մէջ, վէճին վերջ տալու համար փութով վազեց դուռը բացաւ առանց իւր բարեկամին հարցընելու :

Պարոն մ'էր ներկայացողը, նոր ածիրուած, ձերմակ փողկապով սեւեր հագած պարոն մը :

Պինոս, որուն գլուխը խճողուած էր հանրակառքի ոճիրին յիշատակներով, ոտտիկանութեան պաշտօնեայ մը կարծելով դայն, մինչեւ գետին խոնարհելով ողջունելէ ետեւ, սխաւ դատական

ըննութեան վերաբերեալ խօսքեր ընել :

— Ներեցէք, պարոն, ըսաւ նորեկը, ես դաւաւան եկած եմ Պ. Բօլէն տեսնելու... : Ըսին ինձի թէ նկարիչ Պ. Բօլ Յորընէօզի արուեստանոցն և կած է, և ես ալ համարձակեցայ... :

— Ես եմ ահա ձեր փնտաածը, գոչեց Պ. Բօլէ դէպի դուռը վազելով :

— Պարոն, յարեց այցելուն, պատիւ ունիմ ձեզ ողջունելու : Ես Վ. Տրիւստոն նստարն եմ. Ամէլի-լէ-Պէնէն կուգամ ձեզի բերելու համար... :

— Եղբորս կտակը... գիտեմ... : Ես պատուիրեր էի ծառաներուս որ գան ինձի իմացընեն, և շնորհակալ եմ որ դուք հոս դալու աշխատութիւնն յանձնուիք :

— Միւրեւի Պ. Յորընէօզ, ներեցէք ինձի : Այս պարոնին կը սպասէի անհամբեր... ընտանեկան գործի մը կարողադրութեան համար : Հետեւապէս նարկարեալ եմ բաժնուիլ ձեզնէ :

— Շատ բնական է, ըսաւ նկարիչը սոսնարհելով :

— Բայց քանի մ'օրէն վերստին կը տեսնենք զիրար. և կը յուսամ որ ամէն բան կը կարգադրուի ձեզ և մեզ վիանգամայն գոհ ընելու կերպով : Այս առաջին այցելութիւնը չի սեպուիր :

— Եկու, Մարկըրիթ, աւելցուց Պ. Բօլէ, որ ինքզինքը կորնացուցածի պէս ըր :

Մարկըրիթ ալ անմիջապէս դէպի ուն ուղղուեցաւ հօրն ետեւէն՝ առանց Յորընէօզի նայելու, բայց ժպիտով մը պատուեց շողիչը, որ շատ փառաւորուեցաւ :

Նստարն արդէն սանդուղին գլուխն ըր : Յորընէօզ քաղաքավարութեամբ իւր բերուն ետեւէն գնաց մինչեւ սան-

դուղին առաջին ոտքը, խիստ նայուածքով մը չափաւորեց Պինոսի եռանդը, որ մինչեւ փողոցին դուռը ուղեկցելու երեւոյթ ունէր, և դարձաւ անոր հետ աշխատանոցը մտաւ :

Պ. Բօլէ, որ նստարին թեւը մըտնելով վար կ'իջնէր սանդուղէն, առանց համբերելու խօսք բացաւ :

— Միւրեւի՛ պարոն Տրիւստոն, կտակը հետերնիդ բերած էք անշուշտ, և ցոյց պիտի տաք ինձի, որովհետեւ ձեր հեռագիրները խիստ համառօտ տեղեկութիւն մը տուեր էին ինձի : Կրնաք պարծիլ թէ լաւ մը վախճուցիք զիս : Դիւրին բան չէ կորնացընել այդպիսի կարեւոր ժառանգութիւն մը, որ իմ արդար իրաւունքս է :

— Որո՞ւ կ'ըսէք, պարոն, պատասխանեց նստարը : Ես ամէն կրցածս ըրի հարուածին առաջըն առնելու համար, և հաւատացէք որ եթէ ինձմէ կախում ունենար, չէիք զրկուէր այդ փառաւոր հարստութենէն :

— Այո՛, այո՛... գիտեմ... և ես բընաւ պատճառ մը չունիմ ձեզ մեղադրելու, որովհետեւ ձեր չի կրցածը նախախնամութիւնը կատարեց :

— Ի՞նչպէս :

— Դուք գէշ լուր մը հեռագրեցիք ինձի, բայց ես լաւ լուր մը պիտի տամ ձեզի : Եղբորս կտակը կուտ մը չընէր :

— Ներեցէք, պարոն... ես տեսայ դայն և դժբաղդաբար կրնամ հաւատով ձեզ թէ՛ ընդհակառակն կատարելապէս կանոնաւոր է : Ամբողջապէս կտակողին ձեռքովը գրուած, ստորագրուած և թուագրուած է, մինչեւ խի կատարելապէս անկասկած ըլլալու համար քանի մը մարդոց ալ կարդացուցած էր յայտնելով թէ ճշդիւ իւր վերջին կամքն էր : Ըսել է թէ բան մը պակաս չէ, և դուք դժբաղդաբար իրաւունք չունիք յուսալու թէ... :

—Բան մը պակաս չէ կտակին օրինաւորութեանը մասին, շատ ազէկ, բայց մեռած է, պատասխանեց Պ. Բօլէ:

—Մեռած է, կրկնեց նօտարը, բայց ի՞նչպէս:

—Այսինքն թէ մառանգորդ կարգուած Պիանքա Ասգրոտի անուն ազնիւն եղբորմէս օր մ'առաջ մեռած ըլլալով, չկրցաւ այդ ժառանգութեան տիրանալ:

—Վաւերական սպառնոյց ունի՞ք մեռած ըլլալուն:

—Վաղը պիտի ստանամ, կը տեսնէք ահա որ գործս կարգին է:

Նօտարը գլուխը կ'երերցընէր տարակուսելով:

—Երբ մահուան վկայագրին օրինակը տեսնէք, տարակոյսնիդ կը փարատի:

—Այդպէս չէ, պարո՛ն, ըսաւ նօտարը տիրութեամբ: Պ. Յրանսի Պօսյէ, իւր բոլոր ունեցածը երկու բնական զաւակներուն կտակեց, Պիանքայի և Բիայի: Եթէ մէկը մեռաւ, ամբողջ ժառանգութիւնը միւսին կը մնայ, եթէ ան ալ մեռած չէ ձեր եղբորմէն առաջ:

—Ա՛հ, աէր Աստուած, ամէն բան կորած է ինձի համար... վասն զի այդ Բիան օղջ է... քիչ մ'առաջ տեսայ թշուառականը:

Մարկըրիթ հօրը մօտէն երթալով, ամէն բան լսած էր:

—Իմ կորուստս աւելի մեծ է, մրմնջեց: Երանի թէ այդ աղջիկն ալ սատկէր, պժգալի արարածը, որ սիրած մարդս ձեռքէս առնելէ զատ, ինձի գալիք հարստութիւնն ալ կապտեց:

7

զաքը չըջապատող պարսպին վերնալէն առաջ մաքսին սահմաններէն դուրս կը գտնուէին, ուր հեռեւորար տարուստը նուազ սուղ էր:

Եւ երբ ազքատ մարդիկ կը մեկնին աշխարհէս, զանոնք այդ ամբութիւններէն դուրս կը տանին կը թաղեն:

Իսպաքին մէջի մեծ գերեզմանատունները առանձնաշնորհեալներուն համար են, որք մշտնջենապէս գետին մը գնելու կարողութիւն ունին:

Սրդարեւ այդ գերեզմանատուններուն մէջ զատ անկիւն մը կայ ազքատներու և անտերունջ մեռեալներու համար, որ հասարակաց փոս կը կոչուի. բայց միջին կարգի մեռեալներն որք ասօմամանակեայ կերպով թաղուելու համար տեղ կը վարձեն, ոչ ևս կ'ընդունուին:

Ասոնց համար Սէնթ-Ուանի և Իվրիի արուարձաններուն գերեզմանատունները յատկացած են:

Գեղերուն մէջ հանգստի դաշան ամէնուն սեփականութիւնն է: Ազարակին սպասուորն և զղեակին ազնուական տէրը միեւնոյն հողին մէջ կը նընչեն: Ընկերական վիճակի տարբերութիւնները կը վերանան գերեզմանին մէջ:

Փարիզի մէջ, որ առաջին հաւասարական քաղաքն է, հարուստները միայն իրաւունք ունին իրենց ոսկորները գերեզմանի մէջ պահելու:

Սէնթ-Ուանի գերեզմանատունը նոր է, Բէն-Ղաշէի, Մօնմանթրի և Մոն-Բառնասի վեհ նկարագիրը չունի. դեռատի մ'է, անշուք և անփառունակ:

Փարիզի հիւղիսակողմը արածուած տխուր դաշտին մէջ մաս մը հող պատով շրջանակուեցաւ, և գերեզման փորողներու յանձնուեցաւ: Մէջը ծառ մը չի կայ որ շրջակայ արտերէն որոշէ զայն. չոր և մերկ գետին մ'է, բայց ոչ լռին:

Կառախուժներուն սոյլը, թրամուէյներուն փողը մօտը գտնուած գինետուններուն նուագածութիւնները կը լսուին. վասն զի պարսպագոնէն սկզսեալ հոն տանող ուղին երկու կողմէ գինետուններով և գեղջկական պարահանդէսներով շրջապատուած են:

Պ. Բօլէի և աղջկանը Պ. Յրանէօղի աշխատանոցնայցելելունհետեւալ օրը, ցերեկին, այն փոշոտ ճանրուն վրայէն հրապարակի կառք մը կ'երթար, որուն մէջ նստած էին նկարիչն և Բիա Ասթրոտի:

Պինոս ալ կառքին առջևի անթոսին վրայ նստած կը խօսակցէր կառավարին հետ:

Յրբնէօղ չէր ուզեր հետն առնել շրպղիչը, որուն անպատեհ շարժումներն և անխորհուրդ խօսքերն անտանելի էին իրեն, բայց Պիանքայի թաղումին ներկայ գտնուած ըլլալով, առանց անոր Յրբնէօղ չի պիտի կրնար գտնել հանրակառքի ոճրին զո՛հ եղող դժբաղդ աղջկան թաղուած տեղը:

Ասկէ դաս, Պինոս առջի օրը երգում քրեր էր պատշաճօրէն վարուելու, Բիայի կոկիծը յարգելու, և մանաւանդ չխնայելու անոր՝ Պիանքայի սպաննուած ըլլալը:

Մարկըրիթի այնպէս խիստ կերպով մեկնելէն ետեւ՝ երկու նկարիչները կիրքոտ խօսակցութիւն մ'ունեցեր էին իրարու հետ. Յրբնէօղ կշտամբեր էր զՊինոս այնպէս բիրտ կերպով Բիայի խնայեցելուն համար քրոջը մեռնիլը: Պինոս ծիծաղեր էր Յրբնէօղի փափկանկատութեան և միանգամայն այդ տխրարի պաշտօն կատարող փոքրիկին նախապատուութիւն տալուն վրայ, որ՝ ըստ իւր կարծեաց՝ և ոչ իսկ արժանի էր իբրեւ սենեկապանուհի ծառայելու պայծառագեղ և մեծախարթամ օրիորդ Բօլէի:

Կ'ըսէր թէ խենթ պէտք էր ըլլար արհամարհելու և սրտնեցընելու համար այնպիսի ուրպէնեան սքանչելի գեղուհի մը՝ խեղճ խալուհիին կողմը բռնելով:

Յրբնէօղ բարկանալով՝ հրամայեր էր Պինոսի որ այլ եւս չի խառնուր իր գործերուն և Պիանքա Ասթրոտի իրաւ կամ ենթադրեալ սպանման խօսքը չընէ իրեն:

Պինոսի ուզածն ալ այս էր, որովհետեւ խօսք տուեր էր Բիէտուշի՝ բացարձակապէս գաղտնի պահել իւր անցեալ և ապագայ գործողութիւնները:

Որտուած էր որ հետեւեալ օրը երեքը մէկէն Սէնթ-Ուան երթան, և Պիանքայի գերեզմանին այցելէ ետեւ՝ Պինոս մինակ թողու Յրբնէօղը Բիայի հետ:

Դժբաղդ աղջկուկը սուկալի կերպով փոխուած էր և չէր դադար լալէ հակառակ իւր բարեկամին յորդորանաց:

Առաւօտուն կանուխ Յրբնէօղ Յօսէ-Սէն-Պէտնար փողոցը հայր Լօրէնձօյի տունը գացեր էր Բիան առնելու, որ վերի յարկը փոքրիկ սենեակի մը մէջ կը բնակէր: Երբ նկարիչը տեսեր էր իւր սենեկիկին դրանը մէջ, քիչ մնացեր որ մարէր:

Առաջին անգամ էր որ Յրբնէօղ ոտք կը դնէր այն սենեակին մէջ, որուն համեստ կարասին Բիա գնած էր այն ստակով զոր կը շահէր ախպարի պաշտօն կատարելով Յրբնէօղի քով: Ուրիշ ժամանակ, դեռ առջի օրը, ուրախութեան առիթ կ'ըլլար այս այցելութիւնը:

Բայց ազեկը նոյնը չէր Պինոսի բերած չարագոյժ լուրն իմանալէ ի վեր: Երեսին դոյնը փոխուեցաւ երբ տեսած Յրբնէօղը, և դողոյնը սկսաւ, բայց կրցաւ ինքզինք ետ քաշել, երբ նկատ

րիչն առաջ քալեց զայն թեւերուն մէջ առնելու համար, և անշարժ ու համր կեցաւ անոր առջեւ:

Կը տեսնուէր որ սիրտէն զարնուած էր:

Յորնէօզ քաղցրութեամբ ըսաւ անոր թէ եկեր էր խնդրել իրմէն որ ի միասին գերեզմանատուն երթան, ուր ծաղիկներ պիտի տանէր Պիանքայի գերեզմանին վրայ դնելու համար. բայց զգուշացաւ ամենափոքր ակնարկութիւն մ'ընելէ Պ. Բօլէի այցելութեան և անոր աղջկան ամբարհաւած վարմունքին վրայ:

Նմանապէս զգուշացաւ հանրակառքին մէջ անցած տեսարանին և իւր մասնակցութեան պատմութիւնն ընելէ:

Ի՞նչ հարկ կար այդ տխուր պատմութեամբ խեղճ աղջկան կսկիծը գրբագռելէ: Ի՞նչ պէտք ունէր Բիա գիտնալու թէ իւր քրոջ մահուան վրէժը պիտի առնուէր: Արդէն Յորնէօզ ալ լիովին համոզուած չէր թէ Պիանքայի մահը ոճրի մ'արդիւնք էր, աւելի կը սիրէր հակառակին հաւատալ:

Բիա փութաց ինքզինքը շտկել. բայց վարանեցաւ երթալ նկարչին հետ: Յորնէօզ՝ զարմանալով՝ զայն հաճեցընելու համար պարտաւորեցաւ յիշեցընել իրեն թէ առանց իրեն չէր կրնար երբէք գտնել իւր քրոջ գերեզմանը:

Ճանբայ ելան լոին, և երբ կառքը Բիկալ հրապարակը հասնելով Յորնէօզի տանը դրանը առջև կեցաւ և նկարչիչը կառքէն վար իջնելով Պինոսը կը կանչէր, որ մօտի սրճարանին մէջ կ'ըսպասէր, Բիա մրմնջեց.

—Ո՛չ, ո՛չ, չպիտի երթամ:

Յորնէօզ գուշակեց որ Բիա միաքըբ բաժ էր ոտք չի կոխել այլևս այն աշխատանոցին մէջ, ուր Օր. Բօլէ վերջապէս պիտի դար, և այդ անբար-

տաւան նորեկը զինքը մտածել տուել էր:

Պինոս վրայ գալով կառավարին քովը նստաւ կամովին, և Յորնէօզ միակ մնաց աղջկան հետ, որ լուր կը կենար:

Կառքը նորէն ճանբայ ելնելով՝ բաւական երթալէ ետեւ գերեզմանատունը հասաւ:

Պինոս վար ցատկելով կառքին դռնակը բացաւ: Բիա չուզեց անոր թեւը բռնել վար իջնելու համար, և Յորնէօզ չի դարմացաւ աղջկան այս դեմք կամութեանը վրայ, որով չէր ուզել ընդունիլ այդ չար երիտասարդին ձեռքը, որ առջի օրն իր աչքը միմիայն գեղաշուք Մարկըրիթի վրայ ուղղուած էր:

Գերեզմանատան դրանը մէջ բազմաթիւ մարդիկ կային այլ և այլ արհեստներու զբաղող. քարակոփներ, որ մեռելական սափորներ և կէս սիւնեկ կը շինեն: Պարտիզպաններ, որք ծաղկանց թաղարներ կը ծախեն. շքադրամաւոր առաջնորդներ, որք գերեզմանատան ճեղքիչ-թիւնները ցոյց կուտան օտարականներուն, առանց հարչուելու դազադակիր կառասպանները որք անկիւնի գինետան մէջ իրենք զրբենք զովացնելու զբաղած էին:

Բիայի երեւումն իրար անցուց այլ ամէն մարդիկը: Խեղճ տղան սուգ չէ մտած, վասն զի չէր կրնար: Ընդհանուր սովորութեան յարմարելու համար պէտք պիտի ըլլար Փրանսուհի կերպարանք մանել: Բայց իւր հայրենի երկրին հագուստներէն գատ ուրիշ զգեստ չունէր: Սուպիաքոյի կանան ձեռմակ գտակն ու կարմիր շրջագգեստ հագած էր. տարազ մը, որ Մարթիր թաղին փողոցներուն մէջ յաճախ կը տեսնուի, բայց գերեզմանատանը գտնուելու մէջ խիստ քիչ անգամ:

Յորնէօզ նշմարեց որ մարդիկը պէտք եղածէն աւելի կը նայէին իրենց, փութաց պէտք եղածը գնելու: Յուցադրուած տեսակ տեսակ անախորժ ծաղկէ պսակներն ու շրջանակները թողլով պարտիզպանի մը քով գնաց և չորս թաղար թարմ ծաղիկ գնեց:

Բայց Բիա ետ մնացեր էր սեւ մարգրիտէ փոքրիկ խաչ մը գնելու համար, որուն ստակը ինք վճարեց:

Պինոս, որ արդէն գերեզմանատան մէջ մտեր էր, սկսաւ ձայնով ու ձեռքով կին մը կանչել, որ առջևէն կ'երթար, արտառոց գլխարկով և հին շորջագգեստով կին մը:

—Ի՞նչ է այս, ըսաւ Յորնէօզ զարմանքով, արդեօք նորէն իւր արհեստով պատրաստած կերակուր մը պիտի հըրամցընէ մեզի: Ո՞վ է այդ պատաւ կախարհակին գոր առեր ինձի կը բերէ: Ստիւգիւ խենդ է այս շաղիչը:

Պինոս պառաւին թեւը մտեր, գրեթէ քաշելով կը բերէր, վասն զի շատ տրամադիր չէր իրեն հետ գալու:

Բիա, որ Յորնէօզի քով հասնելու համար կը յառաջանար, կանգ առաւ երբ տեսաւ շաղիչը, որ ետ դարձեր իրենց քով կուգար տարօրինակ ընկերուհիի մը հետ:

—Այս խենդը կրնայ փախցընել խեղճ աղջիկը, ըսաւ Յորնէօզ ակոսներուն մէջէն: Երթամ վերջ գնեմ իւր այդ անպատեհ կատակին:

Եւ ուղակի գնաց Պինոսի քով, որ գոչեց իրեն:

—Քեզի կը ներկայացնեմ օրիորդ Սոֆի Քորնիւն, որ կը պատուէ գիս իւր բարեկամութեամբ, և որ իւր գրգռանէն վճարեց Պիանքա Ասթրոտի գերեզմանին տեղը: Տիկին Քորնիւն, ձեռի կը ներկայացընեմ Բօլ Յորնէօզ բարեկամս, առաջին կարգի նկարիչ, ամէն ցուցահանդէսներէ բնդունուած և երբ անգամ շքադրամ ստացած:

Պառաւ աչերը խոշոր բացած Յորնէօզի կը նայէր, որ սատանային կը զրկէր թէ՛ Պինոսն և թէ՛ անոր ներկայացումները:

—Շատ աղէկ, մրմնաց պառաւը քրթին տակէն, ահա այդպիսին կը կոչեմ ես նկարիչ:

«Ձեր աշխատանոցը Բիկալ հրապարակին վրայի մեծ տունը չէ՞: Ես կը ձանչեմ ձեզ. ինչպէս նաեւ թաղին բոլոր բնակիչները: Դուք բարեկամս էք այս անպիտան Պինոսին:

Յորնէօզ կրակ կտրեցաւ բարկութենէն, և քիչ մնաց որ կրնակը պիտի դարձունէր պատաւին, բայց Յոֆի Քորնիւ ժամանակ չի թողուց պատասխանելու:

—Լա՛ւ, ըսաւ ով որ բան մը չըսեր, հաւանութիւն կուտայ: Սյս հարցումը կ'ընէի ձեզի, վասն զի պարոնի մը դէմք ունիք դուք, մինչ Պինոս... որուն թերեւս ձեր գունատախտակը մաքրել կուտաք: Եւ այդ փոքրիկ աղջիկը տիպար մ'է, այնպէս չէ՞:

—Ի՞նչպէս, յարգելի տիկին Քորնիւ, ըսաւ շաղիչը, չէ՞ք գուշակեր ով ըլլալը: Երեսը նայեցէք քիչ մը, և գտէք նմանութիւնը:

Պառաւ սկսաւ դնել Բիան, որ չէր համարձակեր քայլ մ'առնուլ, և գոչեց.

—Իրաւունք ունիս աղա՛ս, ճշդիւ վախճանեալ վարձակալիս պատկերն է: Ինչո՞ւ չըսիր անոր քոյրը ըլլալը: Եւ տակալն երէկ ասոր խօսքն ըրիր ինձի Պիանքայի թաղման միջոցին: Հոս կանչէ ուրեմն որ համբուրեմ:

Պառաւ սուր ձայն մ'ունէր, և Բիա լսեր էր անոր խօսքերը: Յորնէօզ մէջ մտաւ պատաւին սրտաղեղումն արգիլելու համար:

—Տիկին, ըսաւ խստութեամբ, այս աղեկն ընկճուած է արդէն կսկիծէն:

կ'ազաջեմ որ չափէք ձեր խօսքերը: Գիտեմ որ իւր քոյրը ձեր ծախիւք թաղել տալու բարեհարութիւնն ունեցաք. բայց պէտք էր հասկընայիք թէ զինքը դառնապէս կը վշտացնէք այդ արխուր յիշատակը նորոգելով:

— Եւ սակայն ես բնաւ դիտում չունիմ վշտացնելու... և իբր ազացոյց, բնաւ խօսք չսխախտելու ան զերեզմանատան մէջ... վասն զի ետքը... պէտք է որ խօսիմ իրեն հետ, մինչեւ իսկ պէտք է տունս գայ իւր քրոջ անտուր վերցրնելու: Կարծեմ թէ զինքը վշտացընող բան չի կայ այս ըսածիս մէջ: Դուք չէք ձանձեր դիս, բայց հարցուցէք Պինոսին թէ իմ քով չարութիւն կա՞յ: Գիտէ՞ք ինչու եկայ հոս այս առտու: Խօսեցայ քարակոփին հետ որպէս զի մարմարէ գեղեցիկ քար մը շինէ գերեզմանին վրայ դնելու համար:

— Այդ հոգն ինձի կ'իյնայ, ըսաւ Ֆրընէզ:

— Ա՛, բայց ոչ: Եթէ կ'ուզէք ծախքը կը բաժնենք մէջերնիս. բայց ես ինքս վճարել կ'ուզեմ: Եւ որովհետեւ հոս եմ, զիս չէք արգելիր որ երթամ տեսնեմ թէ երէկ ապապրած ծաղիկներս պարտիզպանը տարեր դրե՞ք է գերեզմանին վրայ: Օ՞, անհող եղի՞ք, ևս ձեզի նեղութիւն չեմ պատճառեր: Զեր առջեւէն կ'երթամ Պինոսի հետ, դուք ալ այդ ազեկին հետ մեր ետեւէն կուգաք:

Փրընէզ կրնար մէկէ աւելի ստարկութիւններ ընել, բայց վերջին կարգադրութիւնը զինքը կ'ազատէր թէ պտուռէն և թէ՛ Պինոսէն: Ուստի թողուց գանձք որ երթան, և ինքը դընայ Բիան առնելու, որ կեցած տեղէն չէր շարժեր:

Տեսաւ որ կույար, և քաջութիւն չունեցաւ հետը խօսակցելու: Ուստի սկսան երթալ այն ճամբէն, զոր Սոֆի

Քորնիւ և Պինոս բռնած էին, բեռնակիրն ալ իրենց ետեւէն կը բերէր թաղարներն ու ծաղիկները, զորս Ֆրընէզը գնած էր:

Բիա՛ արտասուքը սրբելով՝ սկսաւ քալել նկարչին քովէն, առանց աչքը վեր առնելու և խօսք մը ընելու:

Այսպէս քալելով հասան գերեզմանատունը, և սլառաւին ու Պինոսի ետեւէն մտան ճամբու մը մէջ, որուն մէկ կողմը երեք կարգ գերեզմաններ կային համեստ երեւոյթով, եւ միւս կողմն ալ ընդարձակ գետին մը, որուն մէջ տեղը երկայն խրամ մը պեղուած էր, որ հասարակաց փոսն էր:

Բոլ Փրընէզը յիշեց որ առանց այն պտուռին, զոր այնչափ դէշ կերպով ընդունած էր, Պիանքայի մարմինն այն փոսին մէջ պիտի նետուէր, որ անտէրունջներու գերեզմանն էր: Ըսաւ ինքնիրեն թէ Բիայի դալն և յատուկ գերեզմանի մը վրայ աղօթելը Սոֆի Քորնիւյի շնորհիւն էր, անոր կը պարտէր այդ միտիթարութիւնը. հետեւաբար այդ պտուռը նուազ ազեղ և նուազ ծաղրելի երեցաւ իրեն:

Բիչ մը աւելի ուշադրութեամբ դիտելով դայն, գտաւ որ դէմքը հակարկի չէր:

— Իրատունք ունի, կ'ըսէր մաքէն, Բիա չի կրնար ետ կենալ այդ կնոջ տունն երթալէ, և քրոջը սնտուկն ու թուղթերն առնելէ... վասն զի վերջապէս հարկ է որ խեղճ ազջիկը հաւատարմութիւն թէ մեռնողն իւր քոյրն էր: Ուստի պէտք է որ համոզեմ զինքը քանի մ'անհրաժեշտ ձեռնարկներ ընելու... թէ և զիս մտիկ ընելու արամադիր չերեւիր: Կր փորձուիմ հաւատարմութիւն սրբողած է ինձի: Հայր Լորէնձոյի տունէն մեկնելէս ի վեր բերանը չի բացաւ, և խօսք մը չբրաւ՛րաւէ գտաւ:

«Թերեւս Պինոսի ներկայութիւնը կը վշտացնէ զինքը: Բարեբաղդաբար քրոջը գերեզմանին քով հասնելէ ետեւ պէտք չեմ ունենար այդ շաղակաւտին, պարզապէս կը խնդրեմ իրմէ որ հեռանայ մեր քովէն:»

Արդէն Պինոս բաւական յառաջացած էր. այնչափ շուտ կը քալէր, որ պտուռը դժուարաւ կը հեռուէր իրեն, և անշուշտ շահագրգիռ խօսքեր կ'ընէր անոր. վասն զի անդադար ձեռքի և գլխու շարժումներ կ'ընէր տարօրինակ ոգեւորութեամբ:

— Ի՞նչ կը հասկըցընէ արդեօք պտուռին, կը հարցընէր Փրընէզ ինքնիրեն: Թերեւս հանրակաւքին եղերական դէպքը կը պատմէ, որ ծանր հետեւանք կրնայ ունենալ: Պտուռը կը տարածէ պտուռութիւնը թաղին մէջ, և բերնէ բերան մինչեւ ոստիկանութեան անոջին տկանջը կը հասնի, որ անմիջապէս քննութիւն կը բանայ, դատական իշխանութիւնը մէջ կը մտնէ... և թերեւս հարկ կը տեսնուի դժբաղդ Պիանքայի մարմինը գերեզմանէն հանելու: Բիա կը մեռնի սրտին ցաւէն:

«Եւ Աստուած գիտէ ինչեղբ կ'ունենայ այդ գարշելի արարողութիւնը: Ես հիմա գրաւ կը դնեմ թէ ո՞՞ր դորձուած չէ. և թէ ո՞չ բարձրաւանդին մարդը, ո՞չ ալ կառքին մէջի կիներ մտան չունին ազջիկն մեռնելուն մէջ:»

Այս խորհրդածութիւնն ըրած միջոցին, Պինոս և ընկերուհին աջ կողմ դարձան, Փրընէզը ալ անոնց ետեւէն մտաւ կողմնախան ճամբու մը մէջ, որուն երկու կողմը ճաղած նոճիներու շարք մը կար:

Այս նեղ ճանրուն մէջ հարիւր քայլի չափ երթալէ ետեւ Պինոս և պտուռը կանգ առին:

— Հոն է, ըսաւ Փրընէզ աչքին ծայրովը Բիայի նայելով, որ ստակալի կեր-

պով աժգունած էր: Արիութիւն, դաւա՛կս, եկու թեւիս կրթնէ, և հոս կենանք, եթէ կարող չես աւելի առաջ երթալու:

— Շնորհակալ եմ, մրմնջեց խտաուհին, կ'երթամ մինչեւ ծայրը... մինակս կ'երթամ:

Նոյն միջոցին Պինոս երեւցաւ ծառուղիին եզրը և նշանացի կանչեց գանոնը: Քանի մը քայլ ետ մնացած էին: Յառաջ դացին: Յանկարծ Փրընէզը Սոֆի Քորնիւի խապտ ձայնը լսեց որ կ'ըսէր:

— Օ՛, դուք հո՛ս, տիկին Պլանչէն. կրակն այրէ տունս եթէ ձեզ հոս գտնել անցունէի մտքես:

— Ո՞ր սատանային հետ է այդ խենթ պտուռին խօսակցութիւնը, կը հարցընէր ինքնիրեն Փրընէզը:

Նոճիներուն վարագուրածեւ շարքը թող չէր տար տեսնել այն անձն, որուն հետ կը խօսէր տիկին Քորնիւ, և Պլանչէն անունն ալ բացարձակապէս անծանօթ էր իրեն: Բայց կը գայրանար թող տուած ըլլալուն համար զՊինոս շաղակաւտ պտուռի մը հետ, որ Պիանքայի գերեզմանէն երկու քայլ հեռու խօսակցութեան կը բռնուէր անծանօթ կնկան մը հետ. ուստի միտքը դրաւ կարելի եղածին չափ շուտով ճանրել պտուռը:

Սակայն շարունակեց յառաջանալ, և շարժելը, որ ծառուղիին եզրը կեցած էր իբրեւ պահակ, մատովը փորրիկ հողակոյտ մը ցուցուց վանդակապատ, և վրան ալ քարեր դրուած, որոց ծախքը Սոֆի Քորնիւ վճարած էր ազնուարար:

Ինեղճ ազջիկը ողորդալով յառաջացաւ մինչեւ քրոջը գերեզմանին քով, ծնրադրեց, և վրան տնկեց գերեզմանատան դրանը մէջ գնած փոքրիկ խաչը:

Յետոյ սկսաւ աղօթել ձեռնամած, գլուխը վանդակին յեցած:

Ֆրընէօզ զայն չչփոթեցընելու համար կամացուկ մը ետ քաշուեցաւ և մտաւ ծառուղիին մէջ, ուր թողուցեր էր ծաղիկներու չորս թաղարները բերող մարդը:

— Օգնէ՛ ինձի սա թաղարները գերեզմանին քով տանելու, ըսաւ Պինոսի, թիկնոցակին ծայրէն քաշելով. չեմ ուզեր որ բռնակիրը զայ վրդովէ Բիայի աղօթքը:

— Լաւ, ես ինքս մինակ կրնամ տանիլ, պատասխանեց շարժելով. բայց այս բարի տիկին Սօֆիին խորհարկութիւն ըրին: Պարտիզականը, որուն ստակ վըճարեց երէկ գերեզմանին վրայ ծաղիկներ տնկելու համար, բան մը չէ ըրեր:

— Բայց քու Սօֆիդ ալ անտանելի է: Միթէ գերեզմանատուն եկողը շաղակրատելու կուգայ, և ո՞վ է այդ կինը որ անոր հետ կը խօսակցի:

— Իրաւ որ չեմ գիտեր, սա միայն կրնամ ըսել թէ իշխանուհիի մը պէս հագուած է: Տիկին Քորնիւ գեղեցիկ ծանօթներ ունի:

Չայս լսելէ ետեւ Պինոս թաղարներն առնելով գերեզմանին քով տանիլ սկսաւ: Ֆրընէօզ, անոր ճամբայ բանալու համար կռնակը նոճիի մը տուաւ, որուն ետին կեցած կը խօսակցէին երկու կիները, և սա խօսքերը լսեց, որք յստակ ձայնով մը կ'արատանուէին.

— Ճշմարիտ է ուրեմն ինձի ըսուածը, սիրելի՛ օրիորդ Քորնիւ... թէ ձեր վարձակալուհիներէն մին Մօրիլ տարուեր է: Կը յիշէ՞ք որ վերջին անգամ ինձի խորհուրդ հարցընելու եկած ժամանակնիդ գժբաղղութիւն մը գուշակեցի ձեզի, գոհ եմ որ ձեր անձին չէ պատահեր, բայց սիրտս անհանգիստ

ըլլալով ձեր տունը գացի: Հոն ըսին ինձի թէ Սէնթ-Ուան եկեր էք, և ես ա՛յն աստիճան փափաք ունէի ձեզ տեսնելու, որ խոյն կառք մը բռնեցի ձեր ետեւէն հասնելու համար: Եւ աւելի առաջ հասայ:

— Ես հանրակառքով եկայ: Բայց... գիտէ՞ի՞ք ուրեմն աղջկուկին ո՛ւր թաղուած ըլլալը:

— Անունն ըսեր էին ինձի: Ուստի գերեզմանատան պահապանին սենեակը մտայ, հարցուցի, և տեղը ցոյց տուին ինձի: Բայց կը տեսնեմ որ մինակ չէք:

— Ոչ, դրանք մէջ ծանօթ մարդու մը պատահեցայ... սա այժի մօրուքով չորուկին... այս մարդն իմացուց ինձի երէկուան առջի օրը թէ աղջիկը Մօրիկն էր:

— Արդեօք սա գերեզմանին վրայ աղօթող աղջկուկն անոր հետ է:

— Այո՛, անոր և ուրիշի մը հետ... որ նկարիչ մ'է...

— Նկարիչ մը... կը հասկնամ, այդ տղեկն իտալուհիի կերպարանք ունի. տիպար մ'է անշուշտ:

— Այո՛, տիկին Պլանչէն, և մեռնողին քոյրն է:

— Քոյրը՛, կարելի չէ, գոչեց տիկինը:

— Բայց այո՛, և անունն Ասթրոտի է միւսին պէս... և շատ կը նմանի անոր, կարծես թէ ան է:

— Չարմանալի՛ բան:

Ֆրընէօզ բառ մը կորուսած չէր այս խօսակցութենէն, որ սակայն նոր բան մը չէր յայտնեց իրեն, սակայն զարմացաւ որ Պիանքայի մեռնիլն այնչափ կը շահագրգռէր այդ տիկինն, և ուզեց տեսնել զայն: Կամաց մը ծառուղիէն վեր ելնելով երկու նոճիներու մէջ տեղը մտաւ երկու կիներուն դրանուած դժին վրայ, քանի մը քայլ հեռու:

Բիա կ'աղօթէր միշտ, և Պինոս մեծ

գժուարութիւն կը կրէր ծաղկանց թաղարները վանդակապատին անջրպետներէն ներս մտցընելու:

Չայս կողմը Ֆրընէօզ տեսաւ Սոֆի Քորնիւն որ կռնակը դարձուցած էր իրեն. յետոյ վայելչապէս հագուած կին մը, որ իրեն դէմը կեցած էր, և առաջին նայուածքով, այնպէս թուեցաւ իրեն որ, այդ կնոջ դէմքն անծանօթ չէր իրեն: Նշմարեց նաև որ աչերը խոշոր բացած իրեն կը նայէր, և գուշակեց որ իւր անունը կամացուկ մը կը հարցընէր Օր. Սօֆիին:

Յանկարծ լոյս մը ծաղեցաւ մաքին մէջ:

— Բորթ-Սէն-Մարթէնի թատրոնին մէջ տեսածս է, մյմռաց:

Այս հանդիպումը շատ զարմանալի էր, և մեծ մտահոգութիւն պատճառեց Ֆրընէօզի:

Քանի մ'օրէ ի վեր ոչ եւս կը հատար հանրակառքի ոճրին, և դեռ քիչ մ'առաջ գերազանց պատճառներ դտեր էր ինքնիրեն, ապացուցանելու թէ Պինոսի գաղափարները բացարձակապէս ցնորական էին, և թէ Պիանքա Ասթրոտի բնական մահով մեռած էր: Բայց հիմա իւր բոլոր կասկածները կը նորոգուէին:

Ի՞նչ պատճառով այդ կինը հոն կը գտնուէր Պիանքայի գերեզմանին քով: Սոֆի Քորնիւի հարցման տուած բացատրութիւնները իւր ներկայութիւնն արդարացնելու համար մտածուած պատրուակներ կը թուէին պարզապէս: Ինչո՞ւ համար գոչեր էր թէ «կարելի չէր», երբ պատուէն յայտնեց էր թէ գերեզմանին վրայ աղօթող աղջիկը մեռնողին քոյրն էր:

Այս ամէն խորհրդածութիւնները Ֆրընէօզ մէկ վայրկեանի մէջ բրաւ, և միանգամայն հարցուց ինքնիրեն թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէր:

Կնկանը քով երթալ և հարցաքննել: Ի՞նչ իրաւունքով: Ապացոյց մը չունէր անոր դէմ, և ան ալ պարտական չէր իրեն պատասխանելու: Ասկէ գտնուելու կրնար տեսնել ու լսել ամէն բան. կը մեռնէր խեղճ աղջիկը, որուն դիւրագգածութիւնը սաստիկ գրգռուած էր:

Աւելի լաւ չէ՛ր ըլլար ծածկել իւր անպաւորութիւններն և անտարբեր դէմքով դիտել այդ կինը, որուն վրայ կասկածելու այնչափ պատճառներ ունէր:

— Քորնիւի միջոցով, որ կապուած է անոր հետ, կրնամ գիտնալ ուր բնակիլն և ի՞նչ ընելը, կ'ըսէր մտքէն, մինչեւ իսկ պէտք եղած խուզարկութիւնն ես ինքնս ընելու պէտք չեմ ունենար: Պինոս գոհութեամբ կ'ստանանէ գործը:

Այս ուղիղ խորհրդածութեամբ որոշեց ետ կենալ, բաւական համարեց այն կերպով շարժիլ, որով աւելի մօտեցաւ երկու կիներուն, որք խօսակցութիւնը կը շարունակէին, և թէպէտ կամացուկ կը խօսէին, կրցաւ լսել սա խօսքը անծանօթին բերնէն:

— Որովհետեւ հետերնիդ ընկեր ունիք, սիրելի՛ս, պիտի մեկնիմ ձեզնէ, բայց կէս օրէն ետքը նորէն կը տեսնենք զիրար:

— Ես ձեզի կուգամ, գոչեց պատուը. ըսելիք շատ բաներ ունիմ, շատոնց ի վեր է որ խորհուրդ տուած չէք ինձի:

— Պատրաստ եմ ծառայել ձեզի, սիրելի Սոֆի. միայն թէ մինակ եկէք: Եւ պառաւին ականջին ծուրով ուրիշ պատուէր մ'ըրաւ, զոր Ֆրընէօզ չի լսեց, բայց գուշակեց:

— Կր պատուիրէ որ իւր բնակավայրը չիմացընէ ինձի, ըսաւ ինքնիրեն:

Ասոր վրայ, երկու բարեկամուհիներն իրարու ձեռք սեղմեցին, և անծանօ-

Թուհին մեկնեցաւ առանց նշմարելու թէ հոն երկու մարդ կային որ զինքը կը դիտէին :

Պինոս ալ հետաքրքրուեր էր այդ կնոջ երեւումէն, որ ճշգիւ իրենց հասած ժամանակը ներկայացեր էր. և միտքը դրեր էր որ անոր վրայ տեղեկութիւն ուզէ նախախնամական Սոփի Քորնիւէն :

Նոյն միջոցին Բիա՝ աղօթքը լմնցընելով օտքի վրայ ելաւ լալով. և քանի մը վայրկեան վանդակապատին յեցած՝ քրոջը գերեզմանը դիտելէ ետեւ՝ ձերքնէօզի դարձաւ :

— Ծնորհակալ եմ, ըսաւ անոր կտրուկ ձայնով մը, մնաք բարո՛վ :

— Ի՞նչպէս մնաք բարով, գոչեց ձերքնէօզ : Կ՛շ յուսամ որ առանց ինծի չպիտի մեկնիս : Մեզ բերող կա՞քք Բիկալ հրապարակը պիտի տանի մեզ, նախաճաշ պիտի ընես աշխատանոցիս մէջ, և ետքն ալ պիտի շարունակենք մեր նիստը, որ ընդմիջուեցաւ երէկ :

— Ոչ, ես այլեւս տիպարի պաշտօն չպիտի կատարեմ :

Ձերքնէօզ պիտի պոռար, բայց շուտով միտքը բերաւ թէ Պիանքոյի գերեզմանը հոն աչքին առջին էր, և թէ ժամանակը չէր վիճաբանութեան մը տնելու գլուխը տաքցած աղջկան մը հետ որ անշուշտ շատ չանցած պիտի փութէր կարծիքը :

— Լաւ, այսօր արձակուրդ կուտամ քեզի. դուն հիմա խորապէս յուզուած ես, և պէտք է որ քիչ մը հանգիստ ընես : Պիտի սպասեմ որ սրտիդ ցաւը հանդարտի. բայց պիտի թողուս ինձի որ քեզ Ֆոսէ-Սէն-Պէռնար տանիմ :

— Տէ գԱպէս փողոցէն անցնելով, ըսաւ Քորնիւ, որ կամացուկ մը քովերնին մօտեցեր էր : Պէտք է որ օրիորդը գայ և առնէ իւր քրոջը լաթերն ու թուղթերը, ես չեմ ուզեր զանոնք պահել :

— Պարապ բան է, տիկին, մըմնջեց Բիա, առանց յուզուելու. ես բան մը չեմ պահանջեր քրոջս ունեցածներէն :

— Դուն մի պահանջեր, բայց ես անպատճառ քեզի պիտի յանձնեմ : Ես դիտեմ հիմա քու բնակարանդ, և կը զրկեմ քեզի :

«Բայց ես հիմա գործ մը չունիմ հոս. և պէտք է որ երթամ թոթվեմ նա գարշելի պարտիզպանը, որ ստակներս առաւ և թաղար մը շահաքրամ չի զրկեց հոս : Ահա կ'երթամ :

— Ոչ առանց ինձի, օրիորդ Սոփի, գոչեց Պինոս ես չպիտի գաւ ու իմ քեզնէ :

Եւ վազեց թեւը տուաւ անոր. ան ալ ընդունեց խօսքեր մըմնալով, որք անշուշտ մեծարանք չէին :

Բիա վերջին նայուածք մը նետեց քրոջը գերեզմանին վրայ, ուր Պինոս իւր բարեկամին գնած ծաղիկները տնկեր էր, և ծառուղիին մէջ իջաւ :

— Հիմա կը խոստովանեցնեմ զինքը, ըսաւ ձերքնէօզ անոր մօտը կենալով :

Բիա կը քալէր լռիկ, առջևը նայելով : Ձերքնէօզ, զայն խօսեցնելու համար ամէն միջոց գործածել միտքը դնելով, սպասեց որ նոճիներուն ծառուղիէն դուրս ելնէին, և ըսաւ անոր քաղցրութեամբ :

— Աղջկո՛ւկ, քու այդ ընթացքովդ վիշտ կը պատճառես ինձի :

— Ե՛ս, մըմնջեց Բիա առանց երեսը նայելու համարձակութեան :

— Այո՛ դունս կը հասկընամ որ կսկիծ ունիս և կը փափաքիս հանդիստ ընել քանի մ'օր. բայց ինչո՞ւ համար չես ուզեր վերադառնալ իմ աշխատանոցս. պատճառ ունիս ինձմէ դժգոհելու :

— Ո՛չ, պարոն Բօլ, ես բարիք միայն տեսայ ձեզնէ :

— Ինձի շնորհակարտ ըլլալու պատճառ մը չունիս : Ի՞նչպէս կրնայի հոգ

չտանիլ քեզի : որ մինակ էիր աշխարհի մէջ... գոնէ ես այնպէս կը կարծէի. և հիմա կատարեալ ճամարտութիւն է... բայց դիտեմ թողուլ այսպէս... կարծեմ թէ պատճառ մը տուած չեմ... :

«Օ՛ն, բացատրէ տեսնեմ : Արդեօք վերադարձի՞ քեզ անդիտարար :

Բիա գլուխն անդին դարձուց արատաւքը ծածկելու համար :

— Ա՛, կուլաս : Գուշակեցի ուրեմն. առանց գիտնալու և առանց ուզելու վշտացուցեր եմ քեզ : Ուրեմն ըսէ ինձի թէ ի՛նչ ըրի քեզի, որպէս զի ուրիշ անգամ ալ չընեմ :

— Բան մը չէք ըրած ինձի, պարոն Բօլ, դուք միշտ բարութիւն ցոյց տուիք ինձի, որ խեղճ աղջիկ մ'էի... եւ թերեւս նօթի մեռնէի եթէ դուք զիս փողոցէն չառնէիք : Երբէք այնչափ երջանիկ եղած չէի, որչափ եղայ ձեզ ձանչելէս ի վեր... և այսուհետեւ չպիտի ըլլամ երբէք :

— Ուրեմն ինչո՞ւ քովէս մեկնիլ կ'ուզես :

— Վասն զի պէտք է :

— Օ՛ն, լուրջ չէ այդ ըսածդ : Ո՞վ կ'ստիպէ քեզ մեկնիլ :

— Կ'ուզեմ Սուպիաքօ վերադառնալ :

— Ի՞նչ ընելու համար : Կը յուսամ հոն ալ տիպարի պաշտօն կատարել այն նկարիչներուն քով, որք ամառը հոն կ'երթան նստելու : Բայց սպորուստ անգամ չես կրնար շահիլ : Ձեր լեռներուն մէջ կ'ինքերուն ամէնն ալ այնչափ գեղեցիկ են, որ նկարիչները դժուարութիւն կը քաշեն ընարութիւն ընելու :

— Ո՛չ, պարոն Բօլ, այդ եւս տիպարի պաշտօն չպիտի կատարեմ ոչ մէկ նրկարչի քով : Իմ առջի արհեստս պիտի բանիմ : Այժմ արձուհի պիտի ըլլամ :

— Ինչեթ ես դուն : Եթէ մայրդ տա-

կաւին ողջ և հոն ըլլար, կը հասկնայի այդ խելքիդ փչումը, բայց ազգական մ'անգամ մնացած չէ երկրիդ մէջ, քանի քանի անգամ ըսած ես ինձի :

— Բայց հոս ալ մարդ չի սիրեր զիս :

— Ըսել է թէ իմ խօսքս չըլլար : Մըտիկ ըրէ, Բիա՛, շատ գէշ է այդպէս խօսիլդ... և եթէ ես աղէկ չճանչէի քեզ, պիտի կարծէի թէ սիրտ չունիս : Կրնա՞ս մոռնալ թէ ես իբրեւ բարեկամ վարուած եմ միշտ քեզի հետ, հազար ապացոյց տուեր եմ քեզ սիրոյ և յարգանաց, և դուն հիմա յախուռն կերպով կը յայտնես ինձի թէ այլ ևս չես ուզեր զիս տեսնել : Ստուգիւ փոխուեր ես բոլորովին :

«Կրնամ յիշեցնել քեզի թէ քու չուելի մեծ դժուարութեան պիտի մատնէ զիս, որովհետեւ չպիտի կըրնամ լմնցընել պատկերս :

Բիա հեծկտալ սկսաւ, և Ձերքնէօզ շարունակեց անկեղծ սրտայուզութեամբ :

— Բայց աւելի կը սիրեմ ըսել քեզի թէ՛ ոչ միայն տիպարս ձեռքէս հանելուս վրայ պիտի ցաւիմ, եթէ դուն պնդես այդ որոշմանդ վրայ. այլ որովհետեւ քու վրադ սէր կ'ապած եմ, աշխատանոցս դժոխք պիտի երեւայ աչքիս եթէ դուն չի գաս հոն :

— Ձե՛մ կրնար... չե՛մ կրնար, ըսաւ սղիկը խեղդուկ ձայնով : Եթէ ուզեմ իսկ... ձեռքս չէ... երէկ աչքովսիդ տեսաք որ մեզ մնաց մեռնէի :

Այս անգամ Ձերքնէօզ հասկրցաւ : ձերմարտութիւնը, որուն վրայ քիչ մը կը կասկածէր յայտնապէս երեւցաւ իրեն, և լռելու կարգն իրեն եկաւ :

Միջոց մը կը փնտռէր Բիայի սիրան հանդարտեցնելու, առանց խոստանալու թէ իւր գուռը պիտի գոցէր Սր. Բօլէի, և սա արդար իբրուունքը պէտք

է տալ իրեն թէ իւր պատկերին կիսաւարտ մնալն և ցուցահանդէսէն զըրկուիլը մտածելէն աւելի՝ անյոյս սիրոյ մ'անձնատուր եղած խեղճ խալուհիին սրտաշարժ կսկիծը կը մտածէր :

Հուսթեամբ շարունակեցին քալել մինչեւ ծառուղիին ծայրը :

Պինոս որ, երկայն սրունք ունէր, առջ անցեր էր Սոփի Քորնիւի հետ, որ մուկի մը պէս շուտ շուտ կ'երթար մանր քայլերով :

— Կը հաճի՞ս հիմակուան աշխատանոցէս տարբեր տեղ մը նիստ ընել ինձի համար, հարցուց յանկարծ Ֆրընէօզ :

Բիա Խոսթեամբ ցնցեց գլուխը :

— Այնպիսի տեղ մը, ուր միայն քեզ ընդունիմ օրը վեց ժամ: գործս ուշ մնացած է, և երկար նիստեր պէտք է ընել Սալոնին բացմանը հասցընելու համար, աւելցուց ժպտելով :


— Եթէ հաւատայի հնար ըլլալուն, մըմնջեց աղջիկը :

— Չէիր թոչքեր դէպի նարնջեններուն երկիրը, յարեց Ֆրընէօզ խնդալով: Շատ ազէկ, աւելի բան չեմ ուզեր: Երբեք ըրէ միայն թէ զիս վերստին չի տեսած չի պիտի մեկնիս, և թէ ինձմէ լուր պիտի սպասես քու Ֆոսէ-Սէն-Պէճար փողոցի սենեակիդ մէջ :

— Կ'երկնում քրօջս հոգւոյն վրայ, պատասխանեց Բիա իւր արաստաթուրմ խոշոր սեւ աչերն անոր վրայ վերցընելով :

— Լաւ: Հիմա քեզ սղատեմ սա Պինոսէն ու պառաւ կնիկէն: Մինչեւ իմ տանս դուր հետս կուգաս... մինչեւ տանս դուրը, և անկէց կառքը քեզ տունդ կը տանի:

Ֆրընէօզ գաղափար մ'ունեցեր էր, զոր Բիա չէր գուշակեր տակաւին, բայց ոչ եւս կուլար:



քենուհիներ, մինչեւ իսկ բարձր դասակարգէ տիկիներ, որք կրնային իրենց յատուկ կառքերով ու սպասաւորներով գալ զայն տեսնելու, եթէ իրենց զինանշաններէն ճանչուելու վախը չունենային :

Սթէլլա հին ժամանակի Սիպիլներուն դպրոցէն էր: Քնաշըջութեան հետ դործ չունէր. պարզապէս թուղթերով կը մարգարէանար, երբեմն ալ առանց թուղթի, երբ ներշնչում գար իրեն:

Եւ դրեթէ միշտ ալ կուգար ներշնչութիւնը, երբ դիմողը լաւ վճարէր:

Երկու բնակարանները, ըզձուհիներու գործակատարինը, ամբողջ առաջին յարկը գրաւած էին: Երկու մուտք ունէին կատարելապէս տարբեր, այնպէս որ Պ. Պլանչէնի յաճախորդները բնաւ յարաբերութիւն կամ գործ չունէին տիկին Սթէլլայի յաճախորդներուն հետ: Լըջամիտ մարդիկն ալ կողմի բոժոժը կը հնչեցընէին. իսկ հաւատաստուհիները ձախ կողմինը կը տեսնուէր, որ ամէնուն հասկընալի չէր:

— Սթէլլա, աշխարհահի օրերդ Լընօր-ճանի — Խորհրդակցութեան կ'ընդունի կէ-օրէն մնալու ժամ հինգ :

Խորհրդակցութիւն ինչ բանի վրայ: Շատեր չէին կրնար գուշակել, բայց զիտցողներ ալ շատ կային:

Տակաւին կը գտնուէին Փարիզի մէջ շաղակրատուհիներ որք կը յիշեն օրիորդ Լընտրմանը, թուրնոն փողոցի գուշակուհին, որուն համար կըսեն և հատառատապէս ալ կը հաւատան թէ Նարոյէն Ա. ի կայսր օծուելէն տասնհինգ տարի առաջ գուշակեր էր թէ ժողէֆին (Նարդէոնի առաջին կինը) կայսրահի պիտի ըլլար:

Սթէլլա, այդ մեծանուն հարցուկին աշակերտուհին, յաճախորդ ունէր իրեն բազմաթիւ սենեկապանուհիներ, բոլոր գախնդիր կիներ, միջին կարգի քաղ-

բէք չի բացուելով, ցերեկը լոյս վառել հարկ կ'ըլլար, հետեւապէս ըզձանոյշը ձեղուններէն կախուած հին երկաթէ եռակողաց լամպարներով կը լուսաւորուէր:

Պլանչէնի բնակարանին մէջ, ընդհակառակն, ամեն բան յստակ, մաքուր և նոր ոճով էր: Կահներն աքածու և ընկուզենի էին. սպասադարանը Քրէյլի յախճապակիներով զարդարուած էր. իւր սենեակին մէջ ալ դարակաւոր դրասեղան մը կար կանանչ սեկէ աթոռով, տանն աստիճանով քարթոնակայ մը, ծնօտներուն վրայ օրէնսգէտներու կիտարձաններ շարուած:

Սթէլլայի յաճախորդները տասներկու տարեկան խափշիկուհի մը ներս կ'ընդունէր. իսկ Պլանչէնինը դեռ աստի գրադիր մը:

Միայն թէ երկուքին ալ անձնական սենեակները բաւական բարակ տախտակորմով մը բաժնուած էին, որուն մէջ երկու վարձակալներն համաձայն խորհրդով պատահան մը և դռնակ մը չինել տուած էին, որք ճարտարապէս ճաճիկուած էին տախտակորմին մէջ:

Այն օրը, որ նկարիչը Բիան Սէնթ-Ուանի գերեզմանատունը տարած էր, կէս օրէն ետքը Պ. Բօլէ և Սոփի Քորնիւ իրարու հանդիպեցան Պ. Պլանչէնի և ըզձուհիին բնակարանները սանող սանդուղին ստորտը:

Սոփի Քորնիւ, արդէն սանդուղին երեք ոտքն ելած էր՝ երբ Պ. Բօլէ փողոցի դռնէն գալիթը մանելով սանդուղին ստորտը կանգ առաւ կոշիկները սրբելու համար փոխաթիւն վրայ:

Ձիբոր չէին ճանչեր և բնականաբար չխօսակցեցան իրարու հետ, բայց աչքի ծայրով զիրար դիտեցին:

Օր-Մարիբրիթի հայրը տարօրինապէս ձայրելի կը գտնէր Սոփի Քորնիւի կերպարանքը, և սրովհետեւ երբէք

եկած չէր Պլանչէնի տունը, անոր մէկ յաճախորդը կարծեց դայն:

— Ի՞նչ զարմանալի մարդիկ կ'ընդունի այս սատանորդին, կը մըմուար քթին տակէն:

Սոֆի ալ չէր սիրեր շագիչները, բայց լաւ հագուած քաղքենիներն ալ կ'ատէր:

— Ի՞նչ ընելու եկած է հոս այս պըճնոտը, կ'ըսէր ակօսաներուն մէջէն: Կարծես թէ աղքատներէն ստակ քաշելով հարստացած բարսպան մ'է:

Այս սիրուն տրամադրութեանց մէջ էին իրարու նկատմամբ երբ առաջին յարկին սանդղագլուխը հասան:

Հոն Պ. Բօլէ գոհութեամբ սեռաւ որ պառաւը գրան մը բոժոժը կը հնչեցընէր երբ ինք միւս գրան վրայ կը նըճմարէր պղնձէ տախտակն, ուր սեւ գըրերով կը փայլէր Պլանչէնի անունը:

— Բարեբաղդարա՛ր, ըսաւ ինքնիրեն, սա աղեղ ջատուկին ետեւէն մտնելու մղձուկը չպիտի ունենամ: Եւ գարծակատարին դրան բոժոժին լարը քաշեց:

Գիտախօսի մագերով լակոտ մը, որ գրիչ մը խոթած էր ականջին ետին, եկաւ բացաւ դուռն եւ ներս ընդունեց զինքն՝ առանց անունն հարցընելու:

— Հոս է մեծաւորս, երթամ իմաց տամ, ըսաւ գլուխը չի սանտրած գրագիրը:

Պ. Բօլէ առանձին մնաց չորս խոտէ ակոսով նախասենեակի մը մէջ, ուր թուղթէ լալն տախտակներու վրայ Աէնի գաւառին պաշտօնէութեան ըսպաններուն անունները նշանակուած էին երիցութեան կարգաւ:

— Մարդ ինքզինք դատական փոխանորդի կամ փաստաբանի մը սենեակին մէջ կը կարծէ, ըսաւ ուսերը ցնցելով: Այս մեքենայիչն ինքզինքին կարեւորութեան երեւոյթներ կուտայ, բայց այդ բանը չարգիլեր դիս իւր ը-

րածն երեւին տալէ: Երբ կը մտածեմ թէ՛ յանդգնեցաւ հարիւր հազար Փըրանք ինձմէ պահանջել: Բարեբաղդարար չտուի:

— Մեծաւորս ձեզ կ'սպասէ, ըսաւ գրագիր տղան իւր սրածայր քիթը ցուցնելով նրբանցի մը մէջէն:

Պ. Բօլէ ձեռքի շարժումով մը հրամայեց անոր մէկ կողմ քաշուիլ, Ի ծանրաքայլ դնաց դրան մը քովը: Հոն գրտաւ Պ. Պլանչէն կանգնած և գրեթէ կրթնած տախտակորմի մը, ուրկէ պատկեր մը կախուած էր, որուն մէջ Հիպոկրատ կը մերժէր և չէր ընդուներ Պարսից մէկ թագաւորին կողմէ զրկուած ընծայները:

Գործակատարը դարմանք չի ցուցուց դայն տեսնելուն վրայ և յարգալից փութով մ'ընդունեց դայն:

— Չէի սպասեր, պարո՛ն, ձեզ իմ համեստ բնակարանիս մէջ ընդունելու պատուոյն, ըսաւ խոնարհելով, և կը ցաւիմ որ յոգնութիւն յանձն առեր էք: Վասն զի ես մտազիր էի վաղը ձեր բնակարանը գալ և Պիանքա Աթրոտիի մահուան պաշտօնագրին պատճէնը ներկայացնել ձեզի:

— Պէտք չունիմ այդ պատճէնին, ըսաւ մէկէն Պ. Բօլէ: Դուք ինքզայիք իմ վրայ, կամ մանաւանդ զիս խարեցիք անպատշաճաբար:

— Ես այդպիսի անվայել բան մ'ըրած չեմ, ըսաւ Պլանչէն հանդարտութեամբ: Հաճեցէք բացատրել ձեր այդ ըսածը, պարո՛ն... և նստիլ, սեղցուց Թթու մը քշելով:

Պ. Բօլէ վարանելով առաւ դայն և խոտի մը նստաւ ծանր յանդիմանութիւններ ընելու պատրաստուած մարդու մը պէս:

— Կը համարձակիք ըսել թէ զիս չի խարեցիք, ըսաւ: Ես ձեզի պաշտօն յանձնած էի խաղաղութիւններ ընել

աղջկան մը վրայ գոր եղբայրս ունեցած էր Իտալիոյ մէջ:

«Դուք եկաք ինձի յայտնեցիք թէ այն աղջիկը մեռեր էր, բայց չըսիք թէ քոյր մ'ունէր:

— Չէի կրնար ըսել, վասն զի ես ալ չի գիտէի:

— Ըսել է թէ ինձմէ կ'իմանաք:

— Ոչ, քանի մը ժամէ ի վեր գիտեմ: Բայց չեմ հասկնար թէ այդ աղջկան գոյութիւնն ինչ պատճառաւ կրնայ վախցընել ձեզ: Պիանքա Աթրոտի՛ Պ. Յրանսի Պայէէն առաջ մեռնելով՝ չլքցաւ ժառանգել անոր կտակած հարստութիւնը:

— Այո՛, բայց դուք որ ամէն բան գիտնալու յաւակնութիւնն ունիք, եղբորս կտակին ինչ ըլլալը չէք գիտեր:

— Կարծեմ թէ ոչ ոք գիտէր անոր մեռնելէն առաջ:

— Ես գիտեմ: Զայն ստացող Նոտարը Փարիզ եկաւ, մէկ պատճէնը ցոյց տըւաւ ինձի: Եղբայրս իւր բոլոր հարստութիւնը երկու աղջիկներուն կտակած է՝ Պիանքա և Բիա Աթրոտիներուն, հաւասար բաժինով: Պիանքա մեռաւ, բայց Բիա ողջ է: Ըսել է թէ ես փառաւորապէս զրկուած եմ ժառանգութենէ:

Գործակատարին դէմքն այլայլեցաւ: Մտքէն չէր անցնիր թէ Բիա ալ քրոջը հետ հաւասարապէս կտակընկալ էր:

— Հոգս չէ, յարեց Պ. Բօլէ, բայց ուզեցի իմացընել ձեզի թէ մեր կնքած պայմանագիրը ոչինչ է, և եկայ խնդրել ձեզնէ որ ստորագրած մուրհակս ինձի դարձունէք... որովհետեւ անպէտ է, բանի մը չի կրնար ծառայել:

— Այո՛, չի կրնար ծառայել... հիմա ըսաւ Պլանչէն մտածելով. բայց ներկայ վիճակը կրնայ փոխուիլ:

— Ի՞նչ ըսել կուզէք այդ խօսքերով, հարցուց Պ. Բօլէ խստութեամբ: Խըն-

դիրն ստոյգ իրողութեան վրայ է և ոչ երեւակոյտական ենթադրութեան: Չեղի համար բնաւ նշանակութիւն չկրնար ունենալ խոստմնագիր մը, որուն կատարումն այնպիսի պայմանէ մը կատարում ունի որ ոչնչացած է այսօր: Հետեւաբար բնաւ չա՛ մը չունիք դայն պահելով. պէտք է որ ինձի վերադարձունէք:

— Ներեցէք ինձի հարցընել ձեզ թէ դուք ի՞նչ շահ կ'ունենաք ինձմէ առնելով դայն, ըսաւ Պլանչէն պազ կերպով մը:

— Չեմ ուզեր որ հետք մը մնայ այնպիսի պայմանագրութենէ մը, զոր կրնքած ըլլալուս վրայ կը զղջամ:

— Կրնամ պատասխանել ձեզի թէ՛ ես ալ կ'ուզեմ որ այդ հետքը մնայ, և թէ դուք չէք կրնար բռնադատել զիս որ ձեր աղատ կամքով կնքուած պայմանագիր մը ես տամ ձեզի: Բայց ես կը սիրեմ ապացուցանել ձեզի թէ այս պայմանագիրը կրնայ տակաւին ծառայել... ապագային մէջ: Հաճեցէք յիշել անոր պարունակութիւնը:

— Ես մուսցած չեմ երբէք: Ըսուած է թէ ի վարձատրութիւն իմ հրամանաւ կատարուած ձեռնարկներու, զորս որոշակի չեմ մանրամասնած թուղթիս մէջ, կը պարտիմ ձեզի հարիւր հազար Փրանք, վճարելի այն օրը... կը հասկընա՞ք... այն օրը որ ստանամ ինձի ինկած բաժինը, իբրեւ բնական ժառանգորդ՝ իմ համամայր եղբորմէս ինձի ինկած անանգութեան:

— Ճշդիւ այդ է, պարո՛ն, և ես ալ որիչ բան չեմ սպասեր:

— Շատ աղէկ: Ըսել է թէ դուք երբէք ստանալիք չունիք այդ հարիւր հազար Փրանքը: Որովհետեւ մէկ սուչպիտի ստանամ այդ ժառանգութենէն:

— Ինչէ՞ն գիտէք: — Երկդիմի խօսքեր պէտք չեն: Կար-

ձեռմ չէք յանդգնիր ըսել ինձի թէ՛ Բիա Ասթրոտի ալ կրնայ քրոջը պէս կրնայ անհետանալ, և ժառանգութիւնն ինձի վերագանալ: Բիա՛ կտակողէն աւելի ապրելով՝ կրցաւ ժառանգել. ըսել է թէ Բիայի մեռնելէն ինձի խեր չկայ, եղբորս հարստութիւնն ինձի չկրնար անցնիլ, Բիայի ազգականներուն կ'անցնի, եթէ ունի, իսկ եթէ չունի, պետութեան կ'անցնի. վասն զի իտալական օրէնքն ալ Փրանսականին վրայ ձեւուած է:

— Այնպէս կը կարծեմ:
— Ի՞նչ կ'սպասէք ուրեմն ապագայէն:
— Այդ իմ գաղտնիքս է:
— Ես ալ իրաւունք ունիմ գիտնալու ձեր գաղտնիքը: Չեմ ուզեր մատ ունենալ ձեր խորհած մեքենայութիւններուն մէջ, որովք կ'ուզէք անշուշտ կնճռոտել ամենապարզ գործ մը...
— Դուք պատասխանատու չէք ըլլար իմ ընելիքիս:

— Կը յուսամ:
— Իւրեմն թողուցէք որ դիտցածիս պէս ընեմ:

— Ես չեմ կրնար արգիլել ձեզ, բայց կը յայտնեմ, թէ բան մը չէք կրնար ստանալ ինձմէ ձեր կրելիք աշխատութեանց փոխարէն: Ես ոչ եւս պիտի գրազիմ այդ ժառանգութեան խնդրով: Ես զայն կորսուած կը նկատեմ, և չեմ ուզեր այլեւս ձեր խօսքը լսել:

— Դուք այն ժամանակ պիտի լսէք իմ խօսքս երբ ես կարող ըլլամ ապացուցանել ձեզի թէ գործին վիճակն հիմնովին փոխուած է: Եւ հիմակուց ըսեմ ձեզի թէ այդ բանը ոչ ութ օրուան մէջ կրնայ կատարուիլ, ոչ մէկ ամսու մէջ, ոչ իսկ մէկ տարուան մէջ: Կ'աւելցնեմ թէ ձեր գնահատմանը պիտի յանձնեմ մատուցանելիք ծառայութիւնս վարձատրելու գործը:

— Եթէ այսպէս է, ինչ պէտք կ'ու-

նենաք իմ ատորագրած ու ձեզի տուած թուղթիս:

— Ցուցընելու, եթէ երբէք դուք... կամ ուրիշներ... քաջըէք կամ խճրք-ծէք իմ գործածած միջոցներս: Այն թուղթը, պարո՛ն, ապահովութիւն մ'է ինձի: Կ'ապացուցանէ թէ մենք միշտ համաձայնութեամբ քալեցինք: Ձեր ինձի յանձնած ձեռնարկներուս բնութիւնը կամ տեսակները նշանակուած չեն ձեր թուղթին մէջ, ինչպէս որ գիտէք: Ասկէ բնականաբար կը հետեւի թէ ինչ որ ըրի, ձեր հրամանովը ըրած եմ:

— Այսինքն, կը հասկըցնէք ինձի որ եթէ դասական իշխանութիւնը խառնուի ձեր գործին, պիտի ջանաք զիս բերան տալ և ձեզի մեղսակից ցուցընել: Կ'իմացնեմ ձեզի թէ չէք կրնար յաջողիլ: Ես այն աստիճան պատուաւոր ճանչուած եմ որ կարելի չէ զիս ամբաստանել թէ ապօրէն գործեր հրամայած եմ ձեզի: Բաւական է պարոն: Ըսել է թէ չէք ուզեր ինձի յանձնել տուած խոստմազիրս:

— Ոչ, ինչպէս նաև այն թուղթը գորդրած էք ինձի ասկէց ամիս մ'առաջ՝ հրահանգներ տալու համար Պիանքա Ասթրոտի վրայ, որպէսզի ամէն ջանք և միջոց ի գործ դնեմ... թող չի տալու համար որ Փրանսա գայ, կամ եթէ եկած է չի մնայ հոն:

— Շատ ազէկ, ըսաւ Պ. Բօլէ բարկութեամբ. պահեցէք ամէնն ալ, բրնաւ կարեւորութիւն չունին ինձի համար:

— Համոզուած եմ այդպէս ըլլալուն, ըսաւ Պ. Պրանչէն անհող կերպով մը. բայց չեմ կարծեր որ այդպէս ըսէք նաև վեց հարիւր հազար Փրանքներուն համար ալ, որք ձեր գրպանը պիտի մտնէին՝ եթէ ձեր եղբայրն երկրորդ ազլիկ մ'ալ չունենար, և հիմա

մեծ վախ ունիք որ պիտի կորսնցնէք զանոնք:

«Կեցէք, պարո՛ն, փոխանակ հետս կուտելու և չունեցած դիտումներս ինձի վերագրելու, աւելի լաւ կ'ընէք ինձի յաճնել գործին կարգադրութիւնը: Ժամանակի խնդիր է, բայց աներկբայ եմ յաջողելուն:

«Օր մը կուգայ որ ձեր վախճանեալ եղբոր ժառանգութիւնն արծաթէ պընակի մը վրայ ձեզի կը ներկայացնեմ, առնուած քաղաքի մը բանլիքներուն պէս... սրուն աէր եղած կ'ըլլաք առանց գործի խառնուելու:

«Այն ժամանակ ինչ որ ճաճոյ թուի ձեզ, զայն կուտաք ինձի: Հիմա տեղեկութիւն մը միայն կը խնդրեմ ձեզնէ... պարզ տեղեկութիւն մը:

— Տեղեկութիւն մը, կրկնեց Պ. Բօլէ: Ես տեղեկութիւն չունիմ ձեզի տալիք: Առէք ուրկէ որ կ'ուզէք: Իմ գիտնալու բանս չէ:

— Կայ տեղեկութիւն մը զոր դուք միայն կրնաք տալ ինձի, յարեց գործակատարն առանց յուզուելու, և տարակոյտ չունիմ որ չէք զլանար ինձի, վասն զի ձեզ վտանգի մէջ ձգելու բընութիւն չունի:

«Արդէն քանի մը հողի գիտեն, այնպէս չէ՞, թէ Պիանքա Ասթրոտի քոյրն էր այն Բիային՝ որ իբրեւ տիպար կը ծառայէ նկարիչներու քով:

— Այսինքն ամէն մարդ պիտէ կամ պիտի գիտնայ, երէկ երեւան ելաւ նկարչի մ'աշխատանոցին մէջ, որ իբրեւ տիպար կը գործածէր այդ աղջիկը... Պ. Բօլ Թրքնէօզի աշխատանոցին մէջ:

— Այն երիտասարդի՞ն որ ձեր հետն էր Բորթ-Սէն-Մարթէնի թատրոնին մէջ:

— Այո՛, և պատճառ մը չունի գաղտնի պահելու այդ ազգականութիւնը:

Ասկէ զատ իւր ընկերներէն մէկն ալ կար հոն ներկայ. կտաւ ներկող մը Պիանոս անուն, որ շողակրատ մարդ մը թուեցաւ ինձի: Տարակոյտ չունիմ որ թաղին բոլոր աշխատանոցներն այս ժամուս գիտեն այդ լուրը:

— Հաւանական է, բայց ինձի համար կարեւորութիւն չունի: Ես մէկ կէտի մը վրայ միայն կ'ուզեմ ապահով ըլլալ:

— Ի՞նչ կէտի, հարցուց մէկէն Պ. Բօլէ, որ քիչ քիչ կը յօժարէր պատասխանել այդ մարդուն հարցմանցն, որուն հետ յարաբերութիւնը խզեր էր քիչ մ'առաջ:

— Ձեզնէ շատ գիտցողներ կա՞ն թէ Պ. Ֆրանսի Պօպլէ իւր հարստութիւնն երկու Ասթրոտիներուն թողուց:

— Նօտարը գիտէ: Ան իմացուց ինձի: Աղջիկս ալ գիտէ, ըսած ատենը ներկայ էր:

— Բայց միւսներ՞ը, այսինքն անոնք որոց անունները տուիք հիմա... Պ. Ֆրանչէօզ... Պ. Պիտոս:

— Ձեն գիտեր: Ես չուզեցի պատմել անոնց: Հաճոյք մը չէր ինձի համար:

— Բնականաբար, և չպիտի ալ պատմէք անոնց: Բայց քո՞յրը... Բիա՞...
— Ան ալ չի գիտեր, բայց պիտի գիտնայ:

— Ո՞վ պիտի իմացընէ: Անշուշտ ոչ դուք:

— Նօտարը, հաւանաբար:
— Գիտէ՞ Փարիզի մէջ ըլլալը:

— Այո՛, ըսի իրեն թէ ես ալ նոր կը տեսնէի, որովհետեւ Պ. Ֆրանչէօզի աշխատանոցին մէջ էր, երբ նօտարը որ զիս կը փնտռէր՝ հոն եկաւ գտաւ:

— Չար ստատանայ, ցաւալի բան, բայց վերջապէս նօտարը չի գիտեր աղջկան բնակարանը:

— Ինչպէս ես ալ: Բայց գիտնալու համար բաւական է որ Պ. Ֆրանչէօզի հարցընէ:

— Եւ կը կարծէ՞ք որ ըսէ :

— Չեմ գիտեր, բայց ինձի այնպէս կը թուի թէ պարտքն է :

— Կրնա՞ք ըսել ինձի, որ օթեւանն իջած է :

— Պուլօս փողոց 75 : Կը յուսամ որ չէք երթար անոր յայտներ ձեր դիտաւորութիւնները... դրս ես չեմ գիտեր և չեմ ալ ուզեր գիտնալ :

— Անչուշտ չեմ յայտներ, այս մասին ապահով եղիք... թէ և անխոստովանելի բան մը չունին : Կ'ուզեմ միայն ապահով ըլլալ թէ Փարիզէն մեկնելէն առաջ տեսած չէ Բիա Ասթրոտին : Եւ կրնամ այս մասին տեղեկութիւն ստանալ առանց յարաբերութեան մտնելու նօտարին հետ... կրնա՞մ հարցընել անունը :

— Տրիստն, պատասխանեց Պ. Բօլէ ակամայ մտերմանալով գործակատարին հետ :

Պլանչէնի վտահ համարձակութիւնը կը թովէր զինքը : Պարկեշտութեան յայտարարութիւնները կ'անդորրէին սիրտը. ասկէ զատ որչափ և հախառակը կը պնդէր, բոլորովին չէր հրաժարած իւր ժառանգութեան իրաւունքը ձեռք անցունելու յոյսէն :

Իւր խիղճը քաջալերելու համար՝ չէր ուզեր բանի մը խառնուիլ. բայց յաւ մը խորհելով՝ անօգուտ կը դատէր յարաբերութիւնը խզել այդ մարդու հետ, որ կորսուած ժառանգութիւնն իրեն վերագործունել կը խոստանար :

— Շնորհակալ եմ, պարոն, բաւ Պրլանչէն, և կ'երդնում ձեզի թէ չպիտի գղջաք զիս ձեզի ծառայելու վիճակի մէջ զնեղնուդ վրայ :

Պ. Բօլէ ուժ չտուաւ անոր այս յայտարարութեան, այլ միայն շատացաւ բռնով :

— Մի՛ մոռնաք թէ մեր մէջ այլ եւս խնդիր չի կրնար ըլլալ այս գործին վրայ :

Եւ ոտքի վրայ ելաւ մեկնելու համար :

Պլանչէն խոնարհաբար ողջունեց զայն և մինչեւ բնակարանին դուռն առաջնորդեց առանց խօսք մ'անոր ուղղելու :

Վարպետորդին դիտէր ինչ արժէք պէտք էր տալ Պ. Բօլէի անշահատիրական յայտարարութիւններուն :

Իւր գրասենեակը վերագառնալով, փոխանակ գրասեղանին առջեւ նստելու, ականջը տախտակորմին դրաւ, և վայրկեան մ'ետքը երեք անգամ կամացուկ մը բաղխեց յատուկ ձեւով մը :

Անմիջապէս երեք նմանօրինակ հարուածներով պատասխանեցաւ :

Պլանչէն ալ ձեռքն երկնցընելով՝ տախտակորմին զարդական ցցուակներուն մէջ ճարտարապէս ծածկուած կուճակի մը վրայ կոխեց մատովը. իսկոյն տախտակ մը վերէն վար իջնելով բաւական լայն ծակ մը բացաւ, սրուն մէջէն մարդ մը կրնար անցնիլ : Եւ ահա կին մ'այն գաղտնի դռնակէն սարդելով մտաւ Պլանչէնի սենեակը, երկայն սեւ գիշերազգեստով և կարմիր մետաքսէ փաթթոցաւոր գտակով կին մը :

Այս տարօրինակ կերպարանքին տակ Բօլ Յորընէօզ մեծ դժուարութեամբ կրնար ձանչել այս կինն զոր Սէնթ-Ուանի գերեզմանատան և Բորթ-Սէն-Մարթէնի թատրոնին մէջ տեսած էր :

Սակայն ան էր, և ստուգիւ հարցկուհիի կերպարանքը գէշ չէր վայլած իրեն :

Միայն թէ մտահոգ դէմք մ'ունէր :

— Տ'այս դայն, ըսաւ առանց նախաբանի :

— Ձո՞վ, հարցուց Պլանչէն անհամբերութեամբ :

— Ո՞վ կրնայ ըլլալ, Սոֆի Քորնիւն :

Եկաւ գուշակութիւն հարցնելու. ես ալ առիթէն օգուտ քաղելով՝ մանրամասնութիւններ ուղեցի, բայց առածները շատ շահեկան չեն :

— Վերջապէս ի՞նչ ըսաւ քեզի :

— Այն Պինոս բուսածն երէկ թաղման միջոցին՝ իմացուցեր էր իրեն թէ Պլանչա քոյր մ'ունէր : Սոֆի չէր տեսեր զայն, բայց այս առտու տեսաւ գերեզմանատան մէջ :

— Պահ մ'առաջ՝ պատկեցիր զայդ ինձի, աւելի բան մը չե՞ս գիտեր :

— Գիտեմ ինչպէս Պինոս իմացեր է այդ իբր տիպար ծառայող աղջկան աղգակցութիւնը : Ամէն բան հասկըցուցեր է Սոֆի Քորնիւի, ան ալ ինձի կրկնեց անկէ լածնները :

« Կ'երեւի թէ Պինոս առջի օրը գացեր տեսեր է այդ աղջիկն իբրեւ տիպար գործածող նկարիչը որ Բիկալ հրապարակը կը բնակի :

— Բօլ Յորընէօզ, որ անցեալ իրիկուն մեր ետեւէն ինկաւ թատրոնէն ելնելունէս ետքը, և մենք ալ աղէկ կեթի բերինք զինքը :

— Տակաւին կը խնդամ, ես խելք ըրի այն կառքին խաղը :

« Արդ, Պինոս իւր բարեկամին աշխատանոցը մտնելուն պէս պուտացեր է թէ Մորկին մէջ ցոյցի դրուած աղջկան անունը գիտէր, Պլանչա Ասթրոտի էր :

— Ա՛հ, գարշելին, և սակայն պատուիրեր էի իրեն որ թուրքերանութիւն չընէր :

— Ասոր վրայ Բիան որ տիպարի պաշտօն կը կատարէր, մարեր ինկեր է « քոյրս է » գօշելով :

« Այսպէս ահա իմացուեր է բանը :

— Կը յուսամ որ այդ աւանակ Պինոսն իմ վրայ ալ չէ խօսած Յորընէօզին առջեւ :

— Գոնէ չէ պարծնցեր. Սոֆի կը պատմէր ինձի :

— Իմ անունս սուե՞ր է այդ արտուէին առջեւ :

— Այդ մասին աներկբայ եմ թէ ոչ : Սոֆի չի ձանչեր քեզ, բայց զիս տիկին Պլանչէն կը կոչէ միշտ : Եթէ տրւած ըլլար, Սոֆի կ'իմացընէր ինձի :

— Պինոս չի գիտեր իմ բուն անունս : Անոր և Կրան-Պօքի յաճախորդներուն համար, անունս Բիէտուշ է :

— Ճշմարիտ է, այդ չեկաւ միաքա :

— Եւ ուր բնակիլս ալ չի գիտեր : Միայն թէ Սոֆի Քորնիւ չերթայ իմացնէ անոր իմ բնակարանս :

— Չեմ կարծեր. ինչո՞ւ համար երթայ քեզ և այդ գործին մէջ խառնէ : Սոֆի կը կարծէ թէ այդ մարդոց գոյութիւնն իսկ չես գիտեր դուն :

— Աւելի աղէկ, վասն զի եթէ գիտնար ու մէկուն կամ միւսին խօսէր, գէշ թուղթ մը աւելի կ'ունենայինք մեր խաղին մէջ : Պինոս կրակ կը դնէր վառօդին մէջ : Բարեկամութեամբ կապուած է այդ Յորընէօզին հետ, որ արդէն լրտեսեց մեզ և հրաշքով ազատեցանք ձեռքէն : Եթէ իմանար որ Բիէտուշի բուն անունը Պլանչէն է, և Սուրբիէն փողոցին մէջ գործակալութիւն մը ունի, մեր ծրարները կապելէ զատ ուրիշ ընելիք չմնար մեզի :

— Բե՛հ, այդ չկրնար ըլլալ : Ասկէ զատ Պլանչայի քոյր մը ունենալը ինչ կարեւորութիւն ունի. Բօլէ դարձեալ կը ժառանգէ և դուն ալ կը ստանաս քու հարկը հազար ֆրանքը :

— Այդպէ՞ս կը կարծես դուն, ըսաւ Պլանչէն բարկութեամբ :

— Ինչո՞ւ չէ, ի՞նչ կայ որ, հարցուց Սթէլլա յուզակով :

— Ինչ պիտի ըլլայ, Բօլէ որ հիմա մեկնեցաւ ասկէ, իմացուց ինձի թէ իւր եղբայրն երկու աղջիկ ունէր, Պլանչա և Բիա, և թէ այդ ապա իւր հարստութիւնն անոնց կը թողու կէս

առ կէս . հիմա որ մեծն անդիտի աշխարհք չուեց , ամէնն ալ պզտիկին կը մնայ :

— Ա' , մրմնջեց ըզմուհին դարհուրած , այնչափ վտանգ աչք առնելնիս պարագ ելաւ :

— Այո' , ծանր է հարուածը . բայց ես բոլորովին յուսահատ չեմ : Եթէ պիտի կորսնցընեմ այն հարիւրհազար Փրանքը , զոր Բօլէ մուրհակով խոստացած է ինձի վճարել երբ եղբորն հարստութիւնը ժառանգէ , ուրիշ կերպով ձեռքս կ'անցունեմ զայն : Չըսուի թէ ոչինչ տեղն ինքզինքս վտանգի ենթարկեցի :

— Շատ ծանր դպաւ ինձի այդ բանը . բայց ի՞նչպէս պիտի ընենք : Կը յուսամ որ Պիանքայի պատմութիւնը նորէն չպիտի սկսիս : Չափազանց վրտանգաւոր է :

— Եւ օգուտ ալ չունենար : Բայց մէկէն աւելի միջոցներ կան չէզոքացընելու մեզի արգելք եղող աղջիկ մը :

— Ես մէկը միայն գիտեմ , ըսաւ Սթէյլա տխուր դէմքով մը , և այն ալ արդէն գործածեցինք : Նորէն գործածելը չափազանց ծանր խաղ մը խաղալ է :

— Խնդիրն անոր վրայ չէ , պատասխանեց մէկէն Օկիւսթ Պլանչէն : Հօրը մեռնելէն ի վեր վիճակը նոյնը չէ : Բիա վաղը մեռնի , դարձեալ կը ժառանգէ , և եթէ ազգական չունի , Իտալիոյ պետութեան կ'անցնի ժառանգութիւնը : Մեր շահը ընդհակառակն կը պահանջէ որ Բիա սպրի : Ասիկա կը սիրեմ անոր հետ գործ ունենալ՝ քան թէ Իտալիոյ կառավարութեան հետ :

— Ի՞նչ կը յուսաս ուրեմն քաղել այդ աղջկուկէն :

— Ասայ (մ' ոչինչ , բայց յետոյ ուրիշ կերպ կ'ըլլայ : Երկար ժամանակի գործ է :

— Չեմ հասկընար զազախարդ :
— Գաղափարս է ուղղապէս մեր օգ-

տին համար շահագործել այդ Բիա Ասթրոտին : Աւասիկ իմ ծրագիրս : Բիա գիտէ թէ Պիանքա իւր քոյրն էր , բայց կտակէն տեղեկութիւն չունի : Ուրիշ գիտցող ալ չի կայ . . . բացի Պ. Բօլէէն և դուրսի նօտարէն : Բօլէ չիմացընեք աղջկուկին , նօտարն ալ իւր դաւառը պիտի վերադառնայ այսօր վաղը : Ժառանգութիւնը բաց կը մնայ և մէկը չի դպչիր անոր , եթէ ժառանգորդը չի ներկայանայ :

« Եւ մեք թող չենք տար որ ներկայանայ :

— Լա՛ւ , և ետքը՞ :

— Ետքը վարպետ խաղեր խաղալ :

— Չեմ հասկընար :

— Պէտք է որ հասկընաս , վասն զի դուն քովդ պիտի պահես աղջիկը : Եւ տարակոյս չի կայ որ կը յաջողիս եթէ վարպետութեամբ վարուիս :

— Բայց կը մոռնաս որ ես չեմ ձանջեր զայն :

— Տեսար զայն , ան ալ քեզ տեսաւ :

— Այո' գերեզմանատան մէջ , բայց չի խօսեցայ հետը :

— Հոգ չէ , կ'երթաս կը գտնես զինքը , երբ իմանամ ուր բնակիրը :

— Ես գիտեմ , Ծոռէ-Սէն-Պէռնար փողոցը կը բնակի : Նկարիչն ըսաւ Սոֆի Բորնիւլին առջեւ , որ կրկնեց ինձի :

— Ըսել է թէ Պիանքա անոր կ'երթար իրիկունները : Եթէ այդ մանրամասնութիւնն աւելի առաջ իմանայինք , ուրիշ կերպ կ'ընէինք : Բայց եղածն եղած է . պէտք է որ ներկայ վիճակէն օգուտ քաղելու աշխատինք :

— Լաւ , բայց ի՞նչ պատրուակով պիտի մանեմ այդ Բիային բնակարանը :

— Ըսելով թէ դուն յաճախ կը տեսակցէիր քոյրն հետ Սոֆի Բորնիւլի տունը բնակած ժամանակ . և ուրախ կ'ըլլայ անոր վրայ խօսակցելով քեզի հետ :

— Շատ աղէկ . բայց ի՞նչ պիտի ըսեմ իրեն :

— Կ'սկսիս նախ փայփայել զինքը , մեղքընալ , ցաւ յայանել , երբում ընելով թէ քոյրը քեզ շատ կը սիրէր , և կը ջանաս մխիթարել զինքը :

— Դժուարին է մխիթարել : Սէնթ-Ուանի գերեզմանատան մէջ Մագդաղենայի մը պէս կուլար , և երբ գերեզմանին վրայ ծուռի վրայ եկաւ , կարծեցի թէ սաքի վրայ ելնելու կարողութիւն չպիտի ունենար :

— Մեզի պէտք եղածն ալ այդ է : Պէտք է որ զգածուի , յափշտակուի մէն իտալուհիներու պէս , դժուարին չէ քեզի գրգռել անոր գլուխը :

— Ի՞նչ ընել տալու համար :

— Նախ համոզելու համար որ արհեստը փոխէ : Գլխաւոր կէտն է թող չի տալ որ Բօլ Ֆրընէօզի քով վերադառնայ : Նկարիչը շատ տրամադիր պէտք է ըլլայ զայն պաշտպանելու : Դուն պէտք է որ պատմութիւն մը հնարես . . . եթէ՛ օրինակի համար՝ նշմարես որ սիրահարած է անոր . . .

— Սիրահարած է : Պինոս ըսեր է Սոֆի Բորնիւլին :

— Ուրեմն գործը դիւրացած է : Դուն պիտի հասկընես իրեն թէ նկարիչը կը խնդայ իւր վրայ :

— Պինոս կ'ըսէ թէ Բիա նախանձոտ է , և դուն չես կրնար երբէք դուշակել թէ . . . օրիորդ Բօլէէն կը նախանձի :

— Չեմ հաւտար . . . : Բայց եթէ ստուգիւ Ֆրընէօզ շատ ստակ կը շահի , և այդ անմիտ Բօլէն ալ իւր աղջիկն անոր ալ կ'ուզէ . . .

— Օրիորդ Բօլէ՛ ստիպելով հայրը Ֆրընէօզի աշխատանոցը գացեր է անոր հետ : Հոն գտեր է Բիան , որ կատուելով առեր քալեր է : Պինոսի խօսքին նայելով՝ երբում ըրեր է որ այլևս տիպարի պաշտօն չի կատարէ :

— Սքանչելի՛ : Մեր գործը տուրակին մէջն է : Դուն զայն կատարելապէս պատրաստ պիտի գտնես քեզմտիկ ընելու և դիւրաւ պիտի շահիս անոր վտահառութիւնը : Դուն իրմէ թոյլտուութիւն կը խնդրես քոյրը վրայ ունեցած սէրդ իւր վրայ դարձունելու , ամէն կերպով իրեն օգնելու , եթէ պէտք ունի օգնութեան , և վերջապէս կ'առաջարկես քու տունդ ընդունել զինքը կամ իւր երկիրը տանիլ՝ եթէ փափաքի հոն վերադառնալ :

— Ի՞նչ կ'ըսես . գիս Իտալիա դրկել կ'ուզես :

— Ո՛չ , աւելի կ'ուզեմ հոս մեր ձեռքին տակը ունենալ այդ ժառանգուհին . բայց ամէն բան նախատեսել պէտք է : Վերջապէս պէտք է հարգողակցութեան մէջ գտնուիլ անոր հետ , ո՛ւր որ ալ ըլլայ , և իւր ճանչած մարդոցմէն հեռացնել : Կ'ուզեմ որ այլ ևս բնաւ չի տեսնէ , ո՛չ Ֆրընէօզը , ո՛չ Պինոսը . և թէ վախճանեալ Ֆրանսի Պոայէի կրտակակատարը չի կրնայ երբէք գիտնալ աղջկուկին ինչ եղած ըլլալը :

— Շատ աղէկ : Բայց ենթադրելով որ այդ ամէնուն մէջ յաջողի՛ք , ի՞նչ պիտի անցնի մեր ձեռքը :

— Կեցիր որ քեզի հասկցնեմ ծրագիրս , ըսաւ Պլանչէն : Երկու նպատակ ունիմ , և կրնամ չափաւորել կամ փոփոխել գործերուն ստացած դարձուածքին համեմատ :

« Պ . Բօլէ , ինչպէս որ գիտես , պարտամուրհակ մը տուած է ինձի հարիւր հազար ֆրանք վճարելու այն օրն ուր եղբորը թողած ժառանգութեան տէր ըլլայ . այս ալ կարելի չէ մինչև որ Բիա Ասթրոտի չի թողու անոր :

— Այդ երբէք ըլլալիք չունի :

— Ինչո՞ւ համար : Մարդ մը ամէն ժամանակ կրնայ հրաժարիլ կտակի մը

ժառանգութենէն... վաւերական գրով մը, որուն արդիւնքը կ'ըլլայ բնական ժառանգները վերահաստատել: Իրենց իրաւունքին մէջ:

—Եւ դուն կը հաւատաս որ կարելի է համոզել Բիան, որ իւր արդար իրաւունքէն հրաժարի յօգուտ չի ձանջած մէկ մարդուն:

—Եթէ ձանջէր, աւելի դժուար կըլլար, որովհետեւ նախանձութիւն ունի օրիորդ Բօլէի դէմ: Բայց բնաւ չգիտէր որ իւր բնական հայրը կէս (համամայր) եղբայր է Պ. Բօլէի. եւ ես ալ կը ջանամ որ չգիտնայ երբէք:

«Ասկէ զատ, վաւերական գիր մ'ստորագրելու համար չափահաս պէտք է ըլլայ. և այդ ազջիւղը չափահաս չէ հաւանականաբար:

—Հագիւ տասնեւվեց տարու երեւցաւ ինձի:

—Պէտք կ'ըլլայ ուրեմն քանի մը տարի սպասել. եւ այսպէս ժամանակ կ'ունենանք մեր նպատակներուն հասնելու: Կրնանք օրինակի համար, կրօնաւորուհի ըլլալու համոզել զայն:

—Գէշ միջոց. իւր բոլոր ունեցածը զինքն ընդունող վանքին կը թողու:

—Ո՛չ, որովհետեւ չպիտի գիտնայ իր հարուստ ըլլալը:

—Ուրեմն ի՞նչպէս պիտի հրաժարի հարստութենէ մը, որուն գոյութիւնը չպիտի գիտնայ:

—Վերջին վայրկեանին ճշմարտութիւնն իմաց կը տրուի իրեն, պատշաճապէս զինքը պատրաստելէ ետեւ: Պէտք է դրողել իւր վեհանձնական զգացումները, համոզել զինքը թէ Պ. Ֆրանսի Պօայէ չար գործ մը ըրած է գրկելով իւր եղբայրը ժառանգութենէ, և թէ իւր պարաքն էր այդ վատ գործը դարձաներ:

—Սեղքս չի կարեր որ համոզուի այդ իրատիւն:

—Շատ աւիթներէ կախում ունի: Վարպետութեամբ մտէն բան կրնայ ձեռք բերուիլ գրգռեալ աղջիկէ մը: Եթէ՛ Պինոսի ըսածին պէս՝ Ֆրանսէօզէն չի սիրուելուն պատճառաւ սաստիկ արեամած է և յուսահատած, զինքը հիւրը՝ կալող, հետը քաղցրութեամբ վարող և զինքը միտիթարելու աշխատողներուն խրատները չի մերժեր:

—Կարելի է... ժամանակ անցնելով... բայց ճշմարտան ըսելով, այդչափ խնամք, ջանք և տարիներով աշխատութիւն շատ է հարիւր հազար Ֆրանքի համար... զոր Պ. Բօլէ չի պիտի ուղէ թերեւս վճարել քեզի:

—Կրնամ պահանջել. գրաւոր խոստում ունիմ ձեռքս և նամակ մը, որ զինքը կը մատնէ: Չի կրնար դատ վարել ինձի հետ: Միայն իրաւունք ունիս ըսելու թէ հարիւր հազար Ֆրանքը քիչ է, երբ այդ Բօլէն վեց հարիւր հազար պիտի ժառանգէ:

—Ինչո՞ւ մեք չի ժառանգենք անոր տեղ:

—Ս, վերջապէս հող եկաւ: Կրնանք նոյնչափ դիւրաւ համոզել Բիան որ մեզի կտակէ իւր ստակը, փոխանակ հրաժարելով ուրիշի թողելու: Եւ այս է իմ նպատակս: Բայց սպոր հասնելու համար մեծ միջոցներու պէտք է դիմել:

—Որո՞նք են:

—Նախ մեկինիլ Փարիզէն անուր հետ:

—Ս.յո՛ւ: Կ'երեւի թէ իւր երկիրը վերադառնալ կ'ուզէ: Սոֆի Գորնիւ լսել է որ ըսել է նկարչին թէ այլեւս ակտորի պաշտօն չի պիտի կատարէ:

—Շատ աղէկ, իտալիա կ'երթանք իրեն հետ:

—Իբրեւ ի՞նչ:

—Իբրեւ բարեկամ, անշուշտ: Իւր վտահալութիւնը կը շահիս ձանրու ծախքը հոգալ առաջարկելով: Ես կը կար-

ծեմ թէ ոսկիի վրայ չի թաւալիր: Կ'ըսես իրեն թէ առողջական պատճառներով երկու տարի Հռոմ կենալու դիտաւորութիւն ունենալով, իտալերէն խօսող ընկեր օրիորդի մը պէտք ունիս, և ասոր համար իրեն կը դիմես, որովհետեւ քոյրն իր տան մէջ բնակեցընող բարի կիներ վայն յանձնարարած էր քեզի: Կ'աւելցընես անշուշտ թէ ես ալ հետ պիտի դամ:

—Պիտի ձգե՞ս գործերդ:

—Ասոր չափ շահ բերող գործ մը չունիմ: Ասկէ զատ լաւ կ'ըլլայ մեզի ժամանակ մը հեռանալ Փարիզէն: Ես կը կասկածիմ Պինոսի թուրքերանութենէն և կը վախնամ Ֆրանսէօզէն: Եթէ գտնէ մեզ, և մոնաւանդ եթէ ստուգէ թէ մէկտեղ կ'ապրինք, Բիկալ հրատարակի հանրակառքը յիշելով՝ գլուխին փորձանքի կը հանդիպընէ: Բայց երկու տարի ետքը Պիանքա Ասթրոտիի դէպքը հնախօսութեան կարդ կ'անցնի:

—Ըսել է թէ երկու տարի Հռոմ պիտի մնանք:


—Երկու, երեք և թերեւս աւելի, եթէ պէտք ըլլայ պիտի մնանք մինչեւ որ ազջիւղը կտակելու օրինական հասակն ունենայ, այսինքն տասնեւթ տարին լրացնէ:

—Եւ կը կարծես թէ կտակելու գաղափար ունենայ:

—Ես վրաս կ'առնեմ համոզել զայն: Եւ որո՞ւ պիտի թողու ունեցածը, եթէ ոչ իւր բարերարներուն, քանի որ ազգական չունի:

—Լաւ, բայց... մեղնէ շատ աւելի կրնայ ապրիլ:

—Չեմ կարծեր, ըստ Պլանչէն ժըպտելով: Կը մոռնաս որ անմիտ Պինոս ինձի յանձնեց այն գնտասեղը գոր դուն կորսնցուցեր էիր:



Հայր Լորէնծոյի տունը, ուր վարձով գիշերօթիկներ կ'ընդունէր, փայտուն երեւոյթ մը չունէր Փոսէ-Սէն-Պէանար փողոցին մէջ:

Հին ու սեւ շէնք մ'էր վեց յարկով. աւելի բարձր քան թէ լայն, անկանոն կերպով բացուած նեղ պատուհաններով, որոնց մէկուն ձեւը միւսին չէր նմաներ: Անձրեւէն կանանչցած երեսովը մ'ըլտած կարկանդակի շերտ մը կը թուէր, երկու լաւագոյն երեւոյթով շէնքերու մէջտեղը:

Այդ սինըքոր տունը կը մտնուէր նեղ ու մութ անցքէ մը: Գետնին վրայ երկու սրահ կար. մէկը դրնեստուն էր, որ ուղղակի փողոցին վրայ կը բացուէր, վասն զի Լորէնծօ ըմպելի կը ծախէր անցորդներուն: Միւսը ճաշարան էր երկսեռ ախպարներու, որ այդ խեղճ տան մէջ կը բնակէին.

Թէեւ ստորին կարգէ մարդիկ էին բնակիչները, բայց հայր Լորէնծոյ լաւ կը կառավարէր գանոնք: Վաթսուն և հինգ-վաթսունեւվեց տարու էր, բայց տակաւին կորովի էր. բարոյականի մասին կատակ չէր հասկնար, ինչպէս նաև վարձու վճարքի մասին: Տասնեւհինգ տարի է Վեր կը վարէր այդ տունը, և երբէք գործ ունեցած չէր Ֆրանսական ստիկանութեան հետ:

Կ'ըսուէր սակայն թէ երկար տարիներ գլուխ եղած էր աւագակախմբի մը, որ ձանապարհորդներ կը կողպատէր, և Թէրրաչինոյի շրջակայ հողատէրները կը կեղեքէր:

Բայց բազմը կը փոխէ մարդիկ: Այդ արհեստով բաւական համեստ հարստութիւն մը կազմած և Հռոմի երկիրներուն մէջ զինքն սպաննողին վարձ խոստացուած ըլլալով, օրին մէկը զըզ-

ուեր էր լեռները բացօթեայ պառկելէ և հուճ շագանակով սնանելէ:

Եւ որովհետեւ փառասէր մարդ էր, փոխանակ գործէ քաջուելու, Նաբոլիէն Մարտիրիա եկող Փրանսական շոգենաւ մը նստելով Ֆրանսա ելեր, ուղղակի Փարիզ եկեր էր իւր խնայած ստակները շահաւորելու:

Աստուած ալ օրհներ էր իւր ջանքերը: Վարած հաստատութիւնը լիարեղուն յաջողութեան մէջ էր: Իր հայրենակիցներն հիւրընկալելով ու սնուցանելով ըրած շահերուն շնորհիւ գրներ էր այդ տունը. և թողակաւոր հիւրեր չէին պակսեր երբէք, վասն զի Իտալիոյ հարաւային ամէն գեղերուն մէջ թղթակիցներ ունէր, և մերթ ընդմերթ ինքն ալ կ'երթար որսալու:

Վերջապէս չար մարդ չէր. պատշաճ վարկեր կը բանար, մինչեւ իսկ մանր գումարներ փոխ կուտար անգործ տիպարներուն. անոնց գործ գտնելու կ'աշխատէր, որովհետեւ գրեթէ ամէն նկարիչներու քով կը մտնէր կ'ելնէր, երբեմն ալ իւր ծախքով հայրենիք կը զրկէր այն տիպարները, որք չէին ընդունուիր Բարիզի աշխատանոցներուն մէջ:

Փրընէօզ անոր հետ բանակցեր էր Բիայի բնակութեանն ու սնունդին համար:

Եւ որովհետեւ նկարչին հետ կնքած պայմանները շատ շահաբեր էին Լորէնծոյի, այդ պարկեշտ յելուզակն ալ մեծ ակնածութեամբ և խնամքով կը վարուէր աղջկուկին հետ: Այն աստիճան կը սիրեր ու կը յարգէր, որ կեանքն իսկ կը գոհէր զայն պաշտպանելու համար, եթէ ստահակ մը յանդգնէր քսուիլ անոր կամ նախատել:

Բիա ալ գոհ էր այդ գձուճ օթեւանին մէջ բնակելէ, որովհետեւ կատարելապէս առանձին էր իւր սենեակին

մէջ, թէև երած իջած միջոցին սանդուղին վրայ հանդիպած բնակիչներու հետ խօսակցելէ չէր քաջուեր:

Ամենէն վերի յարկն էր իւր սենեակը, փոքրիկ սենեակ մը, զոր սիրուն բունիկ մ'ըրած էր:

Սէնթ-Ուան գացած օրուան հետեւեալ առտուն, Բիա, արշալուսէն առաջ ելնելով, որովհետեւ գիշերը չէր կրցած քնանալ, արմուկը պատուհանին երկաթէ ձողին յեցած կը մտածէր:

Օգը գաղջ էր, և առաւօտեան մէջը փարատիլ կը սկսէր արեւուն առաջին ճառագայթներէն, որ տանիքները կ'ոսկեղօծէր:

Գեղեցիկ օր մը կը սկսէր, այն գրարթագին օրերէն մին՝ զոր Աստուած կուտայ երբեմն մեծ քաղաքին անժառանգեալներուն, անոնց որք ընտրութեան զարթումէն զատ ուրիշ սփոփարար տեսարան չեն կրնար ընծայել իրենց:

Լորէնծոյի վարձարնակները կը պատրաստուէին մեկնելու, որպէս զի կանուխիկ հասնէին Բիկալի և Լիւքսէնպուրկի թաղերուն, աշխատանոցները:

Հին աւազակը, այժմ սանուտէր, իւր գինեաւան սեմին վրայ նստած՝ իւր ծխափողը կը քաշէր, և մօրուքին տակէն խնդալով այն իրիկունը գանձելիք հասոյթները կը հաշուէր:

Տարիին այն եղանակն էր, ուր իւր վարձարնակներուն ամէնն ալ ստակ կը շահէին, և պարտքերնին ու ամէն առածնին կը վճարէին:

Լորէնծոյ քիչ մը կը զարմանար չի տեսնելով Բիայի վար իջնելը, որ միշտ առաջին պատրաստուողներէն մէկն էր, բայց ինք երբէք չէր երթար մտներ անոր սենեակը, մինչև որ չի կանչուէր: Եւ Բիա միտք չուներ զայն կանչելու. ոչ ալ երթալու իւր նախաձեռնիկը գնելու:

Իւր մտածութիւնը կը սլանար դէպ

այն տեղն, ուր Բօլ մեկներ էր իրմէ՝ երգում ընել տալով որ առանց զայն տեսնելու չի չուէ:

Եւ կը հարցընէր ինքնիրեն թէ ինչ ըսել ուղէր էր իւր աշխատանոցէն տարբեր տեղ մը տիպարի պաշտօն կատարել տալու խօսք ընելով:

Նորէն անոր համար և անոր հետ առանձին աշխատիլ, միակ յոյսն էր որ կը մնար իրեն, բայց չէր հաւատար:

— Հասկըցաւ զգագած վիշտս, և գըթաց իմ վրայ, կ'ըսէր ինքնիրեն տըխուրութեամբ. շատ բարի սիրտ ունի: Խոստացաւ չուտո՞ւլ լուր զրկել ինձի, որպէս զի սիրտս հանդարտեցընէ և թող չի աայ որ չուեմ: Կը կարծէ որ՝ կը խորհիմ, չեմ համարձակիր փախչիլ հեռանալ իրմէ, և կը վերտդառնամ: Բայց ինքր չի գար հոս: Ինչո՞ւ գայ: Ես խեղճ աղջիկ մ'եմ, որ անոր շնորհիւր կ'ապրիմ: Ինձի կը վայլէ երթալ խնդրել իրմէ որ տակաւին ընդունի զիս:

«Բայց չեմ երթար: Ծատ հաւանական է որ այն կինը հոն գտնեմ, և աւելի կը սիրեմ մեռնիլ քան թէ երեւնալ անոր առջեւ: Ո՛չ, չեմ երթար: Երկու օր կ'սպասեմ. եթէ զինքը չի տեսնեմ, հրաժեշտի գիր մը կը գրեմ իրեն, կ'երթամ վերջին անգամ մ'ալ կ'աղօթեմ Պիանքայի գերեզմանին վրայ, և այն ատեն...»

Բիա այս մտածութեան մէջ էր, սենեակին դուռը կամացուկ մը զարնուեցաւ:

Ետին դարձաւ դողալով: — Եթէ ա՞ն է, միմիջեց սրտայոյզ և կեցած տեղը գամուած մնաց:

Վայրկեան մը լուրթենէ ետեւ՝ դուռը նորէն զարնուեցաւ քիչ մ'աւելի ուժով:

Բիա ուղեց պատասխանել, բայց չի համարձակեցաւ:

Յանկարծ միտքն եկաւ թէ Փրընէօզ

չէր կրնար ըլլալ դուռը դարնողը: Փրընէօզ համբերող չէր, և դրանք բանալին ալ դուրսն էր. Փրընէօզ չէր սպասեր:

Նոյն միջոցին բանալին դարձաւ կըզպանքին մէջ. և դուռը կամաց կամաց բացուեցաւ:

Բիա գուշակեր էր: Փրընէօզ չէր բայց ներս մտնողը տեսնելով՝ զարմանքը մեծ եղաւ:

Յոյժ վայելչապէս հագուած սեւագգեստ տիկին մ'էր համակրելի դէմքով:

Տեսնողը կրնար աղքատախնամ տիկին մը կարծել, որ իւր աղքատներուն այցելութեան ելած էր:

Բիա, որ բնաւ վարժուած չէր այս տեսակ այցելութիւններ ընդունելու, կարծեց թէ սխալմունք մ'եղած էր, և պիտի ըսէր, բայց անձանթութեան իրեն մօտենալով՝ երկու ձեռքը բռնեց և ճակատը պագաւ:

Աղջիկը շուարած, չի համարձակեցաւ խուսափիլ անոր անակնկալ գգուանքէն:

— Կը տեսնեմ, սիրելի՛ որդեակ, սկըսաւ տիկինը՝ նստելով հոն կեցած երեք յարդէ աթոռներէն մէկուն վրայ, կը տեսնեմ ձեր զարմանքէն որ չի ձանչեցիք զիս... և շատ ալ բնական է, վասն զի հազիւ տեսաք զիս:

— Ներողամիտ եղիք. տիկին... չեմ յիշեր, միմիջեց աղջիկը:

— Երէկ ձեր խիստ մօտն էի... չեմ ուզեր դառնափոխուր վայրկեաններ յիշեցընել ձեզի... Ես ձեր մօտն էի երբ դուք կ'աղօթէիք ձեր և մեր սիրելիին գերեզմանին վրայ:

Բիա ցնցուելով կնկանն երեսը նայեցաւ աւելի ուշադրութեամբ:

— Սէնթ-Ուանի գերեզմանատան մէջ... ձեր քրոջ գերեզմանին մօտ, յարեց կինը:

Աղջկան միտքն եկաւ: Հազիւ կրցեր

էր նշմարել կիսն մը որ կը խօսակցէր Սոֆի ֆորնիւի հետ, բայց յիշեց որ այն կիսնն էր:

—Ես ալ աղօթելու գացեր էի մեր սիրելի Պիանքային գերեզմանին վրայ:

—Գո՛ւք, տիկին. ըսաւ Բիա գարմանքով:

—Կը զարմանաք, որովհետեւ չէք գիտեր որ ես զաւկիս պէս կը սիրէի զայն:

—Կը ճանչէիք ուրեմն:

—Երկու տարիէ ի վեր: Միլանի մէջ տեսած էի զայն ամուսինիս բարեկամներուն տունը, երբ կը ճանապարհորդէինք Իտալիոյ մէջ: Սիրտս սիրած էր զինքը, և ինքն ալ իւր բոլոր վստահութիւնը տուած էր ինձի:

—Երբէք ձեր խօսքը չըրաւ ինձի:

—Գիտէի՞ք Փարիզ գալուն պատճառը:

—Այո՛, տիկին, հայրերնիս փնտաւրու եկած էր:

—Բայց չէիք գիտեր որ իմ շնորհիւս կըրցաւ գտնել:

—Հայրերնի՛ս, տեսաւ ուրեմն... չէի գիտեր: Ո՛չ, ո՛չ, անհնարին է:

—Ձի տեսաւ, բայց երկար հետախուզութիւններէ ետեւ իմացայ որ Յըրանասայի հարաւակողմը փոքրիկ քաղաք մը կը բնակէր... և Պիանքա ինձմէ իմանալով՝ նամակ գրեց անոր:

—Պահե՛ց ինձմէ զայդ... զարմանալի բան:

—Ինձմէ ալ պահեց քոյր մ՛ուսնենալը... ինձմէ որ բարեկամութեան ու անձնուիրութեան այնչափ փորձեր տուած եմ իրեն: Երէկ միայն դիպուածով իմացայ ձեր ո՛վ ըլլալը:

«Սորհրդապահութիւնը կամ մանաւանդ զգուշորութիւնը չափազանցութեան կը մղէր: Մինչեւ իսկ բնական տեղը չէ՞ր ըսեր ձեզի:

—Ո՛չ... թէեւ քանի քանի անգամ հարցուցի:

—Ես զրկեր էի զինքը այն բարի կնաջ, որ Տէզ Ապէս փողոցը տուն մ՛ունի և սենեակներ վարձու կուտայ, երէկ տեսաք զայն գերեզմանատան մէջ, ուր ծաղիկներ տարած էր: Պիանքանոյն իսկ այդ պատուական տիկին ֆորնիւի չէր յայտնած քոյր մ՛ուսնենալը: Իրիկունները ձեզ տեսնելու եկած ժամանակ կ'ըսէր անոր թէ երգ դաս առնելու կ'երթար:

«Ես ալ չէի գիտեր իրիկունները դուրս ելնելը: Ինձի առաւօտուն կուգար և միայն ձեր հօրը վրայ կը խօսէր, զոր տեսնելու փափաք ունէր:

—Բայց... չկրցաւ տեսնել, այնպէս չէ՞. հարցուց աղջիկն յուզուելով:

—Աւա՛ղ ոչ... և այդ եղաւ իր մահուանը պատճառ:

—Ի՛նչ կ'ըսէք:

—Պատմեցի՞՞ք ձեզի ի՛նչպէս մեռաւ ձեր քոյրը, հարցուց տիկինը վայրկեան մը լուռութենէ ետեւ:

—Ըսին ինձի թէ յանկարծ մեռեր էր, մըմնջեց Բիա՝ աչերը լցուելով:

—Սրտին ցաւէն մեռաւ:

—Ի՛նչպէս...

—Սրտի հիւանդութիւն ունէր... և խորտակեցաւ երբ իմացաւ թէ հայրերի՛ր չէր ուզեր ընդունիլ զինքը, և կ'ուրանար...

—Կարելի՞ բան է:

—Շատ ճշմարիտ է, Գրած տղերսական նամակին, որով կը յիշեցընէր երկու աղջիկ զաւակ ունենալը, հայրերնիդ ամենախիստ նամակով մը պատասխաններ էր: Խեղճ աղջիկը չկրցաւ տակալ այդ ծանր հարուածին:

—Ա՛հ, սոսկալի բան է, հեծկուտաց աղջիկը, քովը գտնուած աթոռի մը վրայ կըբլով, ապա թէ ոչ՝ գետինը պիտի փռուէր, ինչպէս որ ինկեր էր Բօլ Յըրնէօզի աշխատանոցին մէջ:

Տիկինն ոտքի վրայ ելաւ, պաթիսթէ

թաշկինակով մը սրբեց Բիայի աչերէն բզլած արատը, և քաղցրութեամբ ըսաւ:

—Մի՛ յուսահատիք, զաւակս. այրերը մոռացկոտ են, և ձեր հայրն ալ անշուշտ բարկութիւն զգացած է իմանալով որ իւր լքած աղջիկն ապրելու համար երգիչ եղեր էր... բայց սիրտը կրնայ փոխուիլ, և կը յուսամ որ կը փոխուի, և ինչ որ զլացեր էր իւր անդրանիկ աղջկան, ձեզի չի զլանար... և օգնութեան կը հասնի ձեզի...

—Ո՛չ, բան մը չեմ ուզեր իրմէ, ըսաւ Բիա գլուխը վեր առնելով. իմ անունս անգամ չեմ ուզեր որ լսէ:

Այս խօսքին վրայ տիկինը փոխեց դէմքը:

—Կը սիրեմ ձեր սրտին մեծութիւնը, ըսաւ վայրկեան մը լուռիէ ետեւ. ես չպիտի համարձակէի մեղադրել ձեզ, եթէ պնդէիք ձեր այդ որոշման վրայ. որով չէք զիջանիւր խնդրել այնպիսի օգնութիւն մը կամ պաշտպանութիւն, զոր ձեր ողբացեալ քոյրը չկրցաւ ստանալ:

«Անունս տիկին Պիանչէն է: Այրս հարուստ է: Փարիզ կը բնակինք, բայց ամէն տարի ճանապարհորդութիւն կ'ընենք առջի ամառը...: Երեք անգամ Իտալիա գացած ենք, և նորէն պիտի երթանք, վասնզի շատ կը սիրենք ձեր գեղեցիկ երկիրը: Ինչպէս որ ըսի, մեր այս ուղեւորութիւններէն մէկուն մէջ էր որ ճանչեցինք ձեր քոյրը, և սիրտս փակաւ անոր:

«Մեռնելուն լուրը զարհուրեցուց զիս, և օրհնեցի դիպուածը որ իմացուց ինձի թէ սիրելի Պիանքաս քոյր մ՛ունէր. վասն զի երգում ըրի որ այդ քոյրը վրայ փոխադրեմ այն բոլոր սէրն ու զորովը զոր ինձի ներշնչեր էր այդ ողբացեալ աղջիկը:

«Տիկին ֆորնիւէն իմացայ երէկ ձեր

ուր բնակիլը. ինքն ալ չէր գիտեր, և հոն գտնուող նկարիչ մը, Պ. Պինոս, պատմեց անոր թէ ապրուստ ճարելու համար տիպարի պաշտօն կը կատարէք նկարիչներու աշխատանոցներուն մէջ:

«Այն ժամանակ մտածեցի լաւագոյն վիճակ մ՛ընծայել ձեզի:

—Շնորհակալ եմ, տիկին, բայց ես մարդու պէտք չունիմ, մըմնջեց աղջիկը:

—Գիտե՛մ, զաւակս, գիտեմ որ դուք պարկեշտ, խելացի և խնայասէր էք, օրինակելի վարք մ՛ունեցած էք միշտ, և ձեր աշխատութեան շնորհիւ քիչ մը ստակ կըրցած էք մթերել:

«Բայց ներեցէք որ ըսեմ ձեզի թէ ձեր այդ արուեստին մէջ ապագայ չեմ տեսներ ես... դուք մինչեւ վերջն այդպէս գեղեցիկ չէք կրնար մնալ, և երբ տարիքնիդ առնէք, չէք կրնա՞ր այլ եւս տիպարի պաշտօն կատարել նկարիչներուն քով:

—Ես չի պիտի սպասեմ այն ժամանակին. հիմակուց որոշած եմ չի կատարել այլ եւս տիպարի պաշտօն:

—Ի՞նչ ընել է միտքերնիդ:

—Սուպիաքօ վերադառնալ, ուր ծընած եմ, և ուր մայրս մեռած է:

—Սուպիաքօ՞, ի՛նչ զարմանալի զուգադիպութիւն: Երկու տարի առաջ հոն գացինք, այրս ու ես. և թէպէտ չի կեցանք, բայց այնչափ սիրուն, այնչափ զուարճալի գտանք ձեր լեռներն, որ որոշեցինք հոն երթալ այս գարունին, և մինչեւ ամառուան վերջը մնալ, ի՛նչու դուք ալ չի գաք մեզի հետ:

—Ե՛ս, տիկին. չէք մտածեր թէ ես խեղճ աղջիկ մ՛եմ. հոն դարձեալ նոյն արհեստը պիտի բանիմ, այսինքն այժ պիտի արձեմ, ինչպէս որ կ'ընէի Յըրանաս գալէս առաջ:

—Մեր այժերն, ուրեմն, ըսաւ տիկին Պիանչէն անուշ ժպիտով մը: Յատկա-

պէս այծերու երամակ մը կը գնենք: Այրս իմ ամէն կամքս կը կատարէ, և ես չեմ ուզեր զատուիլ ձեզնէ:

«Մտիկ ըրէք զիս, սիրելի՛ Բիաս: Դուք մինակ էք աշխարհիս մէջ, քանի որ ձեր հայրն երես դարձուց Պիանքայէն, և քանի որ դուք ալ չէք ուզեր դիմում ընել անոր սրտին...»

— Երբէ՞ք, բաւ մէկէն Բիա, իմ գոյութիւնս իսկ չի պիտի դիտնայ երբէք:

— Այդ, ես որ ամէն բան ունիմ աշխարհիս մէջ երջանիկ ըլլալու համար, բարիքէ մը միայն զուրկ եմ... զաւակ չունիմ... կենացս ամենէն մեծ վիշտն է այս... երազ մ'ունեցեր էի, դժբաղդաբար օդը ցնդեցաւ... մտածեր էի որդեգրել ձեր քոյրը, թէ որ հայրը չուզէր ձանջնալ զայն. զաւակս պէս խնամել ու սիրել... այրս ալ համամիտ էր ինձի... օր մը կ'ամուսնացընէինք զինքը, և ետքն ալ մեր ունեցածն անոր կը թողուինք: Մահն առաւ Պիանքան մեր ձեռք ն. և հիմա ձեր կամքէն կախում ունի կորուսած յոյսս ինձի դարձունել:

«Բիա՛, սիրելի՛ Բիաս, կ'ուզէ՞ք որ ձեր մայրն ըլլամ ես:

— Մա՛յրս, կրկնեց Բիա գլուխը խոնարհեցընելով, աւա՛ղ, կորուսի:

— Անոր տեղը կ'անցնիմ ես, ըսաւ տիկինը խանդով: Ձեր քոյրը որ այնչափ կը սիրէի, չէր զլանար ինձ այդ երջանկութիւնը զոր կրնար առլ ինձէ: Ես չէի համարձակած որդեգրութիւն առաջարկել իրեն, վասն զի կը մտածէի թէ հայրը պիտի հաճէր ընդունիլ զայն, բայց երբ իմացայ որ այդ մարդը սիրտ չունէր, իւր զաւակը կը մերժէր, որոշումս տուի: Եթէ անգութ մահը վրայ չի գար, պիտի երթայի ըսէի իրեն. — «Պիանքա՛, աղջիկս, մեր տունը բաց է ձեր աւջեւ: Եկէք և ոչ եւս բաժնուինք իրարմէ»: Անեկրկայ եմ որ չէ չէր ըսեր:

— Իոյրս չէր թողուր զիս:

— Օ՛, տարակոյս չի կայ: Հարկաւ ձեր խօսքը պիտի ընէր ինձի, զիս հոս պիտի բերէր. ես ալ պիտի աղաչէի ձեզ որ չբաժնուինք անկէ... դուք ալ անշուշտ չպիտի ընդդիմանայիք իմ և անոր աղաչանքին, և պիտի հաճէիք անոր հետ կենալ իմ տանս մէջ... որով ես սլ մէկի տեղ երկու աղջիկ զաւակ կ'ունենայի: Աստուած առաւ ձեր քոյրը, բայց դուք կ'ապրիք, դուք Բիա՛, դուք ալ որբ էք անոր պէս, միայնիկ աշխարհի մէջ, առանց ազգականներու և բարեկամներու, առանց ծնողքի, որովհետեւ հայրերնիդ խժդժաբար ուրացաւ իր զաւակները: Անշուշտ չէք մերժեր նոր ընտանիք մը, որ թեւաբաց կ'ընդունի ձեզ:

— Ծնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, մրմնջեց աղջիկը: Բայց ըսի ձեզի, կ'ուզեմ իտալիա վերադառնալ:

— Ես ալ ըսի ձեզի թէ մեք ալ հոն կ'երթայինք, այրս ու ես... թէ մտադիր էինք ամուսն անցունել ճշտիւ ձեր ծնած երկրին մէջ... ուստի բնական է որ ի միասին երթանք:

«Ե՞րբ կ'ուզէք երթալ, սիրելի՛ Բիաս: — Ձեմ գիտեր:

— Ո՛ր օր յարմարի ձեզի, այն օրը կ'ընտրենք, զաւա՛կս:

— Չափազանց բարեսիրտ էք, տիկին, բայց չեմ կրնար խօսք տալ ձեզի հետ երթալու:

— Ինչո՞ւ համար. Ծրանսայէն մեկնելու մտադիր չէ՞ք:

— Այո՛:

— Ուրեմն աւելի լաւ է ժամ մը առաջ մեկնիլ. մանաւանդ եթէ, ինչպէս որ հիմակ յայտնեցիք ինձի, չէք ուզեր տիպարի պաշտօն կատարել նկարիչներու քով: Եթէ հոս երկար մնաք, ունեցած ստակնիդ կը հատնի և առանց

դրամի կը մնաք. քանի որ չպիտի աշխատիք:

— Չպիտի կենամ հոս: Կարելի է որ վաղը մեկնիմ: Բայց չեմ կրնար երթալ առանց տեսնելու մէկը, որ պիտի գայ վերջին տեսակցութիւն մը ընէ ինձի հետ:

— Ըսել է թէ ձեզի համակրող բարեկամ մը ունիք. շատ ուրախ եմ: Կը փափաքիմ ձանջել այդ բարեկամը, որ հաւատարիմ մնացած է ձեր դժբաղդութեան մէջ: Կ'ուզեմ ձանջել, որպէս զի յայտնեմ անոր իմ իտալիա երթալու դիտաւորութիւնս, և խոստանամ որ իւր տեղը պիտի բռնեմ ձեր քով:

— Ուրեմն, ըսաւ Բիա՛, վայրկեան մը վարանել է տեւ, անպատեհ չէք գտներ որ անոր ալ խորհուրդ հարցնեմ:

— Ոչ միայն անպատեհ չեմ գտներ, այլ և ստիպողաբար կը յորդորեմ որ ընէք: Եւ եթէ հաճիք անուն ու տեղը ինձի ըսել, կ'երթամ կը գտնեմ զինքը, կը հասկցնեմ ինչ որ կ'ուզեմ ընել ձեզի համար, և կ'աղաչեմ որ ինձի հետ միաբանի ձեզ համոզելու որ ընդունիք իմ առաջարկութիւնս: Եթէ ստուգիւ բարեկամ է ձեզի, ուժ կուտայ առաջարկիս, վասն զի կը տեսնէ որ անկեղծ սիրտէ կուգայ:

— Ձիւս Աէնթ-Ուան տոնող նկարիչն է:

— Ինչ, այն Պ. Պինո՞սը, գոչեց տիկինը, որ շատ աղէկ հասկցեր էր ով ըլլալը: Բայց այդ մարդը ճարտար նկարիչ մը չէ: Տիկին ֆորնիւ, որուն տունը կը բնակէր ձեր քոյրը, ըսաւ ինձի թէ՛ իւր ժամանակը սրճարաններու մէջ կ'անցունէ փոխանակ աշխատելու:

« Եւ ճշմարիտը խօսելով, սիրելի Բիաս, եթէ այդ խեղճ երիտասարդին խորհուրդ պիտի հարցնէք...»

— Անոր վրայ չէ խօսքս, տիկին.

կը ձանջեմ զայն, գիտեմ անոր արժէքը. և տեսնել ալ չեմ ուզեր.

«Իմ խօսքս Պ. Բօլ Ֆրընէօզի համար էր:

— Բիկալ հրապարակին վրայ բնակող նկարիչի՞ն:

— Այո՛, տիկին:

— Որուն աշխատանոցին մէջ նիստ կ'ընէիք ձեր Փարիզ դալէն ի վեր, և ձեր քրոջը մեռնիլն ալ հոն իմացաք:

— Ո՞վ ըսաւ ձեզի զայդ, հարցուց Բիա զարմանքով:

— Տիկին ֆորնիւ, որ Պինոսէն իմացեր էր:

— Ուրեմն Պինոս ըսած է անոր նաև թէ ես երախտապարտ եմ Պ. Ֆրընէօզի, թէ անոր բարեբարութեամբը ապրեցայ, թէ առանց անոր...»

— Պ. Ֆրընէօզ ալ բան մը կը պարտէր ձեզի անշուշտ: Ո՞ր պիտի կրնար գտնել ձեզի պէս տիպար մը: Բայց... ստուգիւ խոստացա՞ւ ձեզի թէ պիտի գայ ձեզ տեսնէ ձեր չուելէն առաջ:

— Այնչափ հաստատապէս խոստացաւ, որ ինձի երգում ընել տուաւ առանց զինքը տեսնելու չի շարժիլ տեղէս:

— Եւ կ'սպասէք իրեն:

— Անշուշտ. ի՞նչ պատճառ ունիմ կասկածելու անոր խօսքին վրայ:

— Օ՛, ես չեմ ըսեր թէ խօսքը չի բռներ, բայց բռնելու ժամանակ պիտի կրնա՞յ գտնել: Չէ՞ք գիտեր թէ պիտի ամուսնանայ քիչ օրէն:

— Պիտի ամուսնանա՞յ, Պ. Ֆրընէօզ... ո՛չ, կարելի չէ, մրմնջեց Բիա, ահաբի կերպիւ տժգունելով:

— Կը հաւատեմ, զաւա՛կս, թէ ամուսնանալու վրայ է:

«Մանուցումը հրատարակուած է, և արարողութիւնը պիտի կատարուի սալոնին բացուելուն հետեւալ օրը:

— Ինչէ՞ն գիտեք:

—Պ. Պինոս ըսեր է տիկին Քորնիւի:
«Պ. Ֆրընէօզ Օրիորդ Մարկըրիթ Բօլէի հետ կ'առնուանայ, որ հարուստ կալուածատէրի մ'աղջիկն է: Եան գեղեցիկ ամուսնութիւն մ'է իրեն համար. վասն զի նշանածը մեծագումար օժիտ մը կը բերէ իրեն, ասկէ զատ, շատ ալ աղուոր է եղեր:

«Բայց ի՞նչ ունիք, սիրելի դասակս:
—Բան մը չունիմ, տիկին, պատասխանեց Բիա դժուարաւ զսպելով կոկորդը խեղդող հեկեկանքը:

—Դուք բարեկամ ըլլալով Պ. Ֆրընէօզի... կը կարծէի որ այս լուրը հաճոյք պիտի պատճառէր ձեզի, բայց կը տեսնեմ որ սխալեր եմ:

—Չեմ հաւատար... եթէ պիտի ամուսնանար, զիս գալու տեսնելու խօսք չէր տար:

—Ինչո՞ւ համար, միթէ բնական չէ՞ ընդհակառակն որ սկսած պատկերը լմնցընել ուղէ: Այն պատկերը կ'երեւի թէ մեծ յաջողութիւն ունենալու կոչուած է, և Պ. Ֆրընէօզ կը ջանայ որ հասցրնէ յառաջիկայ ցուցահանդէսին: Ի՞նչպէս կրնայ լմնցընել եթէ դուք չուզէք նիստ ընել:

—Ըսել է թէ ինձի պէտք ունենալուն համար է որ...:

—Ատոր տարակոյս բնաւ պէտք չէ, սիրելի՛ դասակս: Մեծ նկարիչներն անձնամուկ կ'ըլլան:

«Պ. Պինոս այս ամէնը հասկըցուցեր է տիկին Սոֆի Քորնիւին, ուրիշ շատ մը մանրամասնութիւններով: Դուք կը ճանչէք զայն, և գիտէք հարկաւ ի՞նչ շատախօս ըլլալը. բերանը ոսպ չի թրչիր: Ոչ միայն իւր ամէն գործերն այլ և բարեկամներուն ըրածն ու ըրածը կը պատմէ ամէնուն:

—Ուրիշ ի՞նչ ըսեր է:
—Այնպիսի բաներ որ կրկնել չեմ ուզեր:

—Մի՛ վախճաք, տիկին, ես պատրաստ եմ ամէն բան լսելու: Եւ դուք, եթէ բարեկամ էք ինձի, զիս կը լուսաւորէք Պ. Ֆրընէօզի դիտաւորութիւններուն վրայ:

—Ի՞նչպէս կը հասկըցընեմ, սիրելի՛ Բիաս, զիս նեղը կը ձգէք. չեմ ուզեր ձեր սիրտը գոռոզ պատրանք մը ցըրել... միւս կողմէ, եթէ իմ ձեզի առաջարկած ապագան պիտի գողէիք այնպիսի մարդու մը որ ձեզ չահագործել միայն կը խորհի...:

—Պօսեցէ՛ք, կ'աղաչեմ:
—Կը վախճամ որ ոչ միայն կը արտմեցընեմ, այլ և կը վերաւորեմ:

—Վերաւորումը կատարուած է, րուս Բիա խուլ ձայնով մը:

—Արդ, խեղճ դասակս, կ'երեւի որ Ֆրընէօզ նշմարեր է կամ կարծեր է նշմարել թէ... ստուգիւ չեմ գիտեր ի՞նչպէս ըսեմ ձեզի... վերջապէս երեւակայեր է թէ այնպիսի զգացում մը ներշնչած է ձեզի որ...:

—Աւարտեցէք, տիկին: Կարծեր է թէ յինքը կը սիրեմ:

—Դուք ըսիք:

—Ճշմարիտ է, կը սիրեմ:
—Աւա՛ղ, կ'անցնէր միտքէս: Եւ փառք կուտամ Աստուծոյ, որ հոս գալու գաղափարը ներշնչեց ինձի... վասն զի թերեւս տակաւին ժամանակ կայ ձեզ փրկելու, ձեզ բժշկելու աղիտարեր կիրքէ մը:

«Ես կը վարանէի անողոք ճշմարտութիւնը ձեզի բսելու. բայց հիմա ոչ եւս կը վարանիմ: Գիտցէք ուրեմն, որ այդ մարդը ծածկեց ձեզնէ իւր ամուսնանալու դիտաւորութիւնը, վասն զի կը վախճար որ կ'առնէք կը քալէք: Օրիորդ Բօլէ ձեր առջեւ ըրածէն զատ՝ Պինոսի առջեւ ալ երկրորդ ցոյց մ'ըրեր է: Չեզի դէմ սաստիկ նախանձելով՝ արգիլեր է իւր ապագայ ամուսինին տեսնել ձեզ: Պ. Ֆրընէօզ ալ երդուած է որ այլ եւս ոտք կոխել չի տայ ձեզի իւր աշխատանոցին մէջ, այսինքն վախճելով ձեզ:

նին տեսնել ձեզ: Պ. Ֆրընէօզ ալ երդուած է որ այլ եւս ոտք կոխել չի տայ ձեզի իւր աշխատանոցին մէջ, այսինքն վախճելով ձեզ:

—Ոչ... չեմ կրնար հաւատալ ատոր... ցած բան է...: Մնաց որ տեսայ զինքը հետեւեալ օրը:

—Վասն զի դործին չի գար աւրուիլ ձեզի հետ: Պ. Ֆրընէօզ երկդիմի խաղ մը կը խաղայ: Իբրեւ մարդ, չուզեր կոտորել իր նշանածը որ հարուստ է, իբրեւ նկարիչ չուզեր կոտորել իր տիպարը, որուն տեղը չի կրնար քնել: Եւ ես կը գուշակեմ իւր խորհած հնարքը: Բիա՛, դաւակն, անկեղծ եղիք, չառաջարկեց ձեզի որ իր աշխատանոցէն ուրիշ գործարանի մը մէջ նիստ ընէք իրեն համար:

—Ուրիշ գործարանի կամ աշխատանոցի խօսք չըրաւ...: Հարցուց ինձի թէ կը հաճէի՞ նիստ ընել իրեն հետ այնպիսի տեղ մը, ուր ինքը մինակ ըլլայ ինձի հետ:

—Դուք ընդունեցի՞ք:
—Ո՛չ... պատասխանեցի թէ լուրի պիտի սպասեմ իրմէ...:

—Եւ թէ չպիտի մեկնիք տունս զինքը տեսնելու: Այս էր անոր ուզածը, հետեւապէս պիտի գայ:

—Հո՞ս, հարցուց աղջիկը դողալով:
—Անշուշտ: Գիտէ որ այն սենեակին մէջ պատրաստ կ'ըլլաք իւր հրամանը կատարելու մինչեւ որ լմնցընէ իւր պատկերը...:

—Ես ալ հոս չեմ սպասեր իրեն, ըսաւ Բիա վճռաբար: Եւ մէկէն ոտքի վրայ ելնելով, դողդոջել սկսաւ, այնպէս որ բարեսիրտ Տիկին Պլանչէն թեւովը գրկեց զայն մէջքէն, որպէս զի չիյնայ:

—Իրաւունք ունիք, դաւակն, ըսաւ գորովալից ձայնով մը: Պէտք չէ որ Պ. Ֆրընէօզ հոս գտնէ ձեզ... պէտք

է պարապ հանել անոր գձուճ հաշիւները: Թող ամուսնանայ Օր. Բօլէի հետ, վասն զի հարուստ է, բայց գոնէ չառաջար չի գործածէ ձեր զիջողութիւնը:

«Տիպարի պաշտօն կատարել, ծառայութիւն մը ընելու համար այդ մարդուն որ անարժանաբար կը խնդայ ձեր վրայ, ստուգիւ չափազանց տկարութիւն կ'ըլլայ: Եւ եթէ հաւատամ Պինոսի որ զայն լաւ կը ճանչէ... կարող է ձեր առանձնութենէն օգուտ քաղելով ձեզ հրապուրելու և...:

«Իւր աշխատանոցին մէջ չի փորձեց, ուր իւր նշանածը կրնար երթալ ամէն վայրկեան, բայց հոս...:

—Եո չեմ կրնար, ընդմիջեց աղջիկը, կը մեկնիմ աս իրիկուն:

—Այս իրիկուն, թերեւս շատ ուշ կ'ըլլայ: Երէկ իմացուց ձեզի իւր այցելութիւնը անշուշտ պիտի գայ այսօր: Եթէ կ'ուզէք չի տեսնել զինքը, վայրկեան մը իսկ չի կորնցընելով պէտք է դուրս ելնէք այս տունէն: Իմ տունս բաց է ձեզի, Բիա՛. ձեզի հոն կը տանիմ, և կ'երդեւում որ ձեր որոշումներուն վրայ ազդեցութիւն չեմ բանեցընէր:

«Իմ տունս որչափ ժամանակ ուզէք, այնչափ կեցէք. եթէ կ'ուզէք՝ քանի մը օր միայն, որչափ ժամանակ որ պէտք ըլլայ այս սենեակնուդ մէջ ունեցած կարասիներնիդ ծախելու և ձեր ողբացեալ քրոջ գոյքերը տիկին Քորնիւի տունէն առնելու համար:

—Ի՞նչ պիտի ընեմ քրոջս գոյքերը: Չեմ ուզեր:

—Պէտք է առնէք, սիրելի՛ դասակս. չէք կրնար թողուլ ձեր քրոջն անձնական գոյքերը...: Մտածեցէք որ ամուսնուդ կը ծախուին իւր հագուստները, ձերմակեղէնները... սրբապղծութիւն մը կ'ըլլայ... ասկէ զատ՝

Թուղթեր ալ կան եղեր, որք կրնան ձեզի պէտք ըլլալ օր մը:

«Կը հասկընամ որ ձեր սիրտը չի քաշեր մտնել անոր բնական տունը, բայց հարկ չի կայ ձեր հոն երթալուն: Ես կ'իմացընեմ տիկին ֆորնիւին և ամէնն ալ իմ տունս կը զրկէ:

—Այդպէս թող ըլլայ, ըսաւ Բիա, որ Բօլ Ֆրընէօզի ձեռքէն փախչելէ զատ ուրիշ բան չէր մտածեր, այն վայրկեանէն ի վեր որ հաւտացեր էր զինքը խարած ըլլալուն: Տարէք զիս, տիկին, պատրաստ եմ հետերնիդ գալու՝ եթէ խօսք կուտաք ինձի թէ վաղ իրիկուն կրնամ մեկնիլ Փարիզէն:

—Կը խոստանամ, և թէպէտ ծանր կուգայ ինձի գատուիլ ձեզնէ, արգելք չեմ ըլլար ձեր մինակ երթալուն, եթէ չէք ուզեր սպասել որ ամուսինս լմնցընէ իւր ճամբու պատրաստութիւնը: Դուք ազատ պիտի ըլլաք, բացարձակապէս ազատ: Մենք կուգանք Սուպիաքոյ կը գտնենք ձեզ, և կը յուսամ որ հոն մեզ տեսնելէ չէք քաշուիր:

«Բայց ժամանակը կ'անցնի, Բիա՛, գաւա՛կս, փութացէք երթանք:

Բիա այն աստիճան գրգռուած էր, որ խորհրդածելու կարող չէր:

—Աւասիկ պատրաստ եմ, ըսաւ դէպի դուռը վազելով, զոր տիկին Պլանչէն բացեր էր:

Եւ երկուքն ալ դուրս ելան սենեակէն, և սանդուղն ի վար իջան՝ առանց իսկ դրանք բանալին առնելու:

Հայր Լօրէնձոյ ծխափողը կը քաշէր իւր գինետան սեմին վրայ: Բարեկամաբար ողջունեց Բիան. բայց չխօսեցաւ հետը. ոչ ալ ուր երթալը հարցուց:

Լու հագուած անձինք պատկառանք կ'ազդէին իրեն, և իւր վարձակալուհին տանող տիկինն ալ մետաքսէ շրջազգեստ ունէր:

Կառքը՝ որով եկած էր, կ'սպասէր դրանն առջեւ: Տիկին Պլանչէն նախ Բիան մտցուց, ինքն ալ ետեւէն մտաւ, հասցէ մը տուաւ կառավարին, և վարագոյրներն իջեցընելով, կառքը ճամբայ ելաւ դէպի գետափը:

Նախազուգուած շատ խոհական էր, վասն զի ուրիշ կառք մ'ալ դիմացի կողմէն կուգար. որուն բարձրաւանդին վրայ գանազան գործիներ բեռցուած էին, և մէջն ալ երկու պարոններ նստած:

Երկու կառքերն իրարու քովէ անցան. և եթէ տիկին Պլանչէն վարագոյրին ծայրը բանալով տեսաւ միւսին մէջինները. որոնք չկրցին՝ ոչ տիկինը տեսնել և ոչ տարած աղջիկը:

Վայրկեան մ'ետքը, երկու պարոնները կառքէն վար ցատկեցին հայր Լօրէնձոյի դրանն առջեւ:

—Բարի լոյս, հին յելուզակ, գոչեց առաջին իջնողը, որ հողէ ծխափող մը ունէր բերանը, և ձեռքն ալ երանգատուփ մը: Զիս չճանչեցի՞ր չարածձի: Գոնէ Բեթալու Գորն Ֆրընէօզը ճանչէ, որ քու վարձակալներէդ մէկուն բարեբարն է:

—Ա՛, դո՞ք էք, պարոն Ֆրընէօզ, ըսաւ Լօրէնձոյ բաւական լաւ Ֆրանսերէնով մը:

Երբեմնի աւաղակն ամէն լեզու քիչ շատ կը խօսէր, մէկ մէկ քիչ սովորով ալ եւ ալ ազգի ճանապարհորդներէ, զորս ժամանակաւ լեռը տարած էր կողովատելու կամ փրկանացելու համար, ըստ սովորութեան իւր արուեստակիցներուն, որք բարեկամաբար կը վարուին իրենց ձեռքն ինկած մարդաց հետ, մինչեւ այն օրն ուր անոնց ալանջները կամ գլուխը կը կտրեն՝ եթէ պահանջուած փրկանքը չի կրնան կամ չուզեն վճարել:

—Այո՛, հին ֆրա Գալու, ես եմ, ըսաւ նկարիչը խնդարով: Հաճէ օգնել կառավարին, որ վար իջեցընէ կառքին բարձրաւանդին վրայ կեցած պատկերակալը:

Լօրէնձոյ հնազանդեցաւ առանց բան մ'ըսելու, մինչ Ֆրընէօզ կառավարին ստակը կը վճարէր:

—Ասոր չէիք սպասեր, ծերունազարդ աւաղակ, ըսաւ Պինոս հեղնօրէն: Երբէք քու Գալու չէր մեծարուած երկու տաղանդաւոր նկարիչներու այցելութեամբ, և այս պատիւը պիտի ունենայ ամէն օր մինչեւ երեք շաբաթ: Խորհուրդ կուտամ քեզի որ լուսավառութիւն ընես այս իրիկուն:

«Առ այժմ, եթէ տակաւին ունիս շիշ մը հին Գալուի գինի, ինձի բեր, որպէս զի գաւաթ բաղխեմ քեզի և վարձակալուհիներուդ հետ: Թո՛ւսն հէ՛, ամէնն ալ ճամբայ ելած են նիստի երթալու համար:

«Սպասաւոր մ'ունի՞ս սա գործիքները վեր տանելու համար: Բանի՞ յարկ է տունդ, հարկաւ վեց առ նուազն:

—Այնպէս լուր կուգաք հոս, հարցուց ծերուկը:

—Այո՛, հայր Լօրէնձոյ, ըսաւ Ֆրընէօզ, պատկեր մ'ունիմ լմնցնելիք: Երբ տիպարը չուզեր նկարչին տունն երթալ, պէտք է որ նկարիչը անոր տունը գայ

—Ա՛, Բիան, ըսաւ Լօրէնձոյ, ճշմարիտ է: Խեղճը կսկիծ ունի, որովհետեւ քոյրը մեռաւ:

—Կը ճանչէի՞ր քոյրը:

—Ամեն իրիկուն կը տեսնէի: Բայց պատասխան չէր տար ինձի երբ խօսէի հետը: Աւասիկ աղջիկ մը որ շատ ստակ կրնայ վաստակիլ եթէ տիպարի պաշտօն կատարէր: Բայց ոչ, տարդիկի մը պէս վայրենի էր:

—Ետ գառնալուն ալ հանրակառք կը

նստէր, այնպէս չէ՞, հարցուց Պինոս: —Հաւանական է. բայց ես չիմացայ երբէք ուր բնակիլու: Պատուիրեր էր Բիային որ մարդու չըսէ:

—Բիա ալ չէր գիտեր քեզի պէս:

—Ի՞նչպէս է Բիան. հարցուց Ֆրընէօզ, ընդմիջելով Պինոսի շաղակրատութիւնը:

—Հիւանդ չէ, պարոն, բայց շատ տրտում է. առատօրէն մինչև իրիկուն կուլայ, և բան մը չուտեր:

—Ախորժակը կը վերադառնայ, կը յուսամ, զուարթութիւնն ալ: Ես կը բժշկեմ զայն: Վեց ժամ նիստ պիտի ընէ ամէն օր:

—Ի՞նչպէս, իւր սենեակի՞ն մէջ:

—Այո՛, հայր Լօրէնձոյ: Մեծ չէ թէև, բայց պատկերակալս կանգնելու շափ տեղ ունի և լուսաւոր ալ է անշուշտ: Միայն թէ, ծերո՛ւկս, չեմ ուզեր որ խօսքի նիւթ ըլլայ այս տան մէջ: Ամենեկին չի պիտի իմացնես վարձակալներուդ: Անոնք չեն կրնար զիս տեսնել, որովհետև իմ եկած գացած ատենս հոս չեն, ամէնն ալ գործի գացած կ'ըլլան:

—Հասկըցայ, պարոն Ֆրընէօզ:

—Շատ աղէկ... դուն սա պատկերակալս շալկէ, Պինոս ալ կտանները տանի, ես ալ գոյներուն տուփը... և վեր ելնենք: Բիա շատ պիտի գարմանայ մէկէն ի մէկ մեզ տեսնելով իրրեւ տուն փոխողներ:

—Այո՛... երբ վերադառնայ:

—Ի՞նչ, հոս չէ՞:

—Հազիւ հինգ վայրկեան եղաւ երթալը: Կը գարմանամ որ չէք տեսեր զայն: Նստած կառքը ձեր քովէն անցաւ:

—Ի՞նչ կ'ըսէք, կառքով մեկնեցաւ, հիմա՛, գոչեց Պինոս: Այն դէպքէն ետք կը հասկընամ որ հանրակառք նստիլ չուզեր:

— Զարմանալի՛ բան, ըսաւ Յըրնէօզ, խոստացեր էր ինձի...
 — Տիկինի մը հետ գնաց:
 — Մինակ չէր ուրեմն:
 — Ոչ: Ասնող արկինը կառքով եկաւ. երեք քսոորդի չափ վերը մնաց, եւ ետքը վար իջաւ Բիայի հետ. կառքը կը սպասէր, և երկուքը մէկէն մէջը մտան այն միջոցին որ ձեր կառքը փողոցին անկիւնը կը դառնար:
 — Ըսել է որ դէմէ դէմ ելանք...
 — Եւ կը հասկընամ ինչո՞ւ համար չկրցինք տեսնել զանոնք. կառքին վարադոյրները գոց էին, ըսաւ Պինոս:
 — Ճշմարիտ է... կը յիշեմ, մրմնջեց Յըրնէօզ:
 — Ի՞նչպէս կին էր, հարցուց չպղիչը տանտէրինս. տիկին մ'էր թէ նկարչուհի մը, որ թերեւ իմանալով Բիայի պարապ ըլլալը, եկեր տարեր է տիպարի պաշտօն կատարել տալու համար:
 — Մետաքսէ շրջապատ և թաւիչէ թիկնոց մ'ունէր: Եւ առաջին անգամը չէ որ կուգայ:
 — Ուրեմն կը ճանչէր Բիան:
 — Ո՛չ, չեմ կարծեր: Իրիկուն մը, երբ Բիայի քոյրը վերն էր, այդ կինն եկաւ հարցուց ինձի թէ որո՞ւ կուգար այդ աղջիկը: Ես ալ պատասխանեցի թէ իրեն ի՞նչ փոյթ. և մրմնալով մեկնեցաւ: Բայց այս առտու գիտէր ուզածը. վասն զի Բիա Ասթրոտիի անունը տալով ըսաւ թէ իրեն կ'սպասէր վերը:
 — Սուս խօսեր է, Բիա ինձի միայն կ'սպասէր, գոչեց Յըրնէօզ: Քեզի բան մը չըսա՞ւ զացած ատենը:
 — Ո՛չ, պարոն, հազիւ ինձի նայեցաւ, պատասխանեց ծերուկը:
 — Ուրեմն պիտի գայ, ըսաւ Պինոս: Սենեակին կարասիներն իրեն են, և կարասի ունեցող մը չի ձգեր երթար:

— Իրաւունք ունիս, վեր ելնենք ու սպասենք, ըսաւ Յըրնէօզ՝ սանդուղն ի վեր վազելով: Պինոս ալ ետեւէն:
 Լորէնձոյ խմացնել ուզեց թէ Բիա միշտ հետը կը տանէր սենեակին բանալին, հետեւաբար գոց պիտի գտնէին սենեակը: Բայց ժամանակ չմնաց:
 Ծերուկը կը սխալէր սակայն: Այս անգամ Բիա բանալին չէր ատեր, սենեակին դրանը վրայ թրղուցեր էր:
 Պինոս տեսնելով զայս՝ դիտողութիւն ըրաւ սենեակէն ներս մտած միջոցին:
 — Զարմանալի՛ բան, ըսաւ, ես աւելի ուշադիր կը կարծէի այս աղջիկը: Սենեակն այսպէս բաց թողուլ ամէն եկողի առջեւ, մանաւանդ երբ դացած տեղը մօտ ալ չէ, որովհետեւ կառքով գացեր է, որմէ կը հասկցուի թէ՛ բաւական ժամանակ պիտի անցունէ դուրսը, թէ՛ սենեակին մէջ շատ բան մը չիկայ գողնալու:
 Յըրնէօզ լուռ կը կենար, բայց Բիային այսպէս ձգել երթալը՝ մտահոգութիւն կը պատճառէր իրեն, և գարմացիկտ աչերով նամակ մը կը փնտռէր իրեն ուղղուած:
 Նախագգացում մը կ'ըսէր իրեն թէ Բիա թուեր էր մշտնջենապէս: Բայց միւս կողմէ չէր կրնար հուստալ թէ առանց իրեն գրելու և գոնէ հրաժեշտի ողջոյն մը տալու կը չուէր Բիա:
 Կը հարցընէր ինքնիրեն թէ ո՞վ կրնար ըլլալ այն կինը որ եկեր տարեր էր զայն, և գոր Լորէնձոյ արդէն իրիկուն մը տեսեր էր, Պէանքա Ասթրոտիի վրայ տեղեկութիւն ուղեւուն առթիւ:
 Եւ տարտամ կասկածներ ծլիլ կ'սկըսէին մաքին մէջ:
 Նոյն միջոցին դուռը գարնուեցաւ:
 — Ինքն է, գոչեց Պինոս, խեղճ Լորէնձոյ, այնչափ բեռնաւորուած է, որ դուռը չի կրնար բանալ...:

Եւ վաղեց բանալու, մինչ Յըրնէօզ՝ արմուկը պատուհանին յեցած դուրս կը նայէր, Բիան տեսնելու կեղակարծ յուսով:
 Եւ մէկէն դուռը բանալով Պինոս, մնալ մնաց որ պիտի տապալէր դուռը դարնող անձը:
 Շնորհքով հազուած և ակնածելի տեսքով պարոն մը էր, որուն նմանը խիստ քիչ անգամ կրնայ տեսնուիլ հայր Լորէնձոյի տանը մէջ:
 Հազիւ կրցաւ ետ քաշուիլ՝ չպղիչին բաղխումէն ինքզինք պատապարելու համար, և շատ դարմացաւ, մինչեւ իսկ դժգոհեցաւ երբ դրանը սեմին վրայ տեսաւ անոր մորուեղ դէմքը:
 — Ներեցէք, անշուշտ սխալեցայ, ըսաւ:
 — Ո՞վ կը փնտռէք, գոչեց Պինոս որոտագին ձայնով մը:
 — Աղջիկ մը:
 — Ի՞նչպէս աղջիկ, ձե՞ր հասակէն:
 — Իտալուհի մը, որ տիպարի պաշտօն կը կատարէ:
 — Ի՞նչ է անունը:
 — Բիա Ասթրոտի: Այս տունը վարձողն ըսաւ ինձի թէ ամենէն վերջ յարկը կը բնակի, ես ալ...
 — Ընդէ է ըսեր. հոն կը բնակի, բայց ի՞նչ պիտի ընէք:
 — Իրեն վերաբերեալ գործի մը վրայ պիտի խօսիմ հետը:
 — Շատ աղէկ, բայց հոս չէ:
 — Ուրեմն ետքը նորէն գամ:
 — Կեցի՛ք պարոն, կեցիք, գոչեց յանկարծ Պինոս՝ ույցելուին երեսը նայելով, կարծեմ թէ ես տեսած եմ ձեզ տեղ մը:
 — Շատ հաւանական է պարոն, վասն զի ինձի ալ կը թուի որ ձեզ տեսած եմ. բայց ս'եր և ի՞նչ առթիւ չեմ յիշեր:
 — Ա՛, միտքս եկաւ: Բիկալի հրապա-

րակը նկարչատունը եկաք... Պ. Բօլէն տեսնելու:
 — Ճշգիւ, պարոն, ... և կը յիշեմ որ հոն ալ դուք բացիք ինձի դուռը:
 — Այո՛, կ'ատեմ դժնապանները, բայց ի հարկին՝ անոնց պաշտօնը կը կատարեմ: Ներս հրամանեցէք, պարոն:
 — Ներեցէք, բայց...
 — Բիա դուրս ելած է. բայց պիտի գայ... և դուք՝ մինչեւ որ զայ՝ կրնաք խօսակցիլ անոր երկու բարեկամներուն հետ: Է՛, Յըրնէօզ, գոչեց Պինոս:
 Յըրնէօզ, որ պատուհանին առջեւ կանգնած դուրս կը նայէր, լսելով այս խօսակցութիւնը, դրանը մօտեցէր էր լռին:
 Այցեւուն զայն տեսնելուն պէս հանեց փեղոյրն և փոխեց դէմքը:
 — Պարոն, ըսաւ քաղաքավարութեամբ, ես արդէն պատիւ ունեցայ տեսնելու ձեզ, և շատ բարեբաղդ եմ ձեզ հոս գտնելուս վրայ, վասն զի ճշգիւ ձեր տունէն կուգամ:
 — Եթէ չեմ սխալիր, պարոն, դուք Պ. Բօլէի նօտարն էք, ըսաւ Պ. Յըրնէօզ, յիշելով անոր առաջին այցելութիւնը:
 — Պ. Բօլէի նօտարը, ոչ... եղբօրը՝ վախճանեալ Պ. Յրանսի Պօյեի՛ նօտարն էի:
 — Օ՛, շատ աղէկ. Պ. Բօլէ խօսեր էր ինձի իւր ըրած կարուստին վրայ... բայց չեմ տեսած զինքն՝ այն օրէն ի վեր որ դուք իմ աշխատանոցս եկաք զայն տեսնելու, և...
 — Եւ հարկաւ կը հարցնէք դուք ձեզի թէ ի՞նչ պատճառով ձեզ տեսնելու կ'ուզէի: Աւստիկ պատճառը...
 «Անուն Տրիստն է, ըսաւ նօտարը ներս մտնելով: Գիտէք անշուշտ թէ ես փարիզ եկած եմ Պ. Բօլէի տեսնելու և եղբօրը կտակին վրայ հեռք խօսելու. բայց կարծեմ թէ չեք գիտեր որ այն

կտակը զրկած է զինքը ժառանգութեանէ :

—Ո՛չ, չէի գիտեր զայդ, ըսաւ Ֆրընէօզ զարմացական դէմքով մը :

—Պ. Ֆրանսի Պոայէ իւր բոլոր ունեցածը թողուց երկու բնական աղջիկ զաւակներուն, զորս ունեցած է Իտալիոյ մէջ, և որք բնաւ ճանչուած չըլլալով իրմէ, մօրերնուն անունը կը կրէին... Պիանքա և Բիա Ասթրոտի :

—Ի՞նչ կ'ըսէք, գոչեց Ֆրընէօզ, Բիա այդ Պ. Պոայէին աղջիկն է... Պ. Բօլէին ալ եղբորորդին :

—Օրինաւորապէս ո՛չ, պատասխանեց Պ. Տրիսթոն : Հայրը չի ճանչեց զայն : Եթէ ճանչէր, չէր կրնար իւր բոլոր ունեցածն անոր թողուլ, վասն զի Ֆրանսական օրէնքը կ'արգելէ բնական զաւակի մը կտակել ինչ որ կը ներէ կըսակել օտարի մը :

—Աւելի լաւ է ժառանգել քան թէ քաղաքացիական ազգականութիւններ ունենալ, ըսաւ Պինոս վճռարար, մանաւանդ եթէ ժառանգութիւնը պարտ է :

—Հինգ հարիւր հազար Ֆրանքէն աւելի :

—Կէ՛ս միլիոն, որ Բիայի գողնոցին մէջը կ'իյնայ... ազտիկ բան չէ... : Եւ այդ փոքրիկ կտցարը կառքով պըտտելու կ'երթայ ճշդիւ այն վայրկենին, որ գեղեցիկ հարստութիւն մը կը բերուի իրեն : Նայինք ի՛նչ դէմք պիտի առնէ երբոր վերադառնայ :

«Քեզի բան մը ըսե՛մ, Բօլ, դուն այդ պատկերը չպիտի կրնաս լմնցնել : Այ հիմա բնաւ նիստ չընէր... :

Եւ այս լուրին վրայ զգացած ուրախութիւնը յայննելու համար սկսաւ խաղալ ցատկել սենեակին մէջ, ի մեծ զարնացումն նօտարին, որ պարզապէս խելագարի մը տեղ դրաւ զայն :

—Պարո՛ն, ըսաւ Ֆրընէօզ հանդարտօ-

րէն, շատ ուրախ եմ որ այս տղեկը հարուստ պիտի ըլլայ, վասն զի արժանի է երջանութեան... և այդ բազում ալ շատ պատեհապէս կուգայ՝ զի՛քքը հարուածող աղէտը դարմանելու... վասն զի քոյրը մեռաւ յանկարծ :

—Ի՞նչ կ'ըսէք, Պիանքա Ասթրոտի՞ն, Բիայի ժառանգակիցը : Պ. Պոայէի կըտակը հաւասար բաժինով ժառանգ կը կարգէր Սուպիաքոյ բնակող Պարթօլովէա Ասթրոտի երկու աղջիկները : ուստի անդրանկին մեռնելովը, ամբողջ ժառանգութիւնը կրտսերին կ'իյնայ :

—Բիայի միտքէն չանցնիր բնաւ :

—Կրնար միշտ չգիտնալ իրեն վիճակած բարեբաղդութիւնը, վասն զի մարդ չէր ճանչէր զինքը : Պ. Պոայէ երբէք միտքը բերած չէր իւր աղջիկները, և երբ իւր կենաց վերջին վայրկեաններուն մէջ յիշեց, ուր ըլլալին չկրցաւ ըսել :

Ես զիպուածով երէկուան առջի օրը լուր առի մնացած աղջկանը վրայ, և առած լուրս ալ յոյժ անկատար էր :

«Կը յիշէք անշուշտ, պարո՛ն, որ ձեր աշխատանոցը եկայ տեսնելու Պ. Բօլէն, որ հոն կը գտնուէր :

—Այո՛, կը յիշեմ, և վայրկեան մ'առաջ հոն պիտի գտնէիք Բիան, որ իւր քոյր մահուան լուրն առած ր :

—Եւ ձեր աշխատանոցէն մեկնած երբ ես հոն եկայ : Պ. Բօլէ իմացուց զայս ինձի... ըսելով թէ քիչ մ'առաջ հոն տեսեր էր եղբորը կտակընկալը :

—Այո՛, իւր եղբոր, որ զինքը կը զրկէր յօգուտ իւր բնական զաւակին : Արդարեւ վեհանձնութիւն էր Պ. Բօլէի ըրածը, վասն զի առանց այդ տուած տեղեկութեանը՝ թերեւս յաւիտեան չպիտի կրնայիք Բիայի ազգակցութիւնը իմանալ :

—Խիստ հաւանաբար, պարո՛ն : Բայց պէտք էր նաեւ գտնել ժառանգորդին անձը, և... այս ալ Պ. Բօլէի շնորհիւ չէր որ յաջողեցաւ :

—Ջարմանալի՛ բան : Պ. Բօլէ շատ դիւրաւ կրնար ըսել ձեզ այդ ժառանգորդին ուր բնակիլը : Բաւական էր որ ինձի հարցընէր :

—Այո՛, ես ալ զայդ խնդրեցի իրմէ, բայց պատասխանեց թէ իւր պարտքը չէր նպաստաւորել կտակ մը, որ զինքը կը կողմպէսէր յօգուտ օտարուհիի մը :

—Եւ սակայն քիչ մ'առաջ ըսիք մեզի թէ՛ առանց անոր չպիտի կրնայիք իմանալ թէ Բիա իմ աշխատանոցիս մէջ կը ծառայէր :

—Այո՛, առաջին շարժումը միշտ լաւն է : Բայց յետոյ դժգոհութիւնը վրայ եկաւ : Պ. Բօլէ հարկաւ գոհ չէ, և իրմէ չի կրնար պահանջուիլ որ համակրի ի վնաս իրեն ժառանգող այդ աղջկան :

—Ուրեմն Բիայի բնակարանը գըտնելու միջոցը չի ցուցուց ձեզի :

—Ոչ, բացօթյապէս յայտարարեց թէ այդ ժառանգորդին խօսքն անգամ չէր ուզեր լսել : Օրիորդ Բօլէ, որ մեր խօսակցութեան միջոցին վրայ եկաւ, իրաւունք տուաւ հօրը, և զիս ալ յորդորեց շխտանուիլ այս գործին, որ ինձի վերաբերութիւն չունի : Մինչեւ իսկ աւելցուց թէ այդ Բիան քոյրը պէս գատարկաշրջիկ մ'էր, որ անշուշտ մեկնած էր Փարիզէն, և պարտապ տեղը պիտի փնտռէի :

—Բարեբաղդարար, պարո՛ն, չի հետեւեցաք այդ իրատիւն, ըսաւ Ֆրընէօզ յազոտելով :

—Ո՛չ, պատասխանեց նօտարը. մտածեցի որ պարկեշտ մարդու պարտականութեանս դէմ պիտի գործէի, եթէ

ձեռքէս եկածը չընէի, որպէս զի Բիա Ասթրոտի իմանայ իւր բնական հօր կտակը : Եւ այս պատճառաւ Փարիզէն մեկնիլս յետաձգելով, երէկ ոստիկանութեան պաշտօնատունը գացի տեղեկութիւն ստանալու :

—Ոստիկանութեան պաշտօնատունը, գոչեց Պինոս : Ա՛, որոչ բան մը չկրցին անշուշտ ըսել ձեզի : Բիայի քոյրը զարմանալի մահով մը մեռաւ, զոր ոստիկանութիւնը չի գիտեր :

—Ներեցէք, պարո՛ն, ըսաւ նօտարը, ճշդիւ այդ քոյրը մահն էր որ ինձի ճանքայ ցուցուց : Ըսին ինձի թէ մեռած աղջիկը, Պիանքա Ասթրոտի, Մօնմարթր թաղին մէջ կահաւոր պանդոկատուն մը կը բնակէր : Հոն գնացի այս առտու, և պանդոկապանուհին իմացուց ինձի թէ՛ Բիա Ֆրոսէ-Սէն-Պէտար փողոցը կը բնակէր :

—Բարեբաղդ գտնուեր էք, ըսաւ Ֆրընէօզ. երէկ առաւօտ, այդ պիտի գերեզմանատուն չի գացած՝ չէր գիտեր այս աղջկան ուր բնակիլը :

—Չի կրցաւ տանը թիւը ըսել ինձի, բայց ես գետափին անկիւնն իտալուհիի կերպարանքով կնկան մը հանդիպելով՝ անոր հարցուցի...

—Եւ հայր Լորէնծոյի այս խեղճ տունը ցոյց տուաւ, յարեց Պինոս : Ջարմանալի է որ այդ հին աւազակը թող տուաւ ձեզ որ վեր ելնէք. վասն զի գիտէր Բիային դուրս ելած ըլլալը :

—Ջարմացման երեսոյթ մ'ունեցաւ երբ հարցուցի թէ ո՛ր յարկը կը բնակէր. վարանեցաւ պատասխանելու... բայց վերջապէս վեցերորդ յարկը նշանակեց, առանց աւելցընելու փնտռած անձիս հոս չըլլալը : Այնպէս կը թուի ինձի թէ զիս ոստիկանութեան մարդ կարծեց :

—Պարո՛ն, ըսաւ Ֆրընէօզ աչք ընելով չպղիչին որ լուէ, շնորհակալ եմ

ձեր այդ ազնուախոհ միջամտութենէն, որ պատեհ ժամանակի մը կը հանդիպի. վասն զի ես պատճառներ ունիմ կատկածելու այդ աղջկան բացակայութեանը վրայ: Ես հոս եկեր էի աւարտելու պատկեր մը, որուն իբր տիպար ծառայած էր Բիա: Խօսք տուած էր էր ինձի սպասելու, և վարի ձերուկ տանտէրն իմացուց մեզի թէ՛ կառքով մեկներ էր վայելչապէս հագուած կենց մը հետ, առանց ո՛ւր երթալն և երբ վերադառնալն իմացընելու: Շատ տարօրինակ է այս, և կ'սկսիմ վախնալ թէ ձեռքէս փախցուցած չըլլան խեղճ աղջիկը:

—Անդարմանելի չարիք մը չէ այդ, պատասխանեց Պ. Տրիստոն ժպտելով: Առեւանգուած աղջիկները կը գտնուին միշտ:

—Օ՛, ձեր կարծած առեւանգումէն չէ այս. Բիա տարփաւոր չունի. բայց հարուստ է հիմա... և շատ հաւանական է որ այդ հարստութեան տենչացողներ գտնուին:

—Հարուստ է, բայց խիստ քիչ մարդ կայ գիացող... և եթէ կը կարծէք թէ կենացը փրկա հասցընել կ'ուզուի, դիտել կուտամ ձեզի թէ անոր մահը Պ. Բօլէի միայն կրնայ շահարէր լլլալ:

—Եւ անտարակոյս Պ. Բօլէ անկարող է ոճիր մը գործելու, որպէս զի աղջկան ծառանգութիւնն ինք ձեռք անցունէ...: Սակայն այնպիսի անցքեր անցան որ դուք չէք գիտեր, և կրնան կապ ունենալ այդ ժառանգութեան գործին հետ... Պիանքա Ասթրոտին ինչպէս մեռնիլը չէք գիտեր կարծեմ:

—Յանկարծամահ եղեր է, կարծեմ... Պ. Ֆրանսի Պոյէի մեռնելուն նախորդ օրը... այնպէս որ Պիանքայի մասին կտակը անվաւեր է: Պ. Բօլէ կ'ուրախանար արդէն այդ դէպքին վրայ, որով ինք կը տիրանար իւր եղբոր հա-

րստութեան... բայց ես իմացուցի իրեն թէ ուրիշ կտակընկալ մ'ալ կար, որ ողջ է. և այս մասին տարակոյս չի կրնար ունենալ, որովհետեւ տեսաւ զայն:

—Պիանքա սպաննուեցաւ, դոչեց Պինոս, և անոնք որ սպաննեցին զայն, Բիան ալ կ'սպաննեն. արեւու լոյսին պէս յայտնի է: Եթէ գիտնային ժառանգորդը ըլլալը, զայն ալ սպաննած կ'ըլլային:

—Սպաննուեցա՛ւ, կրկնեց նոտարն ապշած, բայց սատիրանութիւնը քննութիւն բանալով ստուգեր է թէ՛ այդ աղջիկը շնչերակի խզումէ մեռած է:

—Ա՛, այո՛, սատիրանութիւնը... բան մը չի հասկընար: Բայց ես հոս եմ: Ես ապայոյցներ ունիմ, և ծանօթ ընկերի մ'օգնութեամբ ճանկը պիտի անցունեմ այդ ոճիրը գործող անդամները: Խընդիրն է հիմա գիտնալ թէ՛ պիտի կրնամ ձեռք անցունել պատիկին ալ գլուխը չի կերած:

—Բաւական է, Պինոս, թող տուր որ ես խօսիմ, ըսաւ Ֆրանսիս:

Եւ գառնալով Պ. Տրիստոնի, որ Պինոսի խօսքերէն այլայլեր էր.

—Պարոն, ըսաւ, աւասիկ եզածը: Պիանքա Ասթրոտի իրիկուն մը մեռաւ հանրակառքի մը մէջ, տը ես ալ կը գտնուէի, խիստ տարօրինակ կերպով, առանց ձիչ մ'արծակելու, առանց շարժում մ'ընելու: Մեռած ըլլայն այն ատեն նշմարուեցաւ, երբ կառքը կայարանը կը հասնէր, և ես ալ կառքին մէջէն երկայն դնասանդ մը գտայ, զոր Պիանքայի քովը նստող կին մը կորսնցուցեր կամ ձգեր էր գործածելէն ետեւ: Հետեւեալ օրը զիպաւածով ստուգեցի որ այն դնասանդը թունաւոր էր: Կատու մը անկէ խայթուելով իսկոյն մեռաւ շանթահար:

—Ո՛հ, Ատաու՛մ իմ, բայց այն ժամանակ... եթէ այդ կիկն սպաննեց Բիայի քոյրը...

—Բիան ալ կրնայ սպաննել, եւ ես հիմա գրեթէ աներկբայ եմ որ ձեր փնտաւած տարբարող տղեկն այն կիկնն եկած տարած է:

—Բայց, պարոն, դոչեց նոտարը, եթէ սխալ չէ ձեր կարծիքը, ձեր պարտքն է անմիջապէս ծանուցանել դատական իշխանութեան՝ ձեր այդ գիացած իրողութիւնները: Մինչեւ խի կը զարմանամ ձեր այդչափ յապաղելուն վրայ:

—Այո՛, գէշ ըրի, կը տեսնեմ հիմա, ըսաւ Ֆրանսիս: Բայց առանց պատճառի չէք: Ես չէի հտաւար ոճիր գործուած լլլալուն: Ձէի գիտեր թէ մեռնողը Պիանքա Ասթրոտին էր, և թէ այդ աղջիկը մեծ հարստութիւն մը պիտի ժառանգէր: Աղքատ և անծանօթ աղջկան մ'սպանութիւնն անհասկընալի կը թուէր ինձի, վասն զի զայն մեռցընելու գործին մէջ շահ մը չէի տեսներ:

«Ձեր բերած լուրերը կը լուսաւորեն այս սղբալի պատմութիւնը: Յայտնի կը տեսնուի որ Պ. Ֆրանսի Պոյէի ժառանգորդները մէջ տեղէն վերցընելու վրայ է խնդիրը:

—Ես գուշակեր էի, դոչեց Պինոս, և այս պատճառաւ գրաւեցի սպանիչ գրեղասեղը:

—Ի՞նչ ըրիր զայն, հարցուց մէկէն Ֆրանսիս:

—Ա՛, ա՛, ալ չես արգիլեր ինձի, կարծեմ, իմ գործողութիւններուս վրայ խօսիլ: Կը ճանչես հիմա թէ ես իրաւունք ունէի: Եւ որովհետեւ կը խոստովանիս սխալած ըլլալդ, չեմ պնդեր լուրթեանս վրայ:

«Արդ, ես այդ գնտասեղը մարդու մը տուի, որ յանձն առաւ քննել տալ առաջին կարգի տարբագէտի մը, որպէս զի ինչ տեսակ թոյնով օծուած ըլլալը հասկցուի:

«Քննութիւնն այս ժամուս պէտք է կատարուած ըլլայ, և կը մնայ մեզի գտնել այն կիկնը՝ որ այն գնտասեղով խայթեց ու մեռուց Պիանքան: Այս գործն ալ իւր վրայ առած է իմ Բիէտուշ բարեկամս: Ինձի համար գործը կատարուածի պէս է. վասն զի հետախուզելու մասին իրեն հաւասարող չունի: Ժամուս մը մէջ կրցաւ գտնել Պիանքայի բնակած տունը:

—Ա՛: այդ մա՛րդը տարաւ քեզ հոն:

—Դուն շատոնց կրնայիր գիտնալ զայս եթէ հարցնէիր ինձի: Բայց դուն՝ բերանս բանալուս պէս որ այդ պատուական Բիէտուշին անունը արտասանեմ, կը լսեցնէիր զիս:

—Ուրեմն խօսէ՛ հիմա, ո՛ւր տեղուանք է այդ ճարպիկ մարդը: Կը յուսամ որ միայն Պիանքայի բնակարանը գտնելով չի շատացաւ:

—Կը յուսամ որ կ'ընէ և պիտի ընէ պէտք եղածը... բայց, զիս աէ զՍպէս փողոցը տանելէն ի վեր տեսած չեմ զինքը:

—Եւ տունը չի գացի՞ր զինքը տեսնելու:

—Ո՛չ, վասն զի մոռցաւ իւր հասցէն տալ ինձի:

—Ի՞նչպէս գնտասեղը յանձնեցիր այնպիսի մարդու մը, որուն բնակարանը չես գիտեր:

—Օ՛, գիտեմ անոր սրճարանը: Երէկ չեկաւ հոն, բայց կուգայ: Կրան-Պոքի յաճախորդն է:

—Եւ դուն այդ սատանորդիին վրայ զրեր ես ոճրագործները գտնելու յոյսըդ: Ա՛լ չընենք ստոր խօսքը, և դուն հանդիտող նայէ: Ես կը գտնեմ գանոնք... իրիկուն մը թատրոնին մէջ տեսայ հանրակառքին կիկնը իւր համախոհին հետ, որ գործակատար մըն է, և Պ. Բօլէ գործածած է զայն:

—Դործակատար մը. մտիկ ըրէք

ուրեմն, ըսաւ Պ. Տրիւթոն: Պ. Բօլէ ըսաւ ինձի թէ՛ իր եղբօրը մեռնելէն առաջ, նախատեսելով կտակին գործը որմէ կը կասկածէր, այդ գործակատարին յանձներ էր իտալիայէն տեղեկութիւններ ստանալ Պարզուրովէա Ասթրոտիի և անոր երկու աղջիկներուն վրայ:

—Զրուցե՞ց անունը:
—Ո՛չ, բայց տարակոյս չունիմ որ կը զրուցէ:

—Ես ալ կը յուսամ: Կ'ուզէ՞ք, պարոն, որ հիմա Պ. Բօլէի երթանք:

—Ամենայն սիրով, եթէ կը յուսաք որ կրնայ օգտակար տեղեկութիւն մը տալ մեզի... ճշմարիտն ըսելով, հանրակառքին և թունաւոր գնդասեղին պատմութիւններն ա՛յնչպի նոր են ինձի համար, որ գաղափարս կը շփոթի:

—Ճանբան կը հասկըցընեմ ձեզի: Բայց երթանք շուտով, ժամանակ չի կորսնցնենք:

—Ես ալ հետ չի գա՞մ, հարցուց Պինոս:

—Դուն ալ շուտով վազէ գնա սըրճարանդ՝ տեսնելու համար թէ Բիէտուչ բարեկամդ հո՞ն է, ըսաւ Ֆրընէօզ, որ շարժելին գործակցութիւնը չէր ուզեր:

Դուռը բանալով, քիթ քիթի հանդիպեցաւ Լորէնծոյի հետ, որ կտաւին և պատկերակալին բեռին տակ կը կըքէր:

—Բիան տանելու եկող կինը կարմիրներ ունէ՞ր երեսին վրայ, հարցուց մէկէն Ֆրընէօզ:

—Այո՛ և ամուսի պէս սև աչեր, հուռնական մեծ քիթով մը, ըսաւ ձերուկը:

—Նոյն ինքն է, միմնչեց Ֆրընէօզ: Մտիկ ըրէ, ձերո՛ւկս: Այդ բերածներդ հոս դիր, գոցէ սենեակը, և հանէ բանալին վրայդ պահէ: Եթէ Բիա գայ,

թող միտար որ դուրս ելնէ, և իսկոյն մարդ զրկէ իմաց տուր ինձի: Իսկ եթէ գայն տանող կինը նորէն համարձակի գալ, ոստիկանութեան յանձնէ: Հասկցա՞ր:

—Այո՛, պարոն, ըսաւ Լորէնծոյ, առանց վարմանք յայտնելու:

Ֆրընէօզ արդէն սանդուղէն վար կ'իջնէր, նօտարն ալ ետեւէն:

—Գացէք, պարո՛ններ կը միմառ Պինոս անոնց ետեւէն, գացէք բան հարցուցէք ձեր քաղքեհիին: Այս կնճիւր մի միայն իմ Բիէտուչ բարեկամս կըրնայ լուծել, երբ զինքը ձեռքս անցունեմ:

10

Պինոս հետեւեր էր Ֆրընէօզի տուած խրատին:

Մինչ իւր բարեկամն ու նօտարը խուզարկութեան կ'եղնէին, ինքն ալ ուղղակի Կրան-Պոքի սրճարանը գացեր էր, ուր կը յուսար գտնել իւր Բիէտուչը, և աներկբայ էր որ այդ ճարպիկ օժանդակին շնորհիւ նախ ինքը պիտի յաջողէր՝ ձեռք բերել Բիայի պաշտպաններուն փնտռած տեղեկութիւնները:

Հարկ էր նախ գտնել ու ազատել գայն, եթէ, ինչպէս որ կը տեսնուէր, թշնամիին ձեռքն ինկած էր: Քոյրը մեռցընողները իշխանութեան յանձնելու գործը երկրորդական էր:

Բայց Պինոս շատ բարձր համարում ունէր Բիէտուչի հանճարին վրայ. ամէն բանի կարող կը կարծէր գայն, և կը փութար ժամ մը առաջ ճանբայ հանել գայն Բիայի հետքը գտնելու համար:

Բիէտուչ, որ կէս ժամու մէջ կըրցեր էր գտնել Պիանքայի բնակարանը, կրնար նաև գտնել քրոջն արգելափակ եղած տեղը:

Ուրիշ շատ բաներ ալ ունէր հարցընելիք այդ թանկագին ընկերին: Տէ գ'Ապէս փողոցի գիւտէն ի վեր տեսած չէր գայն, և չէր իսկ գիտեր թէ գնտասեղը քննող տարրագէտը կատարե՞ր էր իւր փորձերը:

Ուստի, այս պատիր յոյսերով խանդավառ, վազեց հասաւ Կրան-Պոքի սրճարանը, ուր միայն խանութպանը գտաւ տխրադէմ նստած իր հաշուեսեղանին առջև:

Հարցուց անոր և իմացաւ որ Բիէտուչ քանի օրէ ի վեր ոռք կոխած չէր հոն:

Հայր Բօավոս, որ ինչպէս միշտ՝ ապսէնթի երկու գաւաթներուն մէջ տեղն էր և սրտին ցաւերը դուրս թափելու կը փափաքէր, պատմեց շարժելին թէ՛ քանի մ'օրէ ի վեր իւր յաճախորդները չէին երևնար:

Գնտախաղի սեղանը անգործ էր, սրճարանը դատարկ, գործէ քաշուած դեղավաճառը՝ Բիկալ՝ Կրան-Պոքի ամենէն հաւատարիմ յաճախորդն, ոչ եւս կուգար:

Եւ այս ուժացումը Բօավոս կը վերագրէր ինչ ինչ զրոյցներու, որք տարածուած էին յաճախորդներուն մէջ:

Կը հծծէին իրարու թէ ռասիկանութեան գաղտնի լրտես մը կը յաճախէր սրճարանը, և այդ պարոնները որք չէին սիրեր ոստիկանութիւնը, ուրիշ տեղ կ'երթային խմելու և խաղալու:

Ոստիկանութեան գաղտնի լրտեսը ոչ ոք կըցեր էր ցուցնել, այլ միայն կը հաստատէին թէ ամէն օր կուգար և այնպիսի ձեւէր կը բանեցնէր, որ մարդ չէր կրնար ճշգրէլ իւր ինչ ըլլալը:

Այս անստուգութեան արդիւնքն եղեր էր ամէն մարդու վրայ կտակածել, մասնաւորապէս այն խաղաղ քաղքեհիներուն վրայ, որք չէին տեսակցիր աւուարճանի մարդոց հետ, որոց ժա-

մագրավայրն էր Կրան-Պոքի սրճարանը:

Կը կասկածէին մարմարագործէն, հին դեղավաճառէն, Բիէտուչէն, և սրճարանապետը կը մտածէր որ այս բարի մարդիկն իմանալով պատած զրոյցները, տուներին կը կենային, որպէս զի թշնամանք մը չկրէին այս զրպարտութիւնն հնարողներուն կողմէ: Այնպէս որ, դժբաղդ Բօավոսն, իւր բոլոր յաճախորդները կորսնցնելով, կործանման վտանգը կը տեսնէր աչքին առջև:

—Երբ կը մտածեմ որ ձեզ ալ ամբաստանեցին, կը գոչէր բուռնցքը սեղանին վարնելով. ա՛հ, եթէ ճանչէի այս զրոյցներն հնարող սրիկան, որ ինձի վնաս հասցընելու համար ըրած է, շանստակ կը հանէի:

Պինոս շատ չէր զգածուած գինեպանին այս յայտնութիւններէն: Իրեն համար ըսուածներն հոգ չէին պատճառեր իրեն, Բօավոսի կրած վնասն ալ նմանապէս: Կը մտածէր թէ այդ լուրերը տարածողները չէին սխալած. վասն զի ինք համոզուած էր թէ Բիէտուչ ժամանակաւ և թերեւս հիմա ալ ոստիկանութեան մարդ էր: Գործին գէշ կողմը սա էր իրեն համար, որ Բիէտուչ, հաւանաբար իմանալով ըսուածները, ոռք չի պիտի կոխէր սրճարանը:

Ո՛ւր պիտի գտնէր գայն հիմա: Պինոս կը զղջար դառնապէս որ Բիէտուչի բնակարանն իմանալու համար չի պնդեց, և հիմա ուրիշ միջոց չէր տեսներ իմանալու, բայց միայն ոստիկանութեան դուռն երթալ հարցնել: Այս մասին ալ շատ վստահ չէր:

Եւ որովհետև սրճարանապետ-գինեպանէն ուրիշ հասկընալիք բան մը չուէր, մեկնեցաւ՝ աղաչելով անոր, որ եթէ Բիէտուչ դիպուածով սրճարանը գայ, ըսէ իրեն թէ Պինոս բարեկամը զինքն անպատճառ տեսնել ուզելով:

ամէն աւտու պիտի սպասէ իրեն Միւրա փողոցի տան հինգերորդ յարկի սենեակին մէջ:

Այս այցելութենէն ալ շատ յոյս չունենալով, մտածեց պարզապէս Սոֆի Բորնիսին տունն երթալ, և Բիւայի անշայտ ըլլալը պատահելով՝ ջանալ տեղեկութիւն մը ձեռք բերել անկէ:

Այս մտածումով Ռոչլուաւի ծառուղիէն գացած միջոցին, վաղեմի դեղափածառ Բիկաչը տեսաւ, որ նստարանի մը վրայ բազմած կը խօսակցէր երկու ձառաղէժ մարդոց հետ, որ առջեւը կանգնած էին:

Իսկոյն մտածեց քովն երթալ հարցնել թէ կրնա՞ր տեղեկութիւն մը տալ իրեն Բիէտուշի վրայ:

Բիկաչ կրնակը դարձուցած ըլլալով Պինոսի, չէր տեսնիր գայն: Բայց Պինոս ճանչնէր էր գայն՝ մարմնոյն ձեւէն և մանաւանդ սրածայր փեղոյրէն, որ այդ ձերուկը միայն կը կրէր այն թաղին մէջ, ուր սովորաբար գործածուածը տփփ կոչուած մետաքսէ կարճ գլխարկն էր:

Պինոս, առանց հոգ ընելու թէ կըրնար արգելք ըլլալ ձերուկին խօսակցութեան և դժգոհութիւն պատճառել, սօտենալ սկսաւ:

Երկու մարդիկը՝ զինքը տեսնելով՝ Իմաց տուին Բիկաչի: Իսկոյն ետին դառնալով ձերուկը ճանչնց հարիչը, և ժրպտելով:

— Բարի լոյս, սիրելի՛ պարոն Պինոս, ըսաւ: Ինչ մը կայ որ տեսած չեմ ձեզ, և շատ գոհ եմ ձեզի հանդիպելէս:

Երկու մարդիկն ողջունելով ձերուկին՝ մեկնեցան և դէպի Բիկաչ հրապարակն երթալ սկսան յամրաքայլ:

— Ես ալ, պապս, շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար, վասն զի քանի օր է ի վեր եկած չէք կտան—Պոքի սրճարանը, և ես ալ կ'ողգէի խօսիլ ձեզի հետ, ը-

տաւ Պինոս կրցածին չափ ուժ տալով ձայնին:

«Բայց նախ ըսէք ինձի թէ՛ ինչ՞ու թողուցիք հայր Բօապոսն: Սրճարանը դացի և տեսայ որ չի՞ մ'ապսէնթ աւեր էր առջեւը, կը խմէր ու կը խմէր, որպէս զի ձեզ կորսնցնելուն վրայ քիչ մը մխիթարէ ինքզինքը:

— Հստմ ձեզի չերթալուս պատճառը... Բօապոս գէշ մարդ չէ. բայց անշահ մարդիկ կ'ընդունի, և խօսքը մէջներնիս, այդ սրճարանին մէջ դառնուող ընկերութիւնն ինձի չի յարմարիր: Ես ձեր և Պ. Բիէտուշի պատճառովը կ'երթայի հոն. բայց քանի մը օր է ի վեր Պ. Բիէտուշ կարուեցաւ այն տեղէն, և մտածեցի որ դուք ալ նոյնը պիտի ընէիք:

— Իմս պարագաներէ կախում ունի. գալով մեր Բիէտուշ բարեկամին, ամէն տեղ կը փնտռեմ զինքը, որպէս զի նորէն հոն բերեմ... բայց մինչև հիմա չկրցի գտնել:

— Չէ՞ք գիտեր բնակավայրը:

— Ո՛չ, և դո՞ւք:

— Ես ալ չեմ գիտեր... և դարմանալի չէ: Ես այդ սրճարանին մէջ ծանօթացայ անոր, և շատ անգամ ալ չէր խօսեր ինձի հետ, վասն զի... կը հասկնաք... հաճելի բան մը չէ խուլի մը հետ խօսիլ...:

— Որո՞ւ կ'ըսէք գայդ, անբան կենդանի մըմաց Պինոս:

— Կ'երևայ թէ դուք ալ անոր կարծիքէն էք, ըսաւ Բիկաչ ծիծաղելով:

— Կը տեսնէք որ այնպէս չէ, որովհետեւ յատկապէս եկայ կեցայ հոս, որպէս զի խօսակցիմ ձեզի հետ, գոչեց շարիչը:

— Շատ ուրախ եմ, բայց ձեզի համար հաճելի բան մը չէ, որովհետեւ անբան կենդանի կը կոչէք զիս:

— Օ՛ր... լսեցի՞ք:

— Այո՛, կը դարմանաք, վասն զի խուլերու հետ կենակցած չէք:

— Ո՛չ, փառք Աստուծոյ:

— Եթէ կենակցած ըլլայիք, պիտի դիտնայիք թէ բաց օդի մէջ աւելի դիւրաւ կը լսեն քան չորս պատի մէջ... և թէ մանաւանդ կառքի մէջ ամեն բան կը լսեն:

— Շատ աղէկ, ուրեմն այսուհետեւ երբ ձեզի ըսելիք մ'ունենամ, կառք մը բերեմ, և անոր մէջ նստած կը պտըտիւք և կը խօսակցիւք... միայն թէ ժամերը դուք պէտք է վճարէք:

— Օ՛ր, ամենայն սիրով, բայց ատայժմ կրնանք քիչ մը խօսակցիլ հոս...: Այսօր իմ լաւ օրերէս մէկն է, վասն զի օդը չոր է... և դուք ալ պէտք չունիք կոկորդնիզ խղտելու:

— Աւելի աղէկ, վասն զի փափաք չունիմ անցորդները գլուխս ժողովելու: Արդէն կը հարցնելի ձեզի թէ չէ՞ք կրնար ինձի տեղեկութիւն մը տալ Բիէտուշի վրայ: Չէ՞ք գիտեր տեղը, կամ թէ չի պատահեցա՞ք իրեն այս քանի մ'աւուր մէջ:

— Ո՛չ, դժբաղդաբար, վասն զի շատ կը սիրեմ՝ այդ տղան, թէեւ ինքը չի փնտռեր զիս... և եթէ զինքը տեսնէի փողոցի մէջ, կ'երգնում որ կը կեցընէի: Բայց ինձի այնպէս կը թուի թէ այս թաղը չի բնակիր:

— Բե՛հ, միշտ կրան—Պոք կուգար կը նստէր, հետեւապէս բնակարանն ալ հետու պէտք չէր ըլլար. ի՞նչպէս ընեմ որ զինքը գտնեմ:

— Շատ պէտք ունի՞ք իրեն, Գրաւ կը դնեմ թէ կը գուշակեմ ի՞նչ բանի համար փնտաւի՞նիզ:

— Ի՞նչ բանի համար, ըսէք նայիմ, պապս:

— Յայտնի է: Կ'ողգէք որ ետ տայ ձեզի այն ոսկեզօծ գնտասեղը, զոր անցեալ օր իրեն յանձնեցիք սրճարանին մէջ:

— Գնտասե՛ղը, նշմարեցիք ուրեմն...:

— Խուլերն ամէն բան կը նշմարեն. և դարմանալի չէ. վասն զի խուլ ըլլալնուն պատճառաւ մտադրազուօթիւն չեն կրնար ունենալ:

— Բայց չի կրցիք լսել ինչ որ կ'ըսելի իրեն, այնպէս չէ՞:

— Ա՛յ, այդ ճշմարիտ է: Սրճարանին ձեղունը շատ ցած է, և գիտէք որ... մեզի բաց օդ պէտք է, որպէս զի աւանջիս բացուի: Բայց երբեմն դրեթէ կը գուշակենք... ձեռքի և շրթանց չարժումներէ, դէմքի արտայայտումներէ...:

— Եւ կրցի՞ք գուշակել անցեալ օր իմ և Բիէտուշի միջեւ յուզում խընդիրը: Միենայն տեղանին վրայ մեր դէմք նստած ըլլալով, կրնայիք զննել մեզ:

— Օ՛ր, չեմ կրնար ըսել թէ գուշակեցի: Գաղտնիք մը միայն ունեցայ, որ կրնայ սխալ ըլլալ: Այնպէս թուեցաւ ինձի թէ դուք կը պատմէիք թէ մէկը մեռցուցեր կամ վիրատուրեր էին գնտասեղով. և Բիէտուշ ալ կը խտտանար ըննել տալ գնտասեղը, հասկրնալու համար թէ թունա՞ւօք էր:

— Այդչափը կրցի՞ր հասկընալ: Մե՛ծ բան է շիտակը:

— Ո՛չ, շատ պարզ է. ուղեցի բոսել գայն, և դուք արդիւեցիք ձեռքս: Իսկոյն մտածեցի թէ վասնզէ մը կը վախնայիք: Պատուած նամակ մ'ալ ցոյց տուիք, զոր այնպէս մակարեբեցի թէ դնտասեղին հետ դտած էիք:

— Ստուգիս, հայր Բիկաչ, կ'սկսիմ հաւատալ թէ դուք վհուկ էք: Ես ձեզ պարզափա մարդ մը կը կարծէի:

— Ապուշ մը բռնէք, որպէս զի աւելի ճշիւ յայտնէք ձեր գաղտնիքը:

— Շատ հաւանական է, պատասխանեց Պինոս պաղարիւնով, բայց կը խտտովանիմ որ անիրաւ էի: Մարդ մը որ

խուլ ըլլալով կը հասկընայ, ամէն բանի կարող է:

—Շատ բարեսիրա էք, ուրեմն ճշմարիտ է թէ այն գնտասեղով ոճիւր մը գործուած է:

—Աղջիկ մ'սպաննեցին հանրակառքի մը մէջ:

—Բիկալ հրապարակի հանրակառքին մէջ, թերեւս: Այդպիսի բան մը կարգացի Բըքի Ժոնսոնին մէջ:

—Ճշդիւ, ծերուկս: Եւ այն օրէն ի վեր, Ֆրընէօզ բարեկամս և ես կը փնտռենք այդ սպանութիւնը գործող անգգամուհին և անոր օժանդակող սքրիկան: Ֆրընէօզ այն կառքին մէջն էր տեսաւ զանոնք: Բայց կարծեց թէ դիպուած մ'էր... և անոնցմով չզբաղեցաւ. իսկ ես զբաղեցայ և Բիէտուշի կարծիքն հարցնելով՝ կատարելապէս համամիտ գտայ ինձի: Իսկ աղջիկն սպաննող անգգամները կը շարունակեն իրենց շահատակութիւնները: Այս առտու անոր պզտիկ քոյրն ալ առեւանգեցին, և եթէ չյաջողինք ձեռք անցունել գիրենք, այս խեղճ աղջկուկին ալ արիւնը պիտի մտնեն:

—Ինչո՞ւ համար, ի՞նչ ունին այդ աղջիկներուն դէմ:

—Երկար է պատմութիւնը և չի շահադրուեր ձեզ: Ժառանգութեան մը խնդիր կայ մէջը: Քաղքենի մը որ այդ երկու պզտիկներուն բնական հայրն էր, իւր հարստութիւնն ատոնց թողուց մեռած ատենը:

—Եւ այդ քաղքենիին ազգականները սրիկաներ վարձեցին այդ խեղճերը մէջտեղէն վերցընելու համար:

—Կարելի է, բայց... ո՞չ... վախճանեալը միակ եղբայր մ'ունի Պ. Բօլէ անունով, որ շատ հարուստ է, և այդպիսի վատ գործի մը մէջ չի մտներ:

—Այդ չի գիտցուիր: Ստակը շատ բան ընել կուտայ: Կ'ըսէք թէ Պ. Բօլէ

կը կոչուի... ձեր տեղը ես ըլլամ, այդ կողմը կը խուզարկեմ... անշուշտ գիտէք բնակավայրը:

—Ո՛չ, ես չեմ գիտեր, բայց Ֆրընէօզ գիտէ, որովհետեւ ծանօթ է անոր: Ձեր այդ խօսքը բան մը կը յիշեցընէ ինձի, որ այս առտու իմ առջեւ ըսաւ: Կ'երեւի թէ Պ. Բօլէ ժամանակաւ մարդ մը գործածեր է, գործակատար մը, որ կրնայ գնտասեղատար կնոջ գաւակիցն ըլլալ: Ֆրընէօզ տեսեր է այն մարդը թատրոնի մը մէջ՝ ոճրին հետեւեալ կամ վաղայաջորդ իրիկունը... և ճանչեր է. որովհետեւ հանրակառքին մէջն է եղեր իրեն հետ... միայն ի՞նչ անունը չի գիտեր:

—Կրնայ Պ. Բօլէին հարցընել:

—Այդպէս պիտի ընէ այսօր: Ես քիչ մ'առաջ երբ ձեզ տեսայ, տէ գլպէս փողոցը կ'երթայի, մեռած աղջկան բնակած տանը արուհին տեսնելու... անկէց ալ Ֆրընէօզի տունը պիտի երթայի իմանալու համար թէ ի՞նչ բեր է:

—Կ'ուզէ՞ք որ սիրտին երթանք:

—Ի՞նչ կ'ըսէք, հայր Բիկալ, այս գործին մէջ խառնուիլ կ'ուզէք: Չարմանալի բան. կ'երեւի որ զբօսանք մը կը համարիք ձեզի համար. բայց կը հարցընեմ ես ինձի թէ ի՞նչ օգուտ կրնաք ունենալ մեզի:

—Ի՞նչ մ'առաջ ըսիք ինձի համար թէ ամէն բանի կարող եմ, պատասխանեց ծերուկը ժպտելով: Ուստի փորձեցէք զիս, և պիտի տեսնէք որ խուլերն ալ աղէկ բաներ ունին... Նախ՝ մարդ չի կասկածիր անոնց վրայ: Եւ յետոյ ի՞նչ կը կորսնցընէք: Ուրիշ բան չի պիտի ընէք, բայց միայն այդ գործակատարին բնակարանը ցուցընէք ինձի. ես ալ այցելութիւն մը պիտի տամ անոր, և երբ հետը խօսակցիմ, թերեւս նոր բան մը կ'իմանամ և ձեզի կ'իմացընեմ:

—Արգարեւ, գոչեց Պինոս, անպատեհութիւն մը չեմ տեսներ ես ձեր այդ առաջարկին մէջ... թէեւ քիչ մը տարօրինակ թուի: Ֆրընէօզ նորէն պիտի խնդայ վրաս, բայց հոգս չէ:

Միւս կողմէ ես ալ իրաւունք ունիմ հետախուզելու, ինչպէս ինքը ունի իւր կողմէ և դուք ալ կրնաք օգտակար ըլլալ, ինչպէս Ֆրընէօզի ընկերացող նօտարը:

—Ա՛, նօտար մը կայ:

—Այո՛, գաւառացի նօտար մը, որ երկու աղջիկներուն հօրը կտակն ստացած է. և բարի մարդ մ'է: Առանց անոր չպիտի կրնայինք իմանալ թէ փոքր աղջիկն ալ կը ժառանգէր, երբ իմացաւ անոր անհետանալը մեծապէս յուզուեցաւ և կ'աշխատի գտնել զայն: Թերեւս այս վայրկենիս Պ. Բօլէի տունը գացած է գործակատարին հասցէն ստանալու:

—Շատ աղէկ, բայց Պ. Բօլէ պիտի հաճի՞ տալ:

—Եւ դուք կը կարծէք թէ անոր չի տուողը ձեզի կուտա՞յ:

—Թերեւս: Փորձ մը կ'ընենք, ինչ կը կորսնցնենք:

—Հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչպէս պիտի ընէք այդ փորձը: Այդ քաղքենիին բնակավայրը չեմ գիտեր ես. բայց Ֆրընէօզ կրնայ ըսել մեզի: Բիկալ հրապարակը հետու չէ, երթանք պտպա:

Բիկալ արդէն ստքի վրայ էր: Երիտասարդի պէս ելեր կանգներ էր, և Պինոս չէր կրնար դարձանքը զսպել այդ սաղեմի դեղավաճառին շար ումներուն, և մինչեւ իսկ անձին մէջ կատարուած յանկարծական փոփոխութեան վրայ: Կամարածեւ քամակը մեկէն ի մէկ շտկուեր, դէմքն ուշիմ արտայայտութիւն մ'ստացեր էր, փոքրիկ աչերը կը պճլտային: Այն մարդը չէր

—Բիկա՛լ, բարեկամս, անձանաչելի եղաք, գոչեց Պինոս: Եթէ մեր սիրելի Բիէտուշ բարեկամը ձեզ տեսնէ, չի պիտի ճանչէ: Եւ իսկ չի պիտի կրնայի ճանչել. եթէ չի տեսնէի որ բաց ադն այսչափ փոփոխութիւն կը բերէ խուլերուն վրայ:

—Ուրիշ բաներ ալ պիտի տեսնէք, ըսաւ ծերուկը քաղցր ժպտով մը: Բայց ժամանակ չի կորսնցնենք: Պ. Բօլէի տունը թերեւս շատ հեռու է. և ո՞վ գիտէ մեզ ո՞ւր պիտի դրկէ, իւր գործակատարը գտնելու համար: Պէտք կ'ըլլայ որ կառք մը նստինք վասն զի...

—Ա՛, ձեր երկու բարեկամներն ետեւնուս կուգան, գոչեց Պինոս այն երկու մարդիկը ցուցնելով, որք իւր եկած ատենը հեռացեր էին:

—Հոգ չէ, սիրելիս: Այդ խեղճ մարդիկը ժամանակաւ իմ քովս աշխատած ըլլալով, զիս տեսած ատեննին կուգան առողջութիւնս կը հարցնեն:

Այսպէս խօսակցելով հասան Բիկալ հրապարակը:

Երբ նկարչին տանը մօտեցան, դըրանն առջեւ կառք մը տեսան, որուն մեջէն երկու պարոն կ'իջնէին:

—Օ՛, գոչեց Պինոս, աւասիկ Ֆրընէօզ և նօտարը: Բայց ինչո՞ւ դէմքերնին տխրած է. ի՞նչ պատահեցաւ արդեօք: Բիայի գլխուն փորձա՞նք մ'եկած է:

—Հարցուցէք ձեր բարեկամին թէ ի՞նչ կայ, ըսաւ Բիկալ, և ինքը նօտարին մօտեցաւ՝ փեղոյրը ձեռքը:

Պ. Տրիսթոն չի դարմացաւ զայն տեսնելով: Իրարու ծանօթ կը թուէին:

—Է՛, ի՞նչ բրիւ, ապի՞ր գործակատարին հասցէն:

—Ո՛չ, պատասխանեց Ֆրընէօզ դըժգոհութեամբ: Պ. Բօլէ կ'ըսէ թէ մրտ-

քէն ելած է: Ուրիշ ընկերք չի մնար մեզի, բայց միայն երթալ գտնել մեռնող աղջկան տանտիրուհին որ կը ճանչէ հանրակառքին կինը, որովհետեւ խօսակցեցաւ անոր հետ գերեզմանատան մէջ, և կրնայ թերեւս ըսել մեզի անոր բնակավայրը: Դուն ի՞նչ ըրիր նայիմ: Ոչինչ, այնպէս չէ՞: Սրճարանի մարդդ խնդայ վրադ:

— Չի կրցի տեսնել, բայց ուրիշ վարպետորդի օժանդակ մը գտայ:

— Սա ճերմակը որ կը խօսի Պ. Տրբիւժանի հետ:

— Այո՛, դէմքը պարզ կ'երեւի, բայց խորագէտ է:

Փրքնէօզ պիտի պօռար անոր երեսին, բայց յանկարծ խոշոր կին մ'աչքին հանդիպեցաւ, որ դէպ իրեն կուգար՝ ախճուփ նաւու մը պէս օրօրուելով զխաւերուն վրայ:

— Կարծեմ թէ չեմ սխալիւ միմիջեց, նարնջալաճառ կինն է, որ հանրակառքին մէջն էր, և անցեալ իրիկուն ալ Բօրթ-Սէն-Մարթէնի թատրոնին դուռը տեսայ:

— Չիս չի ճանչեցիք կարծեմ, ըստ կինը: Չարմանալի չէ, որովհետեւ նաբինջ չեմ ծախել քայտը: Բայց ես խկոյն ճանչեցի ձեզ, և ձեր քով գալու և խօսելու համարձակելուս պատճառն այս է որ հանրակառքին աղջկան ուրբնակիլն իմացած եմ:

— Ես ալ գիտեմ:

— Բայց ամէնն այս չէ, կառքին մէջ աղջկան քովը նստող կինն ալ գտայ, որ ինչպէս գիտէք թեւք բարձրաւանդին մարդուն աւտած էր: Չէք կրնար գուշակել թէ ինչ կ'ընէ այդ բարեճաղիկ կինը:

— Եթէ կարենաք տեղեկութիւն տալ ինձի անոր վրայ, մեծ բարեկամութիւն մը կ'ընէք:

— Բազմ նայող է թուղթ կը քաշէ...

գուշակութիւններ կ'ընէ... տիկին Սթէլլա Սուրտիէն փողոց 79...: Տիկին Քորնիւ անոր յաճատորդներէն մէկն է... երէկ տեսայ զիրենք որ կը խօսակցէին Ռոջաուարի ծառուղիին մէջ... և որովհետեւ երկար ժամանակէ ի վեր կը ճանչեմ այդ բարի Սոֆի Քորնիւն, քովը գացի... միւսը որ չէր յիշէր իմ դէմքս, առաջարկեց ինձի բազդս նայել տալ... Ես ալ հասցէն ուղեցի և տուաւ...:

— Հանրակառքի դէպքին խօսքը չըրի՞ր անոր:

— Ո՛չ, չըրի: Երկար խօսքերու աւերթ պիտի ըլլար: Բայց խոստացայ երթալ իրեն խորհուրդ հարցնել:

— Կուզէ՞ք ինձի հետ երթալ, հարցուց Ֆրքնէօզ:

— Եթէ հաճոյ կը թուի ձեզի... Ես այնպիսի խենդ ու խելառ բաներու չեմ հաւատար. բայց կ'ըրօնուում: Միայն թէ, ինչպէս գիտէք, ես հարուստ չեմ...:

— Օ՛, ես կը վճարեմ ծախքը:

— Շատ աղէկ մէկտեղ կ'երթանք: Օր և ժամ տուէք ինձի:

— Հիմա կ'երթանք կառքով:

— Աւելի աղէկ, որովհետեւ մինչև իրիկուն դարձ չուելիմ: Իմ նարինջներս իրիկունները կը ծախեմ թատրոններուն դուռը:

— Ուրեմն հինգ վայրկեան սպասեցէք ինձի, որպէս զի երթամ երկու խօսք ընեմ սոս պարոնին:

— ձերմակ փողկապովի՞ն. իմ երկրիս հաշտարար դատաւորին կը նմանի:

Փրքնէօզ նշանացի կանչեց Պինոսը:

— Եկո՛ւ, խօսակցէ քիչ մ': տիկինին հետ, ես երթամ բան մ'ըսեմ Պ. Տրբիւժանին:

— Ըսել է թէ, մայրիկ, կը ճանչէք այդ բարի Սոֆին, սկսաւ շփոթել, երբ իւր բարեկամը կ'երթար նստարին քով, որ տաք խօսակցութեան մը բռնուած էր հայր Բիկաչի հետ:

— Ո՞վ չի ճանչեր դայն թագին մէջ: Ես Միւլէր փողոցի անկիւնը կը բնակիմ:

— Ես ալ Միրբա փողոցը, ուստի դըրացի եմք: Երբ ուզէք ձեր պատկերը քաշել տալ...

— Լուսանկարի՞չ էք:

— Ո՛չ, պատկերահան եմ:

— Աւելի աղէկ: Ձեր բարեկամն ալ պատկերահան է, այնպէս չէ՞:

— Առաջին կարգի, ձեզի չափ խոշոր գումարներ կը շահի:

— Ինչո՞ւ համար ուրեմն կ'ուզէ հարցուհիին երթալ:

— Հասկընալու համար թէ ի՞նչ հիւանդութենէ մեռաւ հանրակառքին մէջի աղջիկը:

— Չարմանալի գաղափար: Ես դեղ մը պիտի հարցնեմ էրկանս ցաւերուն համար: Ամիսէ մ'ի վեր պառկած է: Ահա կ'ուգայ ձեր ընկերը, լմնցնելով իւր խօսակցութիւնը երկու ձերուկներուն հետ:

Փրքնէօզ վերադարձաւ աչերը փայլուն և դէմքը գուարթ: Պինոս ապշեցաւ այս յանկարծական այլափոխութիւնը տեսնելով:

— Ո՛րչափ գոհ դէմք մ'ունի, ըսաւ Պինոս ինքնիրեն. կարծես թէ գտեր է Բիւսն:

— Բարի՛ տիկին, ըսաւ Ֆրքնէօզ, սա պարոնները ձեզ կ'ուզեն:

— Պարկեշտ մարդիկ կը թուին. բայց ինչո՞ւ կ'ուզեն զիս:

— Տեղեկութիւն մ'տանելու համար, որուն պէտք ունին:

— Երթամ, ըսաւ կինը:

Եւ երբ երթալ սկսաւ, Պինոս կ'ըսէր ահաաներուն մէջէն.

— Ստատանս տանի զիս թէ որ բան մը կը հասկնամ այս դարձուածներէն:

— Ետքը կը հասկնաս, ըսաւ Ֆրքնէօզ, հիմա գնա կառք մը բերելու նորհն րրէ ինձի:

— Բայց արդէն ունեցածդ չի՞ բաւեր: Ա՛, հայր Բիկաչ և նստարը կառքը կը մացընեն խոշոր կինը, իրենք ալ ետեւէն: Մեզի համար տեղ չի կայ: Բիկաչին երկու մարդիկն ալ կ'երթան նոյն կառքով. մէկը մէջը, միւսն ալ կառավարին նստարանի վրայ, ո՞ր սատանոցը կ'երթան,

— Հիմա կը տեսնես. մենք ալ անոնց ետեւէն պիտի երթանք:

Այն օրը Սուրտիէն փողոցին բնակիչները, որք իրենց դրանն առջև կը ձեռնէին, անսովոր տեսարան մ'ունեցան:

Իրարու ետեւէ եկող երկու կառք կամպու փողոցին անկիւնը շարուած կեցան:

Առաջինէն չորս մարդ և խոշոր կին մ'իջան, և երեք խումբի բաժնուցան:

Նոյն վայրկեանին երկրորդէն ալ երկու մարդ ելան և դէպի Սէնթ-Օնօրէի շուկան ուղղուեցան:

Կինը Սուրտիէն փողոցը մտաւ: Անոր ետեւէն ալ լայն բերան փեղոյրով ձերուկ մը կուգար տասն քայլի չափ հեռաւորութեամբ:

Քիչ մ'աւելի հեռուէն ալ երկու յալթահատակ ժահաղէմ մարդիկ կուգային ծանրաքայլ:

Առաջին կառքին հինգերորդ ուղեւորը՝ միւս երկուքին պէս շուկային ճամբան բռնեց:

Այս ամէն մարդիկն՝ որ միեւնոյն նպատակով ընկերացած էին, զիրար չի ճանչելու երեւոյթ մ'ունէին.

Մանր խանութպաններն որ ասոնց անցնիլը տեսան, չկրցին բան մը կառ...

հել . և ոչ ոք պատուհասն ելու անոնց ուր երթալը դիտելու :

Կինը գեղեցիկ երեւոյթով տան մը սուջեւի բակը մտնելով խօսիլ սխառ դանապանին հետ :

Ծերուկն ալ , որ անոր ետեւէն կ'երթար , անոնց խօսակցած միջոցին վերայ հասաւ , և որովհետեւ երկուքն ալ միեւնոյն անձը կը հարցնէին , դրանապանն երկուքին ալ նոյն պատասխանը տուաւ :

— Առաջին յարկը ձախ կողմի դուռը : Բայց չեմ գիտեր թէ տիկինը կ'ընդունի՞ Վասն զի այսօր ձանապարհորդ է :

Կինն ու ծերուկը սանդուղէն վեր ելան միասին , առանց խօսք մը փոխանակելու :

Երբ սանդուղին գլուխը հասան , գործը փոխուեցաւ :

— Ձեր ըսելիքը միտքերնիդ է , այնպէս չէ՞ , հարցուց ծերուկը կամաց ձայնով : Դուք իմ կնոջս քոյրն էք : Ես խուլ եմ , և ամէն ջանք ըրի այս խըլութենէս բժշկուելու համար : Դուք ալ տիկին Սթէյլայի խօսքն ըրիք ինձի՞ ըսելով թէ ամէն հիւանդութեանց վերայ խորհրդատուութիւն կ'ընէ և շատեր օգուտ տեսած են և կը տեսնեն , և զիս առիք իրեն բերիք որպէս զի դեղ մը կամ դարման մը պատուիրէ ինձի :

— Դիտեմ , գիտեմ , պատասխանեց խոշոր կինը :

— Եւ երբ զիս ներկայացընէք , թողէք որ ես խօսիմ :

— Շատ աղէք , դուք ինձմէ լաւ կը ըսնաք խօսիլ :

— Ահա դուռը , ըսաւ ծերուկը ցուցընելով պղնձէ տախտակը . որուն վերայ Օրբորդ Լընորմանի աշակերտուհիին անունը կը փայլէր : Քաշեցէք բոժոժի՞ն կոճակը :

Եւ մինչ կ'իսը պղնձէ կոճակը կը

քաշէր , Բիկալ ուրիշ անձանագրութիւն մը տեսաւ անոր դիմացի կողմը :

— Լա՛ւ , ըսաւ ինքնիրեն , դիմացն ալ գործակատար մը կայ : Անշուշտ ընկերն է այս ըղձուհիին , շատ հաւանական է որ մէկի սեղ երկուքն ձեռք անցունենմ :

— Ձե՛ն բանար . ըսաւ կինը :

— Աւելի ուժով քաշէ բոժոժը :

Քաշեց , բայց դարձեալ չի յաջողեցաւ :

— Սովորած յաճախորդները կ'երեւի թէ ինքզինքնին ձանցուցնելու ձեւ մը ունին , ըսաւ ծերուկը կամաց մը : Դուք քաշեցէք բոժոժը և տեսնենք :

Ըղձուհիին բնակարանէն ձայն բնաւ չի կար . բայց ծերուկը ոտքի ձայն կարծեց լսել գործակատարին բնակարանէն , և կամացուկ մը դրանը մօտեցու որպէս զի աղէկ մը լսէ :

Ականջը դրանը դնելու վրայ էր , յանկարծ դուռը կէս մը բացուեցաւ :

— Օ՛ , գոչեց ծերուկը : Պ . Բիէտո՛ւլ : Միանգամայն ձեռքն ու գլուխը կիսաբաց դռնէն ներս քշեց :

— Դո՛ւք էք , հայր Բիկալ , ըսաւ դուռը բացողը :

— Շատ գոհ եմ ձեզ տեսնելէս , պատասխանեց Բիկալ , վասն զի շատ բաներ ունիմ ձեզի պատմելիք : Չարմանալի բաներ կ'անցնին Կրան-Պոքի մէջ , Ո՛ւր մնացիք , քանի օրէ եկած չէք հոն : Բնաւ չէի յուսար որ հոս ձեզի պիտի հանդիպէի : Եկաց սպասուհիս հետ որպէս զի ականջերուս համար դեղ մը հարցընեմ Տիկին Սթէյլայի :

— Հոս չէ , գոչեց Բիէտուլ երկու ձեռքովը փող մը ձեւացընելով :

— Ա՛հ , շատ կը ցաւիմ : Ըսին ինձի թէ կրնայ դեղ մը տալ ազատել զիս այս անտանելի հիւանդութենէս : Ուրիշ օր մը դամ . բայց քանի որ եկած եմ , կ'ուզեմ խօսակցիլ ձեզի հետ :

— Ժամանակ չունիմ :

— Երկայն չէ խօսելիքս : Հինգ վայրկեան կը բաւէ :

— Ի՞նչ ունիք ըսելիք :

— Ձեզ շահագրգռող բաներ : Երեւակայեցէք որ երկու օրէ ի վեր հայր Բօավօսի սրճարանը լեցուն է դաղանի լրտեսներով :

Բիէտուլ դուռը միշտ կէս բացած էր և տրամադիր չէր երեւնար , ծերուկը ներս առնելու :

Կասկածոտ դէմքով մը կը նայէր անոր , ինչպէս նաև նարընջավաճառուհիին , որ հեռուէն կը լսէր իրենց խօսակցութիւնը :

Բայց «լրտես» բառը լսելուն պէս փոխեց դիրքը :

— Ի՞նչ կ'անցնի կը դառնայ Կրան-Պոքի մէջ , հարցուց պոռալով , որպէս զի չի կրկնէր ծերուկին ըսածը :

— Կ'երեւի թէ մարդ մը կը փնտռեն , որ սպաննութեան գործի մը մէջ մատ ունի եղբեր և սուտ անունով մը այդ սրճարարը կը յաճախէ : Կրնամ մանրամասնօրէն հասկցնել ձեզի , բայց թերևս զիս հոս ընդունելնիդ կը նեղէ ձեզ , որովհետեւ ձեր բնակարանին մէջ չէք , ըսաւ Բիկալ պղնձէ տախտակը ցուցնելով , որուն վրայ Պլանչէնի անունը նշանակուած էր :

— Բարեկամներէս մէկուն բնակարանն է : Ինքը տեղ մը դացած ըլլալով , աղաչեց ինձի որ ժամու մը չափ իւր տեղը սպասեմ հոս :

— Ուրեմն նեղութիւն չեմ տար ձեզի , և կրնանք խօսակցիլ : Ըսեմ սպասուհիս որ վար իջնէ եւ փողոցին մէջ սպասէ զիս :

Այս վերջին առաջարկը Բիէտուլի գործին եկաւ : Չէր ուզեր իւր բնակարանն ընդունիլ իրեն անձանութիւն մը . բայց խուլին վրայ կասկած չունէր . եւ կ'ուզէր մանրամասնօրէն իմանալ ոստիկանութեան արարքը հայր Եսավօսի սրճարանին մէջ :

— Հոս չենք գրնար խօսիլ , ըսաւ Բիկալ , վասն զի արտիս հիւանդութիւնը ձեզ պոռալով իր հարկադրէ , որով դրացններուն ուշադրութիւնը կը հրահրենք :

— Գո՛ւմ , վերմինի , Եթէ վարը չես ուզեր ալտախել , կրնաս թիւրթիւ պարտեղը երթալ և մեծ աւազանին սուջեւ նստիլ : Ես կ'ուզեմ հոն կը դունեմ քեզ : Վերմինի կը հասկնար Բիկալի միտքը և այնչափ հեռու չէր երթար : Կուրարար կը հնազանդէր անոր , վասն զի գիտէր որու հետ էր գործը : Ուստի առանց ուրիշ բացատրութեան սպասելու , անմիջապէս վար իջնել սկսաւ :

— Ներս մտէք , ծերուկս , ըսաւ Բիէտուլ մէկ կողմ քաշուելով :

Բիկալ ներս մտաւ : Բիէտուլ դուռը գոցեց և զայն իւր սենեակը տարաւ , ուր կին մը կը պտտէր , զոր ձրընէօզ դիւրաւ կրնար ձանջել , եթէ հոն ըլլար , վասն զի ճշդիւ թատրոնին իրիկունը տեսած կինն էր միեւնոյն կերպարանքով :

Ծերուկը տեսնելուն պէս յօնքերը պոստեց , և աչերովն հարցուց դաւակցին թէ ո՞վ էր :

— Մի՛ վախնար , ըսաւ անոր Բիէտուլ կէս ձայնով : Եղբձ ծերուկ մ'է , որմէ կարեւոր տեղեկութիւններ պիտի ստանամ , և եթէ նշմարեմ որ լրտես է , ողջ չի կրնար դուրս ելլել սոկէց :

Չայս ըսած միջոցին Բիտուլ աչքին ծայրովը Բիկալի կը նայէր , որ՝ չի լսել ձեւացնելով իւր սովորական ժպտուն ու պարզամիտ դէմքը բնաւ չէր փոխեր :

— Համոզումս կատարեալ է , ըսաւ ինքնակոչ Պլանչէն . կը վախնայի որ խուլ կը ձեւանար : Բայց հիմա աներկբայ եմ խուլ ըլլալուն : Կրնանք սպասուարար խօսակցիլ քեզի հետ :

— Բայց վերջապէս ո՞վ է այս մարդը, և ինչո՞ւ եկած է :

— Կուան-Պոքի յաճախորդ մ'է, գոր իւր սպասուհին առեր քեզի բերեր է խլութեանը վրայ խորհուրդ հարցընելու :

— Ուրեմն աս է՞ր դրանս բոժոժն հնչեցընողը :

— Ո՛չ, սպասուհին էր, և երբ դուռս կէս մը բացի, քիթ քիթի եկանք ասոր հետ :

— Լաւ, բայց ինչո՞ւ ներս առիր :

— Վասն զի ըստ ինձի թէ ոստիկանութեան լրտեսներ տեսնուեր են Կրուան-Պոքի սրճարանին մէջ, և կ'ուզեմ գիտնալ թէ ինչ կ'անցնի հոն :

— Շուտով ճամբէ ուրեմն, վասն զի չեմ ուզեր մինակ թողուլ աղջիկը : Այս իրիկուն չուելու խօսք կ'ընէ, և զինքը հանդարտեցնելու համար պարտաւորեցայ խօսք տալ իրեն որ Սոֆի Քորնիւի տունը երթանք և քրոջը սնտուկը առնենք :

Այս խօսակցութեան միջոցին Բիկաչ տիկինին առջեւ ակնապիշ կեցած՝ զայն բարեւելու կը պատրաստուէր :

— Տիկինը Պ. Պլանչէն բարեկամիս կինն է, գոչեց անոր Բիէտու :

— Իմ խորին յարգանքս ձեր բարեկամին, ըստ ձերուկը մինչեւ գետին խոնարհելով :

— Լա՛ւ, լա՛ւ, նոտէք և պատմեցէք ինձի ձեր գիտցածը : Ըսել է թէ ոստիկանութիւնը մարդասպան մը կը փնտռէ Բօավոյի սրճարանին մէջ,

— Այո՛, և ես այնպէս կը կարծեմ որ չի պիտի գտնել, վասն զի հոն չի գար հիմա : Կերեւի թէ կուահեր է, և ոտք չի պիտի կոխէ հոն :

— Բայց զո՞վ սպաններ է : Ութ օրէ ի վեր լրագիրներն ոճիրի խօսք ըրած չեն :

— Կ'ըսուի թէ հին գործ մ'է : Աղջիկ

մ'սպաննողեր է հանրակառքի մը մէջ : Այս պատասխանը, գոր Բիկաչ խիտ բնական և անհոգ կերպով մ'արտասանեց, մեծապէս շիտթեցուց վհուկին և արբանեակը :

Չէին սպասեր որ սպուշ ծերուկը Պիանքա Ասթրոտի խօսքն ընէր իրենց այնպիսի ձեւով մը, որմէ կը հասկցուէր թէ ամէն մարդ խնայեր էր Պիանքային սպաննուած ըլլալը :

Այսչափը շատ խկ էր Բիէտուին ու կինը կասկածի մէջ ձգելու :

Նայուածք մը փոխանակեցին իրարու հետ, և կինը մեկնելու պատրաստուեցաւ :

— Ինչէ՞ն գիտէք զայդ, ըստ Բիէտու զվազեմի դեղավաճառին, առանց ձայնը բարձրացնելու :

— Փնտռուած ոճրագործին անո՞ւնը կը հարցնէք ինձի, պատասխանեց Բիկաչ, ձեռքը եղջերածեւ ակնջին դընելով : Դժբաղդարար ես ալ ձեզի պէս չեմ գիտեր : Հայր Բօավոյի յաճախորդները թանկագին չեն, և կասկածներն ամենուն ալ վրայ կ'իյնան, մանաւանդ անոնց վրայ, որ դադրած են հոն յաճախելէ : Բայց կրնամ անունը տալ այն կենդանիին, որ այս ամէնուն պատճառ եղած է : Այն չարաձճի նկարիչն է որ քիւէթ կը խաղար ձեզի հետ... Պիտոս ըսուածը : Կերեւի թէ դացեր գանգատ ըրեր է ոստիկանութեան :

— Չեմ գարմանար, մրմուսաց Բիէտու ընկերուհիին գառնալով : Ծերուկին ըսածը հաւանաբար ճշմարիտ է, և ես հիմա կատարելապէս համոզուած եմ խուլ ըլլալուն, վասն զի հարցումիս չի պատասխանեց, բոլորովին հակառակ բաներ ըստ : Չի լսեց և չի լսեր մեր խօսքերը :

— Կը հասկնամ, մրմնջեց կինը, բայց ասով հանդերձ տուած լուրը շատ ծանր

է : Ես կը կարծեմ որ այդ Պիտոսը քեզ բերան տուած է : Շատ գէշ ըրիր այս գործին վրայ անոր հետ խօսիլդ :

— Հարկ էր խօսիլ, դեղասեղն ու նամակը ձեռքս անցունելու համար : Բայց չեմ գարմանար որ սրճարանը չերթալս տեսնելով՝ կասկածած ըլլայ իմ վրայ, և շատ հաւանական է որ իւր Ծրընէօզ բարեկամն ալ մղած ըլլայ զայն : Այդ Ծրընէօզը տեսաւ մեզ, և եթէ դժբաղդարար Պ. Բօլէ Պլանչէն գործակատարին հասցէն տայ անոր, մեր գործը կը գէշնայ :

— Այսինքն նոյն օրը բանտ կ'երթանք եթէ ինձի կը հաւատաս, այն վտանգին մէջ չենք իյնար եթէ այս իրիկուն չուեմ Բիկաչի հետ :

— Բայց հիմա ըսիր ինձի թէ քրոջը սնտուկը կ'ուզէ :

— Մեծ բան մը չէ այն, ես ինքնս կ'երթամ կը բերեմ : Բայց կ'ուզէ նաև անգամ մ'ալ Սէնթ-Ուանի գերեզմանատունն երթալ :

— Անկէ ետեւ կը հաճի՞ չուել :

— Ուզածն այն է :

— Ուրեմն, առ զինքը Սոֆի Քորնիւին տար, անկէց ալ Սէնթ Ուան տար. ամէնն երեք ժամու գործ է : Յետոյ բաւական ժամանակ կ'ունենաս պատրաստուելու ժամ ութին ելնող շոգեկտօքին : Ո՛րչափ քիչ մնաս անոր հետ Փարիզի մէջ, այնչափ աղէկ կ'ըլլայ. վասն զի նկարիչները պիտի իմանան թէ աղջիկը մեկնած է Լորէնձոյի տունէն, և պիտի սկսին փնտռել : Կրնայ ըլլալ որ գիպուածով ձեզի պատահին :

— Օ՛, կառքին վարագոյրները կը գոցեմ... թէ և տակաւին փնտռող չի կայ :

— Գիտեմ որ չի կայ. բայց թերեւս վաղը կը փնտռեն : Ուստի պէտք է որ այս իրիկուն ճանրայ ելնես դէպի Մարսիլիս : Ես ալ վաղուան յաջորդ օրը կուզամ ձեզ կը գտնեմ :

— Իրաւունք ունիս. ուստի ժամանակ չի կորսնցընելու համար խափշիկուհիս զսկեմ որ երթայ կառք մը բերէ ինձի :

— Շատ աղէկ : Սպասէ միայն որ ճամբեմ սա ձեր կենդանին, որ մեծ ծառայութիւն մ'ըրաւ մեզի :

Եւ դառնալով ծերուկին, որ ոտքի վրայ կեցած էր, ամուր ձայնով մը գոչեց.

— Ներողամիտ եղիք, հայր Բիկաչ : Տիկինը կը պատմէր ինձի թէ հանրակառքի պատմութիւնն ինքն ալ լսեր է : Ես կը կարծեմ թէ այդ դէպքին մէջ կատու ձաղկելու բան մը չի կայ, և կ'ուզեմ սրտապնդել այդ խեղճ Բօավոսն : Կը հաճի՞ք երթալ Կուան-Պոք և ինձի սպասել հոն :

— Ամենայն սիրով, պատասխանեց խուլը : Դուք ալ ինձի պէս էք, չէք լքաներ ձեր ծանօթները, երբ նեղութիւն մ'ունենան : Բայց չեմ ուզեր սակելի երկար ձանձրացընել ձեզ, ուստի մատուցանելով ձեզ իմ ողջոյններս և տիկինին ալ ամենախոնարհ յարգանքս, կը մեկնիմ :

— Վաղը նորէն կուգամ ձեր դրացուհի տիկին Սթէլլան տեսնելու, աւելցուց Բիկաչ ետ ետ երթալով, և դռնէն դուրս ելաւ :

Բիէտու ալ ետեւէն դնաց մինչեւ սանդուղին զլուխը, և ձեռքն ուժով մը սեղմելով ճանրու դուռը զայն : Յետոյ ներս դառնալով դուռը դոցեց :

Բիկաչ իսկոյն չտիկեցաւ, և սանդուղին չօրսական ոտքերը մէկ ընելով, բակէն դուրս նետուեցաւ և վաղեց դէպի կոմարուս փողոցն, ուր երկու կառքերը կ'սպասէին :

Սթէլլա հագիւ տասն վայրկեան սպասեց սեւամորթ սպասուհիին վերադառնալուն:

Կառքերուն կայարանը շատ մօտ չէր, բայց փոքրիկ սեւուհին բազդ ունեցեր էր պարսպ կառքի մը հանդիպելու, որ ծանր ծանր կ'անցնէր Սուրաբէն փողոցէն:

— Բիա միշտ պատրաստ էր դուրս ելնելու: Միակ զգեստ մ'ունենալով, պէտք չունէր երկար բարակ հագուելու. և երբ տիկինն առաջարկեր էր իրեն նոյն օրը Տէ զՍպէս փողոցն և Սէնթ-Ուանի գերեզմանոցն երթալ, որպէս զի կարենային իրիկուան շոգեկառքին հասնիլ, իսկոյն պատրաստութիւնը տեսեր էր, վասն զի ուրիշ բան չէր ուզեր:

Փոյթ չէր իրեն համար առանձին կամ ընկերով երթալ, միայն թէ հնար եղածին չափ շուտով մեկնէր փարիզէն:

Կը վախնար որ Բօլ Ֆրընէօզի հանդիպելով չէր կրնար ընդդիմանալ անոր աղաչանացը, և կենալու կը հարկադրուէր:

Սթէլլա, որ ուրիշ վախեր ունէր, փութաց առաջ անցաւ երբ տանը դուռն հասան, և նայուածք մը նետեց փողոցին երկու կողմերուն վրայ:

Չի տեսաւ կասկածելի բան մը: Կառքը կեցեր էր մայթին քով, և կառավարը նստարանէն վար իջած՝ կը խօսակցէր մարդու մը հետ, որ իւր ընկերներէն մին կը թուէր:

— Այս է փոքրիկ սեւամորթ սպասուհիիս բերած կառքը, հարցայ:

— Այո՛, տիկին... պատասխանեց կառավարը բանալով կառքին դռնակը:

— Ժամով պիտի բռնեմ ձեզ, և եթէ շուտ երթաք, պարզև մ'ալ կուտամ ձեզի:

— Օ՛, տիկին, գոհ կ'ըլլաք: Ո՞ւր պիտի երթանք:

— Մօնարթրի Տէ զՍպէս փողոցը...: Երբ տանն առջեւ հասնինք, կը կեցընեմ ձեզ:

— Շատ աղէկ, տիկին... միայն, եթէ հաճիք, այս բարեկամս ալ քովս պիտի նստեցընեմ, որ ձեր երթալիք տեղէն երկու քայլ անդին թաղապետական հրապարակը պիտի երթայ:

— Կրնաք նստեցընել, պատասխանեց վհուհին:

— Եւ իսկոյն կառքը մտցուց Բիան և ինքն ալ ետեւէն մտնելով, վարագոյրներն իջեցուց:

— Չէք ուզեր որ ձեզ տեսնեն, այնպէս չէ՞, սիրելի՛ որդեակս:

— Գիտէք որ չեմ ուզեր, մրմնջեց աղջկուհիը:

— Իրաւունք ունիք, վասն զի նկարիչներուն թաղէն անցնելու հարկադրուած ենք: Ուրիշ ճանրայ չի կայ Սոփի Քորնիւի տունն երթալու:

Բիա ախուր էր և սրտաթափ: Կառայինարան տարուող դատապարտելի մը երեւոյթ ունէր:

Վհուհին փոյթ չունէր զայն քաջալերելու, որպէս զի չի կարենար զինքը նեղը լծող հարցումներ ուղղել իրեն:

Կառքը սրբնթաց կը շարունակէր ճանրան. Տոբսի պուլվառը տանող ճանրէն վեր ելնելով՝ աւելի արագ երթալ սկսաւ:

Սթէլլա ա՛յն աստիճան զգուշութեամբ ինքզինք պատասպարեր էր անցորդներուն նայուածքէն, որ իսկզբան չի նշմարեց կառքին բռնած ճանրան: Բայց երբ վարագոյրին մէկ ծայրը քիչ մը վեր առնելով դուրս նայեցաւ, հասկցաւ սխալ ճանրէ երթալին: Փոխանակ զէպի Տէ զՍպէս փողոցն երթալու ճախակողմ դարձած էին:

Առջեւի ապակիին դարկաւ՝ կառավար

րին խնացընելու համար սխալ ճանրայ երթալը, բայց ի դուր:

Այս կառավարն ալ խուլ էր հայր Բիկաչին պէս, վասն զի Բիկալ հրապարակին վրայ գնաց կեցաւ:

Սթէլլա ապա՞ծ և միանգամայն դայրացած, չկրցաւ ինքզինքը բռնել, և մէկէն աղակիներէն մէկը վար քշեց, կառավարին քանցքը քաշելու համար որ այս խաղը կը խաղար իրեն:

Բայց կիսարողորակ մայթին վրայ, որուն առջեւ ըմբոստ կառքը կեցած էր, խուճը մը մարդիկ տեսաւ, որք իրեն սպասելու երեւոյթ ունէին. և իսկոյն հասկըցաւ գործը. վասն զի ճանչեց Ֆրընէօզն ու Պինսուր:

Այն ժամանակ մտածեց փախչիլ, բայց կառքին դռնակն և վար ցատկեց, բայց կառավարին քովը նստող մարդն ալ մէկէն վար ցատկելով թեւերուն մէջ առաւ զինքը:

Սթէլլա ինքզինքն ազատել փորձեց. բայց մարդը զայն փետուրի մը պէս վերցընելով տարաւ նկարիչներուն մեծ տանը գաւթէն ներս և դռնապանին օթեակին մէջ վար դրաւ, ուր երկու ստիկան կ'սպասէին:

Այս գործողութիւնը այնչափ շուտով կատարուեցաւ, որ Սթէլլա հագիւ ժամանակ ունեցաւ պոռտուլու, և անցորդները կարծեցին թէ Եյանկարծական թալուկէ նուազած կին մ'էր:

Բիա՛ ախուր մտածութեանց մէջ սուղուած՝ զրեթէ բան մը չէր տեսած, բայց նոյն վայրկեանին կառքին միւս դռնակն ալ բացուելով, Բօլ Ֆրընէօզ երեւցաւ:

— Ա՛հ, մրմնջեց աղջկիւր ինքզինքեան տեսելու, այս կինը խարեց զիս... ձեր սուսը կը բերէ եղեր... թողուցէ՛ք զիս...:

— Այդ կինը, գոչեց Ֆրընէօզ, այդ կինն սպաննեց քոյրդ... և քեզ ալ

պիտի մեռցընէր Պիանքային պէս, եթէ չի յաջողէինք կորզել քեզ անոր ճիրաններէն: Հիմա չեմ կրնար հոս երկարօրէն հասկըցնել քեզի: Պինսուքեզ աշխատանոցս թող տանի, ես ալ քանի մը վայրկեանէն հոն կուգամ: Պէտք է որ նախ խայտառակեմ այդ անզգամուհին:

— Ձեր աշխատանոցը, երբէ՛ք, ըսաւ Բիա խեղդուկ ձայնով մը:

— Ինչո՞ւ համար, ես ի՞նչ ըրի քեզի:

— Ես կը գուշակեմ, գոչեց Պինսու մօտենալով: Կը վախնայ որ օրիորդ Բօլէին կը հանդիպի հոն, Բայց կ'երդնում քեզի, աղջկուհի, թէ այն խարտիչուհին ոտք չպիտի կոխէ հոն... Եթէ անոր ծերուկ հայրն ալ ուզէ ներկայանալ հոն, ես պիտի վռնտեմ զայն: Հարցու Ֆրընէօզին:

— Ես ալ կ'երդնում քեզի, յարեց Ֆրընէօզ:

Եւ աչերն ա՛յնչափ կը վկայէին սուտ չըսելուն, որ Բիա, տգոյն և դողահար, բռնեց Պինսուի ձեռքէն, որ զինքը կառքէն վար իջեցնել կ'ուզէր, և թող տուաւ որ զինքը տունէն ներս մտցընէր:

— Հիմա ես ու դուն, տիկին Բիէտուշ, ըսաւ Ֆրընէօզ ակունքերուն մէջէն:

— Ա՛հ, գարշելուհին, գոչեց նանարնջավաճառ կինը, թող իմ առջեւ փորձէ ուրանալ հանրակառքին մէջ գտնուելը:

— Օ՛, չի համարձակիր ուրանալ, ըսաւ նստար Տրիսթոն. բայց մեղսակիցն ալ պիտի ձեռք անցնի՞:

— Արգէն ծակը նետուած պէտք է ըլլայ, գոչեց կառքին նստարանին վրայ թառած մարդը: Սեծաւորը, որ զայն ձերբակալելու պաշտօնն ստանձնած էր, տան վայրկեանէն կը հասնի հոս: Ի՞նչպէս կը գտնէք իւր բռնած ընթացքը:

— Հրաշարի: Չեղ և ձեր ընկերը
կառավարի կերպարանք մտայնելը գին
չունի:

— Յրբնէօզ և վերժինի Բիլոն (նարն-
ճավաճառուհին) թողուցին Պ. Տրիւփոնն
որ գողեսաւ կարգար կեղծ Բիլիալի
վրայ, որ ոստիկանութեան կարևոր գոր-
ծիչ մ'էր, և վազեցին գացին դռնա-
պանին օթեակը, ուր Սթէլլա պահ-
ուած էր:

Թակարդի մէջ բռնուած գաղանի
մը դէմք ունէր, և երբ տեսաւ երկու
վիաները գորս շէր կրնար սուտ հանել,
զայրոյթի վայրակ մը անցաւ անցերուն
մէջէն, բայց չչարթեցաւ, և անհա-
մարհոտ լուսութեամբ մը միայն պատաս-
խանեց Յրբնէօզի հարցումներուն:

Յրբնէօզ չեզկարեց հարցուփորձը,
և մեկնեցաւ օթեակէն, Բիլայի քովը
երթալու համար: Նոյն միջոցին Բի-
կաշ հասաւ: Ճարտար հնախոյզն ա-
ւարտեր էր Սուբարիէս փողոցին գործը:
Սիլեսթ Պլանչէն ձերբակալուեր էր
իր տան մէջ, և ոստիկանութեան բան-
առ տարուեր:

Երբ Բիկաշ օթեակէն ներս մտաւ,
Յթէլլա՝ յանկարծակիի գալով՝ հաս-
կցաւ որ կորսուած էր: Կեղծ խուլը
լսեր էր իւր ընկերին հետ ըրած խո-
սակցութիւնը, և կատարելապէս հա-
մոզուած էր երկուքին ալ մեղապար-
տութեան:

— Ո՛ր է գնատուլը, որ Պրանքա
Ասթրոտին սպաննելու ծառայեց ձեզի
հարցուց Բիկաշ մէկէն ի մէկ առանց
նախաբանի: Ձեր քով պէտք է ըլլայ,
և եթէ հիմա չյանձնէք ինձի, հան-
րակառքին մէջ ձեր մօտը նստող այս
տիկինը պիտի խուզէ ձեր գրպան-
ները:

— Հարկ չի կայ, ըսաւ անզգամու-
հին խոպոտ ձայնով մը, ես կուտամ
ձեզի: Աւասիկ:

Իւր ձեռնոցին մէջ բռնած էր՝ օթ-
եակը բերուելէն ի վեր: Եւ ուժով մը
փակեց ձեռքը և ինկաւ շահաբաշտ:
Գնտասեղին մահաբեր ծայրը ափին
մէջ մտեր էր:

Պրանքայի վրէժն առնուեր էր:
— Ոճրադատ ատեանին դորձ չի մը-
նաց, ըսաւ Բիկաշ փիլիսոփայա-
բար երբ ոստիկան գինուարները օթ-
եակը կը մանէին ստտակամաճը վեր-
ցընել տանելու համար: Գրաւ կը դը-
նեմ որ սրիկայ Բիլետուչ չօլիսի ունե-
նայ նոյն քաջութիւնը: Իրաւ է որ
կրնայ իւր պատիժը թեթեցնել և մին-
չեւ իսկ անպարտ արձակուիլ, վասն
զի սիրելի ընկերուհին մեռած ըլլա-
լով, իւր մեղակցու իւնը դժուարաւ
կրնայ ազատուցուիլ:

«Ես պէտք է պահեմ այս գնտասեղը,
որովհետեւ սուանց այս նիւթական
համրիչ ապացոյցին, երդուեալները
չեն դատապարտեր զայն»:

Եւ օթեակին զեռնէն վերջընելով
լրագրի մը մէջ փաթթեց խնամով:

Նարնջավաճառուհին լեզապատառ
փախեր էր վհուկէին յանկարծամահ
ըլլալը տեսնելով: Բակին դրանը մէջ
Պ. Տրիւփոնի գէմն ելաւ որ անակնկալ
անձի մը հետ կը խօսակցէր: Հասա-
րակ կառքի մը մէջէ Պ. և Սրիորդ Բո-
լէ վար իշեր էին, և նստարը, որ մայ-
թին վրայ կը ձեռնէր, մեծապէս զար-
մացեր էր դանոնք տեսնելով, վասն զի
ժամ մ'առաջ Պ. Բոլէ չէր հաճէր գոր-
ծակատարին հասցէն տալ իրեն և պա-
ղութեամբ դատուեր էին իրարմէ:

Պ. Բոլէ գիտէր որ Յրբնէօզ նստա-
րին հետ համամտութեամբ կը գործէր:
Ի՞նչ բնելու եկեր էր անոր աշխատա-
նոցին մէջ:

— Գիտեմ անունը, գոչեց կառքէն ե-
լած միջոցին: Պլանչէն է, և կը բնա-
յի...

— Սուբարիէս փողոցը... ձեզնէ սով-
ընտ պէտք չունիմ, ընդմիջեց նստա-
րը: Ձերբակալուած է:

— Ձերբակալուած: Ա՛հ, Աստուած
իմ, ճշմարիտ էր ուրեմն, ոճրի մը մաս-
նակցեր է: Կը տեսնէք ահա որ հաս-
ցէն գտնելու պէս Պ. Յրբնէօզի բե-
րի...: Ձեր մեկնելէն ետեւ թուղթե-
րուս մէջ փնտռեցի գտայ:

Պ. Բոլէի սիրան անհանգիստ էր,
վասն զի դրած նամակն և ստորագ-
րած պարտամուրհակը կը յիշէր, որք
անշուշտ ձեռք անցած էին Պլանչէնի
բնակարանին մէջ: Չայս մտածելով
զգուշութեան միջոցներ ձեռք կ'առնէր
որպէս զի չի կասկածուի իւր վրայ թէ
այն սրիկան իւր հրամանաւը գործած
էր ոճիրը: Եւ Յրբնէօզը տեսնելու ե-
կած ժամանակ աղջիկն ալ հետը բերեր
էր, որպէս զի պատրուակ մ'ունենայ
իւր այցելութեան:

— Վեր ելնենք, հայրիկ, ըսաւ Օրի-
որդ Մարկըրիթ, աւելի գեղեցիկ և
աւելի խրոխտ: Պ. Յրբնէօզ կը հաս-
կըցնէ մեզի անցած դարձածը:

— Կ'իմացընեմ ձեզ թէ մինակ չէ, ը-
սաւ Պ. Տրիւփոն:

— Ա՛, աւելի աղէկ, պատասխանեց
օրիորդը: Կատարեալ տեղեկութիւն
կ'ստանանք:

Մարկըրիթ գուշակեր էր խաղուհիին
հոն ըլլալը, և չէր ուղեր առիթը կոր-
անցընել: Ուստի վազեց դռնէն ներս
մտաւ. Պ. Բոլէ ալ ետեւէն:

— Մի նայիք դռնապանին օթեակը,
գոչեց անոնց Վիրժինի Բիլոն:

Ասոնք՝ առանց ականջ կախելու՝ փու-
թացին վեր ելան:

Երբ նկարչին աշխատանոցին առջեւ
հասան, դուռը բաց գտան, և անակն-
կալ տեսարան մ'ելաւ դէմերնին:

Բիա նստած էր այն տեղն ուր օրիորդ
Բոլէ տեսած էր զայն վաճառած օրը:

Բայց Բիա ոչ եւս կուլար, այլ հողեղ-
մայլ սխրանքով մտիկ կ'ընէր Բօլ Յրբ-
նէօզի երգումները, զորս՝ ծունգի վրայ
եղած՝ իրեն կ'ուզէր: Բիա ձեռները
նկարչին յանձնած էր, որ համբոյրնե-
լով կը ծածկէր գանոնք:

Պինոս ալ, միշտ խեղկատակ, գանոնք
օրհնելու շարժումներ կ'ընէր:

Տեսնելով Պ. Բօլէն և աղջիկը դրանը
մէջ կեցած, լրբաբար գոչեց անոնց.

— Է՛, ի՞նչպէս, սրտաշարժ տեսարան
չէ՞ Դափնիս և Քլովէ:

Յրբնէօզ մէկէն ցատկեց ոտքի վրայ
ելաւ, և ուղղակի անոնց առջեւ գնաց:
Բիա կ'սպասէր տժգոյն և սրտա-
տանջ: Իւր բազըք պիտի վճռուէր:

— Եկէք, հայրիկ, ըսաւ Մարկըրիթ
գոռոզութեամբ, իմ տեղս հոս չէ, ու-
րովհետեւ պարոնն այնպիսի արարած
մը կ'ընդունի, որ ձեր եղբոր ժառան-
գութիւնը գողցաւ ձեզնէ:

— Դուք կը նախատէք տղայ մը, որ
ձեզնէ աւելի կ'արժէ, պատասխանեց
Յրբնէօզ բարկութեամբ: Դուրս ելէ՛ք:

«Դուք ալ, պարոն, յարեց Պ. Բօ-
լէի դառնալով, գիտցէք որ օրիորդ
Ասթրոտի կը հրաժարի ձեր այդ ցան-
կացած ժառանգութենէն: Չընդունիր
իւր մայրն երեսի վրայ ձգող մարդու
մը հարստութիւնը: Կը բաղձամ որ դա-
տական արդարութիւնը հաշիւ չի պա-
հանջէ ձեզնէ սրիկայի մը հետ ձեր ու-
նեցած աւօթալի յարաբերութեանց
համար, և կը յուսամ որ այլ եւս բնաւ
չեմ տեսներ ձեզ»:

Հայր և աղջիկ մեկնեցան ակնկոր:
Բիայի վրէժն առնուած էր:

...
...
...
Երեք ամիս անցաւ: Պլանչէն, Բիլե-
տուչ ըսուածը, եղեռնադատ ատեանին
յառաջիկայ նիստին պիտի ներկայանայ:
Կը յուսայ մեղմացուցիչ պարագաներ

...
Երեք ամիս անցաւ: Պլանչէն, Բիլե-
տուչ ըսուածը, եղեռնադատ ատեանին
յառաջիկայ նիստին պիտի ներկայանայ:
Կը յուսայ մեղմացուցիչ պարագաներ

ձեռք բերել: Բիկաչ պաշտօնի բարձրացում ստացաւ: Այս գործը պատիւ բերաւ իրեն:

Պ. Տրիւֆոն ալ իւր նօտարական պաշտօնավայրը վերագարձաւ հետը տանելով Ֆրընէօզի և Բիայի օրհնութիւնները: Աստնք ալ Խտալիա չուեցին, ուր պիտի ամուսնանան Սուպիաքոյի մէջ, և երջանիկ ըլլալու համար պէտք չի պիտի ունենան Պ. Ֆրանսի Պօայէի հարստութեան: Ֆրընէօզ կորսնցուց այս

տարուան ցուցահանդէսը, բայց ձեռք բերուելիք երջանկութիւնը կ'արժէր այդ գոհողութիւնը:

Պինտու բաժակներ պարպելով կը մխիթարուի իւր բարեկամներուն տարակայութեան վրայ: Պ. Բօլէի նեղութիւն չի արուեցաւ, և աղջիկը կէս միլիոն աւելի պիտի ունենայ, բայց ամուսնութեան առնող չի գտներ:

Ամէն բան կ'իմացուի Փարիզի մէջ, և հանրակառքին ոճիւրը վստահութեամբ իրեն:

ՎԵՐՋ





9511

100

hugh

2

« Ազգային գրադարան



NL0174058

